2 - 19

54-42

1872 278.419

ՍԿԶԲՆ ԽՆԿՈՒԹ

ԷՎԼԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՂՔՄԱՆԱՅ

Աստուծոյ պատիւ տօնից տիրուհնականաց

Արքեպիսկոպոսութեամբ ազգի ազգի խորհրդածութեանց և գանազան առաջինութեանց։

Յօրինեալ է Հ. Մինասիկ վարդապետ Զամբեանց, յաշակերտութեանէ մեծին Մխիթարայ Աբբայի։

9619-57

Տպագրեալ հրամանաւ Աստուածաբանութեան Սեբաստիոյ արքեպիսկոպոսի Աբիսախոյ։

Ծախիւք աղնուազարմ պարոն Մատաթիայի Ծաղիկեան, առ՝ յիշատակ նորածաղիկ որդւոյ իւրոյ [illegible] Վահանայ։

1816. ամի։

ԴՈՎԼԵԹԻՒՆ

Դ վանս սրբոյն Պ աղարու։

264

ՅՈՐԴՈՐՔ

Տէրունական պօնէից լուսաւորչականն 'է սերպս յշդ-
դակս արքիեպիսկոպոսաց՝ նշուլափեղ ծագեալ զլոր-
հուրդս խնձիլեան. և վասնեալ բորբոքէն զնա-
ճանչելոցն ցոլմանա բոցոյ աճայնն սերոյ. և յաւուրսն
նուազոյ զաւա ընտաորեալ զիգիրն՝ առ վերինն ընտա-
ցանէ։

Յանկալի էր և ինչ այսմ մանաւորել շնորհի, և բերել-
բանօք բերել սովաւ՝ առ որ բերի հեանոյ իմ։ Այս՝ համայ-
նոց է պարքանոյ 'է բնէ. և սակայն որոց մերյեալ եղէ 'է
վայելս սորա պերպեալս, ոչ 'է պարքանան՝ այլ 'է պարքա-
լին գիտանէ՝ զոր խնդրէ՝ ձշմարտապէս։

'Ի սոյն ըղձալիս առանել զանոյն իմ ընդ ընդերս գա-
գիտելով՝ պենեանօք յարելոյ յաւուրջիկոյ բանս. և խրա-
խանդ խնդալընդելոյ սեղանաւորել զսոյն երբ նեալ
ընտանեյանն նուիրաց՝ որոց հանգամ յօժարեալ եղէ ա-
զօրանաւոր ուղերձել առ ամ ցիւրանչիւր գոնս գե-
ղուանիս, սկզբնաւորեալ 'է հանդիսարդիր ծագմանէ աւուր
ծննդեան գոն մերոյ հինգեա ցաւարդուն ըստ առաջի առ-
նելոյ գոնացուցիս մերոյ։

Այնուն սոյա 'է գասուեալ կարգս բովանդակի. Այ՝ սաջինն
յաւուրս պնօրինական գոնէ գոն մերոյ, ծննդեան և յայտ-
նուելոյ, յարուելոյ և համբարձման, զարքեալանաց և գա-
լստեան. և որոց 'է կարգի։ Այրիցն յաւուրս գոնէ խա-
ղի և եկեղեցոյ, և որ 'է նոսին վերադիցն։ Այրդն յա-
ւուրս անձնիւր եկարաքէն ըստ յաջորդելոյ դիմանց, յան-

գիմաց առնելով գանազան առաջնորդութեան հանգամանս և ապրի ապրի խորհրդածութեան ղեկավարուն։ Զրքն յա-
ւուրս գործոց ամենօրհնեալ կուսին. և որ ի նոսին վայ-
ելչութիւն։

Զրնեն յօժարակամ սիրով մատիցես ի սա՝ ընկալար և ի
սիրեան իբր ի մնան փնաս, բայց ի կալը և ի գնելը
գործ ի ի ներքս՝ ընդելացեալ սիրիս և լուսաւորիս ի
սմա։

Լարօղ ես ի սոյն, երեն գոխանակ ի անուրիս ծախելոյ
պարունակ ուսանիցդ ծամ՝ ոչիչ ծամանաց հանեն սյամ պարա-
գել կարդիցես։ Ի նոցանոնց գոխանակ շահելոյ գնասես. ի
սոցանոնց գործս վասարիցես՝ զարմանալիս շահիս. օգուտս
և օգուտցուցանես. զի սորին ոչ դայն իբրև աղօրհ խնդիրն
ի գեն սա ՅԾ, այլև իբրև օրհնութիւն յարուցչական ՅԾ-
ուոց զեղուն ի սիրս քո՝ ի հպատակաւորելոյ զնորհաց ամ-
նաբարբարաբար. որոյ ի գործս չունի այս սեղան նոնոց։

ՀԱՅԿ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գր. Գրիգ. Բոլոր-Օ.ԳԴ
ՀԱՅԿ-СССР
ՀԱՅ Ա. ՄԱՏԵՆԱՅԻ
Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԵՂԱՆ

Զուտ ենք խոնարհ բաղձամ, զի մատուցցէ զաղօթս ամենայն սրբոց ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն:

ՈՒՂԵՐՁՔ
ԱՂՕԹԻՑ
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

Ա

Ծնունդ Քն։

Ա՛ՆԲՆՆԻՒՆ ԾՆՆՈՒՆԴ անեղական. անՀառեալն լոյս 'ի լուսոյ. անսկզբնական Հաւադայթ փառաց, և անՀատական ծագումն անծնին հօր։ Լոյս եկիր յաշխարհ. և խառնեալ ը ստուերս մարդկութեան 'ի ցօղագին ամպ յորովայն ամենամաքուր կուսի՝ ծիածան լինի հրաշացար։ Վա՜ղի 'ի լրման ժամանակաց տասնեքուսանք խոնարհեալ աստիՀանօք իսպառ 'ի նսեմութի՛ն աղքատացեալ բնութեան՝ աւետիս կենդանութեան նշանեցար առ մեզ։ Բ. Թագ. Գ. 1։ Հեղգար նշոյլդ փառաց հօր յարգանդ կուսին իբր յամենաբաւ աստակի. և ծագեցար 'ի նմանէ անխորտակելի։ Ընտպական ծնար յարգանդէ հօր 'ի յաւիտենից առանց մօր. անտպական ծնար և յարգանդէ մօր 'ի ժամանակի առանց հօր։ Ծնար 'ի

հօրէ ՝ա՛ծուլ՝ անհասանելի բանդ ՝ա՛ծ՝ անրմբռ-
նելի յեղակնաց. ծնաւ և՝ի մօրէ անմերձենա-
լի յերկանց, անխախտելի պահելով զկուսութիւն՝
մօրդ իբր բան Եաւոր՝ որ անապական ծնանիցի
՝ի սրտէ։ Հղացար կոյս, և ծնար կոյս։ Լ՚ռա-
ջինն ադամ ծնաւ՝ի կոյս երկրէ. և երկրորդդ
ադամ՝ ծնար այսօր՝ի կոյս մօրէ։ Լ՚ռաջինն
կոյս՝ կուսութիւն եղ յառնէ միայնոյ առանց կնոջ.
եղեր և դու սքդ սքց կուսութիւն՝ի կնոջէ միայ-
նոյ առանց առն։ Օրագեցար իբր զբերբ ընկու-
զն՝ի շառաւիղէ մարդկութեան առանց ոռոգման
Ռութոց. ԺԵ. 8. և անձառելի փայլմամբ կուսու-
թիւն որդի մարդոյ և որդի ՝ոյ փառատրեցար։
Լ՚որանի՝ որովայնին՝ որ կուսութիւն ծնաւ զքեզ.
երանի՝ ստեանցն որ կուսական կաթամբ դիե-
ցուցին զքեզ. երանի՝ գրկացն՝ որ անարատ սրբ-
բութիւն կրեաց զքեզ։ Լ՚ուրարև երանի՝ մօր և
կուսի, որ մայր ցուցաւ՝ի կուսութիւն, և կոյս
մնաց՝ի մայրութեան։ Լ՚ստ կուսաւն՝ աղբիւր
կնքեալ, և ՝ը մայրութիւն պարտէզ փակեալ.
Եր. Գ. 12։ Լ՚ստ կուսութիւն քոյր, և ըստ մայ-
րութեան՝ հարսն. Եր. Գ. 11։ Լ՚ստ մայրութեան
դուռն մնից և Եղից քոց. և ՝ը կուսաւն աղխեալ
Հոգւով սրբ. Եզեկ. Խգ. 1։

Լ՚ենրևոյթ պատկերդ հօր՝ի կուսական որո-
վայնի զգեցեալ զպատկեր հողեղենի՝ նովին
պատկերաւ՝ յամբիծ պատկեր նախահօրն ե-
ղեւեցար. և որ անտանելիդ էիր ՝ընդՀ՝ մարմին
առեալ՝ի կուսէ՝ նովին մարմնով ըմբռնելի ցու-
ցար։ Լ՚ետեսանելիդ էականութիւն՝ նկարեալ
մարմնով՝ի կուսափայլ արդանդի՝ տեսանելի

յայտնեցար. և անշօշափելիդ համայնից ծնեալ
'ի մարքարադեալ որովայնէ՝ տիրապէս շօշափե-
ցար. Ա. Յովհ. Ա. 1։

Ամատչելիդ փայլումն ինքնագոյ՝ քաղցրմարդ-
կութեանդ երևեալ այսօր՝ հովուաց իսկ մատչելի
ընծայեցար. և էնդ անմարմին՝ մարմնով կերպ-
պարանեալ՝ յանմարմնոց՝ ոգի ամի պաշտեցար։
ԼՕրեր 'ի բարձրութեանդ երկնից իբր 'ի սենայէ՝ ցու-
ցանել մեզ զկամս հօր քո. և ո՛ իշխեալ կարեր
հայիլ յերեսս քո. քանզի դու ինքն ինքեցեր,
թէ * ոչ տեսանէ մարդ զերեսս իմ և ապրի ॥.
Եղեր. ԼԳ. 20։ Լ՝ սակայն արկեր զանծութիւնքդ
զկերպարանս մեր, և նովին կերպարանաւ ծը-
նեալ 'ի կուսէ՝ համարձակեցուցեր զմեզ՝ հայիլ
յերեսս քո. Եղեր. ԼԳ. 33։

Տեսեր զմեզ 'ի խաւարի և 'ի ստուերս մահու
զուրկ յայցելութենէ քումմէ, և քնաւին անար-
ժան երեսացդ տեսութենէ. տեսեր և 'ի դուռ
շարժեցար, և ապատուեր մերում հնարս հնա-
րել հաձեցար. սմին իրի իբրև զմեզ եղեալ, և
մերովս 'ի կուսէ ծնեալ՝ փրկիչ մեզ հնորհեցար։
Մինչև երբ մարդացեալ՝ ամենեքեան յանէծս
և յաղէտս տարակուսի հեծեաք. անկեալ կայաք
երեսնեւութի հարիւր ամ. երկերիւրից առաւե-
լութեամ՝ յանհարիւն ցաւս ըստ քաղմութեան
հիւանդաց, կաղաց, կուրաց և գօսացեալոց դի-
զելոց առ սրոփատիկեայ. և մարդ ունէաք ոչ՝
որ փրկեր զմեզ. զի ոչ տեսանէաք տակաւին
զքեզ մարդ. Յովհ. Ե։ Լ՝ Ունունէաք աւետիս առ-
նուլ յերկնաւորացդ՝ ոչ թէ զի հանդերձեալ ի-
ցես գալ, զի զայն 'ի մարգարէից լուաք, այլ

թէ եկեալ հասեալ կաս։ Ի մաշել մեր ի սոյն՝ բազմութիւն զուհաթնոց իջեալ յերկնից՝ յու-զեցին զջուրս խորհրդոց քոց. և աւետիս հնչե-ցին մեզ * ահաւասիկ աւետարանեմք ձեզ ու-րախութիւն մեծ. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ։ Այս զի՞նչ նշան այսմ. * այս նշանակ ձեզ. գտանիս ցեղ մանուկ պատեալ՝ ի խանձարուրս, և եղեալ ի մնուր։ Ղուկ. Ա. 20։

Ա. յաչափ փոքրկացար ամենամեծ Տէրդ, և հին աւուրցդ այսպէս մանուկ մատուցար. թագաւորդ ահաւոր տղացատի ցուցար, և անպարագիրդ էակ՝ ի փոքրու պարագրեցար հասակ։ ՊՀզ հիանալեացս, դու որ ընուս զերկինս և զերկիր՝ ի խանձարուրս պատեալ՝ յանբանից զե-տեղեցար մնուր։

Ճ. Ի մանկութիւն մեռաւ ադամ, զի դեռ նորէր ստեղծեալ. վասն որոյ և նորդ ադամ՝ ի մանկան չափ երևեցար, զի կենդանացուսցես զմեռեալն։ Պ՝ եռաւ մանուկն սոմնայի. գթացար՝ ի նա, և առաքեցեր զծառայս քո՝ զի զմարգարէս՝ յարուցանել զնա. և յոչ զօրել նոցա, դու ինքն եղիսէ ոճ փրկիչ մեր՝ եկիր առ մեզ. անկար՝ ի վերս մեր՝ միաւորեալ ի քնութիս մերում, և՝ ի չափ մանկան ձևացուցեալ զքեզ՝ յարուցեր զմեզ՝ ի կեանս. Ճ. Խագ. Ճ. 34։ Ի՞նդ որ զարմացեալ երկնաւորաց հարցանէին. * զի՞նչ տեսա-նէք՝ ի սոմնայիդ։ Երգ. Է. 1։ Այս այլք առ սոմնայն ցին ապաղաղակէին. * դարձիր դարձիր սոմ-նացիդ. զի տեսցուք զքեզ։ Երգ. Շ. 12։ Այս կեսք վկայէին. * ոչք քո աղաւնեոյ... խոսք քո գեղեցիկ։ Երգ. Ճ. 1։

Լաւ որ զարմանալեաց 'ի վեր է՝ 'ի խանձարուրս անդ գոլով զայս գործ գործեցեր ընդ մեզ. նա թէ մինչև բարբառ արձակեցէ ելեր՝ ցուցեր զզօրութիւն քո մեծ. զի անդէն կալար զՅիշատակն մեր զօձն առաջին և սպաներ զնա. աւար առեր զզօրութիւն դատապարտի, և բարձեր զպաշտօն մահու. Եսայ. Ը. 4։ Եւ կանգնեցեր Ադամ նոր պարիսպ զամենակալ իշխանութեդ, այլ զիսնարհութիւն քո մեծ. և պատանէշ արկեր զաղքատութիւնդ. մինչ զի չկարաց զքեզ իշխան ամի հաւատալ իշխանն խաւարի։ Լաւ տեսեալ զքեզ ծնեալ 'ի գեղջ ոչ իշխեաց յերկինս նշմարել։ Եւ կամեցար ծնանիլ 'ի մեծաշէն քաղաքի և ոչ 'ի հոյակապ պալատի, այլ յաւանի, յանծանօթ վայրի, 'ի խոնարհ տեղւոջ. և նոքին խորտակեցեր զեղջիւր հպարտութեն նորա։

Յանկարծ մարգարէն դաւիթ՝ զտեղի ծնրնդեանդ գտանել. և ոչ վարկաներ 'ի բեթղեհեմ լինել, վասն օրոներ. ոչ տայր հանգիստ իրանաց և ոչ քուն աչաց. ոչ յանկողին ելաներ. և ոչ 'ի տուն մտաներ. մինչև ասէ գտից զտեղի նոր։ Լաւ ահա ուր ոչն կարծէր՝ անդ եգիտ՝ 'ի գեղջ միում 'ի բեթղեհեմ 'ի տուն էփրատայ. սաղ. ՃԼԲ. 11։ Դ.Թագ. Ե. 2։

Երջանիկ գտաւ բեթղեհեմ քան զՀպարաւոր քաղաքս յուդայ. զի զոր սա էտ՝ գերագոյն է քան զամ զոր էտուն նորա։ Երկիրն խոստացեալ՝ մեզ և կաթն բղխեցուցաներ. իսկ սա զպարգևիչդ ամ քաղցրուն, զլիացուցիչդ բնաւին բարութեն, և զամենասնունդն հոգւոյ ըզհայդ պարարտութեն։ Լաւ կարի յիրաւունս. զի

Եփրատ պարարտուի լսի, և բեթղեհեմ՝ տուն հացի. ապա վայելուչ ինն ընծայեաց յիւրմէ՝ զամենապարարտ զհացդ անմահութեան, մատուցեալ'ի պատարագ հօրն յաւիտենական'ի հաշտութեան մեր և'ի հաճութեան ընդ մեզ. սորին փո և զուարթունք վերինք 'ի սմին աւուր յետ փառս տալոյ 'ի բարձունս, ի ջուցին 'ի մեզ զբանն ասելով. * 'ի մարդիկ հաճութեան։ Ղուկ. Բ. 14։ 'Ի մտանել սամուէլն 'ի բեթղեհեմ հարցանէին զնա. * խաղաղութի՞ իցէ մուտդ քո տեսանօղդ։ և նա ասէ. * խաղաղութի՝ է. զոհել ետն է ինձ. սրբեցարուք և ուրախ եղերուք ընդ իս այսօր։ Ա. Թագ. Ի. 4։ Զ Ինչ ապա հարցանեալ մեզ արժան իցէ ցերկնաւորդ սամուէլ՝ ցչնորհդ այ. խաղաղութի՞ իցէ մուտ քո'ի բեթղեհեմ տեսանօղդ ամի. զինչ արդեօք ունիմք այսմ լսել պէտ. այո՛ խաղաղութի է, և խաղաղութի իմ յերկնից քարոզն. սրբեցարուք 'ի չարեաց ձեւոց. և ուրախ եղերուք ընդ իս այսօր. զի առ ձեզ է գալուստ իմ և վասն ձեր։

Զ. Այո՛ երբ ոչ մեր, առ մեզ է գալուստ քո. առ մեզ եկիր, և մեզ հնորհեցար. մեզ ծնար, և մեզ տուար. զոր և տեսէք Եսայեայ կանխաձայնեաց մեզ ինդութիւնք և ասաց. * Մանուկ ծնաւ մեզ. որդի տուաւ մեզ։ Եսայ. Թ. 6։ Զի լրաւի մեզ ծնար և մեզ տուար. զի մեք էաք մոռեալ. եկիր առ մեզ, և ետուր մեզ կեանս և առաւել ևս քան զկեանս. յովհ. Ճ. 10։ Մեզ ծնար. զի մեք էաք խաւարեալ'ի մեղս և յանօրէնութիւնս. եկիր լուսաւորեցեր զմեզ, և լուսոյդ քո լցեր զտիեզերս։

Մեզ ծնաւ. զի մեք էաք աղքատացեալ աղքատութեամբ յետին, եկիր աղքատացար վասն մեր առաւել քան զմեզ։ Բ. Կորն. Ը. 9. Մինչև տեղի ևս ոչ գտաւ քեզ յիջևանին։ Ղուկ. Բ. 7. և քոյին աղքատութեամբդ բարձեր զկարօտութիւն մեր։ Մեզ ծնաւ 'ի յաւելցուցանել զմեզ իբրև երկնային մանանայ. զայ և հանդոյն մանանայի 'ի գիշերի իջեր 'ի բացի։ Մեզ ծնաւ, 'ի ցուցանել մեզ ըզՀանապարհն վերին սիոնի. զայ և 'ի Հանապարհին էիր մի ծնաւ։

Մեզ ծնաւ՝ առ 'ի սրբել 'ի մէնք զանանական գործս մեր. զայ և 'ի մէջ երկուց անասնոց ծնաւ ըստ ակնարկելոյն ամբակումայ Գ. 2։ 'Ի սկզբան 'ի շինուածս տապանակին երկու քերովբէք կանգնեցան 'ի վերայ կափարչի նորա՝ որ ասէր քաւութիւն։ Ի սակ այսոր երկու անասունքն երևեցան զքև՝ որ եղեր քաւութիւն մեր. առ 'ի վերածել զանանասացէքս 'ի վարս քրովբէից։

Մեզ ծնաւ, և Հանապազ ծնանիս 'ի մեզ սքանչելապէս. և Հաստատս զմեզ քեզ Հայր և մայր Հոգևորապէս 'ի պահել մեր ամ՝ զքան քո. զի թէ ոչ ծնանիցիր 'ի մեզ՝ զիարդ վկայիցիր՝ թէ * որ առնիցէ զկամն այ՝ նա է իմ եղբայր և քոյր և մայր։ Մատ. Գ. 35։ Ղուկ. 21։

Որում և մեք ամենակարօտ անձկանօք փափաքելով՝ պաղատիմք առ քեզ առ փրկիչ մեր. մի զրկեր զմեզ յայսմ Հնորհէ։ Հաճեաց աղաչեմք, Հաճեաց գալ առ մեզ և ծնանիլ 'ի մեզ. ընդէր ելցէ քեզ 'ի մէջ անասնոց երևիլ. միթէ վասն անասնոց յայտնեցար. զա մեր իջեր յերկնից, և յաղագս մերոյ փրկութեան։ Էջ ապա առ մեզ,

և բնակեաց 'ի մեզ, զի և մեք բնակեսցուք 'ի քեզ, և ժառանգեսցուք զփրկութիւն քո յաւիտեան։

Ընդերցիր զպարզիր ծննդոց. Զ. 255։

Ի։

Կաղանդ

Տնօրէնութեան Գն։

Ա. 'Ի նորոյս տարւոյ սկզբնաւորաւուր 'ի նորանոնէր ուղերձ պաղատանաց մատչիմ առաջի քո Ամ իմ յիր, հոգեզուարձ խնդութիւն յօրհնութիւն 'ի նոր օրհնելով զքեզ, և ցնծասպատար ուրախութիւն գովելով զհաստիչդ աւուրց և դարուց։ 'Ի մուտս բանից մաղթանացս գոհութիւն մատուցանեմ քեզ, որ 'ի բոլորիւ հոլովման կենդանակերպիցն վերնոց՝ բոլոր բաստատիկ պահեցեր զընթացս կենաց իմոց։ 'Ի քանի՛ քանի փորձանաւոր վտանգաց պաշտպանեցեր զիս. յորքանեաց որոգայթաղիր հաղբից զերծուցեր զանձն իմ։ 'Ի քանիպատիկ հեղձական յորձանաց ազգի ազգի փորձանաց 'ի վերառեր զհոգիս. յորպիսեաց չարահնար արուեստից բանսարկուին ամենացուցեր զիս։ Նմանի եղեր ինձ օգնական, յամի պատսպարան, յամի ազատարար և յամի բարերար. 'ի տուէ 'ի բարին առաջնորդելով, և 'ի գիշերի 'ի հանգստեան խնամարկելով։

'Ի տառապանս նեղութեանց սփոփեցեր, և յանձ-

կութիւն անել տարակուսանայ եւ ցուցեր ինձ. 'ի վերիպիւս իմ՝ յարդարութենէ՝ ուղղեցեր, և յանկանիւս իմ՝ 'ի վայր՝ ձեռն մատուցեալ կանգնեցեր. 'ի թողուլս իմ զքեզ՝ ոչ թողեր զիս, և յանիրաւիւս իմ՝ 'ի քեզ՝ ոչ մերժեցեր. հրաւիրեցեր քաղցրութիւն, և քաջալերս եղուր ուղղմութիւն։

Լսակ ես վերիպեալս յամ ուղղութիւն՝ յամի յայսոսիկ ապերախտ դասոյ առ բարերարդ իմ; և աւպաշնորհ ծառայ երևեցայ ամենապարգև Տնդ. հակառակ դարձայ, և զարտուղի մնդեցայ, յիմարեցայ և ցնորեցայ, խաւարեցայ և խոպանացայ. մոլորեցայ և վայրենացայ։ Ոչ յիշեմ թէ դէթ օր մի երբէք անարատ կեցեալ իցեմ։ Ոչ յիշեմ՝ թէ ժամ մի բնաւ արժանապէս ծառայեալ իցեմ քեզ, ոչ յիշեմ, թէ առ անգամ մի բոլորամիտ դոհութիւն մատուցեալ իցեմ ի այսքանեաց քոյոցդ բարերարութեց։

Դայց արդ ժամ է ինձ 'ի սկզբան տարուոյս ակիզբն առնել նորոգութիւն վարուց։ Օ որինչ յարդ անիրաւեցայ առքեզ՝ 'ներել մաղթեմ. թող աղաչեմ թող ինձ. բաւեա զամ զմեղս իմ վա ցաւոց քոց՝ զոր կրեցեր այսօր 'ի մեղանչութիւն քում. ցողեա յիս զցօղդ ողորմութեան վա արեան քո՝ զոր հեղեր այսօր ընդիմ. ցոյց ինձ զքաղցրութիւն մարդասիրութեդ վա անձառելի խոնարհութեան քո՝ զոր ցուցեր այսօր՝ յանձն առեալ զպարտս պարտաւորելոյս, անպարտականդ տուդանաց։

Ոչ խնայեցեր 'ի քեզ, զի խնայեսցես յիս. ոչ խորշեցար 'ի դրելոյ յանցաւոր յաչս մարդկան,

զի սրբեսցես զյանցանս իմ. ոչ ծանր համարեսցայ՝ զծանրուն օրինացն բառնալ, զի բարձցես յինէն զբեռինս մեղաց իմոց։ Սիրով ընդդիմեցեր 'ի գիրդ և յամենափափուկ մարմին քո ըզտաժանումն, զի յանդիմանն կացուսցես ինձ զսէր քո. կամաւ ընկալար զկսկծանս ցաւոց, զի խոնարհեցուսցես զկամն իմ ՝ը կամքդ քո.'ի տիս տղայութեանդ փութացար տանջիլ, զի զիս զօրացուսցես յամ՝'ի յիմ տիս հասակի տանիլ վշտաց վՀ քո. 'ի մարմնի քում կրեալ զերաշխէպ չարչարանաց՝ զՀոգի իմ ապրեցուցեր յանվախճան պատուհասից։

Ը. Զառաջին նուէր պատարագի մարմնոյդ խոշտանգանաց ընծայեալով այսօր Հոր քում երկնաւորի, ընկալար 'ի նմանէ և նոր զանուն՝ որ 'ի վեր է քան զՀամ անուն։ Հնչեցաւ այսօր անուն քո 'ի վերայ երկրի, և բարձրացաւ 'ի վեր քան զերկինս։ ՅՀ անուանեցար, և հիացուցեր զՀամ զոհ. Ը. 21։

Անուն քո առ նախնումն որ էին նշանեցաւ. և այսօր առ ամենեսեան յՀ հուչակաւորեցաւ։ Հաստիչ համայնից վերակոչմամբ փառաւորեցաւ։ այսօր փրկիչ բոլորից յորջորջմամբ բարեբանեցար։ Ամենակալ ամենակարող 'ի մարգարէից քարոզեալ. այսօր Տամի և ամենեցուն ամենափրկիչ վերաձայնեցար։ Ման ՝ի բարձունս կոչեալ. յայտ. ԺԲ. 13. այսօր էմմանուէլ յՀայտնեցար։

Զարմանան անմարմնոց քահանայապետութիւնք ընդ յիսադրուն անուանն քո կոչումն, և սարսեցան սանդարամետականաց խաւարագեաց խիտ

զախողութիւն։ Վերնային զուարթունք Ճեպեցին 'ի փառատրութի, և ստորնայնոց խորհմութիւնք բռնադատեցան յերկրպագութի. զի յանուն դիոյ նմա ծունր կրկնեսցի յերկնաւորաց և յերկրաւորաց, 'ի սանդարամետականաց և յանդնդականաց, յիշխանաւորաց և 'ի սոսկականաց էիլ.

Ը. 10։

Արկնեմք և մեք ծունր ամենեքեան անուանն քում հաւատով և Ճշմարտութիւն. և օրհնեմք զամենաօրհնեալ անուն քո յամի և յամ ժամ. հաւատով երկրպագանեմք փառաւորեալ անուանն քում. և զոյսս մեր եղեալ յամենաքաղցր անուն քո՝ առ 'ի քէն զողորմութի հայցեմք. քանզի գիտեմք թէ ոչ գոյ այլ անուն 'ի վերերկրի՝ որով արժան իցէ մեզ կեալ. գործ. Դ. 12։

Յանուն քո գտանեմք զբիրկութի, և նովին ժամանեմք յերանութի. յանուն քո վանեմք զթշնամիս հոգւոց մերոց, և նովին նուաճեմք զբռնութիւն ախտից. յանուն քո բժշկիմք 'ի հոգևոր հիւանդութենց, և նովին նորոգիմք յառողջութի բանաւոր։ Օ քահանաւորեալ անուանդ քոյ ազատիմք յամ արկածից, և նովին զերծանիմք 'ի բիւրաւոր վտանգից, յանուն քո արիսնամք 'ի փորձութիս, և նովին յառաջանամք յառաքինութենս. յանուն քո զգաստանամք 'ի վարանմունս, և նովին արթնանամք 'ի տաժանմունս։

Խրախուսեալ յանուն քո գնամք 'ի զօրութէ 'ի զօրութի, և նովին հասանեմք 'ի վերնայնոյն սիրնի Ճոխութի. սաղ. ՀԴ. 8. յանուն քո մնօրհնեալ օրհնեմք զամ, և նովին խրախ նուիրիմք յամի. յանուն քո ինքեմք զերեսս մեր, և նովին սրբեմք

3619-57

զորս քեզ ձօնեմք. յանուն քո գործեմք զՀրա-
շարս, և նոցին հաղորդեմք զանազան չարիս։
Օ՜ինեալ յանուն քո եղանեմք'ի ձեռաց մար-
տի ՇԷԴԻՄ բեղկարայ Ա յուսացելոյն յանուն քո
դաւթի. և հնգատարը տառից յոգիւք անուն
քո իբր հնգեբումիք քարամիք հարկանեմք ըղ-
գողիաթ ա. Ռաք. ԺԷ. 40 = 50։
Օ՜ որ ՈՒԹԷ տանենազօր անուն քո զօրաւորեալ
ՊԷՆ Հիանալիս հրաշացուցին Ա ազգս ազգս։ Ի-
ռաքելոյն վերընթացուիք յանուն յոգի զոսե-
զերս համայն լուսաւորեցին. զմարդկային ա-
զինս յապականութէ յափշտակեցին. զերկրա-
ւորս ծնունդ յերկրէ երկինս ձգեցին. զթա-
գաւորս և զիմաստունս'ի կրօնս ՇՈՒԹԷ
վերածին. զսանդարամետականս և զՍՄ՚զօրու-
ԹԷ դժոխոց սարսեցուցին։
Հայրապետաց և խոստովանողացն ջանից վաս-
տակք յանուն յոգի զորդիս լուսոյ յՍՈՒԹԱՊԱՏԻՒ
կարգաց վայելչուիս զարդարեցին, և բիւրաղ-
դի կրթականութիք զեկեղեցիս պայծառացու-
ցին. և զվանթարեալս'ի հերձուածողական ա-
ղանդից ուղղափառ վարդապետութէ վերանո-
ղեցին։
Ա՜ՐԱՐԻՐՈՍԱՑ յոլովագումար բազմութիք յանուն
յոգի արիացեալք կործանեցին զկրոնխտութիւն
մահու. շինցուցին զուժգնութի հրոյ և սրոյ. ա-
համարհեցին զբռնութի ինքնակալաց և դատաւ-
ՐԱՑ. կանգնեցին յաղթանակ ՇԷԴԻՄ դժնդակու-
ԹԷ անագորոյն թշնամեաց. և ընծայեցին՝ զան-
ՁԻՆս քեզ պատարագ անանց պարծանաց։
Կուսանաց զգաստութիք յանուն յոգի շահատակ

Հ 1-19

եալ 'ի տկարութիւն սիրալի փայլեցան 'ի սրբութիւն. ցանկալի երևեցան 'ի հոգեսաղարթ գեղեցկութիւն, և չքնաղ հանդիսացան 'ի զանազան կիրս փոքձուն. յաղթօղ գասան ախտից դժնեղութիւն, և վիճակեցան անմարմնոց գասակարգուն։

Լուսամենեքին առհարկ՝ որք միանգամ յանուն քո եկեն ապաստան, և զանուն քո կանգնեցին իւրեանց փրկարան, 'ի չարէ զերծան, և 'ի բարին հաստեցան։

Դ. Ընդ ամենեսին ընդ այսոսիկ և ես անարժանս՝ յամի, և յամի տաժանակիր տուչայտեալս՝ յամ սրտէ ապաւինեալ յանունդ քոյ. վերագոչեմ առ քեզ, ողորմեա՛ ինձ. լուր ձայնի պաղատանաց և օգնեա՛ ինձ։ Լուեալ լսել ձայնի իմում ոչ հաճեսցի ունկն քո, լուր կոչման ամենակեցոյց անուան քո. և զօրութիւն գերահրաշ նորուն նպաստից զօրացս դիս՝ ոչ միայն կարդալ զցանկալի անուն քո ճշմարտութիւն, այլև վարել 'ի սէր նորին հաստատութիւն. 'ի նոյն ցնծալ և 'ի նոյն զուարճանալ. երգել անուան քում զերգս նորս, և նուագել նմին գովութիւնս 'ի բարձանց։ Համբերել վա սիրոյ անուան քո, և 'ի պատիւ նորին անտրտունջ և անշշուկ տանիլ ամի։

Լայնել զանուն յիդ յարիցէ սիրտ իմ 'ի նոյն բերկրիլ, և յարտասանել զնոյն՝ զօրասցի հոգիս 'ի փոյթ պաշտաման նորին բերիլ. յանուն քո՝ զբ 'ի համբերութիւնն յարիլ, և յանուն քո զխոնարհութիւն փարիլ. յանուն քո՝ զբ բարձրանալ և յանուն քո փառաւորիլ։ Յանուն քո՝ զբ աղաղակել, ալելուիա, և յանուն քո փոքանչել, ոսկանայ. յանուն քո՝ զբ նենագրել զամ, և

յանուն քո բարեբանել և գոչել, ամէն։
Պվ երկրպագելի անուն յՕ. ամենաբաղցր ձայն, հրաշալի բարբառ, սքանչելափառ հնչումն։ Դու, յոյս հաւատացելոց, դու կեանք 'ի կեանս նո-ղոգելոց. դու նուէրագ բերկրանաց և ինքնդդաշն փրկանաց. դու պայման խաղաղութեան, և դու աւետիս հաշտութեան երկնի և երկրի։
Բաւականացո զիս յՕ կրելյիս արժանապէս զանուն քո, և յամ 'ի կեանս իմ սրբութեամբ պաշտել զքեզ և զանուն քո 'ի քեզ. և 'ի կետ կատարմանս լրութեան քոյոյ բարութեան ժամանել առ քեզ. և ընդ ՝ծաս քո երգել։ * Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան ‖ սաղ. հԺ. 17։

Գ.

Կիւրակէ զկնի Ծննդեան տեառն։

Հոգեւորական Ծնունդ։

Ա. Ընձառելի ցուցաս մեզ փառք երկրպա-գելի Ծննդեան քո ոգի որդի այ. Ծնաբ 'ի կուսէ անապական, և լցուցեր զաշխարհս օրհ-նութիւն. Ծնեալ 'ի մօրէ՝ եղեր որդի մարդոյ. և զմեզ ծնաբ յորդիս այ. Ծնանելով վերս մեր 'ի վե-րայ երկրի՝ ծնաբ զմեզ վասն քո յերկինս։
Ծնունդդ 'ի հօրէ արարածական մնայ անհա-սանելի վերաձայնի. և ծնունդդ 'ի մօրէ՝ առ ամենեսին հրաշալի. իսկ մեր այս ծնունդ հո-գեւորական՝ հողեղինացս անտեսանելի։ Ոչ զոր օրինակ զծնեալդ՝ մարդ տեսանեմք, և ՝ծ

դաւանեմք, սոյնպէս և մեք մարդ տեսանիմք, և սակայն 'ի ձեռն սրբարարդ շնորհաց գրեթէ ամ ի մեն նկարիմք առ 'ի ներքս։

Բանդի սովին հաղորդակից ածուեդ լինելով 'ի նմանութի բնութեդ կերպարանիմք. վասն զի այս շնորհք իրական նմանութի ինչ է ածելոյն բնութեդ. որոյ ընդունելութիւն զգենումն զնոյն, և նովին նմանաստիպ հանդերձեմք ձշմարտիւ ոչ անտեսաբար. որով և ծնանիմք որդիք ոչ կենդանւոյ. ոչ կեղծեօք, այլ ձշմարտութիւն. ոչ յաբեմնէ և ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն, այլ առ 'ի քէն և քև և 'ի ձեռն քո։ Ոչ արտաքսապէս, այլ ներքսապէս. ոչ վայրապար, այլ տիրաբար։ Զի թէ ոչ այսպէս, և ոչ իսկ մեզ լիներ որդի անուանիլ ոչ, այլ օտարախորդ իմն։ Բանդի ոչ որ ասի, այլ որ ծնանի ձշմարտապէս, նա կոչի որդի իսկապէս. իսկ որ միանգամ ծնանի՝ յառաջ դայ 'ի կենդանւոյ 'ի նմանութիւն տեսակարար բնութե։ Լասիկ բազմադիմի կենդանիք արտածին 'ի մէնք. բայց ոչ են որդիք, այլ օտարք. զի չեն 'ի նմանութի բնութե մերոյ։ Լու քանզի դու ինքն քոյին անընդունելի բարբառով որդիս զմեզ կոչեցեր, և զպատգամն բանիցդ վկայ 'ի սոյն կանգնեցեր, ասա ուրեմն ոչ 'ի նանիր և ոչ 'ի պատիր որդեգրեալոցս ընծայի պատիւս այս։

Որ թէ քանի մեծ իցէ այս պարգև հնորհաց՝ զոր բաժանեցեր 'ի մեզ. որով կնքեցեր զմեզ ոչ որդի եղեթ, այլ և ժառանգ թագաւորութիւն և մեծուութիւն. և զհոգեղէնս բնութի նախանձելի հոգեղինաց կացուցեր։

Օ՛ այս շնորհ և յանմեղութիւն վիճակի փառաց գէաք հանդերձ առաւելութիւն, ևս և արտաքին շքեղութիւն, նա թէ անմահութիւն իսկ. բայց զոր ունեաքն վայելել՝ կորուսաք. իսկ 'ի ծագելոյսոյդ յԾ, և 'ի ծնանիլդ 'ի մէնք՝ կրկին վերստին զոյն մեզ պարգևեցեր. որով և եղև մեզ ոչ միայն վերածնանիլ քև, այլև սահմանիլ ոյ յորդեդրութիւն սքանչելի, և 'ի վայելումն գերբնական կենաց։ Լ՛ զայս տպաւորեցեր 'ի մեզ յապականացու գոլով տակաւին մարմնի. զի՞նչ ապա յանապականութեն. յոր արդեաք բարձրութի անդատին ունիցիս առնուլ զմեզ, անբմբռնելի և այս 'ի մէնք։

Ի՛. Օ՛ այսր անպատուամ շնորհի անտեսութի զառաջինն գրաւականեցաք յաւագանին միրտութիւն, յորում մեռաք մեղայ, և թաղեցաք ըստ հին մարդոյն. և անդէն անդ կենդանացաք. և 'ի կրկին մեռանիլ մեր մեղքՙ դու ինքն որդի ոյ կրկին հեղեր 'ի մեզ կեանս յապաշխարութեն աւազան թողութի մեղայ. զոր և եօթանասնեկին եօթն յաւելմամբ փոխատրել մեզ խոստացար.

Տաղ. ԺԲ. 22։

Օ՛ զի՞նչ տացուք տրիտուր ընդ այսր մեծի և ա՛ն կշռելի բարերարութեդ, զի՞նչ անոխակալ մարդասիրութեդ. զի՞նչ ամենատատ օրհնութեդ։ Ունի՞ք, յիրաւի չունիմք ինչ տալ. եթէ ունիցի՞ք ևս՝ քոյ է. եթէ տացուք ինչ՝ առ 'ի քէն է. եթէ յանդիման արասցուք ինչ՝ քև պարգևեալ է մեզ։ Լ՛ այլ տակայն 'ի նախաժամն շնորհաց քոց զարթուցեալ մեր ամենեցուն՝ ընդ այսր ոտի գոհութիւս և փառս մատուցանեմք քեզ յանմի և

յիմմ ժամ. օրհնեմք և բարեբանեմք զքեզ. մեծացուցանեմք զնինքնաբաւ բարուեդ, և բարձր առնեմք զամենահաստատ ուրուեթիդ։

Գ. Իսկ ես զի՞նչ. վայ տալով անձինս աւաղեմ. զի տարապարտ 'ի վար արկի զայս ամ, և 'ի զուր հանի։ Ողբամ զժամն զայն, յորում եղծի և աղաւաղեցի զայսչափ շնորհաց քոց զեղմունս. Ողբամ զառիթն, յորում ցնդեցի զայսպիսի ձրիցդ զլեուեթե. Ողբամ զկեանս իմ, յորում վատնեցի զայսպիսի բաժին բարեմասնուեթե. Ողբամ զապերախտուն իմ. ողբամ զդիմարուն իմ. ողբամ զդառնութեամբ վիճակ իմ։

Ոչ լաւ էր ինձ բնաւ չտեսանել ինչ զլոյս, քան յայսպիսի լուսոյ զկոգի իմ խաւարեցուցանել. ոչ բարի լինէր անձինս չվայելել ինչ երբեք 'ի բարիս կենցաղոյս, 'ք զայսպիսի բարեաց բերս չորացուցանել. ոչ էր շատ անառակեալ որդւոյս չծնանիլ որդի մարդոյ, քան յայսպիսի ոճանման ծննդեանե զորդեգրուեթիւն իմ 'ի խանգար արկանել։

Լաւ աւասիկ հաւատարչաւոր նախնոյն իմոյ խղճատանջ տուչորիմ. զիարդ չիմացայ. ոչ խաբեցայ. ելբ ցնդեցայ. հիմ անարդեցայ։ Լաբէ խելագարուես. առաւել անսայի զգայուես քան ամենայորդոր ազգարարութեդ խորհրդոյ. առաւել միտեցայ զկնի խրատու չարին քան քրիստոնչուեն պատգամացդ. առաւել ախորժեցայ ընթանալ զկեռ չար օրինակ գնացից 'ք ոճային քս բանից։ Ոչ զարմանամ, այլ տապանամ թէ զիարդ խոտորեցայ. 'ք զկն մարդ եմ ապիկար, և միաք իմ հաստատեալ 'ի մանկութե՛ն 'ի խնամն չարի ծնն.

Ը. 21. բայց զարմանամ, եթէ՝ ի դիմս լս իմ՝ քոյին
հնորհՀՔ առ քեզ՝ անտես արասցես զիս. քանզի
մինչ յամի՝ ի ինամն բարւոյ ինքնաշարժ բերիս
և բերկրիս, Խմասդ. Ը. 1. զարմանս ինն երևաւ
նայր մերժել զապաւինեալս՝ ի քեզ։
Յոյց ինձ աղաչեմ՝ յայս նուճագ ևս զգուլթ մար-
դասիրութեան քո. մի՝ դարձուցաներ զերեսս քո.
մի՝ մերժեր, և մի՝ իբր զանարժան և զապաշնորհ
ծառայ՝ ի բաց վաներ զիս։ Զգնեա՝ ինձ ՀՀԾ
փրկիչ իմ՝, և ողորմեա՝ ինձ. և ես՝ ոչ դադարե-
ցայց յօրհնելոյ զքեզ միշտ և յամ՝ յաւիտեանս։

Գ.

Յայտնութեան գն։

Ա՝. Ի ծագել արեգականդ արդարութեան՝ տիե-
զերս համայն լուսաւորեալ՝ ցնծութեամբ
զգեցար։ Օ՝ արթոյց զերկինս և զերկիր՝՝ ի տե-
սուն կրթիլ յայտնութեան փառաց քոց։ Օ՝ արթոյց
զհոգեղէնս՝ ի վերուստ՝ աւետարանել ՀՀմնին ըզ-
մեծվայելչութիւն քո և զհաճութիւն ընդ արարածս։
Օ՝ արթոյց ապա զՀողեղէնս՝ քարոզել զգթա-
սիրութիւն քո՝ զոր յայտնեցեր որդւոց մարդկան։
Ա՝. մի՝ ոչ շատացեալ նուճաստագունութիւնք հուչակ
հարկանել՝՝ ի գերագոյնսն վստահայաւ։ Յարոյց
յարևելից զաստղ նորանշան, և նովին հրաւի-
բեաց զմոգաւորս և զիմաստունս, ընդ որս և
զաղգս ՀՀմ՝՝ ազգ առնել յորդիս ազատայ ըզ-
ծագումն անեղական լուսոյդ։ Ա՝. ռոսա եղև

առանձինն հրաւէր ցնծութեան, և առ ամենեսեան՝
յորդոր զգաստութեան։

Լ. Այս ասաց զքանչելի՝ հրաժշտին իմն ցուցաւ, լու-
սակերտեալ յօդոյ, 'ի հրատարակել զարքայդ
նորածին՝ որ 'ի կուսէ իբր յանապատական հրոյ և
յանխառն օդոյ նոր իմն փայլեցար։ Ի՞ատեան
իմն բացաւ սա յերկինս, յորում ընթերցան մոգք
զծնունդ քո 'ի փրկութիւն տիեզերաց։ Դրիչ եղև
սա երկնից, և գրեաց 'ի սիրտս հեթանոսաց և
ամ՛ապանց զլուսին ժամանակաց խորին խորհրդոյ
մարդեղութեան քո։

Լ. Եղուր կերպացաւ սա երկնից, որ ոգեղէն բար-
բառով խօսեցաւ ընդ երիս թագաւորս աղգաց,
և քարոզեաց առ ամենեսին, թէ ահա ծագեաց
ձեզ լոյսն յաւիտենական՝ թողէք զխաւար մե-
ղաց։ Ահա ծնաւ ձեզ 'ի մարմին, փութացէք
'ի պաշտօն նոր, և թողէք զկուռս։ փրկիչ երևե-
ցաւ ձեզ, 'ի խնդիր լերուք նմա, և թողէք ըզ-
գերութեան սատանայի։ Կեանք յայտնեցաւ ձեզ,
'ի նա մերձեցարուք, և թողէք զծառայութիւն
մահու։

Լ. Եւ յարձակեցաւ սա յերկնից՝ ուղղեալ ընդ
բեթղեհէմ 'ի նահանջել զվարանմունս թշնա-
մեաց, և 'ի ցուցանել զթագաւորդ փառաց։
Դրօշակ կանգնեցաւ սա 'ի բարձունս՝ 'ի հռչա-
կել աշխարհի զփառաւոր յաղթութիւն քո ընդեմ
բռնութեան սատանայի։ Փող երկնից հնչեցաւ սա՝
ազդ առնել տիեզերաց զաւետիս հաշտութեան հօր
քո ընդ մեզ։ Ի գիշերի ճառագայթեր, և 'ի
տուընջեան շաւիղ հորդեր. և 'ի խաւարի նստե-
լոց աւր ճշմարիտ լոյսդ ասաջնորդեր։

Լ.յս այն ասաղ է՝ զոր հանապազ ծագէս 'ի սիրտ իմ, և ես ինչ ոչ զգամ։ Լ.յս այն ասաղ է, որով յամի լուսաւոր առնէս զհոգի իմ, և ես ի՞նչ մութն գնամ։ Լ.յս այն ասաղ է, որով ուղի ցուցանես ինձ յամ գործս իմ, և ես զարմանամ։

Լրանսի երկոգ թագաւորաց, որ զքոյդ տեսին զասաղ, և չոքան զՏեառ ընթացից նոր. տեսին զնա, և նա ետես զնա, և ուղեցոյց եղև նոցա, և հասոյց զնա յերդմ 'ի գտանել զքեզ։ Ովքա՞ բերգած փութեայ սոցա. խնդրեցին և հարցին, ո՞ր է որ ծնաւ արքայն հրեից. որոնեցին և ոչ զանգիտեցին։ Լ.ս յապախտ առնել խաւարա խորհուրդ ազգին, և 'ի խռովիլ վայրենամիտ հերոտիդն, մատեանս բացին մարգարէից, և նո. քիմբք ծանեան զտեղի ծննդեան քո։

Լ.ս ահա կրկին առաջնորդեալ լուսափայլ աստեղն՝ հասին 'ի բեթղեհեմ. ուր գտին՝ որում ցանկային։ Խնդացին խնդութի՞ մեծ. և խնդութի՞ մնին յայրն՝ ուր եկիր։ Տեսին զքեզ և զամենն օրհնեալ մայր քո լնդ քեզ, և զարմացան։ Զարմացան այո. զի զոր ո՞ւծ հաւատային՝ 'ի կերպարանս մարդոյ նայեին. զարմացան, զի մեծացուցիչ ամի զքեզ գիտէին, և յաղքատութե՞ մեծի գտանէին. զարմացան, զի ո՞ր երկնի և երկրի զքեզ խոստովանէին, և յանձուկ այրի միւսմ բազմեալ նշմարէին։

Ոչ շփոթեցան և ոչ յերկեայս անկան, և ոչ բնաւ ինչ յայլ ընդ այլոյ խորհուրդս տարուբերեան. այլ զոր մարդ տեսանէին՝ իբր ճշմարտի՞ այ հոգւով երկիրպագանէին. և անկեալ յեր-

կիր՝ զանծային պաշտօն մաքրդացելոյդ մատուցա-
նելին. և՝ի փոքուչափ հատակի տնօրինեցելումդ
պատիւ ամենայարդ ձօնելին։ Լաւ բայեալ ըզ-
պատրաստեալ զանձս իւրեանց՝ աղքատացելոյդ
մեր մեր ուղերձելին ոսկի, հնդրուկ և զմուռս։
Թագաւոր Ճանաչելով զքեզ՝ ոսկի մատուցա-
նելին. ահա Աշմարիտ հաւատալով հնդրուկ ըն-
ծայելին. և մարդ ջարչարելի նկատելով զմուռս
ընձեռելին։ Ի՝ ձեռն ոսկւոյ խոստովանելին ըզ-
քեզ իմաստութիւն յաւիտենական. ի՝ ձեռն
հնդրկի հրատարակելին զքեզ քահանայապետ
մեծ՝ մատուցող և ընդունող արդեանց և աղօ-
թից. ի՝ ձեռն զմուռոյ դառանելին զքեզ փրկիչ
և ազատիչ ազգի մարդկան՝ ի դառնութենէ ան-
վախման տանջանաց։

Բ. Լաջանիկքս այսոքիկ հանդարեալք՝ ի քարո-
զելն զքեզ յերկիր՝ աղաղակելին. * Որ է որ
ծնաւ արքայն հրեից... եկաք երկիրպագանել
նմա ॥. մատ. Բ. 2։ Որ է որ ծնաւ ասելով խոս-
տովանելին զքեզ մարդ. արքայ հրեից ասելով
Ճանաչելին զքեզ թագաւոր. եկաք երկիրպա-
գանել նմա ասելով դառանելին զքեզ աստ։ Լաւ
ահա զոր բանիւք քարոզեցին զքեզ՝ զնոյն ըն-
ծայիւք իւրեանց հաստատեցին։ Որովք և մա-
տուցին ոք զանձինս իւրեանց ծնիցելոյդ սոյ, առ
՝ի ներքս և առ արտաքս. առ՝ի ներքս՝ մտօք
և կամօք, և առ արտաքս՝ պատարագօք. և՛ և
բերանով՝ ոչ միայն օրհնելով զքեզ, և շնորհս
մատուցանելով, այլ և բարբառելով առ քեզ։

Օ՛ի յետ այս քան տաժանմամբ Ճանապարհորդելոյ նոյ մեր քո, և յետ այսչափ քննելոյ և որս

նեալոյ, և յետ այսպիսեաց գտանելոյ և յայտնի տեսանելոյ՝ զի՞նչ ոչ խօսէին առ քեզ. միթէ պատանձեալ կային առաջի քո։ Հերեսս միմեանց հայէին, դառնային և՛ի քեզ նայէին. յիրեարս դարձեալ դառնային, և առ քեզ ակնարկելով ասէին՝ ի՞նչ ասես. ով անպարագիրդ մանուկ սիրելի. ով ամենասէր տղայացեալդ՝ Թագաւոր երկնի և երկրի. ով հաստիչդ տիեզերաց և կերակրիչդ ամի, պատարագեալդ դիեցիկ՝ ի մեր քումդ գրկի։ Հայեին և՛ի մայրդ ամենօրհնեալ, և հիացեալ՝ ասէին. ով երանեալ մայր, և բարեբանեալդ կոյս. զինչ է՝ զոր տեսանեմքս. ո՞ է՝ զոր Հառագայթեցեր յաշխարհ. զի՞ արդեօք եղև, և զիա՞րդ իցէ, զի զոր անվայրապակ էուն ծանեաք՝ ի գիրկս քո տղայ տեսաք։

Օ զի՞նչ ասպա և մայր քո տոնելի. մինչև՞ եր բարբառ արձակեալ մանկացելոյդ՝ նա ինքն բարբառեր բարբառ հրեշտակային. ահա սա է ասելով, զոր ՝ի գուշակելոյ մարգարէուն կուսուն ծնայ. ահա սա է՝ որ լոյս յայտնեցաւ և յոյս ընծայեցաւ ամենայն ազգաց. ահա սա է՝ որ՝ ի բարձանց յայտնեաց ձեզ զինքն. զոր և հայր ինքեաց ասէ։

Օ զի՞նչ ասպա և երկրպագեալդ յերկնաւորաց և յերկրաւորաց, ամենալի մեծութիւդ, ամենառատ բարութիւդ, ամենատիտաքելի ցնծութիւնդ. զգեցար ահա այսօր զխոստովանութի՛ի Թագաւորաց, և զմեծ վայելչութի՛ն յերկրպագութի՛ն հեթանոս ազանց։ Ոչ հաւատամ՝ թէ ունայն արձակեցեր՝ զորս առ քեզ լիաձեռն տեսեր. ոչ հաւատամ՝, թէ ընդ այնքանեաց վշտաց նոցին

անվարձ թողեր զնոսին. ոչ հաւատամ թէ ընդ այնչափ ընծայիչ նոցա՝ զանսպառելի գանձուցդ ոչ փոխարինեցեր զօրհնութիւն։ Լատուն քեզ, և առին 'ի քէն. ետուն քեզ՝ զբրս հնար էր նոցա ընծայել. և առին 'ի քէն, զբրս արժան էր քեզ պարգևել նոցա։

Լրանալոյ գտան զբ, զի ել վտանգ վարանական մատուցեալ, յառաջագոյն ձեռնտու եղէն քեզ. սաղմ. ԺԵ. 32. անցին ել հուր նախանձու թշնամեաց քոց, և ընդ ջուր դառնութեան օդոց և վայրաց. եկին, հասին և հանին 'ի ջրհորոյն բեթղեհեմի զջուր խորին խորհրդոց քոց։ Բաց. Գ. 16. և յաղերացդ հնորհաց զջուր ուրախութեան. Եսայ. ԺԲ. 3։ Լ խացան հոգւով և դարձան մարմնով. սիրով ել քեզ մնալով. և 'ի տեսլեան հրաման առեալ առ 'ի քէն՝ չոքան յաչխարհիւրեանց. և եղէն քարոզ Աշմարտութեան։

Գ. Լաւդ ասասնոր աւաղելի անձինս. որքան ամենի անհնարին պատեալ պաշարէ զանձն իմ. զի՞նչ ասացից, ամաչեմ։ Սոքա խնդրեցին և գտին. և ընծայիւք մեծացուցանելով զանկարօտդ՝ պարգևաւք քո մեծացան։ Լաս միայն թոյլս և յոյլս՝ ապաշնորհ ոգիս՝ ապերախտ երևեալ՝ և ոչ իսկ զՀետ լինիմ խնդրելոյ զքեզ. այլ զնս։ Պատրաստիմ մատուցանել քեզ ոչ զոսկի սիրոյ, և ոչ կնդրուկ աղօթից. ոչ զմուռս ախտիցս Աշնման, և ոչ որ ինչ քեզ իցէ հաճոյ կան. այլ՝ զանօրէնութեանս կոյտս և զյանցանաց հոյլս։

Լայց արդ զեղեալ յոտս մարդասիրութեանդ քոյ զնամ՝ զչարիս իմ փոխանակ նոցին ընծայիչ՝ ար-

տասնեօք պաղատիմ. մի՛ հայիր 'ի սոսա յո՛ յորս անիրաւեցայ. այլ ընդեա՛ զսոսա։ Եկ եղբա՛ր, զի և նոքա եղուն քեզ. և զի՞նչ մեծ իցէ, զի փոխարինուսցէ ինն ի գործ։ Մեծ այն է՝ եթէ փոխանակ իմոցս չարեաց՝ բարի հատուցցես ինձ. քանզի այս է քս սովորութի։ Զ ապաքէն մինչդեռ թշնամի էաք քեզ՝ ցուցեր մեզ զբարերարութիւն քո. նա՛ 'ի վանել մեր 'ի մէնջ զփրկարարդ մեր՝ դու փոխանակ մերժելոյ զմեզ՝ ելիր առ մեզ, և եղուր զանձն յապրեցուցանել զմեզ։ Այս գթասիրութիւն քո համարձակեալ իմ այսօր՝ մատչիմ առ քեզ. և ունելով իմ միջնորդ և բարեխօս զամենագութ մայրդ, նովաւ և 'ի ձեռն նոր աղաչեմ և մաղթեմ, մի՛ ընդունայն արձակեր զիս. մի՛ ամենապարտեալ դարձուցաներ զիս. մի՛ իբր պժգալով՝ 'ի քաց տարագրեր զիս։ Գ. Յլ օրհնեա՛ զիս, և տուր ինձ տալ քեզ զորս ունիմ 'ի քէն։ Ունիմ ոսկի, ընդ այնր մատուցից քեզ զսէր իմ. չունիմ հնդրուկ, ել այնր մատուցից քեզ զմարմնոյս ձնշումն։ Գ. Եւ զորս ունիմ՝ զնոսին ևս մատուցից քեզ զերբեակ կարողուիս հոգւոյ իմոյ. զիմաս իմ փոխանակ ոսկւոյ. զկամս իմ փոխանակ հնդրկի. զմիշտոութիւն իմ փոխանակ զմնաց։ Գ. Յո՛ զոսոսին մատուցանեմ քեզ, և ը սոսին զանձն իմ քոլոր։ Ընկալ աղաչեմ. և շնորհեա՛ ինձ ընդ վերջնումն ուղղութիւն թողութի՛ն մեղայ ի մոց. և ընդ առաջնումն ընձեռելոյ ձօնից զփրկարար շնորհս. և ընդ միջնումն մատուցելոյ ընծայից զպարգևս հոգւոյդ սրբոյ. զի յայսմ հետէ քոյդ լեալ՝ քեզ միայնոյդ ծառայեցից. և

քեզ մատուցից փառս Ի՛ հօր և Ի՛ Հոգւոյդ սրբոյ յաւիտեան։

Լ՝ՆՔԵՐՈՒՄ՝ ԶԼԱՊԱԿԵՐՊՈՒՆԻՑ • Է • 293։

Լ.

Կիւրակէ յելս աւուրց յայտնութեան։

Ի՛ Խորհուրդ Դիրքոյնքն յաչ •

Ա. Ընդհատանելի բանդ ՝ուծ • նկարագիր էութեան հօր • յանմի օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս • որ ՝ի փրկուել դատապարտելոցս խոնարհեալ՝ յայտնի երևեցուցեր մեզ զսիրդ։ Լ՝ս հոգեղէն բնութեա պատկերակից եղեալ՝ հաճեցար ՝ի սկզբան տնօրինական գործոց քոց գալ ՝ի միրտութիւն • որով լուսացեր և սրբեցեր զմեզ զաղտեղեալ պատկերս , և վերածեր յառաջին փառս ՝ի կերպարանս նմանակից գոլոյ կենդանութեան։

Ա՝կրտեցար՝ ոչ զի կարօտ էիր , այլ զի կարող էիր • զի քոյովդ միրտութիւն հաստեալ զմիրտութիւս խորհուրդ՝ միրտեսցես զմեզ նորովա , և մաքրեսցես ՝ի մեղաց մերոց • նորոգելով միանգամայն և զադամայինս բնութիւն՝ որ ՝ի մեզ։ Ա՝կրտեցար՝ ոչ զի որդիացիս ՝ի մեզ զի Ձնմարիտ որդի էիր այլ և ՝ուծ կենդանի • այլ զի զմեզ որդիացուսցես հօրդ երկնաւորի։ Ոչ զի լեսացիս շնորհաբ , զի դու ինքն շնորհք երևեցար , և մարդկայնովդ իսկ շտեմարան շնորհաց ցուցար , այլ զի արժանացուսցես և զմեզ լեսութեան շնորհացդ։

Ա՝ստեցար ստեղծողդ երկնի և երկրի ՝ի ստեղծ-

ուածոյ ձեռին քո. զի նորոգ ստեղծագործեա
ցես զմեզ. և որ մաքրիչդ ես ամի՝ լուացար ի
մաքրեցելոյդ ի քէն. զի և զմեզ լուացես ի
մեղաց մերոց։ Ա՛նստուերը լոյսդ կնքեցար ի
ստուերական լուսոյ, և արեգակնդ ամենապայ-
ծառ ի նսեմանաց արուսեկէ. ամենափայլ ձա-
ռագայթդ յաղօտանանս ձրագէ, և աղբիւրդ
կենաց ի նուազական առուէ. ովկիանոսդ մեծ
ի լճէ փոքրուէ, և * լիուիդ ի կաթիլ մի ջրոյ։
Որ և ի նշմարել անդ իւրում զսրբութիւդ սքՀ՝
աղաղակեաց ասելով. ահա դառն ա՛յ, որ մկը-
տութիւն իւրով բառնայ զմեղս աշխարհի։
Ա՛ռտեցար ոչ յաւազանն սեւոյսյ, ուր կոյրք
լուսաւորին. ոչ ի պրոբատիկէ՝ ուր հիւանդք
առողջանային. ոչ յաղբերս և ոչ ի խաղս, յորս
մանդիկ լուանային. այլ ի Հոսանան յորդանա-
նում. զի զերս տիրերական ծովու, զծովածուփն
ասեմ՝ զնոսան փառս և զփարիկութիւնս աշխար-
հի ի մեռելուն ծով ամացես. որով ահա յոր-
դեցան և զերան ի մեզ հնորհայ քոյ հոսանք։
Օ՛արհուրեցաւ յորդանան յակնարկել զեկդ
առ ինքն զիւրոյ հաստչին, և՝ ի փախուստ փու-
թացաւ. այլ յընդունիլն զքեզ ի ծոց իւր խայ-
տաց և ցնծացաւ. ուստի և վտակ առ վտակ զա-
չելով պատգամաւոր եղև տեսողաց.
Ա՛չերով պատգամաւոր եղև տեսողաց.
Ա՛ռտեցար անձառելի խոնարհութ. և լցեր
զնամարդարուն ամենակշիռ իրաւամբք. յորում
և յայտնի ցուցեր երկնաւորաց և երկրաւորաց
զբազմապատիկ իմաստութիս քո, և զսքանչելի
խորհուրդս ածայրական տնտեսութեանդ։ Ցուցեր և
սանդարամետականաց զզօրութիւն բազկի քո. որով

անդէն ջաղխեցեր մարդկութիւն զգլուխանցիրեալ զվիշապայ, ծածկելով ի նոցունց զանծուիդ։ Ա՝կրտեցար իբրև մարդ, և ի հօրէ վկայեցար ասելով՝ այս է որդի։ Ի՝նդէն առ նմին և առաքելոյ աղաւնւոյ իջանելով՝ ի բարձանց՝ քարոզեաց զքեզ էակից իւր և փառակից։ Զարմացաւ երկիր, և պատառեցան երկինք՝ ի վերուստ ցնծութիւն. և ետուն մեզ զաղդեցութիւն աւետիս մեծ, եթէ մեք ևս՝ ի մկրտիլ մերում վկայիմք և առաձայնիմք որդի՝ այ, և ընկալեալ զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ յօրհնիմք տաճար ամենասուրբ երդուելեդ։ Այս և՝ ի սոյն խորհուրդ յանուն հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ կնքիմք սրբութիւն աւանդանին։ Ի՝անին մեզ յայնժամ դրունք՝ որ եկեղեցւոյ յընդունել զմեզ յորդիս լուսոյ. բանին և երկինք հրաւիրել զմեզ՝ ի ժառանգութիւն փառաց որդեգրութեան մերոյ։

Ա՝ռեցար բնաւորական ջրով, և մկրտեցեր զմեզ դերբնական հրով։ Ա՝զ զարմանալեացս. ջրով այրեցեր զմեղս մեր, և հրով լուսացեր ըստ տիեզերս՝ ի մեղաց։ Զ՝ջրով կիզեցեր զմնչ. և հրով շիջուցեր զյանցանս նախաստեղծ մարդոյն։ Զ՝ջրով վառեցեր՝ ի մեզ զսէրդ, և հրով հոգւոյդ սրբոյ զոսկացուցեր զտիեզերս։

Աքանչացան վերինք և սոսկացան ստորինք. զի՞նչ այս իցէ, և զիարդ լինիցի. ջուր տարրեղէն զջրասցի իբրև հրեղէն, և գործեսցէ զգործ հոգեղէն։ Խորհեն խորհուրդք քո՝ որ՝ ածմեր, և անկշռելի հնարաւորութիւդ արուեսաք։ Հանձարեցեր՝ որում ոչ ակն ունէաք զանակնունելիս. և ձարտարեցեր՝ ի մեզ՝ որում ոչ հասա-

նէ՝աք՝ զանկարծելոս։ Լ.բարեր որդս և հաձե-
ցար. և կարգեցեր ոգ և կամեցար։ Փառք և
գոհութիւն ամենիշխան տրութեանդ. օրհնեալ
է յամի ամենազօր տեսչութիւն քոնամոց քոց։
Դ. Լնպիսի իմն թուի տկարացս և հիգացս՝
եթէ թողեալ արարչիդ ամի զնա՝ զմինչ միայն
հոգ տանելով՝ զսոյն և զսմին նմանատիպ բիւրա-
զգի բարիս խորհիլ յօժարելոյ ի ցես, և սոքիմիք
զսեր քո 'ի մեզ արտայայտեալ. և ոգ թէ ըզ-
քոյդ մուռացել՝ զմեզ և զմերս կամաւորել ինչ
ի ցես բարձրացուցանել։
Լսկ մեք ապաշնորհ գտեալ և երախտամոռաց
երևեալ՝ յանհոգս նիրհեմք. ոչ յարժանաւոր
գոհութիւս վերաթևեմք, և ոչ 'ի փոխարինել
ինչ իւիք գուն գործեմք. իբր թմրեալ և ան-
թարմացեալ դանդաղեմք. և իբր արբեալ և ցնո-
բեալ բանդագուշեմք։ Դանաչեմք այն և տես-
չամք ըստ կարի կարել գէթ յարդիւնս մատ-
չելով 'ի լրումն հատուցման երագել. սակայն 'ի
տկարամիտ խորհուրդս դեգերեալ՝ յանպիտան
գործս և յանվայել արարս տատանիմք. և կամք
մեամք ալալացեալ և վտտացեալ, ցամաքեալ
և չորացեալ։
Լ.յլ դու ած մեր և տոր յա քոյ, էակից հօր և
տաբ հոգւոյդ, օժանդակեա տկարացեալոց. և
լեր լքեալոց մեզ ձեռնտու։ Դատաւորեա և
ինձ մանն բարի. զի զգաստացեալ 'ի մնլորա-
գնաց շաւղաց, մարթացայց մկրտուեդ հնորհիւ
անվթար ընթանալ 'ի հաձոյս կամաց քոց, և
յանբծութեամբ ոչ հեղլով զկեանս իմ՝ աներկեան
ժամանել 'ի կենանն յաւիտենականս։

Օ.

Առաջին կիւրակէ զկնի յայտնութեան։

Հաւատք։

Ամենաստեղծ Աստուածային վերայայտնութիւնդ 'ի Աշխարհս Հաւատոյ ի անաղարտ տեղւոյ միայնոյ կաթուղիկէ առաքելական՝ որ է եկեղեցւոյ՝ վստահամիտ խորհրդով մատչիմ առաջի մեծվայելչութեան փառաց ամենաստեղծութեանդ։

Գոհանամ և փառաւորեմ զքեզ որ ես ամենայն, զի զայսպիսի ձիր պարգևացդ դերբնականաց հնարհեցեր եկեղեցւոյ քում սրբոյ։ որով անստեղծիւր ուսաք զիմ Աշխարհս երկնային, և որ 'ի վերս է քան զկարգ բնութեան։ և ապատ 'ի մոլորապայման նկատողութենէ հողեղինաց և 'ի մոռոտիապատիր առանդից օտարաց՝ պարսպիմք 'ի ստուգութենէ աննենգ էլն և անստեղն։ Որով և սոյն այս ամենասեղծական առաքինութիւն զանազան մասամբք պայծառանայ 'ի մեզ ըստ յոգնապատիկ տեսակաւորութեան։

Ազնաղութեան իմն է ասնելն։ որով աներկբայ հաւատամբ 'ի միութեան ամենութեանդ յերիս դէմս և յերիս անձինս, 'ի Հայր և յորդի և 'ի՝ որ Հոգիդ։ Լեռասրանութիւն խնկելն։ որով դաւանիմք զիմաձինդ որդի վասն մեր մարդ եղեալ յանապական կուսէ, և յաղագս մերոյ փրկութեան չարչարեալ և մեռեալ, յարուցեալ և համբարձեալ

յերկինս։ Ցեսութեան փափաքելի. որով հպիմք յամ դաղտնութիւս գերբաբուն խորհրդոց քրիստոնեական դաւանութեան մերոյ։

Ուղերքին հնչումն իմանալի. որով մատչիմք 'ի լուր ածաւանդ պատգամաց, որ 'ի փրկուն անձանց մերոց, որ 'ի Թողուն մեղաց, որ 'ի յարուն մեռելոց, որ 'ի Ժառանգութիւն յաւիտենական կենաց։ Ուարքաւ սիրալի յիմացականութեան. որով ամբառնամք յանպատումն և յանձառելիս առ 'ի բանաւորաց հասողութիւն։

Հայելի հիանալի, յորում տեսանեմք զանտեսանելիս ըստ վարագուրաւ. տեսանեմք և զնոր կենդանի աչօք բացօք ընդ տեսակսք զդալի։ Իմաստութեան ցանկալի. որով հասանեմք յանհասանելիս, և ըմբռնեմք զանըմբռնելիս. իմանամք զանիմանալիս, և քննեմք զանքննելիս։ Հնարաւորութեան փարելի. որով առնումք զամ զոր խնդրեմք, և գտանեմք՝ զոր կորուսեալ կարծեմք, և կարեմք՝ զոր անհնարին ճանաչեմք. քանզի * ամ ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատայն ‖ . Մարկ. Ե. 22։

Ուղղեցուն պանծալի. որով գործեմք զանծանիս, մինչև զերքինս անգամ փոխել 'ի ծով. զոր և բազում մասամբք 'ի վերուստ անտի յառաջ առեալ առաքելոյ 'ի համար արկանէ՝ յաւետ զարմանալով քան պատմելով. յԵբր. Գ։

Պայման գովելի, որով ապաքինիմք յախտաւորութեաց հոգւոյ և մարմնոյ. զոր և վկայեաց երկրպագելի բերան քո, և ճշգրտեաց բան քո արդեամբք 'ի կոյրս և 'ի խուլս, 'ի համերս և 'ի կաղս, 'ի լուսնոտս և յայսահարս. զորոց տե-

սեալ զՀաւատս նոցա՝ բժշկութիւն ընձեռեսցեր. և որոց թերի գտան 'ի հաւատս՝ յապաղ օգտեսցեր. մինչև աղաղակել նոցա, Հաւատամք ո՞ր, օգնեա՛ անհաւատութեան մերում Մարկ. Ի. 23։ Կարող էիր ոմի. այլ զկարողդ գոլ է հաւատս խնդրողաց պայմանաւորեցեր, հաւատայք ասելով՝ եթէ կարող եմ. Մատ. Ի. 28։ և թէ հաւատք քո կեցուցին զքեզ Մատ. Ի. 22։ Լու որոց առաւել եղեն հաւատք՝ յառաւելն ստիպեցար, և զառաւելն ցուցեր, յասել ցմին. * ոմ կէն դու մեծ են հաւատք քո. եղիցի քեզ՝ որպէս և կամիս ‖. Մատ. ԺԵ. 28։ և ցմիսն. * Ելիթ, և որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ ‖. Մատ. Ը.

13։

Ը. Այս տուրբ պարգևացդ՝ այն իւղ է կազդուրիչ և դիւրացուցիչ՝ որ թափեալ 'ի գթութիւն մարդասիրութեան քո էօծ զգլուխս մեր ջնջելով 'ի մէնք զիւղ մեղաւորի սաղմ. ՃԺ. 5. 'ի դերել զմիտս 'ի նոճաձուն հնազանդութեան բանիցդ։

Այս այն մանանայ է՝ զոր դու ինքն թագուցեալ կոչեցեր յայտ. Ի. 17. քանզի 'ի թաքուստս և յաներևոյթս հայի. զի է յանդիմանութեան որոց ոչն երևին Եբր. Ժա. 1։

Այս այն մարգարիտ է գեղեցիկ. որոյ սակս վաճառեալ հաւատացելոց զամ մնոտիապաշտութիւս, և զմնալար վարդապետութիւս, և զկեղծաւորութիւն կրօնս՝ գնոց գնեցին զսա. Մատ. ԺԳ. 46։

Այս այն գանձ է ամենալի ծածկեալ յեկեղեցւոջ իբր յագարակի, զոր գտեալ քոռդաւանիկ՝ փոխանակեցին զամ, և սա և զկեանս իւրեանց. և զոր 'ի սմա ծածկեալ տեսին՝ յայտնի ա-

ռանդ եցին Մատ. ԺԴ. 44։

Այս այն անյաղթելի Աշմարտութիւն է՝ որոյ վա-
բիւրաւոր բաղմութիւք վկայից հեղին զարիւնս իւ-
րեանց, և յօղով արեան հաստատեցին և ստա-
ւրագրեցին այսմ։

Այս այն ցանկալի լոյս է՝ որ նշանեցաւ առ մեզ
յամենաբարի երեսաց քոց. սաղ. Դ. 7. և լու-
սաւորեաց վիսաւարելքս, և որք նստեալք էաք
'ի ստուերս մահու։ Այս է այն լոյսն այն, որով
տեսանեմք զլոյս. սաղ. ԼԶ. 10։ և գնամք 'ի լոյս,
և բնակիմք 'ի լոյս, և մատչիմք առ լոյսդ կենս-
դանի։

Զ. Յայսպիսի շնորհս հաղորդ գտեալ և մեծագ-
նեալս՝ պաղատանօք դիմեմ առ անստուերք լոյսդ
յաւիտենական, և առ ինքնագոյ պայծառութիւդ
մշանջենական, մի՛ զրկեր զիս աղաչեմ զքեզ 'ի
փայլմանէ այսր նշուլատիպայլ գեղոյ։ Զ նորհեա՛
վրիպեցեալս՝ վերստին աղաչեմ, յամի՛ սոփա-
լուսաւորիլ, և սովին առաջնորդիլ. և առանց խղ-
տորման խոտղանաց աչաց հոգւոյս սովին անվը-
թար յստակ նշմարել զՀաւատոյս զնամ, և 'ի նո-
սին յարիլ, և մի՛ յիմիք իմիք նսեմանալ և մո-
լորիլ։

Զու ետուր ինձ զսա նշանօք և արուեստիւք և
պէսպէս զօրութիւք. Եբր. Բ. 4. և գիտեմ զի՛
յենդունելս իմ անդ զսոյն՝ ոչ խաբեայայ, և 'ի
պահելս իմ ոչ խաբիմ. քանզի գու ինքն անայ-
լայլելի գոլով Աշմարտութի՝ երբեք ոչ խաբես 'ի
տալդ զսոյն, և իմիք ինչ ոչ խաբիս։ Զու ակնու-
նիմ՝ անպատիր դաւանութեամս հաստատելայն՝
յոր հաւատամ, ըստ որում յայանեցեր ինձ

պատգամաւք քովք, և յելս արձակման հոգւոյս դէմ յանդիման տեսութիւն ժառանգելով օրհնել զամենաշէն զերրորդութիւդ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Լ.

Երկրորդ կիւրակէ զկնի յայտնութեան։

Յոյս։

ԱՀ. Յոյսդ կենդանի, որդի՛ այ կենդանւոյ. կեցուցիչդ վտանգելոց և կենդանացուցիչդ մեռելոց. ապաւէն փրկութիւն յուսացելոց յանուն քո, և այցելութիւն ազատութիւն ապաստանողաց յոլորմանէ քո. հաստատութիւն զօրութեան նուաղեցելոց 'ի նեղութեան, և ցնծութիւն երանութեան տաժանեցելոց 'ի տխրութիւն։ Զաչեմ զքեզ՝ տուր ինձ՝ յանի 'ի քեզ յուսալ, և յուսով քո 'ի քեզ ցնծալ. մի թողուր զիս թողուլ զքեզ յուսահատութիւն կրիւք. և մի՛ 'ի բաց առներ զինամդ 'ի դիմելս իմ յուսով 'ի խնդիր քումդ տեսչութեան, և ազատարար պաշտպանութեան։ Զայլ ես յայլ ինն խորհուրդս թափառական նշմարեմ զիս աստանօր. քանզի յիս ինքն ակնարկելով՝ հատանիմ 'ի յուսոյ. այլ հայելով յանբաւդ քո բարութիւն՝ պատուհասատիմ 'ի յոյս ամ՝ բարւոյ. քանզի հաւատացի և հաւատամ՝ զի յանի հաձիս ցուցանել յիս՝ զորս յուսով հայցեմ 'ի քեզ՝ և գիտեմ՝ զի որոց ապաւինին 'ի քեզ՝ ոչ դարձուցանես զերեսս, և որոց դիմեն

առ քեզ՝ ձեռն կարկառես. որոց մաղթեն՝ շնորհ
հես. և որոց թախանձեն՝ առատաձեռնես. ո-
րոց՝ խնդրեն՝ լիովին տաս, և որոց աղաչեն՝ կըր-
կին պարգևես. որոց պաղատին՝ յոգուս պատ-
րաստես, և որոց ժտեն՝ բաղմաք ճնես։ Ի-
շնորհէլդ՝ ոչ ստրջանաս, և 'ի պարգևելդ փա-
ռաք բարձրանաս. 'ի տալդ՝ առատապարգև հրա-
չակիս, և 'ի բաշխելդ ինքնաբաւ թագաւոր
համբաւիս։

Ի՞նչ է ՝ամ, և 'ի ձեռս քո հային աչք ամենե-
ցուն. կամիս՝ զի ամենեքեան խնդրեսցեն, և
հաճիս՝ զի ամենեքեան առնուցուն. իբրև զանն
արևու յամենեսին արփիանաս, և առ ամենե-
սին ծագես զլոյս ՝ածային ձրիդդ։ Լրանի որոց
բաց ի քեզ պատուհան սրտից չընդունիլ զաղդումն
ծագմանդ. վա՛յ որոց փակեալ իցէ մուտ հոգ-
ւոց առ անարժանս դատանելոյ։

'Ի կամիլդ տալ ամենեցուն՝ ընդ առնուլ նոցա
զուՀարՁանաս. և 'ի ցոյց այսր հաՀուԹԵ՝ հրա-
մայես՝ զի հայցեսցուք. և որչափ հայցեմք, այն-
չափ յաՁախես 'ի խոստմունսդ, և յորդորես՝
վերստին խնդրել. զի առաւել ևս առատասցիս
'ի շնորհել։ 'Ի սոյն խրախուսելով՝ գոչես առ
ամենեսեան. խնդրեցէք և տայի ձեզ, հայցե-
ցէք և գտջիք, բաղխեցէք և բացցի ձեզ Մաթ. Է.
7։ ԼՀ յօրինակ առեալ զՀայցուՀած որդւոյ 'ի
հօրէ՝ միւսանգամ յորդորես՝ յաւելին յուսալ՝
յասելդ՝ Թէ առաւել տայ ձեզ հայրն ձեր որ
յերկինս է. Մաթ. Է. 11։ ԼՀ անդէն յուսադրել՝
բաղմատեսակ առակօք յոգնապատկես զյորդորա-
մունսդ։ Յառակ դատաւորի սխրալիս բարբա-

ռիս, 'ի յարեալդ զկնի՝ թէ ած ոչ լսիցէ ծառայ
ից իւրոց. և երկայնամիտ միայն լինիցի առ նո-
ղս։ ԺԲ. 7։ Եւ յայլ առակ 'ի վեր առեալ ըզ-
պատգամն քո երկդէս՝ տարացուցիւ բարեկամն
'ի մէջ գիշերի 'ի խնդիր ելելոյ երից նկանա-
կաց, առ 'ի յողոմն տալոյ, յասելդ. * յարու-
ցեալ տայցէ նմա զինչ և պիտոյ իցէ ॥. ղուկ.
ԺԱ. 8։

Բ. Կարգ լինի բարեպատեհ առաջի ընծայի աս-
տանօր. զի յընձեռեալ զպարգևաւդ՝ յուսացուցա-
նես զմեզ յենդունելուն բարեբարուեդ ևեթ,
ոչ յուսացուցեր զհարս մեր 'ի սկզբանէ և այսր.
իսկ 'ի խոստանալդ զարքայուն երկնից՝ յուսա-
ցուցանես զմեզ գեր 'ի վերոյ 'ի ժառանգութիւն
ածուեդ. և այս իսկ է կէտ նպատակի յուսոյ,
և լրումն աւարտման նորին. և յայս հիմնաւորն
ամ ներգործութիւն յուսոյ մերոյ. զի զինչ 'ի
վեր քան զժառանգուն փառաց ածուն քո։
Յայս ահա պատուհաստեալ և հաստեալ զյոյս
իմ, զեղում 'ի խնդութիւն, խրատեալ 'ի պօղո-
սէ՝ յասելնէր՝ թէ * յուսով խնդացէք ॥. հռովմ.
ԺԲ. 12. զի յոյս կենդանի՝ ծնօղ է ուրախու-
թեան։

Գ. Լալ ես հայեցեալ յեղկելի անձն իմ՝ 'ի յու-
սահատուն դրունս մերձիմ։ Օ մուտ ողորմուն
մարդասիրիդ բաղխել կողկողիմ, այլ առ ա-
պաշնորհս երևելոյ առ բարերարդ իմ՝ յետս
ընկրկիմ։ Յարուցանել զյոյս իմ նկրտիմ։ բայց
տեսեալ յիս զխուսն ախտից յաձախութիւն յու-
սաբեկ լեալ յատակիմ։ Արկին զբռանալ յօժա-
բամտիմ. այլ յանսատ կրկնս յոլովուէ նուհա-

ղիմ։ Հնարս հնարիմ, և անդրէն ցնորիմ, և խելայեղիմ։

Աղուկ եղկելոյս անձին, խարիսխս փրկութեան եռուր ինձ գոյսդ և ես իմովս անօրէնութիւն խղեցի զպարանոցին։ վայ տուն՝ այսութիւն՝ տատաս նեկելոյս։ ազատութեան տախտակ ցուցեր նաւաբեկելոյս զյուսոյդ ձեռնարկութիւն և ես յալիս փորձանաց ծփեալ կորուսի զնոյն։ Աւաղ մորս սամիտ դանդաղեցելոյս։ զի իբր ցուպ մրմանաց յարգասիս բարեաց՝ յանձնեցեր ինձ զյուսոյդ ձգումն։ իսկ ես անընտել և անազդ գտեալ՝ խորտակեցի զնոյն և բեկի։

Ա՜յլ ինն կսկծագին ողբալի աղէտից պատճառ յիս նշմարի։ տեսանեմ զի որդիք աշխարհիս այսորիկ 'ի մնոտի յուսոյ շարժեալ զմեծամեծ գործովք թեւակոխեն։ յուսով շահու փոքու 'ի խորս ծովու մեծի ծփին։ յուսով հնձելոյ զտոհմականս՝ 'ի սերմանել աշխատին՝ խոնջին և տանջին։ յուսով իշխանութեան ժամանելոյ 'ի վտանգս և յորոգայթս վստահին և տալին։ յուսով փառաց զանհնարինս հնարին և յիմարին։ հուսկ զինի յուսով առողջութեան ծախեն զոր ունին։

Օ իարդ ապա ցնորեալս ես՝ լուսով ՝ուծային պարգևացդ և յուսով ժառանգութեան երկնային փառացդ յարդիւնս դիմել գործոց հաճոյակատնաց ամենաթաքուկամաց քոց չախորժիմ, այլ ընդհակառակն մոլեգնիմ։ Աւաւել մոռաբերիմ յուսալ 'ի ստացումն անցաւորաց քան անանց բարեաց։ ուստի և յանցաւորս յարելով 'ի հասանելոյ յանանցսն յետնիմ։ որով և 'ի զուարա-

Թայորդ յուսոյ նոճազիմ և լքանիմ, փեսիմ և քեցիմ։

Իսկ արդ զինչ օգուտ նոճաղեցելոյս՝ 'ի կոծոյ ասսի, և որ շահ ինձ 'ի մաշելոյ 'ի տիրութիւնս հոգւոյ. որ դեղ բժշկութիւն 'ի խորովաղետ անձինս տուչորելոյ, և որ դարման 'ի խուսելոյ անդորրութիւնս սրտի։

Լսելի անձն իմ, արի, և կարդա առ որ ասծ քո. ընդէր տրտում դնաս և խաւարանաս, և ընդէր խռովես զիս։ Յոստովանեա նմա՝ ոչ զյուսաբեկդ լինել, այլ զանյուսութիւնդ պատճառ՝ որ փութայ զքեզ կործանել և կորուսանել։ Յոստովանեա նմա զոր անօրինեցար ընդեմ հրամանաց նոր. խոստովանեա նմա զապիրատութիւնքո և զտկարութիւն. և աղաղակեա 'ի սրտի. * փրկիչ երեսաց իմոց ասծ է ։ սաղ. խբ. 5. ո՛ քաւէ զմեղս քո և բժշկէ զնամ հիւանդութիւնս քո. ո՛ սրբէ զախտս քո և փրկէ յապականութենէ զկեանս քո. ո՛ ընու 'ի բարութիւն զցանկութիւն քո, և մխիթարէ զքեզ 'ի տառապանս քո. ո՛ նորոգէ ոգի զարծուոյ զմանկութիւն քո և պսակէ զքեզ ողորմութիւնք. սաղ. ճբ. 2 = 5։

Լաւ արդ ասծ իմ և փրկիչ յո՛ քո. աւասիկ տիրոջանայս աւետեաց 'ի քեզ ապաւինեալ՝ առ քեզ գոչեմ. և կենդանացեալ 'ի յոյս իմ՝ յանկիաղելի գթութիւնդ քո յանձն առնեմ զիս։ Որոտ աղաչեմ զոր ցայս վայր նիւթեցի զչարիս ընդդեմ կամայ քոյ. և յիշեա՛ զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից, զոր ցայս ժամ ցուցեր ինձ։ Պաւեա՛ բարեբարութիւնք, և ընկալ զիս մարդասիրութիւնք. և բարձրասցի անուն քո յաւիտեան։

Բ.

Նրբորդ Աւետարանի ցայտնութիւն։

Սէր։

Ա. Աեծ է ինձ և երանութիւն անկշռելի, զի հրամայիմ սիրել զանստահման էիդ բանութիւն, և յարիլ սիրով յանքաւ մեծութիւնդ իսկութիւն։ Ապաստիկ ինն ևս. զի 'ի քեզ միայն անդորրանայ սէր իմ։ Ցինա և առարկայ սիրոյ քոյ՝ առարկայ է սիրոյ իմոյ. և յոր քերի և հանգչի սէր քո 'ի նոյն քերի և հանգչի սէր իմ։ Նրանի էր ինձ, եթէ հաղորդեալ այդմ բարեմասնութեանդ դոլին մասնէի 'ի սիրել զքեզ տէր։

Բայց արդ ոչ եմ ես, և ոչ է ես դու. և զիարդ մարթացայց համարձակիլ 'ի հաւատարութիւն սիրոյ քո։ Դու ինքնագոյ էութիւն, և անեղական գոյութիւն. իսկ ես յոչնչէ և ոչինչ։ Դու անքննելն ինքնութիւն, և անսահման զօրութիւն. ես ամենևին տկար և յանմի ստուգեր ապիկար։ Դու սրբութիւն սրբութեց. ես աղտեղութիւն աղտեղութեց։ Դու ամենապատիկ գանձ հնարհայ. ես տգեղացեալ անօթ յանցանաց։ Դու գոյացուցիչ ամենայն բարեաց. ես հնարաւորիչ զանազան չարեաց։ Դու երջանկութիւն տնտեղի, ես թշուառութիւն եղկելի։

Այլ զիարդ 'ի համեմատութիւն առեալ զայսպիսի խաւարախորդ այր ի ամենապայծառ լու-

սոյդ՝ մատեալյց սիրով միանալ ընդ քեզ։ Ա ըս-
տահիլ՝ի սոյն փափաքիմ, և յայս՝ի սոյն յափըշ-
տակիլ յօժարիմ. այլ աւաղ թշուառացելոյս,
զի յայլ ինն ոստայնանկութիւն ցնորիմ և ցնդիմ։
Ա խտիւք նոհիրիմ՝ զքոյոմդ փարիլ սիրով յամ
սրտե. այլ՝ի նանիրս ըմբռնեալ ոլորիմ։ Ակդա-
թիմ ոգեյարիլ՝ի քեզ յամ անձնէ. և յընդու-
նայնս տատանիմ։ Ականդաղատիմ միանալ ընդ
քեզ յամ մտաց, և՝ի վատթարութիւնս վայրա-
բերիմ։ Ակերկանանց հոգւոյս կանգնիմ՝ ըզ-
քեզ միայն ունիլ ինձ. և յօտարոտիս վայրաւա-
տին վարատիմ։

Ակամիմ, և անկար զարանիմ. վեղ և տարիմ և
տոհայատիմ։ Ակրեմ զսոսին և ամաչեմ, յանդի-
մանեմ զկոս, և վայիւք յոգւոց ելանեմ։ Ակամ
և զողբալով դամ, ընդէ՞ր է ինձ այս՝ զի թողեալ
զամենայանկալն երանութիւնդ՝ զերկրաւորքդ
զգնամ. ընդէ՞ր՝ի բաց կացեալ յաղբերէ կեան
դանուեդ՝ փորեմ ինձ գուբս դուբս ծակոտս.
երեմ. Ը. 13. զմի՞ խուստիեալ՝ի զովացուցիչ
ջրոյդ՝՝ի ցամաք վայրս ցնորաբերիմ. զի՞ է՝ զի
երբ օտարացեալ՝ի հայրական խնամոյդ՝ յանար-
ժանս բուսն հարկանեմ. հի՞մ լքեալ զքաղց-
բուսն զԵԹոյքդ՝՝ի դառնութիւս սոլիմ։

Ը. Ակցէ՞ արդեաք՝ զի ազատացեալ յայսպիսեաց
ասսի՝ զքեզ միայն Աշմարտութիւն սիրեմ. ըզ-
քեզ միայն խնդրեմ, քեզ միայն հաճոյանայի.
՝՝ի քեզ միայն հանգչիմ. քեզ միայն և՝՝ի քեզ մի-
այն անդորրամիտ բերկրիմ։ Ակայս և՝՝ի սոյն հա-
ուաչեմ, յայս և՝՝ի սոյն զկեանս իմ համայն
վերընծայեալ գուն գործեմ. յայս և՝՝ի սոյն

միայն զնմ փափաքմունս իմ 'ի վեր ուղերձեմ։ Պատրաստ եմ կրել զնմ և տանել նմի՝ միայն թէ արժանի լինիցիմ այսմ՝ 'ի սիրել զքեզ ածիմ։ Ի դձանամ և տենչամ առ ոչինչ համարիլ, միայն թէ 'ի սիրոյ քումմէ ոչ անկանիցիմ։ պանծալի համարիմ յամենեցունց արհամարհիլ և անարգիլ, միայն թէ 'ի սիրոյ քումմէ ոչ զուրկ գտանիցիմ։ 'ի դժոխս իջանել ոչինչ գրեմ, միայն թէ զսէր քո 'ի սրտի իմում ունիցիմ։ Լ թէ 'ի ձեռս սանդարամետականաց մատնիցիմ, և 'ի սիրելոյ զքեզ ոչ նուաղիցիմ՝ երբա նուաղի է ինձ։ Լ թէ 'ի տանջանս դիւաց լցկիցիմ, և 'ի հաստատուն սիրոյ քո ոչ յեռանիցիմ, փառք է հոգւոյս։ Լ թէ 'ի գեհենի իցեմ, և զքեզ անդ սիրիցեմ, արքայութիւն է ինձ։ Լ թէ յարքայութեան իցեմ, և զքեզ ոչ սիրիցեմ, դժոխք է ինձ։ Լ թէ երկնային փառաւք զարդարիցիմ՝ և 'ի սեր քո ոչ հանգչիմ. անարգանք են ինձ։ Լ թէ ի հրեշտակաց դասակարգիցիմ և յամ սքեց երանիցիմ, և զսէր քո ոչ վայելիցեմ, տա ռապրութիւն է ինձ։

Ամ սերդ ամենասիրելի, ածութիւն անպարագրելի. ոմ վայելչութեան ամենապայծառ, և գեղեցկութիւն՝ ընաւին անձառ. դու ցնծութիւն ամենապարար, դու կենդանութիւն ամենակատար. դու ինքնագոյ իսկութիւն և անեղական էութիւն ամի բաւարար։ Դու փառք իմ, դու կեանք իմ. դու խնդութիւն իմ. դու անդորրութիւն իմ. դու փրկութիւն իմ։ Լ՝ ինձ իմ և ամ ինչ. սեր անհուն, տարփումն անբաւ, վայելումն անսահման. սիրելեցիս զքեզ ամ զօրութիւնս իմ, ամ հաստատիչ

իմ. սաղմ. ՃԷ. 1. ՝ուծ սրտի իմոյ, բաժին իմ՝ուծ յաւիտեան. սաղ. ԿԲ. 26։

Լ.ռանց սիրոյ քո կենդանութիւն իմ մեռելութիւն է. առանց սիրոյ քո ուրախութիւն իմ արտմուելի է. առանց սիրոյ քո փառաւորութիւն իմ թշուառութիւն է. առանց սիրոյ քո խաղաղութիւն իմ խռովութիւն է. առանց սիրոյ քո բարեմասնութիւն իմ տժբաղդութիւն է։

քոց։ Լաւակա՛ն է ինձ, եթէ ոչ մերժեսցես
զիս՛ի բաց. Շատ է ինձ, եթէ ոչ ընկէնուցուս
զիս՛ի քաղցրութիւնէ երեսաց քոց. մեծ իմն է՝ է-
թէ ճանաչիցես զիս. և առաւել ևս՝ եթէ ձայ-
նեսցես առիս թէ գիտեմ զքեզ։
Ո՛ի յանդիմաներ զսասանեալս՝ թէ զի՞ է՝ զի
յինէն հեռացեալ վայրենացար. մի՛ նախատեր
զամենաթապարտեալս, թէ զմի՞ մոռացար զիս՝
որով և յայլոց անարգեցար. մի սաստեր՛ի շուտ
բեալս՝ թէ զինչ տեսեր յիս՝ զի թողեր զիս, և
գտեր զչարիս։ Ո՛ի հարցաներ թէ ո՞ւր էիր և
ո՞ւմ ծառայէիր. մի՛ քններ՝ թէ զի՞նչ գործէիր
և զկա՞ր ապրէիր, և ո՞ւրդս զկենանդ վարէիր։
Ո՛ի աշխատ լինիր տէր՛ի բանանկդրութիւնս. ես
ինձէն զանձն իմ յանդիմանեցից և նախատե-
ցից. և զնամ զոր արարի և զոր յանցեայ՝ պատ-

մեղից և եղից առաջի քո։

Ա.յլ ամաչեմ ասել և յերկիր սուզանիմ յամեթոյս 'ի յայտնել. քանզի զիաՀրդ յետ այսչափ անօրինելոյ ընդդէմ գորովագութեան սիրոյ քո իշխել կարացից իբր յատենի տարածել զտաղտկալի չարիս իմ և զեղեռնագործ արարս իմ։ Ոչու զնմա գիտես և դու իսկ զնմա ճանաչես։ Ա.յլ սակայն՝ զոր դու տեսանես՝ ես ևս ցուցից զնմա; և ոչինչ ծածկեցից. և քանիւ հրամանեալ քո մատուցեալ առ քոյդ քահանայս՝ յայտնեցից զնմա խոստովանութիւն։

Գ. Ա.ռ քեզ հպարտիլ ոչ համարձակիմ, և յընթանալոյ ի առաջ սարսափիմ և սարսիմ. զի՞նչ ապա. թախանձանօք պաղատիմ առ քեզ. մինչդեռ հեռագոյն եմ՝ 'ի բացուստ նայեա առ իս. և 'ի նշմարել զդարձ իմ առ քեզ՝ մի՛ արձակեր 'ի վերայ իմ զչերեշտակդ իբր հրաւիրակս. գուցէ զայրասցին ի ես, և մերժեսցեն զիս։ Ա.յլ դու ինքն հայրդ բարի է՛ իմ ընդառաջ կանխաժամանս պարգևօք. գրկեա զիս սրբարար շնորհօք. և տուր ինձ զհամբոյր սիրոյ քո զուճալթալից դիմաք։ Պատրաստեա և զեղընդ պարարակի զոքանչելի խորհուրդ մարմնոյ և արեան որդւոյ քո 'ի նորոգութիւն կենաց իմոց և 'ի միութարութիւն նուճաղեցելոյս։ Հայեաց ապա առ որդիս լուսոյ. և խրախոյս մատո՛ նոցա, ուրախ եղերուք ի ես, և զուճարձասջիք. զի այս որդի իմ կորուսեալ էր և գտաւ. մեռեալ էր և եկեաց. և եղիցի խնդութիւն մեծ յերկինս վասն իմ մեղաւորիս։

Ա.յլ ես յայսմ հետէ ցնծացայց 'ի քեզ և ուրախ

Եղէց զամ աւուրս կենաց իմոց. գոհացայց ըզքէն՝ զի օգնեցեր անօգնական տատանելոյս։ Լ՚նդարձ մոլորելոյս ցուցեալ զայցելութիւն քո՝ զյոյս փրկութեան հոգիացուցեր յանձն իմ։ Դարձար նայեցար և մխիթարեցեր զիս, և՚ի խորոց անդնդոց երկրի հաներ զիս, յաձախեցեր՝ ի զօրութիւս քո. դարձար մխիթարեցեր զիս ― սաղմոսողին, սիրեցեր և կազդուրեցուցեր զիս.

սաղ. Ղ. 20։

Ոչ մոռացար զիս. ոչ լքեր զիս. ոչ՚ի բաց վարեցեր. ոչ ընդ վայր հարեր և ոչ դատապարտեցեր. ոչ վաղվաղեցեր՝ ՚ի պատիժ պատուհասի մատնել կամ մահու կոչուսանել. և որ մեծն է ոչ թողեր զանձն իմ՚ի ձեռս թշնամեաց իմոց չարի, որ՚ի տոռունս մեղաց պարուսանդեալ պահեր զիս, և՚ի շղթայս ախտից կաշկանդեալ

Հեղնուցաներ զՀոգիս։

Ի դիմելս իմ առ քեզ ոչ դարձուցեր զերեսս, և յաղաչել իմում ոչ ցուցեր խստութիւն։ Լ՚ուընկալար և առաջին պատմութեանս որդիութիւն արդէգրեցեր զիս, և մատանեաւ հաշտութիւն բարեկամ կարգեցեր զիս։

Վասն որոյ և ես ոչ դադարեցայց՚ի շնորհս մատուցանելոյ անչափելի մարդասիրութեան քո մինչև եմ ես։ Լ՚յո՜ ― ― ―

զի փառօք փարեցար զնոնա։ Փառք, պատիւ, և երկրպագութիւն անբաւ և անձառելի բարութիւն քում. օրհնեալ յաւիտեան և ամ յաւիտեանս. ամէն։

ԺԱ.

Ղորրորդ կիւրակէ աղուհացից։

Տնոպեանն։

Ա. Տրամագիւն տուհայտանք ժողովեցան'ի վերիմ, և հոգք տարակուսանաց պաշարեցին զիս, զի՞նչ մնայցէլ վարանմանց այժմէն տագնապեն զիս, և պատոյք ջուրց սաստկապղտոր խորհրդոց ընկղմեն զոգիս։ Սարսիմ ահր, քանի՛ քանի պարգևաց քոց հաղորդ լեալ և'ի բիւրաւոր բարիս վայելեալ՝ վանիչ գտայ ամի։ Այս ահայարեան ամբաստանութիւնք'ի վերիմ'ի դատափետել զիս. եթէ ոչ օտարաց, դեթ խղճի մտաց. սա բաւական է'ի դատել և'ի դատապարտել։

Իսկ արդ 'ի մտանել քո'ի քննութիւն հարցափորձի, զի՞նչ ունիցիմ տալ պատասխանի։ 'Ի յանդիման կացուցանել քո առաջի իմ զոր միանգամ արարեր ընդիս, և 'ի յածել'ի դէմն իմ զոր ես հակառակ նոցին գործեցի, զոր բան կարողացայց բարբառել և զանձն անբասիր կացուցանել։

Ողջամի բարեկարգութեց և բարեշաւութեց մտաբես հաստեցեր զիս. և ես յանմի չարաչար վարեցայ.

զի արարից 'ի սաստկանալ սպառնալեաց քոց և յասել ցիս. զի՞նչ է այս՝ զոր լսեմն զքէն, տուր զՀամար տնտեսուն քո։ ԺԸ. 2։ Կանաւորս կենաց տեսուչ սահմանեցեր զիս. և ես ցնորեալ և յիմարեալ 'ի վատուցիս Թողարուցի. զի զոր ծեցից 'ի պահանջելս իմ, Թէ զիարդ վատթարացար՝ յորս առաջնորդեցար. տուր զՀամար տնտեսութեան քո։ Օգայութեաց իմոց ամի դիտապետ դատեցեր զիս 'ի կանոնաւորել զնոսին յառաքինութիս. իսկ ես 'ի մոլեկան մղանաց զգաժմունս մոլորեցուցի, յոր խորս արդեաք սուզանիլ կայցէ ինձ յանաչառդ խնդրել, Թէ ընդէր որոց դէտ կացեր՝ ոչ բարեկարդեցեր. տուր զՀամար տնտեսութեան քո։ Շարժմանց իմոց ներքնոց և արտաքնոց ոստիկան ամբարձեր զիս. և ես 'ի զարտուղի գնացս գլորեալ սահեցուցի և սահեցայ. և զի՞նչ պատճառեցից 'ի սաստելդ, Թէ զիարդ 'ի նոցունց տիրեցար, և սոցունց տիրացար. տուր զՀամար տնտեսուն քո։ Ընձնիչնանական պատուիրակ ճոխացուցեր զիս՝ արհամարհել զչարիս, և փարիլ 'ի բարիս. իսկ ես յընդդէմն վարատեցայ և յանդիպս զակատեցայ. և զիարդ ոչ ստուերացայց և ծածկեցայց 'ի գոլեալդ առիս, Թէ ընդէր 'ի չարն հակամիտեալ յարեցար, և 'ի բարւոյն խոտորեցար, տուր զՀամար տնտեսուն քո։ Վերքնական ձրիւք պճնեցեր զՀոգի իմ, 'ի սրբուն սրտի սերտանալ. իսկ ես անարդու ինն կանգնեցայ. և զիարդ ոչ վանեցայց 'ի խստանալդ, Թէ ընդէր յամբծութեէ ոչ գայար, և յաղտեղութիս խեղեալ, տուր զՀամար տնտեսութեան քո։ Պատուիրան

զոր աւանդեցեր ինձ անօրինել նոքօք զգաւրուցս
չուս և զվարուց. իսկ ես անսասան վայրապար-
ցայ. յի՞նչ վստահացայց յիրաւաբանել քումմ,
թէ հիմմ փոխանակ նոքիմբք զքեզ բարեկար-
գելոյ՝ 'ի նոսին անկարգացար. տուր զհամար
մնտեսութիւն քո։

Հարազ բանի քումմ աշտանակեցեր զիս՝ հաւա-
տարիմ մնտեսս համարելով. իսկ ես զլոյս բա-
նիկ քոց մնտիտուութիւն և զոշաբաղութիւն վառա-
ռեցի. և զիարդ աներկեւան կացից յակասանսն
'ի հնչել փողոյ արդարութիւն յականջս իմ, թէ
յոր բարձրացարդն՝ ելիր վա՛ ցածացար, և ցնդե-
ցար. տուր զհամար մնտեսութեան քո։ Թերև
մշակ ընտիր եղեր զիս յայդուոջ քումմ՝ դարձել
և պահել. իսկ ես չարօրինակ գայթակղութիւն
եղծի և չորացուցի զտունկս բազումս. զիարդ
ոչ պակուցեալ ահաբեկեցայց յորոտալոյ քո,
թէ զմի՞ անօրինեցար՝ յոր օրինադրեցար. տուր
զհամար մնտեսութեան քո։

Յամի ցուցեր՝ սուխ զբազմապատիկ բարերա-
րութիւս քո. և ինչ մի ևեթ յինէն պահանջել
կամեցար (ցի՞ է) բարւոք 'ի կիրարկանել, և մի՞
դժրողամիտ լինել. իսկ ես ժխտողասիրտ կամս
կայացուցի. զիարդ ապա անմեղադիր եղեց,
յակնարկելդ զիս և յասել. ո՞ւր կալար՝ զորս ըն-
կալար. տուր զհամար մնտեսութիւն քո։ Օրի-
նական և զաւետարանական պատգամն՝ մնդաս-
բերագոչ և առաքելաբարբառ հնչմամբ քաղց-
բանոնագ յեղանակեցեր, ցնոսին եղանակա-
հոսել զօրէնս բնութիւն. իսկ ես անլսող ընդար-
մացեալ իբրև խուլ՝ անյարգ և անհարկ վարկայ

և զիարդ ոչ պաշարեսցէ զիս ամենի անհնարին, 'ի հարկանել քո յերեսս իմ, թէ ինքը ոչ զգաստացայր, յորոց աղդեցար. տուր զՀամար մնտեսութիւն քո։

Դարի բարի խորհուրդս 'ի միտս իմ Ճառագայթեցեր. և ես անուշադիր անփոյթ նսեմացայ, և իբրև կոյր՝ նշմարել ոչ յօժարեցայ. և զինչ արդեօք պատահեսցի պաշարեցելոյս յլմութեան նել քո զիս բանիւ, թէ զիարդ խուսարեցար՝ յորս լուսաւորեցար. տուր զՀամար մնտեսութիւն քո։ Զինչ ես այլ ասացից, և կամ զորս առաջի արկանել իշխեցից. մի զի յանսպառելի գանձուցդ տեսչութիւն վերառեալ՝ փոխանակ մնտեսելոյ՝ անտես արարէ գրեթէ զամենեքումբք։

Ճ. Զարհուրիմ և սարսափիմ, գուցէ և զբուսրեսին համանգամայն 'ի բաց առեալ՝ հանցես զիս և 'ի մնտեսութէս, ասելով. գիտասջիր, զի ոչ ես կարես լինել մնտես. և զինչ այնուհետև արարիցէ զկեալս. զի գործել զբարիս ոչ կարեմ, և մերանալ զչարիս ամաչեմ. քանզի 'ի գործոց բարեաց իսպառ թուլացայ. և 'ի չար գործոց տաժանակիր զգոնեալ դառնացայ. ոչ 'ի մին կարողանամ, և ոչ 'ի միւսն վստահանամ. և այժմ 'ի յուսոյ հատեալ՝ անյոյս քայքայիմ. և 'ի յոյս մերձեալ՝ ժանտ խղձիւ մերժիմ։

Գիտեմ զինչ արարից. հաւատամ զի կենդանի ես ամենահարուստ մեծատուն դ, և կեցուցանել կամիս զիս. առ քեզ ապա դիմեցից՝ առ ՅԾ իմ և փրկիչ։ Նեաւ և անսպառ է ողորմութիւն աւետեաց քոց. որոց չափով ողորմին՝ յանչափս

ողորմիս, և որոց թողուն զմեղս՝ յանհուսս զեղուս. որոց ներեն 'ի թեթևս՝ ծանուցեալ նոցին ներեսս. և որոց քաղցրանան առ սակաւ կարօտս՝ իբր առ ամենակարօտս առատացուցաւ նեսս զքաղցրութիւն քո։

Լուսաւորեալ ապա 'ի ճրիատուրդ իմաստուէ, և զօրաւորեալ 'ի շնորհաց քոց՝ ըստ նախակարգեալդ դաշին պայմանի ցուցից և ես իմոցս պարտապան գրելոց զորս կարեմ զողորմութիւն, և թողից թշնամեաց իմոց զյանցանսն նոց. ներեցից ատելեաց իմոց՝ որք տարապարտուց անիրաւեցան յիս, և սեղանաւորեալ տարածեցից զքաղցրութիւն սիրոյ՝ որոց կամին զչար իմ. եթէ ուրեմն իցէ քոյ ցորենոյ, և եթէ յիսուն՝ մար ձիթոյ. ղ-կ. ԺԸ. 6։

Լու տա 'ի սոսին յուսադրեալ և գոտեպնդեալ՝ առաջադրեմ և հաստատեմ, և քև զօրացեալ խոստանամ, զի յայսմ հետէ յամի՝ յոր անտես կարդեցեր զիս՝ հաւատարիմ գտայց, և աննենգ երևեցայց. ՚ի հրամանաց քոց ընթացայց, և ՚ի հաճոյս քո վարեցայց, 'ի ծառայութիւն քում արիացայց, և 'ի փրկութիւն քում բերկրեցայց։ Որպս զի 'ի լրանալ ժամու անտեսութիւս, և 'ի պակասիլ յինէն այնր՝ ընկալցին զիս ոչ իմն ողորմութիւք և ոչ գործոցս արժանաւորութիւք, այլ քո անսխակալ գթութիւդ և քո անչիշաչար ներողութիւդ. քո անբաւ մարդասիրութիւդ. և քո անճառ շնորհայդ առաւելութիւն։

Ի. Մի՛ յամեցիր առներ զիս ՚ի՛ բ'ի յուսոյ իմմէ, և մի՛ ամաչեցուցաներ զտնանկացեալս. զի՛ 'ի

քեզ անկայ, և յողորմութիւն քո ասպաւինեցայ։ Մի թողուր զիս թողուլ զառաջադրուն իմ, և միւսանգամ պարտաւորիլ, դարձեալ նախատիլ և անդրէն անարգիլ, տխրիլ և յուսաբեկ տրտրիլ. տես տեր զի յանաղարտելն և յանդիպաղելի խոստմունս քո տպաստան եղէ. եթէ զայլ ևս ունիցի ապաստանարան՝ ոչ վստահեի 'ի նոյն, զի բաց 'ի քէնն չիք իմ ոք ապաւէն և վրաստահարան։

Վերստին 'ի վեր առեալ զկարգ քաջալերբանիս՝ աղաչեմ զքեզ ապրեցուցիչ իմ. մի՛ ևս յիշեր և մի՛ կրկին յանդիմաներ, թէ զի՞նչ է՝ զոր լսեմն զքէն. ամբաստանիչք քո բազումք են, վասնեաց ասեն՝ զորս տնտեսել յանձնեցեր նմա։ Դու ինքնին գիտես նոր, զի՞ անսաստամբաստանութիւն այլոց, և ունկն դնես բանիցն։ Մինթէ կարօտ ես նորոգ իմն տեղեկանալոյ 'ի նոցունց։ Յինա ես ինձէն գիտելով զանօրէնութիւս իմ և զապիրատութիւնս, զորս ընդդէմ քո և առաջի աչաց քոյ գործեալ յանդգնեցայ, ես ինձէն բանիւք բերանոյ իմոյ առաջի առնեմ և վկայեմ. զի՞նչ ևս պիտոյ իցէ օտարաց վկայութիւն։

Դոյն սակս մեղայ դոչելով պաղատիմ առքեզ. և փութամ կատարել արդեամբք՝ զոր խոստացայ սրտիւք և շրթամբք։ Արժանացո՛ զիս ճշ իմ ժամանել 'ի լրումն հաստատութեանդ, և հասանել յաւետաւոր յուսոյ իմոյ ժառանգութեան։ Զո՛ և միացո՛ զանուճանարկ և զանարդ ծառայ քո յանմարմնական տնտեսիցդ դասուց երանութեան, զի և ես ընդ նոսին զոհա-

Նալով փառաւորեցից զքեզ յաւիտեանս յաւիտենից։

ԺԲ.

Հինգերորդ կիւրակէ աղուհացից։

Դատաւորին։

Ա. Դարձեալ ինձ ասասնօր ողբ դառնագին ցաւոց՝ ընդ աղէտս տարակուսի խառնեալ. զի չէ իմ լիստահման վճարեալ զպարտաւորութիւն՝ համարս տալոյ տնտեսուէս՝ աւասիկ յոսոխեալ իմմէ դատափետիմ և չարչարիմ։ Բ. Լալ ես յօրինակումն բանից քոց բարեբար յիս յաւեալ զաչս մտայ իմոց՝ առաջի առնեմ ասասնօր՝ յորս վարանիմ։ Ոչ ծածկեմ զորս յիս տեսանեմ. այլ գրեմ զորս կրեմ. և ըստ առակիդ տեսութեանդ հանդէպ քո կացուցանեմ։

Գ. Հասիկ մարմին իմ իբր լիրբ ոսոխ գուն գործէ զրկեալ զՀոգի իմ. և Հոգիս՝ քանզի անսայ չարին և անկաւ 'ի բարւոյ, և այրիացաւ յերկնաւոր փեսայէդ, չարաչար զրկի։ Իսկ միտք իմ 'ի վերնումն մնասին, յորում բազմի գիտակցութեանդ խորհիս իշխանական դոյութեանդ, դատաւոր հաստատեալ ուղիղ դատելոյ, ամենեքին յանհոգս նրստի, անփոյթ 'ի դատաստան առնել Ը Հոգի և ընդ մարմին իմ։ Դ. Զի զի յիս է, և յիմանալ մաքսին, ես ինքն ես 'ի գործոյ նորին ընդ նմին դատաւոր անիրաւութեանդ առձայնիմ։

Պարմին եղծանելի ծանրացուցանէ զՀոգի իմ. և ցնդեալ ցնորեալ՝ ընդ ամ զաղրուիս յածեցուցանել գաւն գործէ. և Հոգի իմ դարանեալ 'ի նմանէ՝ ել ամ հաճոյս նոր ընթանալ յօժարի։ Ամենամի ընտանի էացեալ մարմին իմ՝ յամ հոգևոր բարեաց փութայ դատարկացուցանել զՀոգիս. և Հոգի իմ որ իշխանականն է՝ ուռնայնացեալ 'ի հնորհաց՝ կամակար հպատակի նմա։ Պիւաղլուկ զանգուած մարմնոյս մոլեգնեալ և խելագարեալ՝ յամ ոչիրս յանդգնեցուցանէ զՀոգիս. և նա՝ որ կարողանայր, իբր անկար և ապիկար կորացեալ 'ի կամս նորա՝ ընդ նմին վատանայ և վատթարանայ։

Բազմադիմի էն բերմունք անագորոյն մարմնոյս խեղացելոյ. որով տուգանէ և զլկանս խաղացուցանէ 'ի Հոգիս տառապեալ։ Պարէ 'ի նեղգործութիս չարս, և վարանեցուցանէ 'ի բիւրապատիկ վտանգս։ Պտիպէ մոլեգ յախտս մոլիս և մեղսալիս։ Շարժէ 'ի դառնութիւն վրիժու և 'ի խստութիւն նախանձու։ Ի ստուգիս յորդորէ և 'ի հայհոյանս դրդուէ։ Ի ծառայութիւն պորտոյ հպատակեցուցանէ, և յանարժան ցանկութիս ստրկացուցանէ։ Հոգատաւետ խոկացողութեց վայրենացուցանէ, և 'ի մթադին մտածութիս խաւարեցուցանէ։ Պահանջէ՝ զոր չէ օրէն, և խափանէ նկրտի որ օրինաւորն է։ Ի վերսթեւեալ Հոգւոյս յերկնայինն՝ յերկրաւորս վայրաքարշէ, և յարիանալ նր՝ զլաւն ընդդրկել՝ ընկրկէ զնա, և ընդդէմ յառնէ. շարժէ և լլկէ. թաւալեցուցանէ և փրփրեցուցանէ. տանջէ և խեղդէ. Մարկ. Ե. 17. Ղուկ. Ե. 39։

Է. Լաւ ժամուն՝ յորում այրիացաւ Հոգիս յերկնաւոր փեսայէդ. որով և մատնեցաւ այս պիսի անողորմ ոսոխի։ Լաւ զի ոչ և ս կարէ տանել՝ աղաղակէ առ վերին զօրուն մնացս խղճի ասելով՝ դատաւոր արդար, դատ արա ինձ յոսոխէ 'ի մարմնոյ ասոյի իմմէ. և նա ինչ ոչ գրէ։ Այլեւին աղաչէ. դատ արա այրուոյս, զի զօրացեալ է ոսոխն իմ. և նա խնուս զականջս իւր, զի մի լուիցէ։ Վերստին պաղատի, դատ արա տառապելոյս, և արդար դատաստանաւդ պաշտպանեցո զերոն իմոյս դատախազի, զի ծանրացաւ բան նոր. և նա խլանայ և համրանայ, թուլանայ և ընդարմանայ։ Այսպէս միւսանգամ հոգիս ասելով ապաքէն դու դատաւոր արդարութեան կարգեցար 'ի քնութես. ցոյց ապա զիշխանութիւն պետութեդ Էդէմ ոսոխին իմոյ. ապա թէ անագանիցիս՝ նա ինքն տիրապետէ ինձ իսպառ. իսկ դատաւորն 'ի ննջիւն խոնարհեալ խորդայ։

Խաղձեալ ապա հոգւոյս՝ լայ և ողբայ Էդէմ խստասիրտ այսր անիրաւ դատաւորի. գիտակ իսկ ես ասէ, զի ես չունիմ զոք յապաւինիլ 'ի նա, և ոչ վստահարան համարձակելոյ. քանզի 'ի թիւրելոյ քո՝ մոլորեցայ, և յոյ իմոյ մերժեցայ. հակառակ կայի նմա, և այրիացայ 'ի նմանէ իբրև 'ի փեսայէ. անկայ յերեսաց նորա, և գերեցայ 'ի նենգաւորութեան դարանակալէ. ոմն անգութ դու, զմի՞ ոչ շարժիս յողորմ առ 'ի սաստել ոսոխին իմում, և առ 'ի նուաստել զբռնակալութեան նոր։ Գիտեմ՝ գիտես և դու, զի ոչ երկնչիս յոյ, և ոչ ամաչես 'ի մարդոյ.

գոնե հայելով յարտասուս իմ և յաղերս, և լսելով զԹախանձանս իմ, կի դէթ վա՛ղ աչխատ առնելոյ իմ զքեզ, հա՛ս յօգնուն հասելոյս 'ի դրուսնս դժոխոց։ Մի՛ յապաղեր և մի՛ յամեր. գուցէ 'ի խստանալ քում խստասցի և ո՛ր 'ի վերջ իմ 'ի մերժել ինչպառ. ինչ 'ի զիջանիլ քում և 'ի մերձիլ՝ քաղցրասցի առ իս ողորմութեն նոր։ Այլ արդ իմ յուսակտուր մեկնեալ յապաւինութէ այդպիսւոյդ դատաւորի՝ բողոքեմ և աղաղակեմ առ անոխակալ և անչիշաչար դատաւորդ յո՛ , առ ամենագութ և ամենասիրեալ դատաւորդ երկնաւոր. նայեա՛ ողորմեմ նայեա՛ յայրիացեալ հոգի իմ, և ժամանեցո՛ առ իս զայցելութեն քո. օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս. բա՛ց զլիութեն անսպառելի գանձուցդ իրաւանց. և դու ինքն դատ արարեալ ազատեցո՛ զիս։ Լուսո՛ և զիրաւունս քո իմում դատաւորիս առնել ինձ դատաստան ըստ արդարութեն քում, և նո՛ վին լուսեցուցանել զխժդժագոյն խրոխտութիւն ոսոխիս իմոյ։

Ո՛ միայն է հնարաւոր զսոյն զայս ներ-գործել, և սովին զփառս տերութեն քո յանդիման կացուցանել։ Ո՛ միայն է ոճ իմ զի՛ տաբրապարտուց դատախաղեալս և դատափետեալս 'ի փրկութեն քում պատսպարել, զվտանգեալ և զկորուսեալ հոգի իմ կենդանացուցանել, և զմերձեալս 'ի տաղնապ մահու՝ զերծ կացուցանել։ Ո՛ միայն է զանիրաւութեն դատաւորիս իմոյ յանանեղելի իրաւունս փոխարերել, և զդժնեղութեն ոսոխիս իմոյ զնստուցանել։ Ո՛ միայն է զմնլորաշաւիղ թիւրութեն ճանուղել, և զբրդ-

նակալութիւն դաժանութիւն սորա 'ի նոճաձութիւն փակել. զմին 'ի խաւարիչն լուսաւորել, և զզ-միւսն 'ի կատաղիչն՝ հանդարտել։ Զմնս յաւ-դարութիւն առաջնորդել, և սմա սանձս բա-ղեզգած շարժութիւն գործականել։ Օ այսոսիկ դիւրին է ինքնաբաւական տերութիւնդ նորա-կերտել, և զՀատեալս 'ի յուսոյ՝ յուսով քո միւ-թարել։

Ա. քեզ են աչք իմ ՝ուծ փրկիչ իմ. Ո՛չ 'ի յու-սոյդ լքեալ մեկուսանամ, և ոչ յապաւինելոյ առ քեզ թուլանամ. ոչ 'ի սիրոյ գորովագութ բարերարիդ օտարանամ, և ոչ 'ի հայրախնամ մարգասիրութիւն քումդ վայրենանամ։ Ո՛չ ասա-խի մարմնոյս հակամիտութեց երբեք անսամ, և ոչ դաւաճանութիւն դատաւորի բնութես ի՛ւիք հաւատամ։

Դու միայն ես յոյս իմ և լոյս. դու միայն կեանք իմ և ամենալի փրկանք. դու միայն ցնծութիւն իմ. դու միայն երանութիւն իմ, և բա-ժին իմոյ ժառանգութիւն. դու միայն փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ի՞ՌԵՋ յանձն առնեմ զկս բոլոր, և քոյդ ցան-կամ լինել բոլոր, պահեա զկս 'ի քեզ ՝ուծ իմ, և լեր ինձ օգնական յամ ընթացս կենաց իմոյ։ Օրհնեա՛ զկս յո, և ես օրհնեցից զքեզ յամ և յամենայն ժամ։

ԺԹ.

Ղեցերորդ կիւրակէ աղուհացից։

Ղաղատեան։

ՅԱ. Փառք փառաւորեալ գալստեան քո Թագաւոր փառաց. օրհնեալ որ եկիր և գալոցդ ես. եկիր երկրպագելի խոնարհութիւն, և գալոց ես ամենահզօր զօրութիւն։ Եկիր հեզութիւն հանգոյն անմեղ գառին՝ի բառնալ զմեղս մեր. գալոց ես ահեղութիւն զօրէն վրեժուառու առիւծու՝ի դատապարտել զմեղս։ Եկիր իբրև Թագաւոր զգուշաւոր յառատաձեռնել. գալոց ես իբրև դատաւոր ահաւոր՝ի դատաստան առնել։

Եկիր, և ձայն ետուր կենդանեաց քաղցրութիւն՝ յառնել՝ի մեղաց՝ի նորոգութիւն կենաց. գալոց ես՝ի ձայն տալ մեռելոց յառնել՝ի գերեզմանաց. որոց բարիս գործեալ իցէ՝ի յարութիւն կենաց, և որոց չար արարեալ՝՝ի յարութիւն դատաստանաց։ Եկիր աւել ածել տան քո աշխարհի ամենայորդոր քարոզութիւն. և գտեր զկորուսեալ դրամն, այսինքն զմարդն, զի դրամ մարդ ֆոխադարձի։ Գալոց ես քննել զգտեալսդ, և զընտիր ընտիրսն՝ զտելոց՝ի գանձդ ժողովել. իսկ զկեղծականսն՝ի ծով դժոխոց սուղել և ընկղմանել. մատ. ԺԳ. 41 – 50։

ԱՅԼ որ իմն է՝ ասացից. եկիր յառաջնումդ՝ի խնդիր մոլորեալ ոչխարիս. և տեսեալ զիս յե-

բերման և 'ի տատանման, ոչ յարձակեցար ուժ-
գին 'ի վեր իմ. զի մի խրտուցէ՞ տապալեցայց,
այլ քաղցրանուագ բարբառ արձակեալ՝ առ
քեզ հրաւիրեցեր. Եկ առ իս ասելով վաստա-
կեալդ, և ես հանգուցից զքեզ։ Ոչ սաստեցեր
և ոչ յանդիմանեցեր սրտմտութիւն, թէ ընդէ՞ր
թողեր զիս, և գատար 'ի հօտէ իմմէ. այլ յոր-
դորական բանիւ՞ 'ի բարին խրախուսեցեր։ Այլ
զի խոնջեալ էի և տկարացեալ՝ ոչ վարեցեր զիս
սաստիկ՝ գնալ յառաջոյ. այլ յուս քո բար-
ձեալ՝ 'ի փարախ քո վերածեր։

Ե. Այս է ահա առաջնոյդ վա՛ իմ գալատեան
բարեմասնութիւն։ Իսկ յԵկեղեցւոյդ գալոց ես
'ի նշաւակել և 'ի խայտառակել զապիրատու-
թիւն առ 'ի բէն անձամբ 'ի բաց վարատելոց, և
խորայատակ ընկղմել զյանդգնութիւն խստա-
պարանոց խրոխտացելոց. սաղ. Եղ. 3–6։ Այլ
ընդ հակառակն 'ի մեծարել զՀպատակութիւն կա-
մակար քումդ հրամանի անսացելոց, և 'ի փա-
ռաւորել զՀեզութիւն զՀաճուեն քո զՀետ եկելոց։
Օրհնեալ կրկին, օրհնեալ վերսին. օրհ-
նեալ որ եկիր օրհնեալ և որ գալոցդ ես։ Ընդ
առաջնումդ հիանամ, և ի երկրորդումն ապ-
շիմ և դողամ։ Այլ յառաջնումդ իբրև լոյս,
և լուսապայծառ վարդապետութիւն լուսաւորե-
ցեր զխաւարեալս, և սփոփեցեր զնստեալս 'ի
ստուերս մահու։ Գալոց ես յերկրդումդ իբրև
զփայլակն որոտալով՝ կայծակնահարել զյամա-
ռութիւն կամակոր վատացելոց, և պայծառա-
ցուցանել զխոնարհութիւն անձնանուէր քոյոց
հնազանդելոց։

Յառաջնումդ գալատեան աղքատ ցուցար, աղքատօրէն ծնար, յաղքատավայր այրի ընծայեցար. զաղքատուն դրուատեցեր, և զաղքատս երանեցեր։ Յետկումդ գալատեան՝ ակն յանդիման մեծաց և փոքունց զմեծութիւն քո յերևան կայուսցես, և զահեղութիւն քո յայտնի արասցես. վիշխանութիւն քո պանծացուսցես, և զմեծ վայելչութիւն քո արփիացուսցես։

Ի միումդ՝ ի մարդկանէ անարգեցար և հալածեցար. նախատեցար և հայհոյեցար. ի զանազան ազանց յոգնապատիկ վիշտս կրեցեր, և յայսոց չարաց զրպարտաւալ նենգահնար արկածից նոցին տարար։ Ի միւսումդ՝ յերկնաւորաց և յերկրաւորաց երկրպագեալ հրաշալի հուշակեացիս, և ի սանդարամետականաց և յանդրնդայնոց պաշտեալ վերապատուեացիս։ Ի թըշնամեաց քոց ի հրեից և ի հեթանոսաց որ փառաց ծանիցիս, և յատելեաց քոց միանգամայն և յանարգեցելոց թագաւոր երկնի և երկրի հանդիսասցիս։ Յերանելեան դասուց երջանկացելոց դերահրաշ բարձրասցիս, և յամ զօրութեց և պետութեց սքանչելահրաշ հաստիչ և զոյացուցիչ ամի փառատրեսցիս։

Ի նախնումն անդ իբրև զչոր անձայն՝ հանդարտութիւն ինչեալ զովացուցեր զաշխարհս. իսկ ի վերջնումն իբրև հուր ծախիչ վառեալ բորբոքեացիս. յորոյ տարայոյց ի շարժիլ քում՝ ի բարձանոյ հուր տարրեղէն առաջի ընթանալ փութայ և բոցակիզ զարարածս. սաղ. եԸ. 4։ Ի երինք հալին և հարթին, և ծուլք այլայլեալ խաղաղին. սաղ. ղԸ. 3–5։ Ցարերք տարբերեալ

զտեալ նորոգին, և շարժմունք աստեղաց 'ի կայս իւրեանց դադարին։ Լ. Յլ իմն տեսիլ ա-
հեղ, և այլ իմն կերպարան։

Ը. Արևելեսցի յայնժամ նշան ամենայաղթ խաչի. հնչեսցէ և փող դաբրիէլեան. դողասցին դժոխք և բացցին գերեզմանք։ Յեղասցին և զօրք երկնից և շաւիղ հոգեսցեն ընթացից քոց. յարիցեն մեռեալք, և կանգնեսցին հողացեալք։ Հոգիք արդարոց փութեսցին զմարմնովք իւրեանց, և միաւորեալ ընդ նմա՝ անապական յարդարեսցին զնա յարութեան ձրիւք։ Իսկ հոգիք ամպարշտաց թանձրացին 'ի ծանրատաղտուկ մարմինս իւրեանց։ Սարսեսցին սանդարամետք սասանմամբ, և պայծառասցին երկինք ցնծութեամբ։

Յամ է արդ եկաւորութեան քո, ամենաբարի՛ յա. հասցես և դու լուսափայլ կառաք, և բազմեսցիս աթանչելի փառաք։ Գոչեսցեն յայնժամ արդարք. օրհնեալ եկեալ թագաւորութեան վերինդ սիոնի. և յափշտակեսցին ամպովք ընդառաջ քո՝ փառս երգելով, և առ 'ի քէն փառաւորելով։

Յամանեսցէ և օգոստատիրուհի հրաշափառագոյն մայր քո՝ ճաճանչորութեան վայելչութեամբ. և կացցէ ընդ աջմէ քումմէ անճառելի շքեղութեամբ։ Սարգեսցին և դասք առաքելոց ընդ մարգարէից. ժողովք հայրապետաց ընդ խոստովանողաց. գունդք մարտիրոսաց ընդ ճգնաւորաց. գումարք կուսանաց ընդ կրօնաւորաց, և երամ երամ բազմութիւնք արդարացելոց։

Լռեսցին և խռկեսցին յերեսս հողոյ և յոլո-

վութիւնք ամպարշտաց, հպարտացելոց և բռնաց-
ցելոց, ագահացելոց և մախաց ելոց, յափշտա-
կողաց և բամբասողաց, գայթակղեցուցչաց և
պակշռտեցելոց, և այլ ևս ազգի ազգի մեղաց
ծառայացելոց։

Զայսմ մեծի տեսարանի՝ յանդիման ՝ամին՝ ա-
ռաջի հրեշտակաց և դիւաց՝ հրաւիրեալ առցես
առ քեզ՝ զոր սիրեցին զքեզ, և զան քո պա-
հեցին. իսկ զատելիս քո՝ որք անցին զբանիւքդ
՝ի տարտարոս արկեալ դժոխոց դատապար-
տեսցես։ Վերասցին նոքա ընդ քեզ յերանու-
թիւն յաւիտենական, և փլուզեալ կործանես-
ցին սոքա՝ի հուրն անշէջ, և՝ի տագնապ ան-
ղերծ՝ և անկէտ։

Վայ ամենապատկառ ամենեցեցելոյս անձին. յո-
րոյ դասուց կարգ կայցէ ինձ մնասուրիլ յայնմ
ահեղ ատենի. աւա՜ղ թէ զիարդ արդեօք և
յորո՞ւմ վիճակի լինիցի ինձ երևիլ յայնժամ.
զի՞նչ ունիցիմ առնել և ասել, կի՞ առ ո՞ դի-
մել և յո՞ր հնարս ձեռն արկանել։ Ո՛չ ազաչանք
օգտեն, և ո՛չ կաշառք նպաստեն. ո՛չ եղբայր
օգնէ, և ո՛չ բարեկամ միջնորդէ. ո՛չ հայր՝ի
գութ շարժի, և ո՛չ որդի ի՛ւիք ողորմի։ Ապա-
ժեն ինչ յայնմ պահու բողոքմունք սոցա, և
ո՛չ իսկ կանխեն բարբառմունք նոցա։

Եթէ այժմ ո՛չ գտից առ՝ի քէն զողորմութիւն
՝ամ իմ յո՝, խաւարիմ յայնժամ և պարուրիմ.
եթէ այժմ ո՛չ տեսից զայցելութիւն քո, դան-
նանամ յայնժամ և տապանամ. եթէ այժմ
ո՛չ առից զաւետիս թողութեան մեղաց, յի-
մարանամ յայնժամ և թշուառանամ, կորա-

նամ և ուսնայնանամ։

Լաւ զի՞նչ օգուտ լիցի ինձ ասասէն Ծառայ քո գրիլ, նա՝ որգի ևս անուանիլ, և՝ ի կատարածի յերեսաց քոց անկանիլ յաւիտեան. յօրհնելոյ զքեզ իսպառ անվախճան զկիլ, և տարաբերիր լքեալ՝ անյոյս կորնչիլ։

Լաւ արդ քանզի չէ իմ տակաւին մատնեալ յանդարձ դատապարտութեան սահման, գոհանալով զքէն պաղատիմ առ քեզ, և աղաչեմ, դու ամենողորմ տէր, որ մինչև ցայժմ խնայեցեր յիս՝ խնայեա՛ և յայժմուս և ողորմեա։ Տուր ինձ տէր տուր ինձ՝ ճշմարիտ ապաշխարութիւն՝ ի բոլոր սրտէ և՝ ի բովանդակ անձնէ յարիլ՝ ի սէր քո, և սրբութիւն վարուց և ամբծութիւն կենաց ծառայել քեզ և պաշտել զքեզ, զի մի ամենալոյս երևեցայց՝ ուր պարտ էր ինձ բերկրալոյս ցնծալ և պանծալ։

Ընդաբացո՛ զիս յո՛. կարողացո՛ զիս յո՛. օրհնեա՛ զիս յո՛. և զոհարիերես կացո՛ զիս առաջի քո, և ժամանեցո՛ զիս քումդ հաշտ ներկայութեան, և արժանացո՛ ամենայանկալի քումդ յաւիտենական տեսութեան։

Ի

Ծաղկաբերդ։

Ո՜ Դայ ահա արքայն երկնաւոր. դայ մտանէ յեղիմ քաղաք. դայ փառօք և յաւանակօք. դայ ձիթենեաց և արմաւենեաց.

գայ ծերոյք և տղայոյք։

Լոյցուք և մեք ընդառաջ քո Թագաւոր փառաց, ոմանցնս գոչելով. և բարեբանեսցուք զբարեբանեալդ'ի հրեշտակաց։ Օրհնեալ որ եկիր և գալոցդ ես. օրհնութիւն որդւոյ դաւթի և որդւոյ բարձրելոյ։

Ընդ օրհնուեալս աւետալ'ի ձեռս ոստս պարարտ ձիթենւոյ հաշտարար սիրոյ'ի ծառոց հաւատոյ և յուսոյ, և ստեղն անուշութիւն արմատենւոյ քաղցրաձաշակ գթոյ'ի բարձրութիւն մեծի խորհրդոյ, յառաջամատոյց լինիմք մինչև յանկիւնս սեղանոյ ողորմութիւն քս, ուրախութիւն կատարելով տօնս։ Տարածանեմք և առաջի ընթացիս քոց զընթացս կենաց մերոց իբրև զհանդերձս ըստ ձորձանուէր խմբիցն բազմութեան. ուղղեա՛ հոր զնամ և բարեկարգեա՛, և'ի հաճոյս կամաց քոց վերածեա՛։

Ա. Յլ ես յամէ թափուր գրով, և'ի բարեմասնութիւն առաքինակրօն վարուց մերկ երևելով՝ փոխանակ հանդերձի և ձորձոյ սպասեմ ընդ ոտիւք քո զկնութիւն ապականեալ բնութեան, և զշնչաւորութիւն եղծեալ պատկերիս։ Ահեղ է ինձ՝ երկրպագելի գարշապարքդ նեղբանիցդ խոնարհիլ, ընդ նովին սիրով նուաճիլ, և ընդ նովին նորոգիլ. նովին ուղղիլ և ընդ նովին արժանի քումդ եկաւորութիւն պատրաստիլ, և զնորդ երկնի և երկրի'ի մուտ հոգւոյս փառաբ վերընդունիլ։

Բ. Ա՛կ յո՛, ակ, մուտ յանպատրաստ սիրտ իմ. և դու ինքն պատրաստեա՛ և յարդարեա՛. տաճարացո՛ և զարդարեա՛ քեզ'ի բնակութիւն.

արտաքսեա՛ ի տաճարէ աստի՛ ի հոգւոյս տանել
զանանձնեալն բերմունս։ կործանեա՛ զսեղանս
անկարգ ունակութեանս։ ցրուէ՛ա զկուտակուն
աղտեղաթաղ սխտիցս։ վանեա՛ խարաշանաւ
հրամանի քո զգունդս երամից մուկանն խլրտ-
մանցս։ և արա՛ զհոգի իմ՝ քեզ տուն աղօթից։
Լայեա՛ առ իս աղաչեմ, և՛ ի տեսանելդ զիս
յանցաւոր սիրոյ օրինացդ, և ապաշնորհ ապէ-
ղարատ յոճախելոց առ իս բարերարութեանդ՝ մի՛
լար՝ ի վերայ իմ, ոչ լացեր և անիծեր զերկիր այլ
գթա՛, և գորովալից սիրով օրհնեա՛ զիս։ և
արձակեա՛ բարբառ փրկութեան, թէ * այսօր եղև
փրկութիւն տանս այսմիկ ॥։ զՍաղ. ԺԹ. 9։ Լանցեալ
և անուն քո կոչեցեալ է՝ ի վերայ իմ։ Մի՛ թո-
ղուր զիս ոչ թողեր զքաղաքն, զոր յանուն քո
խնամիր։ այլ ընկալ և կալ զիս փրկիչ իմ։
պահեա՛ և պաշտպանեա՛, զօրացո՛ և ամրացո՛։
Մի՛ թողուլ քո զիս և՛ ի լքանելէ՝ եկեսցեն հաս-
ցեն թշնամիք հոգւոյ իմոյ, և պաշարեսցեն
զինեւ։ նեղեսցեն զիս յամ կողմանց ազգի ազ-
գի փորձուիք, և մանաւանդ կորուսցեն զբարեբա-
ւութեանդ ծնունդս իբր զորդիս։ յատակեսցեն
զառ՝ ի քէն կանգնեալ հոգիս, և ոչ թողցեն
յիս քար՝ ի քարի վերայ, ոչ կարք համբերուել, և ոչ
հնար զդաստուել։ զՍաղ. ԺԹ. 41-44։

Գ։ Պաղատիմ առ քեզ փրկիչ իմ և կեանք,
փոխանակ զիս թողլոյ և լքելոյ, թող և լիք
զտպականուն հին մարդոյն որ յիս։ և օթևանս
արարեալ՝ ազիր՝ ի նորումն որ՝ ի բեթանիա որ-
պաւորի՝ ՝ ՝ հնազանդն փոխաբերելոյ։ Որով և
ես կրկին նորոգեալ՝ ոչ միայն հաճոյ դատայց յիս

բնակելոյ քո, այլև արժանացայց բնակելոյ յեկեղեցի տէր քո ընդ հաճեալս և ընդ հաճոյա ցեալս քո, որք անդորրանան 'ի նմին։

Ա. Յլեթէ չիցեմ և ես ընդունելի, արտաքոյ կաց ցեալ կողկողադին թախանձեմ. և ընդ հաւատացեալս անուշան քո միաձայնելով քաղցեմ յաւուրս մեծի զգուշն ողորմութեան քո. և ընդ նոսին յաղերս անկեալ գոչեմ. * Լայ մեզ տէր, բայ մեզ զգուշն ողորմութեան որ ողբալով կարդամք առ քեզ ॥։

Լայ աղաչեմ, զի մոցուք, և փառս մատուցուք մարդասիրութեան քում. և անդստին իբր ըստ անմարմնոց կենցաղավարեալ 'ի ջանս առաքինութեան, և 'ի վարս սրբութեան մատիցուք ապա համարձակութիւն 'ի քաղաքդ երկնային 'ի քաղաք նոյդ մերոյ. և մտեալ 'ի նոյն ցնծութիւն միացուք ի քեզ յանվախճան ուրախութիւս, և փառաւորեացուք զփառաւորեալդ յանձառ և յանկէտ երանութեան յաւիտեանս յաւիտենից։

ԻԱ.

Ա. Ասք հինգշաբաթի։

Ո՜. Յանդիման երկնի և երկրի հանդիսացաւ այսօր անհասանելի իմաստուն քո, և անձառելի սերդ ամ բարի յՅ. հիանալի ցուցաւ խոնարհութեան քո, և սքանչելի քարոզեցաւ ինաւ մոգական դիւութիւդ։ Ա՛ չափել կարեր և կիր զմտաւ ածել թէ մարմնացեալ բանդ ած 'ի վեր

բանալդ առ 'ի մէնջ յերկինս մարմնով, մնալոց
էիր յերկրի ընդ մեզ նովին մարմնով։ Լանցլ
և իրացդ անհնաւորուն ամենեին անմահածելի
կացուցանել զանհաւատալի զայս զարմանագործ-
ծութիւնս։

Դու միայն ինքնաբաւ զորութ 'ի սոյն յաժարիլ
կամեցար. և զոր կամեցար, կատարել 'ի սմին
աւուր հաճեցար։ Լուեր 'ի ձեռս զյաւիտենա-
կան իմաստութիւն քո. և նովին իմաստութիւն 'ի
խորհուրդ մտեալ՝ յայսպիսի արուեստաւորումն
մատեար։

Ո՞վ սքանչելեայս. դու որ ըստ կերպարանացդ
ճոմուն անմերձենալի էիր, և մահկանացու շըր-
թանց անհպելի, յայնպիսի վերառեր տիպար
զայս խորհուրդ, որով դիւրամերձենալի լեալ՝
ձիմարտապէս ճաշակելի ընծայեցար. և 'ի ճա-
շակիլդ անծախաբար՝ անապական մնալով՝ ոչ 'ի
ճաշակողդ զքեզ, այլ 'ի ճաշակելդ՝ զնոսին
փոխել տնօրինեցեր, որով և տիրապէս ոչ ընդ
նոսա միայն, այլև 'ի նոսա բնակեցար։

Հիացան և հիանան բարձրացեալ բնութիւք ան-
մարմնոց. և յապշուին սարսեալ դողան սանդա-
րամետականաց ջոկք. զի ամենեին անմբռնելի
է այս արուեստ ճոմայն՝ եթէ առ մեզ և եթէ
առ նոսա։

Լանի՛ քանի զարմանալիս հրաշացուցեր յեր-
կինս և յերկրի, այլ այս հրաշակերտութիւն 'ի
վեր ամբարձաւ քան զնմա. որում՝ ոչ կար զորու-
թիւն հանդարտել, և ոչ տարացոյց ինչ յանդիմ
ման առնել։ Տեսին տիեզերք զքեզ մարդ ե-
ղեալ և սքանչացան. բայց այսօր տեսին և ըզ-

հայց տարբանիւթ՝ ոչ ծ եղեալ և՝ ի սարսափ կրը-
թեցան։ Այլ է այս այն՝ զորմէ ասացաւ թէ
* մասն ոչ իցէ ॥ Եղեր. Ը. 19. այլ այս է ան-
հասուն անհասուն։ * որ՝ ի սիրտ մարդոյ ոչ ան-
կաւ ॥։ Ցեսին այս՝ վերինք, և հասին, ոչ յիւր-
եանց, այլ՝ ի տպաւորուն յայտնուն քոյ։ Այ՝ եք
և սեսանեմք ոչ մերովս՝ այլ լուսով հաւատոյ
միայն. և յետ տեսօղս լինելոյ՝ ՀՀմարտութիւն
խոստովանիմք, թէ կարօղ էր անսահման ի-
մաստուն քո զայսպիսիս խորհիլ, և ամենաբա-
նական զօրուն քո զայսպիսիս ներդործել։
Յայս խորհուրդ խոնարհեցոյց զքէզ անՀառեալ
սեր քո, որով սիրեցեր զմեզ. ընդ որ
զարմացեալ և քաղցրացեալ սիրոյդ աշակերտ,
և աչք նկատեալ զոր արարեր՝ կարողացաւ ոչ
ասել ինչ, և ոչ զտնտեսել իրացդ առաջի առ-
նել. այլ զեղմամբ հոգւոյն բարբառ արձակել
եթէ սիրեաց զիւրն՝ որ յաշխարհի ատ էին,
խսպառ սիրեաց զնա. յովհ. ԺԳ. 1։ Սիրեաց յոր-
ժամ եկեալ մարդացաւ վասն նոցա. սիրեաց՝ յոր-
ժամ խանդաղատանօք վարեցաւ ընդ նոսա. սի-
րեաց՝ յորժամ խաչեցաւ և մեռաւ՝ ի վերնոցա։
Այլ յայս խորհուրդ խսպառ սիրեաց. մինչև
ոչ ևս կամելով, և ոչ խսկ կարելով մեկնել յիւ-
րոց անտի՝ մեկնեցաւ յիւրմէ, և յայլ կերպա-
ռան փոխեցաւ։
Այ՝ պաքէն՝ ի զարմացումն ըմբռնեալ առաքելոյն
գոչեաց աբանչանալով՝ թէ * որ՝ ի կերպարանս
նոյ էր, զկերպարանս ծառայի էառ ॥. Փիլ. Բ. 8.
զինչ ասցա բարբառեսցի յայս խորհուրդ. յո-
բուամ՝ կերպարանդ փառաց հօր՝ ընդ կերպարանօք

հայցի նոսիրեցար. և մնալով 'ի կերպարանս
ածուն և մարդկուն՝ լքրև զկամս Ճաշակեցար և
Ճաշակիս առ 'ի մէնջ։

Ը. Զուսմարեցան աւուրքն ելից քոց յաշխարհէ
աստի. և հասին ժամանակք չուելոյ քո յերու-
կինս. տրորեցաւ գթութիւն գորովալի աղեաց
քոց. և զարթեաւ ողորմ բարեսիրութիւն սրտի
քո. ուր թողից զիմն ասելով, և ուր յանձնե-
ցից. յերկնից յերկիր խոնարհեալ՝ ընդ սոսա
կենակից գտայ, և սիրելի բարեկամն և որդիս
կալայ, կերի և արբի ընդ սոսա, և 'ի գործ պաշ-
տամանն իմոյ կարգեցի. ընդդէմ սանգարամե-
տականաց ախոյեան կանգնեցի զսոսա, և առ
ազգն ազգի վշտաց Ճգուիս զինեցի. և այժմ
զնարդ լքեալ զսոսա հեռացայց 'ի սոցանէ, և
այլ ոչ ևս կենցաղավարեցայց ընդ սոսա։

'Ի մերձենալ ապա աւուրց բաղարջակերաց,
ժամանեցին և ժամք զերեալ քո զաղեկեզ տարա-
փանացդ բորբոքումն. ընթրիս յօրինեցեր. և
'ի նմին 'ի գործ արկեալ զանհաճանելիդ հնա-
բաւորութիւն յայտնեցեր զխորութիւն գաղտնեաց քոց։
Լուեալ զկամն յաշխարհակեցոյց ձեռս քո,
* այս է մարմին իմ ‖ ասելով՝ 'ի քեզ ինքնդ
գոյափոխեցեր։

Լուս առեալ զաժանն, * այս է արիւն իմ ‖ ա-
սելով՝ զնոյն գործեցեր. որով և սահմանեալ
հաստատեցեր ուխտ նորոյ կտակի, և ուղերձ մե-
ծի և անՃառելի խորհրդոյ. մաթ. իզ. 26–28։

Լուս առ մշանջենաւորելոյ այսր նորահրաշ քա-
հանայագործութեան՝ քահանայայուցեալ զքոյագ՝
պատուեր ետուր նոցա ասելով. * զայս արարէք

առ իմոյ յիշատակի ։ ղուկ։ ԺԲ։ 19։ Զսով և հանապազօր պատարագեալ 'ի միջի մերում, անծախապէս բաշխիս մահացելոցս մեզ 'ի ձաշակմանէ մահաբեր պտղոյն։ Ձաշակիս 'ի մէջ։ և բերկրիս ընդ մեզ, կաս 'ի մեզ և միխիթարիս ըմ մեզ։ մինչև ժամանեցուսցես զմեզ առ կենդանիս յաւիտենից։ ուր տեսեալ մեր զքեզ միխիթարեսցուք 'ի քեզ միխիթարուն անկեալ և անվախճան, ոչ ընդ վարագուրաւ հայցի և գիտուսց, այլ դեմ յանդիման տեսուք մարդկուեդ և վայելմամբ ՅԱԾՈՒԹԵԴ։

Գ։ յսպիսում հնորհի մարդասիրուն քո արժանացեալ 'ի սմին աւուր՝ հնորհս մատուցանեմք սամենաբարերարիդ մերում։ ցնծամք ընդ այս մեր պատահումն սոյնասահման սիրոյ քո։ և բերկրիմք ըմ վայելումն այսպիսաքաւակ դթոյ քո։ Այս և 'ի սոյն անդորրացեալ ինամք առնելիս զյամ չարէ։ և գուչեմք ըմ մարդարէին։ Ծանեցուք և տեսէք զի ՅԱԾ ընդ մեզ է։ և եթէ արդարև ըմ մեզ է ՅԱԾ՝ ով իցէ մեր հակառակ։ Լսէք թէ և մեք յամ 'ի կեանս մեր լեսցուք ընդ քեզ, և ամբիծուք վարուց ծառայեսցուք քեզ։ Կարող եմք՝ եթէ կարողացուսցես զմեզ 'ի սոյն։ կարողացո աղաչեմք, և օգնեա մեզ։ Քզի 'ի քեզ եմք ապաւինեալք։ Ամենաւորեա աւուրս օրհնուն զամենավարան կարօտեալքս, և զօրաւորեա զմեզ կեալ 'ի հնորհս երանաւորս այսր քոյին պարգևացդ, և օրհնել զքեզ։

Դ։ 'Ի մատիլ քս ՅՈՐ այսօր 'ի մատակարարումն սքանչելի այսր խորհրդոյ՝ սիրացուցեր և զանձաւելի խոնարհուն քո, 'ի տպաւորել 'ի մեզ

զՀԻՄԱՐՏՈՒԹ ՆՈՐՈՒՆ ԶԱՒԻՐԱՍԻՆՆ ԽՈՆԱՐՀՈՒԹ. և 'ի պատրաստել զանձինս մեր յարժանաւոր ընդունելութիւն սրբուեդ՝ Հաշակիմամբ մարմնոյ և արեանն քո։

Ամենայնիւ և քերովբէք սպասաւորեին քեզ 'ի հոգ վերնատան, այլ դու որ հոգդ ես նոմի՝ յարութեաւ յընթրեաց անտի սպասաւորեցեր քոց աշակերտաց։ Գուեալ զենջակ տիրածար, զի ծածկեսցես զմերկութիւն նախահօրն, և զգեղաւոր զարդուն հագուստ մերոյ։ Գրկեր ջուր 'ի կնիք, զի զմեզս մեր ընկղմեսցես 'ի ջուրս աւազանին, և լուսացես զանօրէնութիւնս մեր։ Յոնարհեցար 'ի մաքրութիւն ոտից հողեղինաց, զի ուղղեսցես զմարդկային ազգի գնացս յերկինս. և բժշկեսցես զգարշապարս նախատեղծ մարդոյն. լեալ մեզ միանգամայն և նախատիպ օրինակ ընթացից զգաստութեան։ Գուեր վերստին զՀանդերձադ՝ զորս եդիր, և դարձեալ բազմեցար. և զոր արդեամբք կատարեցեր, բանիւք 'ի նոյն զաշակերտսդ կրթեցեր, ասելով. օրինակ մի ետուս ձեզ, զի ոգի ես ձեզ արարի, և դուք առնիջիք ոչ ինձ, այլ ձեզ. զի * եթէ ես լուացի զոտս ձեր նրոս և վարդապետս, և դուք պարտիք զմիմանց զոտս լուանալ։ Յովհ. ԺԳ. 14։

Օ այսպիսի խոնարհութեամբ նկար 'ի սիրտս նոցա հիմքեալ, և երկնային շնորհիւ զՀոգիս նոցա մաքրարդեալ՝ բաշխեցեր ապա նոցա զմարմին և զարիւն քո նոր, հաստատելով և զմեզ 'ի յոյս ընդունելութեդ և 'ի սէր ընդ քեզ միաւորութեդ։

Լաւ 'ի լրումն աւարտման բովանդակեալ զորս կանխաւ 'ի յաւիտենից տնօրինեալ էիր յայս

սիրաբորբուն, գոհացեալ ընդ քոյսդ՝ ելեր 'ի լեառն ձիթենեաց. զի և զարժանացեալքս խորհրդոյս մեծի՝ վերառեալ ընդքեզ՝ հասուս ցես 'ի ժառանգուն տեսուն ուծային լուսոյ երեսացդ և յորհնուն յաւիտենական ցնծութեն յանկեաց և յանանց կենաց։

ԻԹ

Լ. ՍԱՓ ՍՐԲԵՆ։

ԽԱ. Դատակնիք յաւիտենական դատապարտուն իմոյ տագնապեալ զիս հանապազ։ Հայիմ յաջմէ, հայիմ և յահեկէ. և ուստեք չիք այցելուն։ Դժոխք ազազակեն, և փութան ըմբռնել զիս 'ի կալանս. գունդք դիւաց գոչեն, և յափշտակել արագեն զանձն իմ. սատանայ 'ի ձեռին առեալ զհաշիւ իմոցս պարտեաց յոխորտայ և սպառնայ ընկղմել յանդունդս զհոգի իմ։

Լու արդ ոնբ ես ոնր ուծ իսրայելի ափփոխ. ոնբ ես ուծ փրկիչ իմ. ոնբ իցես ապրեցուցիչ իմ յո։ 'Ի խաչին աւասիկ տեսանեմ զքեզ տարածեալ, զկեանքդ 'ի մահ մատնեալ. ըզլոյսդ տանջանօք խաւարեալ։ Ասկ արդ ո՞ ապրեցուսցէ զտարակուսեալս և զտոհմայտեալս. ո՞ արդեօք ձեռն կարկառեսցէ պաշարելոյս. ո՛ ձայն տացէ ինձ յուսոյ փրկուն։ —

Դու յո փրկիչ իմ. այո՞ դու միայն, ո՛չ հլօր զօրուն, և ո՛չ հաստաձիգ աղեղամբ, այլ երբ

կրօպագելի խոնարհութիւն և՝ ի փայտ անարգանաց հեղուսմամբ. յորում արձակեալ զանազուկս քո՝ վնեցեր ձեռամբ գյանցաւորութեան մուրհակ։ Լուեցուցեր զաղաղակ դժոխոց. խորտակեցեր զդռչմունս յարձակման դիւաց. սաստեցեր սպառնալեաց բելիարայ։ Հարեր վանեցեր զխրոխտաւէն մահու. և ապրեցուցեր զիս՝ ի դատապարտութենէ։

Յայս հանդէս մարդասիրուն քո ակնակառոյց լեալ հիանամ. յաղագս որոյ և՝ ի գոհուն ամբարձեալ զանս իմ՝ հնորհս մատուցանեմ բաբեխնամ բարերարիդ։ Ամէն ոչ այնպէս՝ ի հնորհսն ազատուն թշուառացելոյս խնդամ, որչափ՝ ի գորով անչափելոյ և անհշտելի սիրոյ քո զարմանամ. որով և առաւել յարդոր իմ՝ օրհնելոցեզ և գովել, քան գոհուն ետեթ բարբառ արձակել. քանզի ինքնակամ ինքնայօժար կամեցար տալ զանձն քո վասն իմ՝ ի կեցուցանել զիս։ Կամաւ եկիր և կամաւ կրեցեր զորս ընդ իմ յանձն առեր. կամաւ մատնեցար և կամաւ նախատեցար և կամաւ ապտակեցար։ Կարող էիր առանց կրելոյ ինչ ակնարկելով և ետեթ փրկել զիս. այլ հաճեցար կրել առաւել՝ քան զոր հնար էր մեզ զմտաւ ածել։ Կարող էիր զմատնիչդ անդէն յանդունդս մատնել, և զտանջիչդ միով ձայնիւ մանրել և փշրել, և զյաբուցեալսն՝ ի վերջ քո՝ ի ներքոյ քո ընկլուզանել. սակայն ցանկանալով ցանկացար համբուրել զանբերելիս՝ յայրեցուցանել զվտանգեալս՝ ի մահ։ Կարող էիր հրեշտակագդ ձեռամբ զայլ հնարս հնարաւորել, և կամ արարածական էիս

սպասաւորութիւն նոր իմն տարաղ յեղանակել, և բարեգթութիւնդ խնամով զանարդեալս ի վերս ածել։ Եւ սակայն ինքնատեսչ փափաքանօք տեսչացար անձամբ անձին վճարել զնմա առ ի կենդանացուցանել զմեզ զմեռեալս յանսորոգելի մեռելութենէ։

Խնամի քեզ տեսեր զմեզ, և բարեկամական սիրով յանարգուն տանջանաց խոնարհեցուցեր զքեզ, զի զթշնամութիւն մեր անդստին ի բարեկամութիւն դարձուցցես։

Բարի ինչ ոչ նշմարեցեր ի մեզ, այլ ի չարիս համակեալ տեսանելով զմեզ՝ ի ձեռս չարաց չարչարեցար, զի զչարութիւս մեր ի բարեաւութիւն փոխաբերեսցես։ Պարտնորհ ապերախտ ծառայ դուք զմեզ. և փոխանակ տարամերժելոյ զմեզ՝ զանձն քո ետուր մեզ ի փրկանս։

Եւ առ ի կատարումն բովանդակել զայս ամ, մնտեար ի հանդէս ազգի ազգի տուչայ տանաց. և մնեալ զառաջինն ի դեթսեմանի՝ իբր ի բովս բոցակեզ խորովեցար. և փոխանակ պարարտութեան իւղոյ զարեան քրտունս կայլակն կայլակն հոսեցեր։ Ողջար ի խորս մահացուցիչ տրտմութեան. և ի խորոց անտի իբր յանել անդնդոց հրաշալիս բարբառեցար առ հայր։ Ի տաղնապ երկիւղն սասանելով ընդդէմ երկիւղն յաղթութս վարեցար։

Արիացար զորացար ինքնազօր զորութիւն, և վանեալ զսոսկումն բնութենս մարդկայնոյ ի յարձակմունս դաժանային դասուց շահատակեցար։ Եւ միայնոյզ ձայնիւ զգումարութն նոց յերկիր փլուզեալ ի հող մածուցեր, և ի մեռելոյ վեր

Ճակ հեղուսեր։

Լաւ ցուցեալ նշ զկար տկար զօրութեան նոցին՝ ձայն ետուր նշ վերստին. կանգնեցեր, յարուցեր, և յոտին հաստատեցեր զնա։ Լաւ յանցանս հանջելի հրամանաց հօր քո՝ ինքնակամ ինքնիշխան ազատութեամբ զանձն քո սէ՛ի ձեռս նոցա մատնեցեր։

Կալան կապեցին զանկապելիդ, վարեցին բռնի զանըմբռնելիդ. և ածին խստութեամբ առ քահանայապետս առ աննա և առ կայիափա։ Արդեւ ցաւ ատեան անիրաւութեան, և դատաւորդ ոմի՛ ինմին դատեցար. անարդեցար, նախատեցար, և՝ի ծառայէ ապտակ ընկալար։ Յանձն եղեր՝ի կատաղութեան անագորոյն սպասաւորաց, զի զգուշասցին զքեզ։ Դեռ պատուիրեցին, և սոքա ձեռն արկին. և փոխանակ զգուշապահ լինելոյ՝ մինչև ցառաւօտ տանջեցին զառաւօտդ ամենաապայծառ։ Կատակեին զքեզ, և հայհոյեին ըզքեզ, կուփեին զամենաթանկ գլուխ քո և թքանեին յամենափառաւոր երեսս քո։

Ածիկեին զանձային դէմդ և հարկանեին. այպն առնեին և հարցանեին, ո՞վ է՝ որ եհարն զքեզ։

Վա՛յ մահու պարտաւորիս. ես եմ, ես եմ, որ անօրէնութեամբ հարի զքեզ ոճ իմ. մեղք իմ և չարիք իմ ետուն հայհոյել զքեզ և ապտակել. յանցանք իմ գործեցին զայս ամ։ Լայ դա՛ մառա՛ ոճ իմ զոր յինէն ետուս կրել. և ես յիշեցից և պատմեցից զոր վասն իմ կրեցեր. կրեցեր այն ոչ՝ ի մշակաց միայն այգւոյ քո, այլև՝ ի հեթանոսաց. որոց՝ ի ձեռս մատնեալ

իբր չարագործ առաջի նոյ ամբաստանեցար։ Յուլբ գերբ պաշարեցին զքեզ յայնժամ, և շունք բիրտ պատեցին զքեզ. գան հարին ուժգին և տանջեցին սաստկագին. և առ 'ի նախատինս ամենակալ Թագաւորութեանն՝ կերպաս բանս զգեցուցին սուտ արքայի. և պսակ ոլորեալ 'ի փշոց եդին 'ի գլուխդ սրբ իբրև խաբեբայ Թագաւորի։

Լրկին ածար, և վերսանին կացուցար յատեան պիղատոսի. և անդէն 'ի նմին միւսանգամ չաբախօսեցար, և քան զաւազակ անարգ երևեցար։ Լայսն անդ բերանք քահանայապետից իբր ասիւծուց 'ի պատառել զանմեղ գառնդ՝ յաղաղակել իւրեանց առ պիղատոս. * 'ի խաչ հան զդա ‖ . ղուկ. ԻԳ. 21։

Ի. Յամբոխիլ ապա և յաղմկիլ գումարելոց, և 'ի գոռալ անդ սանդարամետականաց՝ ձգեաց զքաղաքն իւր Հայրն երկնաւոր. և Թափեալ 'ի ձեռաց պատրոցին զմերկակ հաշուի պարտաւորութեանն մերոյ՝ երարձ եդ 'ի վերս քո։ Յանձն սաեր, և փութացար 'ի լուսն գլխաւորել ըզհաձոյս կամացն նոր։ Ուրախ եղեն Թշնամիք քո, և զօրացան յանձինս իւրեանց. զի ոչ ծանեան զիսրհուրդն ծածկեալ՝ զոր տեսանեին։ Ի աղէ վաղեցին բերին զփայտն մահու, և բարձին 'ի վերս բարձողիդ ամի։ Ընկալար յուս քո սիրով. և իբրև հսկայ սատանեալ՝ երեր նոքաւ 'ի գոլգոթա 'ի մահու գազանն։

Խստացան գահիճք, և խստապինդ ձգեալ տարածեցին 'ի քառաթև փայտի անդ զաշխարհակեցոյց բաղուկդ և զտիեզերակալ ոտդ. ծա-

կեցին բևեռեցին բաղխմամբ զայրագին. առին վերացուցին և քարձրացուցին զբարձրութիւնդ երկնի և երկրի։ Ի՞չ ահաւոր տեսլեանս։ Զայն լալոյ դուժեալ յորդիս մարդկան և կոծումն եհաս յականջս անարատ ծնողի քո։ Ա՛յ ևս հանդարտեաց երկիր. և ոչ լռեցին երկինք. սատեղք սարսեցան, և արեգակն ընդ լուսնի չհանդուրժեալ՝ քող էարկ զիւրև. պատառեցան վէմք և բացան գերեզմանք, վարագոյր տաճարին ցելաւ, և գժոխայնոց ուժգնութիւն գելաւ։

Դառնացան թշնամիք քո, և մատեան՝ի խրս տութիւն անգութ. լցին զականջս քո հայհոյանօք և զբերան քո լեզուօք։ Ի՞խիթարիչ քեզ ո՛չ ոք գտաւ, և դիւրացուցիչ վշտացդ ո՛չ ոք երևեցաւ։

Մոռցար՝ի հօրէ և չսփոփեցար՝ի մօրէ։ Ա՛յսէր չուրթիդ փառաց երկնի և երկրի՝ առակ նշաւակի կանգնեցար ընդ երկինս և ընդ երկիր. և յիմանալի զօրաց վերին զուարթնոց զիմանալի արտասուէեցար արտասուս։

Կատարեալ ապա զնմ զոր վասն քո գրեալ էր, կոչեցեր առաջի քո զմնմ. և յանդիման երկնի և երկրի պատառեալ զմեր հակ պարտուց մերոց և զդատակնիք դատապարտութեան՝ սարսեցուցեր զատանայ և զզօրս նր։ Նա ուստ դեալ զՀոգի քո՝՝ի ձեռս հօր՝ նուիրն հոգւով լիջեր՝՝ի դժոխս, և սատեալ յիշխանն մահուն յամենի արարեր զնա, և նուաճեցեր զբռնուն նր։ Կապեցեր շղթայեցեր զնա, և կապտեցեր զարգելեալս՝՝ի նիբէ զՀոգիս յուսացելոց՝՝ի քեզ

Օ այս ամ գործեցեր ՝ի սիրոյ ամենագորով սրտի քո. զայսոսիկ զամ կատարեցեր ՝ի պարտաւորութեանս մեր և ՝ի յարժանաւորութիւնս մերմէ, այլ ՝ի գթոյ անսիրելի ողորմութեանդ քո. զամ զայսոսիկ ՝ի գլուխս տարեալ տարեցուցեր յեղջերիւ միեղջերուն սկզբնաւորին ըստ միամտութեան իմ. և ազատեցեր զիս զդատակնիքս քեալս ՝ի մահն յաւիտենական։ Հաշտեցուցեր ընդ հօր քում և ընդ հոգւոյդ սիրոյ զթշնամութեալս և զտարամերժեալս իսպառ. և զարմացուցեր զերկնայնոցն դասակարգութիւն։ Լացեալ զդուռն արքայութեան երկնից, և մուծեալ զիս ընդ աւազակին ՝ի վայելս իմանալի դրախտիդ։

Լաւ արդ՝ որով գովութիւնս փառաւորեցից զքեզ ՝ի՞նչ համարձակեցայց բարբառիլ ըստ քեզն ՝ոճ իմ։ Հիանամ, զի ՝ի դատապարտիլ իմում և ՝ի դատափետիլ ՝ի դժոխայնոց՝ ՝ոչ ոք գթացար յիս, ՝ոչ ոք ողորմեցար. ՝ոչ ոք եղայ ՝ի վերս իմ. և ՝ոչ ոք եհեղ կաթիլ մի արեան ՝ի փրկութիւն անձին իմոյ, ՝ոչ զևտացի ոք և ՝ոչ քահանայ. դու երկնային սամարացիդ, դու միայն գթացար յիս և ողորմեցար. դու միայն հեղեր զվերս իմ զարիւն քո ՝ոչ զամ; և զքեզ բոլոր ողջակիզեցեր ՝ի խաչին. դու միայն ցուցեր առիս զայս ամ. զոյ և ես յանչափս գովանամ զքեզն, և օրհնեմ զքեզ մինչև եմ ես. օրհնեցից այսր զարերարդ իմ և գովեցից զարարեալանեալդ ՝ի հօր և ընդ հոգւոյդ սիրոյ յաւիտեան և յաւիտեանս։

ԻԳ.

Լուսոյ շաբաթ։

Ա. Ի դորով փափաքման՝ի նոր և՝ի յոյժ վիմափայլ ժամանակալ գերեզման կենդանւոյդ՝ ի՞ իմ մահացելոյ՝ զերազում զանձն իմ առ դրամբ մնիցդ։ Ա՝ատչիմ տարփմամբ՝ի կենաւրարդ մարմին, և հպիմ տենչմամբ՝ի մի միայն փրկարարդ իմ։ Համբուրեմ խոնարհութիւն զամենաոգի խոցուածս ոտիցդ, և մածուցանեմ պատկառանաւք զերեսս իմ՝ի վերս ձեռաց քոց։ Երկիր պագանեմ հաւատով փշով պսակեցելոյ բարեբանեալ գլխոյ ոյդ իմոյ։ և զմնութեամբ շրթանց մերձիմ՝ի տիգաստոյ կողիցդ սրբուն։ Ի՝սուզ համակեալ լամ և ողբամ, զի զնծդ իմ կենդանի՝ մեռեալ տեսանեմ մարմնով։ Ա՞վ զիարդ մահացար կեանք իմ. զիարդ թարշամեցար ծաղիկդ երանութեան. զիարդ անպչացար հաստիչդ զգայնոց և բանաւորաց. զիարդ անշնչացար ցնծութիւդ երկնի և երկրի։

Դու արփի ամենագեղ պայծառութիւնք և արեգակն արդարութեան զմի՞ աղօտացար՝ի խաւարեալոց միջև։ Ի՝նակեալդ յանմատոյց բարձրութեան՝ ոգ՝ի խորուն խոնարհեալ ստորին վայրն ծածկեցար։ Ղ՞առագայթ փառաց էուն անսահմանելոյ՝ հիմ՝ի մթամատ տապանի վիմով փակեցար։ Ա՝նքուն ակն ամենահայեաց, զի՞ է՝ զի ոչ տեսանես։ Դ՝ոյացուցիչդ համայն լսելեաց,

էր վա՛ն անլուր կաս։ Բանդ ՝ն ՝ն՝ տուՀող բնաւ՛ն
բանի, զարմանք է՝ զի անբարբառ նիրՀես։
Բ. ՈՀվ զարմանալեացս. դու որ աղբիւրդ ես
կենդանուն և կենդանուն պարգևես ՝ն՝մի՝ իբր
անկենդան թաղեալ տեսանիս, և ՝ի գրի ներքնում նսեմանցէ նշմարիս. ոՀ զի և զիս զինքեարս
՝ի գուբ ապականուն վերառեալ նորոգ ես՝ցես ՝ի
կեանս։ Դու որ յանմարմնոց վերնոց պարառեալ բարեբանիս, պատեալ կաս ՝ի կատաս. և
որ յերկնաւորաց և յերկրաւորաց երկրպագուի
առնուս, ինչեալ բազմիս ՝ի պատանս ՝ի զմուռս
և ՝ի հալուէ. ոՀ զի և զիմոց աղօթից վերընկալցիս իբրև զնուէնկ զընծայութի։ Դու տէր
երկնի և երկրի՝ որ յերկրի շրջեցար, և յերկրէ
՝ի խաչ բարձրացար, աւասիկ ՝ի սիրտ երկրի ընկողմանեալ ՝ն՝նջես, և որ զՀամ պարագրես՝ պարածածկեալ ամփոփիս ՝ի դամբարանի. ոՀ զի
զտարագրեալս յարքայութէ քումմէ՝ ՝ի նոյն ժողովեալ, անվՀար և աներկեան ամփոփեացես։
Ոչ յոգ անստուՀեր իմանալի, ՝ի ստուՀեր մահու
հանդուցեալ հոկես. զի յանմահուն լուսոյ փառաց յարուցես զնս։ Ո՞ էմդ վանիչ դժոխայնոց
՝ի գահաւորակիդ բազմիս նորափոր վիմի, զի ա-
զատեցուցես զանձն իմ՝ ՝ի դժնեալէ դժոխահանդոյն փարանմանց։ Դանդ անկողոտելի,
անապականաբար նիրՀես ՝ի շիրմի, զի հատատեսցես զնս յանապականուն փարուց։ Պահապանդ իսրայելի, և պահպանիչդ ՝ն՝մի՝ ՝ի պարՀեցելոյ առ ՝ի քէն պահպանիս. զի և զնս յորսոզաց չարաց պահեսցես։ Ինքիս և մատանեաք
թշնամեաց քոց. զի և զնս ինքեսցես ՝ն՝ծայնն

ՀՈՐՀՕՔ։ Յորոց վկրաւորեցար, և 'ի զենումն
ածար, 'ի մեռելուդ ՀՈՐՀԵՍ ՆՅ զարատուն և
զիրկուն։ զի և ինձ զնոյն ՀՈՐՀԵՍՑԵՍ։

Դ. ԶՀՄԱՀՈՒԹԻՆ 'Ի ՄԱՀՈՒ ՔԱՐՈԶԼԻ ասա. քանզի
որ անմահ ածուԹիդ գոյացուցանես և վայել-
չացուցանես զՅՍ, խնամես և դարմանես, աւա-
սիկ մարմնոյդ մեռելուն անշշուունչ և անշուունչ
հանգչիս 'Ի ՄԷՋ մահացելոց անզգայապէս։ Այ
և մեք զոր մեռեալ տեսանեմք, ՅԱԾ կենդանի
խոստովանիմք. քանզի աներկեայ հաւատամք,
Թէ անմեկնելի 'Ի մարմնոյ քո մնալով ածուդ,
նովին ածուն իբր անփակ գրով հաստատեալ
քարտեղ ցուցաւ ամենամբ մարմնդ։

Ե. յՍՍԱՓ Է ԱՀԱ ԱՒՈՒՐՍ ՀՐԱՇԱԿՆՈՒԹԻՆ. զոր
և խնկազդեցիկ անհատ ըմբռնեալ՝ սգակցեաց
փուԹացան՝ գՀԷԹ Թաղեցելոյ մարմնոյ քո մաբ-
Թասցին կրկին պատահել և խնկապատել, եր-
կիրպագանել և փառաբարդել։ Ինդ որս և ես
յարժանաւորուն՝ սոցա վերջացեալս պնդեցայց
պատրաստել և ուղղեալ քեզ յՅ խունկս ա-
նուշահոտ օրհնուԹեց, և զիւրս անձնանուէր
աղօԹից։

Մի՛ արհամարհեր աղաչեմ զփափաքումն սրտիս
կարօտանաց. և մի՛ անմասն Թողուր զիս 'Ի մաս-
նակիցն գոլոյ սիրաբորբոք տենչանաց երջանկա-
ջան զգաստիցս. զի և ես ըստ նոցին արժանա-
ւորեալ, ՅՍ նոսին պատահեցայց և տեսից զքեզ
ոչ ես 'Ի գերեզմանի, այլ 'Ի յարուն փառաց,
և ժամանեալ 'Ի ժառանգուն յարուցելոյդ՝ գո-
վեցիցս և մեծացուցիցս զմեծվայելչուԹիդ փառաց
քոց ընդ ՅՍ՝ յաւիտեանս։

ԻԳ

Օրատիկ։

Բարեջին նուագ։

Յարեաց այսօր 'ի մեռելոց յարուցիչդ մա-
հացելոց. զարթեաց ոգի 'ի քնոյ զար-
թուցիչդ ննջեցելոց։ Օրագեցար այսօր 'ի կոյս
գերեզմանէ ծագողդ համայնից նշոյլս լուսոյ։
Լուսաւորեաց այսօր երկիր, և զուարճացաւ 'ի ներ-
քուստ. ոգի երկինք 'ի ծննդեան քո 'ի վերուստ.
խայտաց այսօր երկիր ինքնայորդոր երերմամբ,
ոգի երկինք յերևիլ քո 'ի բեթղեհէմ զուարթ-
նոցն ի ջմամբ. եբաց այսօր երկիր զբերանս գե-
րեզմանաց, և ետ զոքս քոյին հրաւիրմամբ.
ոգի երկինք 'ի յայտնութիւն քո զաստեղս լուսա-
փայլ երևեցոյց ծագմամբ։

Արեւ է այսր աւուր երկրի փառաւորութիւն
քան զայսր աւուր երկնից խնդութիւն։ * Այս օր
է՝ զոր արար Տէր ||, սաղ. ղբ. 8. յորում բերկրիմք
երկրաւորքս ընդ դասուց երկնայնոց. արդարև
այս է օրն այն՝ զոր դու արարեր։ Հօթնեակ ա-
ւուրք կարդեցան 'ի սկզբան 'ի հրամանէ քումմէ.
այլ զօրս զայս դու արարեր։ Լուսաւորք բա-
զումք սահմանեցան 'ի հանդէս պաշտաման տնօ-
րէնութեց քոց՝ բայց զոր դուն արարեր՝ է օրս այս։
'Ի սմա ցուցար Տէր կենաց և մահու, և 'ի սմա
ընդոստնեցեր զդժոխոց դաժանութիւն. 'ի սմա կիր-
զեր 'ի բոց հրոյ զբանակալուն սատանայի. և 'ի

սմա հարեր և յամենի արարեր զԵՀնամիս քո զնամ։ Ի սմին աւուր խսպառասպուս բարձեր ի բաց զմուրհակ դատապարտուն մերոյ, և ի սմին աւուր փլուզեր զԵՀնամուն մեր՝ զոր արձանա ցուցաք առաջի Հօրդ երկնաւորի. ի սմին աւուր զիջուցեր զսրամտուն բարկուն անեղիդ բարձ բելոյ, և ի սմին հաշտեցուցեր զերեսս զԵՀա սիրիդ բարեբարութեն։

Օ՛սր օրհնուն կամ զոր գոհուն մատուցից քեզ ՀՐ, և զինչ հատուցումն հատուցից այսքանեաց անկշռելիդ բարեաց։ Ա՛ւաղ ինձ աստանօր, զի զոր ի դէպս ունեմ փոխանակել՝ ի տարադէպս բերեալ զանպէտս փոխարինեցի. վայ և ցնծութեն իմ՝ յանարգուն խոնարհեցաւ, ի ցաւս և ի հոգս. և ամօթ պարտեացս ի տխրութեն խորասուզեաց զանձն իմ։ Ցնծալ երկրի փոխադարձաւ ինձ ի ձայն գուժի, և խայտալ զանդուճաձոյս հողոյ՝ ի խայթոց գառն խղձի։ Ալեցդ յառնել՝ ի գերեզմանաց՝ ի յանդիմանուն մեռելութեն հոգւոյս. և աւետաւորուն յարուցելոյ՝ յեղկուն և յաւաղուն թշուառացելոյս։

Ա՛յլ դու տէր տէր, կարկառեա զամենայարոյց ձեռն քո. յարո և կանդնեա զիս. կեցո և զբացո զիս. օգնեա և օրհնեա զիս ամենակեցոյց յարութիւնքով. զի և ես վայելեալ այսօր յօրհնութեդ լիուն քումդ յարուն՝ օրհնեցից զքեզ՝ի կեանս իմ. և օրհնուիցս հատուցից, զոր ապիրատութեամբս ցնդեցի. և տաց քեզ փառս յաւիտեան։

Երիրորդ Նուագ։

Ի. Ի ցնծալ այսօր երկնի և երկրի՝ ցնծամ և ես և փառս ամենայաղթ յարուն քո, ուրախ իմ և ուր յոյս քոյ. յաւետարանել այսօր զուարթնոց զնաւեցելոյդ ամենազօր զօրութիւն՝ աւետարանեմ և ես զփրկողիդ ինքնիշխան բարձրուն. 'ի քարոզել իւղաբերից զգաստից զանմահութիւն կենաբարիդ՝ քարոզեմ և ես զաւերկրական այցելութիւն բարերարիդ։

Ամենայն ուրախ մեռարս մեռելոյս մարդկաբար, այլ յարեար և յարուցեր զիս ուրախարար. փառք փառաւորեալ յարութիւն քո. փառք ինքնաբաւ յաղթուն քո. փառք երկրպագելի մեծութիւն քո։ Զոհանամ զքեզն ամենափրկիչ իմ. գոհանամ զքեզն ազատեցուցիչ իմ. գոհանամ զքեզն միայն կեցուցիչ իմ։

Ապաքէն ես մեռեալ եի և 'ի կորստեան կոյսի. դու զմեռելուն իմ 'ի կեանս փոխեցեր, և զոգւոյս կորուստ 'ի գիւտ փրկուն վերածեր։ Այնքան քեզ ուրախ չէիր յարուցեալ, ապա և մեռեալքս ոչ յառնէաք. ՝Ա. Կոր. ԺԵ. 14։ Այլ յարեար փառաւք. յարեար պանծանաւք. յարեար յաղթանակաւք։ Զարիցուք ապա և մեք աքանչելիդ քո յարութիւն. և պարծեսցուք յանմահուն կեցուցանողիդ զմեզ. և յաղթանակ կանգնեսցուք քեզ ընդդէմ յաղթանակողին մերոյ։

Զոր կարողացար զմեզ ամենակարող յոյս յառնել 'ի հոգիս ձշմարիտ յարութիւն, բերկրիլ 'ի կեանս կատարեալ ուրախութիւն, և հոգւոյ հանդիսա-

նալ ընդդէմ ախտից բռնաւորութեան. մեռանիլ ընդ քեզ՝, և յառնել ըստ քեզ. օրհնել զքեզ և փառաւորել յաւիտեան։

Երրորդ նուագ։

Գ. Կենդանութիւն յաւիտենական և անմահութիւն բանդ ՝ուծ. ցնծութիւն արարածոց և երանութիւն ազգի մարդկան։ Ցեսանելով ահա զկեանքդ իմ՝ ի մահու տքնեալ՝ սոսկամ և սարսիմ. և յուսաբեկ նուաղեալ դողամ և զարհուրիմ. այլ լսելով զաբբառ փոզոյ յարութեանդ բարեկրիմ և բերկրիմ։ Յառեալ իմ աչօք ասաստին յանսպառագիրդ էականութիւն ՝ի զենուորական դասուց արկեալ պահ՝ ՝ի խորհուրդս զարհուրագենս տարուբերիմ։ Ա՛յլ * յարիցէ՝ ՝ուծդ և ցրուեսցին ՝ամթնամիք քո. և փախիցեն ատելիք քո յերեսաց քոց ‖. սաղ. ԿԷ. 1։

Դ. Բայց իսկ թշնամիք յարիցեն վկայ յարութեանդ՝ ՝ի մեռելոց. Մար. ԻԲ. 11. և ատելիք քո գրոչակ ամբարձցեն կանգնելոյ քո ՝ի գերեզմանէ. քարոզ կարդացցեն առ հրեայս և փոզեսցեն առ հեթանոսս՝ եթէ յարեաւ, որ մեռաւն։ Յամենեցեն և հրեշտակք երանաւէտ պատգամաւք՝ եթէ յարեաւ որ խաչեցաւն։ Ա՛նուշահոտ բուրեսցեն և խնկաղեացք յաւետիս փրկութեան՝ եթէ յարեաւ յո։ Ցընթացս սլասցին և առաքեալք յայտնութիւն մտաց՝ եթէ յարեաւ քո։ Ցեսցեն և աշակերտք. և հիացեալ պատմեսցեն, եթէ * արդարև յարեաւ ՝ուր ‖. ղուկ. ԻԴ. 34։ Ա՛կայ կենդանի կանգնեա-

ցկին և անկենդան կատաւ ամենահրաշ քումդ
յարութեան։

Աւլ արդ յինչ մտաբերիլ ունիցիմ ես յայս-
պիսումն աքանչելանկար հանդիսի։ Այն այն,
յաւետարեր լինել այսչափ դասուց և 'ի ցոյց յա-
րութեանն քո վկայ փայլել՝ յարեալց և ես յարութիւն
քով ամ միածին որդի բարձրելոյ։ Այն յա-
րեալց Աշխարհաւոր 'ի գերեզ ապականութեան. յա-
րեալց արդարութիւն 'ի մեռելոց յանցաւորութեան.
յարեալց անմահութիւն յանմեղութեան։
Այն լեցի ինձ առ աչս յառնել ըստ սամուէլեան
յարութեան 'ի սաւուղայ զգայարանս ստուերա-
ցելոյ. զի դիւթական էր։ Այն լեցի ինձ յառ-
նել յարուցելոյն եզեկիէլեան ցուցականու-
թիւն. քանզի տեսել էր։ Այն լեցի ինձ յառնել
ըստ անարգելոյն կորստականութեան. զի դատա-
պարտութիւն է։ Այն և ես ըստ զաղարու լեցի ինձ
յառնել արտասուօք կենարարիդ, զի աւժա-
մանակեայ էր. քանզի թէպէտ և Աշխարհաւ յա-
րեաւ, բայց սակայն և կրկին մեռաւ։ Աւլ յա-
րեալց ըստ յարութեանն ամենակեցոյց յարուցչիդ.
զի անմահութի է. յիրաւի * քո յարուցեալ է 'ի
մեռելոց. այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա
ոչ ևս տիրէ ॥. հռովմ. է. 9։

Այլ արդեօք զի 'ի յառնել փրկչիդ վիճակեցայց
և ես յանմեռանելի վիճակ յարութեան հոգւոյս.
մի ևս մեռայց զմահն մեղայ, և մի գարձայց
անդրէն 'ի հնութն ախտաւորութեց։ Այն սուզայց
'ի ստուերս մահու, և մի մնացիս 'ի գերեզման՝
մնացս խաւարի։ Աւլ նորոգեցայց և 'ի նորո-
գութիւն կենաց շրջեցայց. և ընդ անապական կեն-

դանացելոցն՝ փառաք յարութեան բերկրեցայց 'ի փառս քո յաւիտեան։

Ղ ՍՂՄՈՍԳ ՆՈՒՄԱՔ։

Դ. Երկրպագեալ քումդ յարութեան ակնկալեալ աւետեաց սպասելին արարածք ամ։ Անմարմինք ընդ մարմնաւորացս խրախուսեալ փութային. և մարմնաւորք ընդ անմարմնոց խրախանալ անձկային։ Զոչէր ադամ 'ի սատանայեանց մահու. ա՛ի՛ որ ուծ իմ 'ի հրամանս քո. սաղ. Է. 7։ Զայներ գաւթի 'ի գերեզմանէ. ա՛ծ զսուր ընդ մէջ քո հզօր՝ վայելչուն և գեղոյ քո. սաղ. ԽԲ. 4։ Արբաւ արձակեր յանապատէ յառաջընթացդ քում գալստեան. ահա որ գալոցն է՝ գայ։ Ա՛ա հապեռացդ գումարք աղաղակին, զարթիր որ, և զարթա՛ զզօրութիւն քո. սաղ. ԿԲ. 3. Արգաբերէից գունդք վերակարդային. լցան ահա գուշակութիւք մեր. լրացո՛ արդ և զաւարտումն նոցին 'ի յարութեանդ։ Անչէր և հեծէր յոմնան 'ի փորոյ կիտին. որ ուծ իլի՝ 'ի ժամանել ժամուց երից աւուրց՝ ժամանեցուցեր առ իս զօգնականութիւն քո. արի՛ արդ առանց օգնականի, միայնդ 'ի մեռեալս ազատ. սաղ. ՁԷ. 6։

Ազգդ չզօրէ լինչ ասատ ըստ եզեկիելի տեսլեանն եկաւորուի ընչոյ, և ո՛չ յոդաւորուի ոսկերոտուոյ. այլ միայն հզօր զօրուի ամենակալ կամաց կենդանուոյդ. եզեկ. ԼԷ. 10։

Հնչէ արդ դոչումն ահաւոր 'ի գերեզմանէ քումդ մէ՝ 'ի դիմաց անմահիդ. * զարթիք փառք իմ զարթիք... և ես զարթեայց առաւօտուց ‖. սաղ.

ԺԸ. 9։ Օ արթեար այն փառօք, և փառք քո լցին զտիեզերս, և յամենեսին ելեալ սատանայ կենայ և փրկուէ. ցնծացեն արդ անմարմինք ընդ մարմնաւորաց. ցնծացէք և նախատեղծն ընդ նախահարց ամի. ցնծացէք և տիեզերս հանդերձեալս։

Ցնծացուք և մեռեալքս՝ որք կենդանացաք ի քեզ։ Զնուազքս մահու անկեր ըստարան դատեալ իբր զանկենդան ձուս անդգայ, ի ապականութիւն հեծէաք. այլ դու կենդանացուցիչդ ամի զօրէն աղէկիզելոյ հաւասան ցողելով 'ի վերայ մեր զկենարար արիւն քո յարուցեր զմեզ 'ի ձագս կենդանիս։ յորոյ օրինակ յարացուցի յարիւնեռանդ ձուս ընծայաբերիմք յաւուրս մեծի և հրաշափառ յարութեդ, առ 'ի դուշակութիւն յառնելոյ և մեր զօրութիւն յարութեան քո իբրև զձագս ընդ ամենագրաւ թևօք քո։

Արդարև ոգի փիւնիկ 'ի փայտ խաչի տոչորեալ կիզար, և ինքնաբաւ զօրութիւն յարուցեալ սքանչելի հանդիսացար, յոյս կենդանութեան տալով տկարացս իբր որդանց 'ի յառնել ի թիթեռանն գեղոյ։

Օ մահու բարձեր զարգելումն, և զդրունս խորտակեցեր դժոխոց, կանխագուշակ օրինակ երևեցուցեալ հզօրեղութեան յարութեդ զսամփսոնեանն արութիւն. դաս. ԺԸ. 3. որով և տիրացար տերդ բոլորիցն, և տիրեցեր տիրապետողին բնութեան։

Վաճառեցար անարդ գնով. և գնեցեր զտառապեալքս գնոց գնոյ. փառօք բարձրացար, և թագաւոր փառաց յայտնեցար. զոր և անդէն նախանկարեցեր 'ի դիւրավաճառն մատնիչ յով-

սեփայ և 'ի փառաւորիլ նորա 'ի ստուերն անդ՝ փսոմիթոմիանե վերածայնութիւն՝ փրկիչ աշխարհի. ԺԸ. Խ. 45։

Լուարդ ցոյց առ իս զփառատարեցելոյդ գեղապանծութիւն ահեղդ մեծագործութեանդ զփայլումն սիրալի՝ քոյին յարուցիչ, յառնել ինձ աստուծոյն շնորհօք. յառնել և 'ի յետնումն փառաւք, և տալ քեզ փառս յաւիտեան։

ԻԼ.

Մեռելոց։

ՃԱ. Լրանի մեռելոց՝ որք 'ի հրաննջեցին. յայտ. ԺԳ. 13. արդարև երանի բազում մնասամբք և բազում իրաւք. զի հանդերձն 'ի բազմոյրով տառապանաց, 'ի վշտաց մարմնոյ և յանձկութեանց հոգւոյ. 'ի սգոյ և 'ի լալոյ. 'ի հոգոց և 'ի ցաւոց. 'ի հեծութեանց և 'ի տատամնութեանց. 'ի բամբասանաց և 'ի նախատանաց. 'ի զրպարտութեանց և 'ի չարախօսութեանց. 'ի հալածանաց և յորոգայթադրութեանց. 'ի խօթութեանց և 'ի ստութեանց. և յայլ ազգի ազգի անձնահեղձոյց նեղութեանց։

Արդեն և՛ս երանի, զի զերծան 'ի մեղաց. 'ի գայթակղութեանց և 'ի մեղսակցութեանց. 'ի վտանգաւոր փորձութեանց և 'ի չարահրապոյր թեւադրութեանց. 'ի դառնագին զայրացութեանց և յողբագին տխրութեանց. 'ի դժնդակ վարանմանց և 'ի դժոխահանգոյն սրտահալութեանց. և որ մեծն է քան

զնմա՛, 'ի կարելոյ մեղանչել, և 'ի զօրելոյ մեղայ՝
առիթ ինչ չար նոցա ընծայել։

Ուռաւել քան զառաւել երանի, զի 'ի որ ննջեցին. քանզի 'ի հնորհս քո մեռան. 'ի յոյս և 'ի սէր քո մեռան, իբր քո և իբր որդիք քո մեռան. իբր հաճոյք քո և իբր բարեկամք քո մեռան. իբր ժառանգ արքայութեան և իբր հաղորդակից քոյոց՝ մեռան. իբր փառակից ՝ոբց քոց և իբր կենդանի մեռան. և ունին յառնել փառօք 'ի կեանսն յաւիտենականս։

Լսկ որք 'ի հնորհս եւեթ մեռան, և արքայութեան քում անժամանն գտան, 'ի նեղուիս մատնեցան, և 'ի բովս հրեղէն չարչարանաց անկան, առ 'ի քաւութիւն պատժոց և 'ի թողութիւն թերթեանց մեղանաց իւրեանց։

Զանզի յելանել հոգւոց նոցա յատեանն մանրազնին արդարութեան քո, և 'ի յանդիմանն լինել դատաւորիդ մեծի, ելցեն 'ի հանդէս ամենայն մուռացեալք, անգիտեալք և անկարծելիք 'ի հոգւոց անտի. զորս ակն յանդիմանն ցուցցես նոցա, և յայտ արասցես՝ եթէ տակաւին կարօտ են մաքրութեան, և պէտս ունին յետին դառնակսկիծ դանից, և հրափորձական ապաշխարանաց սա 'ի միանալ սրբոցք ՝ սրբուեդ ՝ոբց և ընդ անաղօտ լուսոյդ. զի ո՛չ ոք 'ի կոչեցելոցն 'ի վայելս երկնաւոր հարսանեացդ մնոցէ անպատրաստ և աղտեղեալ պատմուճանաւք, եթէ ոչ՝ մաքրեալ 'ի յանցանաց, և նոր ըստիեռուր զարդարեալ 'ի զգեստս պայծառս. վա՜ որոյ իրաւամբք արկցին իբրև 'ի քրայս հալոցաց, ուր սրբեսցին, և ջնջեսցին ո՛չ միայն

սպիտն արատոյ մեղայ, զորս յաշխարհի՝ ի ձեռն դարձի ապաշխարութեան լուացին արտասուօք, այլև մանրաբիծք թեթևագունիցն յանցանաց, զի զտեալք ոչ զոսկի, ոչ զարծաթ, և փայլեալք ըստ օրինակի ականց շափիւղայ՝ արժանասցին գալ՝ ի միութիւն և՝ ի յօդաւորութիւն ընդ անբիծ և անարատ լուսոյ ուծայնն տեսութեանդ։

Ընկալար զդարձ նոցա յապաշխարութիւն, ցուցեր զողորմութիւնդ, պարգևեցեր զշնորհս բարեկամութեդ, քաւեցեր զյանցանսն, սահմանեցեր զնոսա՝ ի մասնակցութիւն սրբոցդ յարքայութիւն երկնից. սակայն արդեւլուս զնոսին առ ժամանակ մի յառաւել մաքրութիւն, և՝ ի պայծառութիւն հոգւոց. կրեալ տալով զարժանին տուգանս ինաստուցն զոր գործեցին, առ՝ ի հատուցանել արդարութեամբ մինչև ցյետին նաքարակիտ պարտեացն, որում գտան պարտական։

Շ. Ո՛վ սգալի տարագրութեան և վշտագին ցաւոցս, յոր ըմբռնեալ հոգին անձնատոչոր փափաքանօքն զոր ունի՝ ի միանալ ընդ արարչին իւրում, տագնապի կարօտիւ և հեծէ սրտառուչ պաղատանօք։ Հարսնախօսեցայ ասէ հաւատով, և սրբեցայ սրբարար շնորհօք. ՈՒՆ. Է. 20. և ահա կարօտեալ կամ երեսաց իմոյդ փեսայի։ Բաղձ տրորանաց սրտիս, գրեցայ՝ ի գիրս սիրոյ սիրելեաց քոց. և ահա զատեալ կամ յընկերակիցն լինելոյ ժառանգաւորացդ ոյ. աւետաւորեցայ վերանալ՝ ի վայելումն

անձառելի փառաց քոց. և ահա հեռացեալ կամ տակաւին 'ի վայելից անպատուամ ուրախութեդ. առեալ եղէ 'ի ձեռն սրբազան խորհրդոց յընտանութեն սրբոյդ. և ահա սպասեալ մնամ կարդիլ 'ի խումբս դասակցութեն օրհնաբան ընտրելոցդ 'ի վերինդ քո երուսաղէմ։

Լաւ այժմ որովհետև մխիթարեցայց, և 'ի ձեռն ուրոց եղէց ձեռնհաս զերծանիլ յանձկութենէ աստի իմմէ։ Ցաղնասպեալ կամ 'ի վշտաց մեծաց, և խնդրեմ սիրտիս. դառն է ինձ նորօրինակ հովիտս տրտմութեն, և տառապանք անտանելի անձկութեան. կարօտիմ մխիթարութեն, սպասեմ ձեռնտուութեն. ակնուսիմ նպաստից և օժանդակութենէ սրբանուեր մնաղթանաց կաթողիկէ եկեղեցւոյ սրբոյ. որով թեթևասցին վիշտքս, կարձեսցին պատիժք մեղանացս, հանդարտեսցի տագնապ սրտիս, և լիցի ինձ փութով տեսանել զերեսս արարչին իմոյ։

Ողորմեցարուք, ողորմեցարուք բարեկամք իմ. և առաւել ողորմեցարուք զանակք իմ և ժառանգք իմ. ողորմեցարուք և յաղաչանս մատերուք առ փրկիչն իմ. դիմեսջիք առ նա աղօթիւք և խնդրուածովք, զի ոչ անտես առնէ զաղաչանս ձեր։ Պատուսջիք առ նա պատարագս հաշտութենէ մեր իմ. քաղցրացուցէք զկամն նորա առ իս՝ ոչ միայն հանգիստ առնուլ փոքր մի 'ի ցաւոցս, այլ և 'ի հանդիստն փոխիլ երկնային օթևանաց. եթէ ցուցջիք զմեր իմ ողորմութեն առ աղքատս, գտից և ես

ողորմութիւն յամենողորմ տեառնէ իմմէ. եթէ դուք ձգնեսջիք պահօք և վշտօք մեր իմոյ աղաւաղութիւն, հասիցս և ես 'ի ձգնարիսն ազատութիւն հասելոցն 'ի նաւահանգիստն երկնից։ Այլ անգութ ինձ գտանիջիք ոչ սիրելիք իմ. ժառանգեցիք զորս թողն ձեզ, և հիմ երբեք ոչ յիշեք զիս. տուն կանգնեցի ձեզ, և դուք 'ի նմին բնականայք, զմի՞ ոչ հոգայք ապրեցուցանել զիս 'ի տանէ տստի անձկանաց. հասս կարգեցի ձեզ կալուածոց, և դուք 'ի նոսին վայելեք, և զիա՞րդ մասն ինչ անտի ոչ հասուցանեք ինձ։ Օ՛ի՞նչ ոչ արարի՝ զի զձեզ լիաբեալ թողից, և այժմ չիցի՞ արժան և ձեզ դոնէ փոքրումբք օգնել ինձ, և սիրիմասս ինչ մատուցանել։ Յամ ժամ ձեռնտուութիւն ձերում սպասեմ, և ոչինչ տեսանեմ. ակնակառոյց կողկողիմ, և ինչ ոչ նպաստաւորիմ. աղաղակեմ և աւաղեմ, և զայցելութիւն ոչ գտանեմ. տաղնապիմ տարակուսանաւք և վարանիմ տըՀայտանաւք, հասցի՞ արդեաք ուստեք օգնութիւն. կարձեսցի՞ արդեաք ժամանակ ելիցս. զարթիցե՞ն արդեաք ողորմածք՝ ողորմութիւնք հնարաւորել յիս զաղատութիւն։

Յանիմանալն իմն խորս սուգեալ կամ, և տանջիմ 'ի խղձէ մտաց, ընդէ՞ր արդեաք ընդէ՞ր ջարաչար վրիպելով յայս վիճակ անկայ, ընդէ՞ր ոչ ողորմելովս ոչ գտանեմ յայլոց զողորմութիւն. ընդէ՞ր ոչ ըստ բնաւ բաւականին կրելով զապաշխարանս՝ կրեմ զայսպիսի տուգանս, և ըմպեմ զայսպիսի գանս։

Տանջիմ և 'ի տեղւոյն՝ ուր իցեմ. գիտեմ զի
ոչ ես եմ 'ի տեղւոջ հանգստեան, այլ վշտաց
և նեղութեանց. իսկ թէ որպիսի այն վայր իցէ՝
ոչ կարեմ արտայայտել։

Զ. Յայսմ ամի մի ինչ միայն է՝ որ կարէ
սփոփել զիս և քաջալերել. իբր զի զորս կրեմ՝
ոչ տեւէ յաւիտեան. կայ յոյս ազատելոյ, և
առ փրկիչդ իմ Ժամանելոյ, և յաւիտեան զքեզ
Ժառանգելոյ։ Սակայն և այս յոյս որքան քա-
ջալերէ՝ այնքան չարչարէ. զի յանյայտս և յան-
կետս պտոյտքէ զիս. ոչ կարեմ զերբեն ձանա-
չել, և ոչ իշխեմ զընդդէմն քննել. յամ վայրկե-
նի տարփուն սրտի իմոյ վերահնչէ. երբ իցէ
երբ լինիցի. երբ արդեօք, այժմ արդեօք. որ-
պէս արդեօք. երանա՞ արդեօք. գայցէ՞ արդեօք։
Այթէ յաշխարհ ուրեք 'ի բանտ խաւարին և
դժուարին կապեալ կայի ը պարտաւորս, յիմա-
նալս իմ՝ թէ ազատութիւն հանդերձեալ է լիս
նել, յամ բոպէի ակնկալեալ մնչէի, թէ երբ
լինիցի։ Այս եթէ լինէր ինձ ոտնաձայն լսել
գալստեան ուրուք, թնդայր սիրտ իմ. և 'ի
բանալ բանտապետի զդուռն՝ զդողանի հար-
կանէի, աւետեսցի՞ արդեօք ձայն ազատութիւն
առ իս. եթէ յայսմ դողման այլուամ ումեք լի-
նէր արձակումն, վայ տալով անձինս՝ վերստին
'ի վարանս ըմբռնէի. և ժամէ 'ի ժամ դաբ-
ձեալ աւետեաց սպասէի։

Յայսպիսի ահա վիճակ կապեալ կան ինքնե-
ցեալքն 'ի քո. որք ձչմարիտ հաւատով 'ի
ինարհս հոգւոյդ ոչ մեկնին աստի, ժամանա-

կաւոր պատժոց ևեթ յանցանացն գտեալ պարտապան։

Այլ զի չկարելով անձամբ անձին ազատութիւն գտանել, կարօտին նպաստիւ կենդանեացս ելեալոց 'ի Տէր եկեղեցւոջ. սմին սակս և մեք հանապազ, և յաւէտ յայսպիսի աւուրս աղօթս և խնդրուածս մատուցանելով առ ամենողորմ և առ անսխակալ տէրդ մաղթեմք։ Յոյց առնս ցոյց աղաչեմք զողորմութիւն քո. ազատեա զնս 'ի վշտաց նոցին. հանգո զնս 'ի տանջանաց նոց. մխիթարեա զթաղձութիւն տխրութիւնս կամաց նոց. լուսաւորեա զխաւար մտաց նոց. զօրացո և կաղդուրեցո զյոյս նոցին, համառօտս կացո զժամանակ հատուցման նոց։ և թէ անբաւ մարդասիրութիւն քո վերաբերեա զնս յարքայութիւն երկնից. և դասաւորեալ պայծառացո զնս թէ Տէս քո յօրհնութիւն յաւիտենական երանութիւն և յանվախճան ժառանգութիւն փառաց ՅԾութիւնս քո։ Ընդ որս ընկալ և զիս յո, և արժանաւորեա ընդ նոսին օրհնել զքեզ յաւիտեան։

Ի.Օ.

Աստուծոյ կոչն։

ԱՌ. Աւրախ լեր բերկրեալդ, տեր ընդ քեզ. օրհնեալ 'ի յաւիտեանց. օրհնեալ յերկինս և յերկրի. օրհնեալ յամ արարածոց. նոր ածածին. տիրուհի հրեշտակաց և հողազգեաց բանաւորաց. բարեբանեալ 'ի շրթունս ազգաց և ազանց, և փառաւորեալ 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի։ Արքիացեալ անձառելի շնորհօք, և լուսափայլեալ ամենապարփակ պարգևօք. երանեալ 'ի բարձունս երկնից անհասանելի փառօք, և բարձրացեալ 'ի վեր քան զամ արարածս ածամնյրութեան պանծանօք։

Անբաւ գոհութիւն մատչիմ աւասիկ առ քեզ օրհնաբանել զմեծութեան փառաց քոց, և գովաբանել զքեզ։ Ով թէ քանի երանի էր ինձ, եթէ առեալ 'ի վերնայնոց զնոցայն օրհնութիւն՝ նովիմիք զաբանչելահրաշդ փառաբանի գերազանցութեան, և զգերասուրնանալդ հրաշակերտ վայելչութիւն։

Օ՜ որ շնորհս և զոր օրհնութիւս մատուցուք քեզ տիրամայր կոյս՝ որ 'ի դատակնքիլ մեր 'ի մահն յաւիտենական, յոգնութեան մեզ ժամանեալ առ 'ի փրկութեան ապրեցուցիչ մեր եղեր։ Անգի 'ի վրիպիլ և 'ի կործանիլ նախահօր մերում, կործանեցաք և մեք ընդ նմա, և դա-

տասպարտութիւն գտաք պարտական։ Լաւ յան-
կանիլ մեր 'ի յուսոյ՝ զարթեալ ողորմութիւն
նոն 'ի գթալ և 'ի փրկել. յարեալ և արդա-
րութիւն նոր, և բողոք եբարձ՝ հատուցանել մեր-
դոյ նախ ը յանցանացն, և ապա հասանել ո-
ղորմութիւն։ Լաւ ո՞ մերումն այսմ անհուն պար-
տուց կարօղ էր հատուցումն առնել։
'Ի շարժիլ ապա սիրոյ անբաւին 'ի վրդ մեր՝ յա-
ռաջ մնաեալ սպասարկու լինել անհաս իմաս-
տութեանն։ Ինդ որ հաճեալ և հաւանեալ ամե-
նասաք երրորդութեանն՝ հնարաւորեաց հնարս 'ի
վերս քան զմիտս. իբր զի նա ինքն անսահմանն
իմաստութենն՝ բանն անեղական ինքն յար-
գանդ ընտրեցելոյդ 'ի յաւիտենից. և զորու-
թիւ հոգւոյն սրբոյ յղացեալ, և լեալ մարդ կա-
տարեալ՝ կատարեսցէ զգործ այսր անհատու-
ցանելի հատուցմանն։
'Ի լրանալ աւուրն սահմանելոյ՝ հրաման եղև
գաբրիելի մեծի հրեշտակի փութալ հասանել
առ մարմնատեսիլ հրեշտակդ, և դնել առա-
ջի քո զանպատում պատգամ վերնոյն։ Յափըշ-
տակեաց յայնժամ գաբրիել զհրամանն. և
հերձեալ անցեալ ը անհամար բազմութիւն երկ-
նային զօրութեաց՝ էջ դէպ ուղիղ 'ի բարձանց
անտի 'ի նազարէթ քաղաք 'ի տուն կուսիդ.
և գտեալ զքեզ յաղօթս՝ 'ի հիացումն կրթե-
ցաւ, և ընդ սքանչելիդ զարմացեալ տեսիլ
զմայլեցաւ։
Լաւ 'ի հիանալ և երկնագումար խմբից՝ նա
ինքն որ որ առաքեաց զգաբրիել, 'ի բարձանց
անտի դիտէր տեսանել թէ զինչ այսմ մեծի

առեառաց ունիցի պատասխանել ամենախոնարհ կուսութիւնդ։ Լ՝առեաւ ապա գաբրիել պատկառանօք. և ետ նախ կուսիդ ողջոյն յարգանօք ասելով. ուրախ լեր բերկրեալդ լի շնորհօք, տէր ընդ քեզ։ Լ՝սաց և ապշեցաւ. զի 'ի փութալ նոր, ժամանել առ քեզ. յառաջ քան զհասանել իւր՝ եդիտ զառաքօղն ը քեզ. յերկինս եթող, և յերկրի ետես զնա ը կուսիդ։ Օ արմացար և դու ինքնդ՝ ոչ ը այն՝ զի ունելիր 'ի հոգի քո շնորհօք զոր փառաց, այլ ընդ այն՝ զի ունելոց էիր զնա և մարմնով յարգանգի. մա որոյ և խռովեցար ոչ ընդ տեսիլ երևեցելոյն. զի այն չէր ինչ մեծ առ քեզ, այլ ընդ տարազ բանին՝ որ յայտներ զբանս 'ի վերս քան զբան։ Լուայ լսեալ զբան ստութեան 'ի ջար հրեշտակէ ոչ զարմացաւ. զի ինքնահաւան դատաւ. իսկ դու զարմացար, զի յայմի խոնարհ գոլով 'ի քեզ, ընդ այնպիսի արժանապատուութեան հիանայիր։ Լ՝ընդ որ աքանչացեալ և հրեշտակին՝ եդ առաջի քո զոր ունէր զպատգամ մեծին ասելով. մի երկնչիր մարիամ. մի զարմանար ընդ բանս իմ. որոյ կոչեցի զքեզ բերկրեալ լի շնորհօք. զի գտեր շնորհս յիս։ * և ահա յղասցիր և ծնցես որդի, և կոչեսցես զանուն նոր յս ||։ Յառնուլ քո զպատգամ հրեշտակին, և որ սպասեր առնուլ 'ի քէն զպատասխանին. մա որոյ և 'ի նոյն փութացուցանէր զքեզ հրեշտակն, և բերկրալից խօսելով ընդ քեզ՝ սփոփել կամէր զքեզ. մայ և յաւելոյր ասել. * հոգի՝ որ եկեսցէ 'ի քեզ ||։

Յայսպիսի պատիւ վերս առեալ՝ 'ի վայր և 'ի խոր

խոնարհեցար մայր ՝ի լինել հրաւիրեցար, և
աղախին զքեզ խոստովանեցար. * ահաւասիկ
կամ աղախին ՝ի՛ն || ասելով. առաջին էիր ՝ի ըս-
տեղծումն, և յետին ինն ցուցեր զքեզ. քան
զամ արարածս մեծ էիր առաջի՝ ՝ի, և փոքր ե-
ղևեցուցեր զքեզ. առաւել ընտրելի համարե-
ցար աղախնութ՝ խոնարհիլ՝ քան ՝ի՛ծ մայրութ՝
վեհ երևիլ. լի հնարքաւ վերաձայնեցար, և լիու-
լի ՝ի խոնարհութ՝ փայլեցար. տեսանելին զքեզ
սերովբէք և քերովբէք՝ թագուհի երկնի և եր-
կրի սահմանեալ, և դու զանձն ՝ի նաժշտաց
կարգ դասեցեր։

Ը. Ա. զի յայսքան և յայսպիսի անսահմանե-
լի սահման խոնարհութ՝ կոպարաւորեցար, վա-
ղարդ և յանհասուն այսր անքննին խորհրդոյ վե-
բացար. և յ՝ՈՒծուն մնտաւոր բարձրութ՝ մեր-
ձեալ՝ իշխեցեր զամենազօրն բարբառել քան.
յասել քում՝, եղէջ։ Ա. սացեր և եղև. ասաց
՝ՈՒծ՝ եղիցի լոյս, և եղև. ասացեր և դու, եղի-
ցի ՝ՈՒծ մարդ, և եղև։

Ոչ սքանչելահրաշ ազգութ՝ թանիս, որով
կատարեցաւ անհասանելի խորհուրդ անօրէ-
նութ՝ որդւոյն ՝ի։ Հպատակութ՝դ ՝ՈՒծային
կամաց, հպատակեցեր զՀաՀութ՝ բարձրելոյն
խոնարհիլ և խորհրդակատարիլ ՝ի քեզ. որով
եղեր ՁՆմարիտ մայր ՝ի մարդ եղելոյ, եղեր
մայր՝ ոչ յանգէտս, այլ գիտութ՝ և ընտրու-
թ՝, կանուխ ՁՆանալելով զորդիդ, զոր հան-
դերձեալ էիր յետոյ ծնանել աշխարհի։
Հիացար կրկին, հիացար վերստին. զի ստեղծ-

ուռածդ հրամայէ, և սատեղծողն 'ի սատեղծու�
ծոյդ կերպարանի։ Այսոգ 'ի փոքու հասակի՝
սահմանել. և հին աւուրցն մարդ սահմանաւո-
րի։ Աղակնդ շրթամբք բերանոյ խօսի. և
անեղն՝ անձամբ համայն 'ի քեզ բովանդակի։
Հոգեղէնդ հոգեղինապէս վերաթեռէ. և էնն
անմիաթական յորովայն քոյ զինքն պարագրէ։
Որ զնամ՝ 'ի ձեռին ունի, 'ի քեզ իւր տեղի որո-
նէ. և որ զերկինս և զերկիր ընու՝ զարգանդ
քո իւր բնակարան ընտրէ։

Լուեր ընկալար կրեցեր և դու 'ի քումդ
մարմնի՝ զոր տանէիր ախորժ հանգստեամբ
յամենամաքուրդ հոգի։ առ որ առաւելապա-
տիկ տարփմամբ փափաքելով հառաչէիր՝ յա-
սելգ առ նա. * Ծարաւեցաւ առ քեզ հոգի
իմ. քանիապատիկ ես և մարմին իմ ॥. սաղ. ՁԳ. 2.
քանզի առաւել մեծ եղև քեզ տանել զանբա-
ւելին 'ի մարմնի մարմնապէս, քան կրել զնոցն
'ի հոգի քո հոգեպէս. զի սոցն այս սՁց ես է.
իսկ այն՝ քեզ միայն սեպական։ Ի՞նչն որ
դիացար հաստչին որդեգրապէս. իսկ միւսոցն
որդիացաւ քեզ հաստիչն, ոչ որդեգրութՁ,
այլ ՁՀմարտութՁ. ոչ կոչմամբ, այլ ներքմար-
մնութՁ. ոչ բարոյապէս, այլ բնաւորապէս։
Ի՞ քեզ եղև և ընդ քեզ ոչ միայն պարագրե-
լով զքեզ, այլև պարագրելով 'ի քէն։ Այլս
ես եղև, և է յամի, տալով նոցա զիւրեանց
զգՁլ. իսկ 'ի քեզ եղեալ 'ի քէն զմարդկային
առնլով զգՁլ։ Ինդ այլս է՝ զի են 'ի նմանել.
ընդ քեզ է՝ զի է՝ 'ի քէն։ Լաւ որ սկիզբն է՝ ամի՝
սկիզբն առնու առ 'ի քէն։ Ի՞ քեզ լինելով

բնապէս՝ և ը քեզ բնակելով որդիապէս՝ բնա-
կարան եղեր նմին հրաշափառապէս. ի քէն
յղանալով տիրապէս, և յորովայն քո ծնանե-
լով երապէս՝ մայր եղեր նմին աքանչելապէս։
Աստիմնք այսուքիւք ոչ պակաս ինն ծնող եղեր
մարդացելոյն առ ի քէն մարմնապէս, քան
անծին էին ծնող գոլ նմին ածապէս։ Ոչ
նուազ մայր ծանուցար յղացելումդ յարգան-
դի քում՝ ի ժամանակի, քան առաջին լուսոյ՝
հայր գոլ նմին յարգանդի իւրում՝ ի յաւիտե-
նից։ Ոչ այլ օրինակ բարբառիս առ ծնեալդ
՝ի քէն մարդկութիւն. * դու ես որդի իմ սի-
րելի ||. քան զոր բարբառեցաւ առ նա հայր
առ ծնեալն յիւրմէ ածութիւն. * դա է որդի
իմ սիրելի ||։ Օ ի ոչ հայրն երկնաւոր՝ Ճշմար-
տապէս ծնաւ զնա ըստ ածութեան՝ ի յաւիտե-
նից, զնոյն և մայրդ երկրաւոր՝ Ճշմարտապէս
ծնար զնա ըստ մարդկութեան՝ ի ժամանակի։
Որով ոչ միայն անուանեցար, այլև էաւորե-
ցար մայր աց՝ հօր միածնի, և մայր գոլով նոր
իրականապէս, ազգական եղեր ամենասուրբ եր-
որդութեան. հօր՝ իբր այնմ՝ զորոյ զորդին
յղացար. հոգւոյն սրբոյ՝ իբր այնմ՝ զորոյ զէա-
կիցն յարգանդի տարար. և նմին իսկ որդւոյ՝
իբր այնմ՝ զոր իսկապէս և բովանդակապէս
ծնար։

Գ. Որպէս զի սքանչելի էն գործք քո տիրու-
հի. ստեղծուած եիր ի մարմնի, և ի զանբս-
տեղծն յղանալ՝ մարմին տալով նմա ի մար-
մնոյ քումմէ, զնա ինքն էս կերպարանեցեր ի
մարմնի՝ որով և զանմարմին էն ած երևեցու-

ցեր իրօք մարմնաւոր. և որ անչափն է յիւ-
թէ՝ տեսակաւորեցեր զնա 'ի չափս. և որ
ամենուրեք մեծութիւն է՝ պարուրեցեր 'ի փո-
քուս. և որ բարձր է քան զքեզ յանբաւս՝ խո-
նարհեալ ցուցեր զնա 'ի խոնարհդ քում՝ ար-
գանդի. բայց որով խոնարհեցուցեր՝ նոյնին
մեծացուցեր զնա։

Ա.պաքէն խոնարհ հայելի յԸ.ունիլ յինքն կու-
սութիւն զկերպարան մարդոյ՝ կարի ինն մեծ
երևեցուցանել զնա. այլ բաղում առաւելու-
թիւն դու ամենախոնարհ հայելիդ՝ յընդունիլ
յորովայն քո զնոյն կուսութիւն՝ մեծ ցուցեր զնա
յոյժ 'ի կերպարանս մարդոյ։ Հորիզոն աշ-
խարհիս անսրատարը գոլորշեաք պատեալ
զարև՝ մեծ ցուցանել զնա, և դու սքանչելի
հորիզոնդ իմնալի 'ի զգեցուցանել հաստատին
զմարմին՝ հրաշալի ինն մեծ ցուցեր զնա։

Ա.յլ որ առաւել զարմանալին է. նա որ մե-
ծատունն էր՝ և վե՛ր աղքատացաւ, դու
համարձակեցար փարթամութիւն ինն մեծացու-
ցանել զնա, տալով նմա՝ զոր ոչն ունէր. մերկ
էր, և զգեցուցեր զնա. մինչև ասել նմա
ցմայրդ, թէ քո է՝ զոր ետուր ինձ զիմ զայս
մարմին։ Սոլին ահա գրեթէ պարտական գը-
տաւ նա առ քեզ։ Որ եթէ Ճոխասցի պողոս
ասել. * ոչ ետ նմա փոխ, և առնուցու փոխա-
րէն 'ի նմանէ ‖. հռովմ. ԺԱ. 35. դու ինքն
տաս պատասխանի. ես ետուս նմա զայն՝ որով
է մարդ։

Ա.տուր արդարև՝ ոչ եթէ արտաքոյ գոյա-
ւորութեան. այլ 'ի քումդ իսկ 'ի մարմնի. ոչ եթէ

սոսկ հոգմամբ՝ այլ ի գոյացութեդ միացմամբ. քանզի որ 'ի քէն մարմին զգեցաւ գոյացուպէս՝ ընդ մասինդ քոյոյ գոյացութեն միացաւ իրաւպէս՝ առաւելքան թէ պտուղ ընդ ծառոյ. և նովին միացութեն յորովայն քո մնաւ և տածաւ. աճեցաւ և մեծացաւ. մինչ զի իրաւամբք մարթէր մարդ պանծալ նովաւ, և պանծանօք մեծացուցանել զնա. զոր և քանիւք բերանոյ քո ցուցեր յասելդ. * մեծացուսցէ անձն իմ զտէր ։ Մեծացուցեր և զՀայրն երկնաւոր ամենամեծ փառաւք. քանզի ցօր յղանալոյ քո զորդին ոչ՝ արդարև արարածք ամ մեծացուցանէին զնա երկրպագութեն և զոհիւք. և որք ոչ՝ մանուանէին՝ պաշտօն մատուցանէին նմա. այլ արարածք էին, և չէին ոչ։ Զոր փառաւորեալ կոյս զորդին ոչ յղանալով և ծնանելով՝ արարեր զաբանչելիս զայս մեծ, զի Աշմարիան ոչ յարգանդի անդ երկիրպագեր Աշմարտին ոչ հօր, և պաշտօն մատուցեր նմա, և զինքն պատարագեսցէ հաճութեն կամոց նէ, և մեծացուսցէ զնա յանբաւս։ Ա՞ զ որոյ և անձն քո իրաւամբք պանծայ մեծացուցանել զնա։ Զ՝ մեծացուցանել քո զոչ արժանապէս, մեծացար և դու 'ի նմանել Աշմարտապէս. զի էլեր հասեր յոչ ամպրութեն մեծութեն. որ ամենեքին անհաս է 'ի մէնջ։ Զ՝ ի գոյութեն այսր մայրութեն առնչանալով առ գոյութեն որդւոյն ոչ՝ պարուունակէ զինքեան զանսահմանութեն իրական. առ որ ո՛չ կարէ հասանել միտք ստեղծական։ Զինա և դու ինքն մայր եզ, որ հասեր մայր ոչ լինել՝ ո՛չ հասեր յերմքռնել զանհասութեն

ՇՃԱՄՍՅՐԴ գոլոց։ Թէ երևս հնար ելցէ հրեշ-
տակաց յԾՃԱՅԻՆ լուսոյ ըմբռնել և չափել
զայլ և այլ գերազանցութիւնս քո. սակայն զխո-
րութիւն ՇՃԱՄՍՅՐՈՒԹԻՆ քո ոչ ՝ի կարէ չափել.
յայտ. Է. 15. բայց նա միայն որ չափէ զերկինս
զայս Թզաւ. իւրով. Եղէկ. Խ. 5։ Եսայ. Խ. 12։
Եւ արդ քանզի անչափելի է մեծութիւն քո տի-
բամայր, յՍրպիսի չափ գովութիւն հնար ելցէ
չափաւորացս մեծացուցանել զքեզ։ Զունիմք
այլ ինչ մատուցանել առաջի, բայց եթէ ՝ի բե-
բանոյ գաբրիելի առեալ զբանս նորին՝ քեզ ըզբե-
ձել, և ասել. ուրախ լեր բերկրեալդ ի շնոր-
հօք ՇՈՐ ընդ քեզ. ուրախ լեր օրհնեալդ ՝ի կա-
նայս, և օրհնեա զմեզ. քանզի կարօտ եմք. և
մի զրկեր զմեզ յօրհնութիւնէ քումմէ՝ օրհնեալդ
միայն ՝ի բարձրելոյ. օրհնեալ յաւիտեան։
Ընթերցիր ղլուխէր ԳԾԽՆ. Գ. 153։

ԻԼ.

Լոր Հեբրայէ։

Ա. Քանի երանութիւն աւետիք են մեզ այ-
սօր. յորում յարուցեալդ փառաւոր՝ ե-
բևեցար քոյոցդ սրբոց առաքելոց փառաւորեալ
վիրաք։ Լոր է մեզ օրս այս, և առաջին յա-
ւուրս կիրակէ ելից յետ զատկի յարութեդ. յո-
րում մնաւսկատես կատարեմք փրկիւն մերոյ։
Յաւուր զատկի ուրախ եղաք յարուցեալ քով. այ-
սօր ցնծամք ՝ի հանդէս հաչակաւորութիւնդ ամե-

նակեցոյց վերայ քոյ։ Վայելեցուցեր այսօր սիրելեաց քոյ պանծանօք ոչ զփառադ, այլ ըզվերադ. տեսէք՝ զի մի՞ ձեր վերաւորեցայ սաեղծ։ Ոչ տեսել եր զոր ցուցեր. ոչ երևոյթ եր՝ զոր յանդիման կացուցեր. ոչ ոգի ինչ եր՝ յորում զքեզ յայտնեցեր. այլ ճշմարտութիւն տուն։ որոյ մի՞ իսկ ասացեր. * շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի. ոգի զիս տեսանէք զի ունիմ։ ղուկ. իգ. 39։

Լ՚ակ և դու թագաւոր. * բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ. և բեր զձեռն քո, և մեսեա՛ ի կողս իմ. և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։ յովհ. գ. 27. երանի՝ ի քեզ թագաւոր՝ զի այսօր տեսեր զանտեսանելին և ձեռօք շօշափեցեր զանշօշափելին. նա՛ երանի՝ մեզ, զի ոչ տեսաք և ոչ շօշափեցաք. լուաք միայն և հաւատացաք. որով և երանեցաք ի փրկչէն մերմէ յաւէտս. * երանի՝ որոց ոչ իցէ տեսեալ և հաւատացեն։ յովհ. գ. 29։

Զ՚ Օրագլուխք ազգաց պարծանօք պահեն զպիս վերայ՝ ի նշան արութեան և գործոց քաջութեան, յորս շահատակեցան. դու սահնապօր զորագլուխդ մեծ՝ ոչ եթէ զսպիս վերայ, այլ տիրապէս զվերադ պահեցեր և պահես յաւիտեան՝ ի նշան սիրոյդ։ Ի՚ վերայ այսր բղխեցին մեզ երբ յաղբերաց փրկութեան վտակք հնորհոց՝ ի լուացումն ախտից մերոց, ի թողութեան յանցանաց, ի նորոգութեան կենաց, ի բժշկութեան հիւանդութեաց, և յասպաբինութեան տարաբգին ցաւոց հոգւոց և մարմնոց։

Ա՚ յրօրդ այդոքիւք որչափ՝ ի սէր երախտեացդ

զիս հրաւիրեաս, այնչափ զապիրատութիւն ամ-
թապարտելոյս յանդիմանես, յասելդ ցիս. տես
զորս ես կրեցի. հայեաց և յայն՝ զորս դուն
կրեալ հրաժարեցար։ Օ՜ թէպէտ ունիցիմ պատաս-
խանել քումդ այդմ յանդիմանութիւն, բայց ե-
թէ ապ'ի բերան յամրանալ։

Այլ ակն ամբառնալով յանչափութիւն հնորհաց
աքանչելահրաշ վերացդ, և 'ի չափ անկշռելի
իմոցս մեղանաց՝ համարձակիմ աղաղակել. մի
հայիր 'ի բազմութիւն յանցանաց իմոց, այլ 'ի մե-
ծութիւն արժանաւորութեանդ քոյոցդ վերայ։ Լցթէ
յիմն հայեցիս, հայեաց և 'ի քոյդ. և ահա երբ-
եւ փոշի իմն բարձցի, և քոյդ բարձրասցի։ 'Ի
հայելս իմ՝ 'ի վերոյդ սոսկամ՝ զի ես եմ որ վե-
բաւորեցի. յիրաւի մեղք իմ հարին և հեղու-
սին զձեռս և զոտսդ. այլ հայելով 'ի սերդ ո-
րով վերաւորեցար առ 'ի քաւութիւն մեղաց իմոց՝
սովին այսու յոյս առեալ քաջալերիմ։

Լաւարդ՝ ցոյց ինձ յո՞ մինչդեռ 'ի կեանս եմ, մի
զերեսսդ՝ զի անարժան եմ, այլ զվերոյդ՝ զի
կարօտ եմ. զորս և տենչանօք կրել յիս փա-
փաքիմ։ Ուստի և անստգիտ հաւատով յերկր-
պագութիւն մատուցեալ՝ տենչանօք սիրոյ համ-
բուրեմ զնոսին. և 'ի համբոյր հոգւոյս դաւա-
նեմ զՈրդ՝ համայնից ածն ճշմարիտ, վերագէ-
մամբ նորահաւան երևելոյն թովմայի. և ակն
ունիմ երանիլ ամենազգու բանիւ ածային բե-
ռանոյ քո. յոՀՀ. Ի. 28։

Դ. Այո՛ 'ի վերոյդ յայդոսիկ ապաւինեալ՝ 'ի
դոսին պատսպարիլ տենչամ։ Կանխեալ ապա
ինքնին դիմեմ զառաջինն 'ի վերս աջոյ ձեռին

քո, և յանձն առնեմ՝ ի նոյն զհոգի և զմարմին իմ. և աղերսեմ լուսաւորել զիս ի ճշմարտութեան հաւատոյ քո։ Ի վերս ապա ձախոյ ձեռին քո ամբարիակեալ զնամ բերմունս սրտի իմոյ՝ պաղատիմ ամրացուցանել զիս ի հաստատութիւն յուսոյ քո։ Ի վերս աջոյ ոտին քո ուղղեալ զնամ գնացս կենաց իմոց, աղաչեմ առաջնորդել ինձ յանմի՝ ի յորդորումն սիրոյ քո։ Ի վերս ձախոյ ոտին քո պարադրեալ զղջայուս նամի զչարժմունս՝ խնդրեմ զօրացուցանել զիս յառաքինութիւն ընթացս։

Ի վերս ամենօրհնեալ կողին քո բոլորովին ապաստան լեալ՝ խանդաղատելով թափանցեմ՝ առ ի քէն օրհնել և քեզ ի բարին բերել. ի վերտանդից պահպանել և ի չարեաց պաշտպանել. ի հաղթից բանսարկուին զերծանել, և ի հնարից դեւին պրծանել։ Ընդերդորձելի մեալ ի թիւնից նախաչարին, և անվէր երևիլ ի խայթումածոյ նենգաւոր օձին։

Ի՜ զրկեր զիս յա՛ ղաչեմ զքեզ՝ ի զօրութէ հնդեցունցդ այդոցիկ վերաց։ Ի երբ քո յիսուս՝ հնդեքումիք տառիւք անուն քո տպաւորեացին յընդարձակուն հոգւոյ իմոյ, և լինիցին ինձ զէն ի պարսաքարել իբր հնդեքումիք քարամիք զբեալեար, ը հարկանելոյ հզօրացելոյն դաւթի զգողիաթ ի քարանց հնդից։ Ի՜ա բից զօրութիւ քով, և յարեսցց յարութիւ քով. կանգնեցայց և կենդանացայց ի փառս անուն քո. և արժանացեալ տեսութիւն լուսապայծառ վերացդ՝ օրհնեցից զքեզ յաւիտեան։

ԻԲ.

Կանոն Հիւրաքէ. Աշխարհաստեղծութեան։

Ա. Սաղարթացեալ այսօր սրբուք եկեղեցիք արդարոց յարօտս արօտս անդաստանաց 'ի մէջ քաղաքունակ դրախտիս ընդ հանուր ծաղկեղեցւոյ՝ տարեկանաց տօնիչ կատարեն հանդէս ըստ համաշխարհ. և գեղազեղ պայծառութիւք բազմայոլով տիրաշէն տաճարաց՝ տիրապանծ ցնծութիւք խրախճանան, և կանաչափթիթ բերբերանօք ընծայաբերք ընթացեալք 'ի վայելչայօրինուած չքնաղ շքեղութիւն մատրանց յաճախելոց և պճնելոց, անվթարելի անարատ ամբծութիւք փայփային 'ի միութիւն ճշմարիտ հաւատոյ, և հաստատիմն յուսոյ, և հրաբոյր սիրոյ։ Եւ որ սխրալին է, բիւրաւոր բազմութիւք ազգաց և ազանց տիեզերատարած աշխարհաց և զանազան լեզուաց՝ միաբան խրախացելոց, խրնդամիտ համախմբելոց՝ լիահնչիւն հաչակեն և սխրացուցանեն զարձրութիւն աւուրս 'ի յարկս բարձրակառոյց հոյակապ կամարացելոց և շնորհաշէղ դմբեթացելոց, 'ի զարդարանս և 'ի պաճուճանս կանաչագեղ ոստոց և անուշահոտ ծաղկանց պսակեալ։

Օ. Ի ահա դասք դասք հաւատացելոց հիւրաքանչիւր եկեղեցեաց յետ զյարութիւն կատարելոյ զութօրէսն, և զկնի 'ի նոր կիւրակէի զատկան աւուրց հաչակելոց զնաւակատիս, իբր աւետաբեր լեալ տաճարաց սրց և մատրանց

նոմիրելոց, ձայն ցնծութեան աւետաւորելով, և մնտաղաբոյս կանխաւ դեղեցիկս ստեղծելով՝ 'ի յորդոր օրհնութեան և գովութեան խրախուսեն. և 'ի նորոգութի քրիստոնէական կենաց քաջալերեն, բովանդակել՝ ըստ կատարման տօնախմբութեան և զբոլորութեան անարատութեան վարուց. դալարազմարգ բարդաւաճելով 'ի նմին 'ի սաղարթս սաղարթս ազգի ազգի առաքինութեաց առ պտղաբերս արդիւնացուցանելոյ տոհմանս բարեաց արժանիս յաւիտենական խընդութեան, 'ի վերին իմանալի ամենացանկալեաց օթեւան յարքայութեան երկնից։

Զ. Մեծի յայսմ տօնախմբութեան աքանչելապէս ինն իբրև դրախտ առաջի մեր բարձրացեալ դերափայլէ կաթողիկէ ՝ոբ եկեղեցի. յորում կենդանատուդ ՝ոբ խաչն նշան իբր ծառ կենաց կանգնեալ տեսանի, և հաղորդութեդ խորհրդոյ ներկայութի իբր պտուղ անմահութեան ընծայի. սրբարար եօթնեակ խորհրդոց դաղանիք իբր աղբերակունք փրկութեան նշմարին, և խորհրդաւոր իրողութեաց անտեսութիք իբր զոնարձալի տունկք անտառաւորին։ Դաղմութիք մանաւորեալ ուղղադաւան եկեղեցեաց իբր զանազանեալ պարտիզաց՝ բարեաց 'ի բարիս բոլորեալ փողփողին. և իւրեանց վայելչաղնին տարբերութեամն տարացուցիւք պճնապաճոյճ պարեն. ցորչափ ը ճշմարտութեան ամենեքեան մի են 'ի քրիստոս, ը մշակութիք միոյ մեծի դրախտասպետի արդարաժառանգ յաջորդի երեսփոխանին քոի՝ սրբոյն պետրոսի, ամենեցուն միակամ և միակրոն անդորրացեալ՝

իւրաքանչիւր ՝ի միակութիւն և իւրեանց ողջամիտ ուղղագնաց առաջնորդի։

Ինդ սոսին և ՝ի սոցին հաղորդակից և կենակից յօդակապ տարրացեալ և մեք վերագոչեմք առ քեզ քո՝ ած մեր. և լիապատոյ խնդութիւն երդաբանեալ բարեբանեմք զբարեբանեալդ յեկեղեցիս սրբոց, և ՝ի հոգեբարբառ շրթունս զոհարթնոց քոց. և միաձայն աղաղակելով յաւիժաբար հնչմամբ վերաթեւեմք ՝ի բանս ՝ի վեր քան զբան. ովսանանա, ամէն, ալէլուիա։ Եւ կրկին յարելով ՝ի նոյն զթիւ աղաղակի սրտից մերոց նորաձայնեմք առ որդիս քո. օրթի. պռօսխուսմէն. արիք տեսէք՝ զոր արար ՝ի՞ր։ Եւ բոլորիցս միակամ միակրօն յաղերս մնուցեալ պաղատիմք, հանդերձ գոհացողական և մեղթողական նուիրագարկութիւն. քո՝ եմք ՝ի՞ր, և քոյդ գոլով գովեմք զքեզ. քո՝ եմք ՝ի՞ած մեր, և քոյդ լինել փափաքիմք. քո՝ եմք, և ՝ի քեզ մնալ անձկամք. քո՝ եմք, և առ քեզ դիմեալ աղաչեմք. մի թողուր զքոյդ. մի մերժեր զյուսացեալքս ՝ի քեզ. մի ընկենուր զմեզ յանձկալի երեսաց քոց, որք անկեալ եմք ՝ի քեզ։

Ը. Յոյց մեզ ՝ի՞ր զողորմութիւնս քո. և տուր մեզ՝ զոր դու տալ ախորժես, և յոր մեք վստահիլ ամաչեմք։ Յայսմ ծանիցի և բարձրասցի շնորհ մարդասէր հաճոյից քոց, եթէ զանց զանարժանութիւն մերով արասցես, և զգթութիւնք քո գործով առ անարժանս բազմապատկեսցես։ Այանգի զի՞նչ մեծ է երախտագիտացդ ցուցանել զայցելութիւն քո. առ մե՛զ առ ապերախտ

և առ ապաշնորհ ծառայքս քո առատացո՛ զ-
ղորմութիւնքդ քո զազատարար և զփրկարար պար-
գևսդ. զի բարձրացի և վերացի փառք մե-
ծութիւնքդ քո 'ի վերս քան զփառս։

Օ՜ վստահաբարբառ բերիլ մեր 'ի սոյն մի՛ յան-
դգնութիւն դրեր արդ ասես. զի տագնապեալ
եմք՝ ո՛չ եթէ յերեսաց բարկութիւնքդ քո, ապա-
թէ ո՛չ՝ յոչնչութիւն ընկլուզեալ էր մեր, այլ
յամենաբարերար քաղցրութիւնդ սիրոյ քո. յոր-
մէ աննիւաղ առաւելութիւնք բիւրաղգի բարիս
ընկալեալ՝ յամի երախտադրութիւն տաժանեցաք.
որովք և ամենաթալից ամենաապատեալ նենգամիտ
էրևեցաք առաջի հրեշտակաց քոց և մամ սրբց։
Այլ արդ առ ո՛ յայսպիսի տապոյ ապաստան
լինել ակն ունիցիմք։ Ա՛ռ քեզ ո՞ր միայն աղա-
ղակէ սիրտ մեր. առ քեզ են աչք մեր, և առ
քեզ ապաւինին յուսակտուր անձինք մեք. խո-
նարհեցո՛ ո՞ր զգթածալուր ունկն քո. նայեա՛ց
'ի վշտատարը տոնայտանս թօթափելոցս յամ
բարեաց և խոնարհելոցս խսպառ։
Լցո՛ թէ լուիցես, լցո՛ թէ ողորմեսցիս, լցո՛
թէ զգառնութիւն մեր 'ի քաղցրութիւն յեղափո-
խեսցես. լցո՛ թէ զապականութիւն հնացելոցս
'ի չարիս՝ 'ի նորոգութիւն յարդարեսցես։ Լսո՛ւր
մեզ ո՞ր, և արա՛ առ մեզ ո՛չ ըստ մերոցս անար-
ժան մեղթանաց, այլ ըստ քոյին անձնառ և անքն-
նին անսպառելի գթասիրութիւնդ։ Ցսո՛ւր մեզ
ո՞ր, տո՛ւր մեզ աղաչեմք, և քոյովքդ տրօք
տաճարացո՛ զմեզ բնակելոյ քո 'ի մեզ, և բնա-
կելոյ մեր անշուշտ 'ի ծոց ընդունելութիւն ե-
կեղեցւոյ քո. և ժամանեցո՛ զյեանեալքս 'ի

յուսոյ՝ յիմնանալի տաճար ՝ի քո յերկինս. ուր ոչ ևս յուսով, այլ երանական լուսով ցնծալոյ բերկրեալ փառաւորեսցուք զքեզ ընդ ամ սէս քո յաւիտեանս յաւիտենից։

Ի Ամ.

Կարմիր կիւրակէ։

Յարգասիս Բարեաց։

Ա. Դալարագեղ կանաչացելոցս՝ անթառամելի հաւատով յարութեան յարուցանողիդ մեռելոց, և զուարթայօժար չքնաղատիպ ծաղկելոցս կենդանի յուսով կենացն յաւիտենից՝ ժամանեալ երևաս յաւուրս յայսմիկ ժամ բարեպատեհ՝ կարմրերփեան պտղախայծութիւն սիրոյ բեղմնաւորիլ, և յարգասիս յոգնաբերուն յոգնազան առաքինութեց պտղաբերիլ։ Յարգասիս արդարութեան և ողորմութեան, համբերութեան և երկայնմտութեան. յարգասիս ժուժկալութեան և խոստմբերութեան, խոնարհութեան և հեզութեան. յարգասիս զգաստութեան և ողջախոհութեան. և որ սնարալին է՝ յարգասիս անոխակալութեան ներողամիտ լինելոյ առ թշնամիս, և նպաստամատոյց ձեռնկալու երևելոյ առ կարօտեալս և առ նեղողեալս, և յայլ ևս բիւրազգի արդասիս գործոց բարեաց բարգաւաճելոյ և բարձրանալոյ։ Յայս ահա է՝ի սոյն ակնարկէ աւուրս անուանակոչութեան, ոչ միայն կանաչութեամբ հաւատոյ սաղարթիլ այլև կարմրութեամբ՝ի բերս զուարճաբոյս

բարեմասնութեց պղտաբերիլ՝ի փառս փառաւորեալ Թագաւորութեանքս։ Զանգի զինչ օգուտ իցէ մեկոց կանաչանալ և անբեր գոսանալ, զի՞նչ շահ իցէ ծառոց ծաղկիլ, և անպտուղ ցամաքիլ։ Օ՜ինչ ապա և բանաւոր բուսոցս՝՝ի յարութեանքս՝ մի՛ բերկրիլ, և յարգասիս բարելաւութեանքս չորացեալ ինն բացերևիլ։

Զաղ ատանօր ընթացուն չնառացելոցս քանի. զի փոխանակ՝՝ի լիութեան պարարտութեան պտղոց պանծանալոյ մեր՝ յեղծումն և յապականութեան վարուց վայրենացեալ՝ հեղձամիձուկ վատնիմք. փոխանակ հաւասարակշիռ յարգալութեան հաստատելոյ՝ յանիրաւութիւն տարբանամք. փոխանակ յողորմութեան տուրս առատանալոյ՝ յանգութեան բարս երկրանամք. փոխանակ համբերութեան և երկայնմտութեան զբահաւորելոյ՝ խլդախորհուրդ վատթարանամք. փոխանակ խոնարհութեան և հեզութեան զարդարելոյ, յամբարտաւանութեան և՝՝ի խստութեան արմատանամք. փոխանակ ժուժկալութեան և պահեցողութեան արծաթանալոյ՝ յանժուժութեան և՝՝ի խենդշուն պղնձանամք. փոխանակ յեղբայրսիրութեան և՝՝ի ներողամտութեան ոսկիանալոյ, յատելութեան և՝՝ի չարակնութեան կապարանամք և անպիտանանամք։

Յամի յայսոսիկ ես միայն առաւել դտայ. ես միայն յանդգնադոյն խրոխտացայ. ես միայն չարաչար վարատեցայ, և՝՝ի չարիս մաշեցայ. այո՛ ես միայն դժնդակագոյնս դուսարեցայ. խստացայ և անարդ երևեցայ. խոտորեցայ և մոլեգնեցայ. միգացայ և ցնորեցայ։

Եւ զիաբդ վստահացայց ստգտանելիս՝ զայլոց
ստգտանել ընթացս իբր խոտորնագնացս. ուշ
ասքանչն ես ինքն փոխանակ յայլոց վայելչաբա-
տակ օրինակ քաղելոյ՝ անհեթեթ իմն տարա-
ցոյց յաչս նոցուն գունաւորեալ պատկերացայ.
փոխանակ ընտրութիւն որոշելոյ զայլոցն վնձակ
բարեշաւութիւն, խորդահայեաց վնուութիւն զօտա-
րոտի եկամուտս վրիպականութիւն նոցին յանձն
իմ գրաւականել ախտացայ. փոխանակ յանցա-
ւորութիւն տկարացելոց ներողամիտ լինելոյ՝
դատապարտ ինքնամատոյց նոցին կանգնեցայ։
Օ իմն բացաթողեալ տաղտապու

անօրէնու-
թիւն՝ դատաւոր դժնեայ այլոց գահաւորեցայ։
ՎՀ որոյ և անհամարձակ ափ'ի բերան իբր ան-
բան և անբարբառ բագին արձանացայ։
Եւ աւասիկ տաղնապ տարակուսի վտանգէ զո-
գիս. զիաբդ մարթացայց յայսմ հետէ առ անաս-
ջառ ՀՐդ պաղատել, և զողորմութեդ բաղխել
դուռն, զոր ես ինքնին աղխեալ փակեցի, և
բացման ԸՐդմ նիգս հաստեցի։
Ք. Բայց արդ անյիշաչար ՀՐ, մի ըստ իմ վրի-
պելոյս փոխարէն ցուցցես վրիժուցդ սաստ
կութիւն. այլ ըստ անոխակալ ներողամտութեդ,
և ըստ գորովալից գթասիրութեդ օգնեա տու�-
տանդ տարամերժելոյս. ձեռն մատո ցնդե-
ցելոյս և հիգացելոյս, այց արա տարժանելոյս
և տատանելոյս։
Գ. Ո՛ռ աղաչեմ առ'ի վերս զգլորեալս և զկործա-
նեալս իսպառ. կենդանի որդեա զցամաքեալ և զչո-
բացեալ տունկս դառնութիւն. դալարացո, կա-
Ճ

նաչացն՝, ծաղկեցն՝. և զանպտղութիւն անհիւթացեալ տուգանեցելոյս արգասաւորեա՛ և պտղաբերդեա՛, և անվթար պահպանողութիւն աջոյդ խնամակալեալ պաշտպանեա՛։ Լու ցուցանելով մոլորաշաւիղ ուղևորելոյս Ճանապարհ բարի՝ հոգւով պետուեդ առաջնորդեալ՝ ժամանեցն՝ զանարժան գերիս յանդրանկաց քոց արժանագաստուց խմբից երամն, 'ի փառս ամենաբարերար մարդասիրութեանդ և անբաւասփիւռ ողորմութեանդ անձառութեանդ՝ յաւիտեան և ընդ ամ յաւիտեանս։

Ա՛. ՆԴԻՆ ՅԱՅՕՐԻՆԱԿ ԱՌՈՒՐՍ ՀԱՅՆԱԿԻՑՈՒՆ։

ԱՀ. Աւետարանչաց քոց երկնաձեմ բարբառք 'ի սմին աւուր քաղցրաձայն հնչեն 'ի լսելիս մեր ըստ անձնիւր կարգաց և պատգամաց, 'ի գլուխս գլուխս հոգենոՀ՛ապ տառից և իմաստից փողելով, և զլուր ոգեկեցոյց սփոփանաց առ բոլորեսին սփռելով։

Մինն աւասիկ կանխաձայնեալ՝ յոյս առաջի մեր հորդելով՝ անոյշս նոՀ՛ագէ 'ի դիմաց գԹասիրիդ. * Եկայք առիս ամ վաստակեալք, և բեռնաւորք. և ես հանգուցից զձեզ ||. և զծանրութիւն լծոյ քո դիւրատար և յօժարաբարձ ընծայէ. և զմեծութիւն բեռին քո փոքրոգի կացուցանէ. զտղայութիւն խոնարհեցելոց յարգոյ վկայէ, և զանոտիապատոՀ՛ասա իմաստուն աշխարհիս առ ոչինչ գրէ. Մատ. ԺԱ. 25 – 30։

Միւսն յակնկալուն փրկուն անձանց ակնարԺԱ

կելով՝ զկատարած բովանդակութեան մարդկութեան հնձող նմանութիւն հասուն ցորեղոց վայելչացուցանէ. և զարքայութեան ժառանգութիւն համեմատութիւն հատոյ մանանխոյ 'ի վերայ անձեղոյ և ամբարձելոյ՝ ցանկալի առնէ. մարկ. Գ. 27 – 33։

Այն այլ ևս առ 'ի հաստատութիւն հաւատոյ Աշմարտութեան զգաւանութիւն պետրոսի զքեզ որդի այ յայտնի քարոզէ, և զխոստովանութիւն ածութեան և թագաւորութեան քո առաջի հօր և հրեշտակաց յաղթօղ հրատարակէ. ղուկ. Բ. 18 – 27։

Նա որ 'ի հուսկն հասանէ առ քաջալերս տալոյ լաբելոյս՝ զնշխանութիւն քո զորութիւն հուչակաւ փողոյ հանդիսացուցանէ. և զկանխահրաւէր գուշակութիւն յարութեան կենաց և յաւիտենական փառաց գեղեցկաձոյլ վայելչացուցանէ.

յովհ. Գ. 19 – 30։*

Գ. Յաքանոբ և այլովք բիւրազգի խրախուսական պատգամաբ խրախայեալ մեր այսօր՝ բերկրապատար խնդութիւն եղանակեմք 'ի հոգիս մեր գոհութեան նուագս և փառս ամենակալ թագաւորի մերում։

Ա. Յլ սարսիմք, միանգամայն և դողամք, զի մի սպառումդ տեալ այսպիսի երանալոյր երջանկաբարբառ աւետաւորութեց, 'ի տոյժս պատիցիմք պատուհասի։ Այլ արդեօք ըստ հակառակն հասցէ մեզ ձայն գուժի 'ի սասանէ աւետաբերս պատգամաւորացս։

Նա սակայն յանչափ ողորմութիւն քո վստահամիտ բերեալ յուսասահման խնդարհութիւն 'ի քեզ որ ապաւինիմք բոլորով սրտիւ, և սփռեալ զմաղթանս առաջի քո՝ տարածանեմք զարտաս-

ոհալից աղաչանս մեր յանդիմման մարդասի-
բութեդ։ Լ. Զերսեմք և պատասխանք, մի՛ յետ այս-
չափ յուսոյ լոյս ցուցանելոյ մերկայելոցս 'ի յու-
սոյ՝ սրտմտութիւն յանդիմանել զասասնեալս, և
բարկութիւն խրատել զվտանգեալս։

Գ. Մե՛ աղաչեմք մի՛ ընդխառներ ի՛ քաղցրութե
սիրոյ քո զվերժինդիր քոյոյ արդարութե դա-
տաստան ընդդէմ պարտաւորելոցս մահու, և
ընդդէմ ըմբռնելոցս 'ի ժանիս գժոխոց։
Խնայեա՛ նոր և ողորմեա՛ մեզ։ կեցո՛ նոր և օգ-
նեա՛ մեզ։ ժամանեցո՛ առ մեզ զայցումն հայրա-
գութ խնամոց քոց, և կարկառեա՛ առ կորաց-
եալս զամենազօր բազուկ քո։ կարողացո՛ և զօրաց-
ցո՛ զտկարացեալս՝ յարիանալ 'ի կատարումն հրա-
մանաց հզօրիդ, և 'ի բաց հեռանալ 'ի չարա-
ութիւն վտանգաց ընդ հակառակակողմն հակելոյ։
Դիւրացո՛ և թեթևացո՛ զտաժանատխուր ըն-
թացմունս ուղևորութե կենաց մերոց առ 'ի չա-
րեն խոտորելոյ, և առ 'ի բարին ժամանելոյ։
Լրժանացո՛ զմեզ նոր, նոր նո՛ծ մեր, զի զա-
ւետիս կենաց 'ի ձեռին ունելով, և զհամբոյր
լման նոցին ի՛ նոսին գրկելով՝ զուարթերես
յանդիմանն լիցուք առաջի մեծվայելչութե փա-
ռաց քոց։ և անկասկած աներկեւան գոլութի՛
և յաւերժաժառանգ խաղաղութի՛ փառաւորես-
ցուք զքեզ յաւիտեանս յաւիտենից։

Ի.

Հինգերորդ կիւրակէ յինանց։

Աղբեամն խաչ։

ա. Օրհնեալ ես դու Տէր Աստուած մեր, որ 'ի յերկրի և յերկրէ գրաւականեցեր զանձս յերկնից 'ի վերուստ 'ի լուսոյ պարգեւաւ տեսաք 'ի սմին աւուր յերիր ժամու գեր 'ի վերոյ ոչն գողգոթայ մինչև 'ի ոչ լեառն ձիթենեաց ցոլացեալ։ Ոչ միւմ ևեթ կամ երկուց միայն երևեալ, այլ ամ բազմաւ յոգնագումար մեծի եղեմ քաղաքի։ Ոչ իբր զտեսիլ իմն առ աչօք վաղվաղակի հարևանցեալ, այլ ժամն ձիգս 'ի բարձրաւ ակնարև նշմարեալ։ Ոչ ընդ աղօտ ինչ նսեմ քատաւ կեալ, այլ բոցաձաձանչ փայլմամբք արեգակնայիցն յաղթօղ ճառագայթից հանդիսացեալ։ Օ 'ի թէ չէր առաւելագոյն և հզօրագոյն ճոխացեալ քան զարև, յաղթեալ և ծածկեալ լիներ 'ի նշուլից նորին։

Զինչև տեսողաց ամի միանգամայն յերկիւղախառն ուրախութիւն յափշտակել, և առհասարակ խուռն ընթանալ յեկեղեցի ոչ։ Լու միահամուռ բազմութիւն արանց և կանանց, ծերոց և տղայոց, քնակաց և օտարաց, հաւատացելոց և անհաւատից, իբրև 'ի միոջէ բարբառոյ օրհնել և գովաբանել զմիածինդ որդի այ զսխրագործդ մեծ։

բ. Զանգի արդեամբք և փորձիւ ընձեռեաց

ցաւ, թէ քրիստոնէից ամենաբարեպաշտիկ կրօն
ոչ հաւանութիւն իմաստութեան բանից, այլ յայտ-
նութիւն հոգւոյն է, և զօրութիւն նորին հաստատեալ.
ոչ 'ի մարդկանէ և ոչ թէ պատուեալ, այլև յերկ-
նից և ուծուստ վկայեալ։

Սովին այսու՝ ուծարեալ խաչ քո պարծանք ՀՐՇ-
մարտուն կանգնեցաւ հաւատացելոց, և կնիք
հրաշալի վերակարգեցաւ հաւատոց. որում և
վկայ ունիմք զանաղարտելի աւանդուն ընդհա-
նուր ՝ի եկեղեցւոյ։ Ինդ որ և ցնծալից խրա-
խայեալ փառաւորեմք զքրիստոս. և զվայելչա-
կանն մատուցանեմք երկրպագութիւն կենդանա-
բար նշանիդ։

Ո՛չ դադարեմք 'ի գոհանալոյ զքեզն ՝ի՛ր, և ոչ
լռեմք 'ի հուչակելոյ զայս զարմանագործութիւն
զոր ցուցեր այսօր։ Եւ սովին ստուգագրեցեր
զկանխաճայնեալ գուշակութիւնդ վկայութիւն թէ
յայնժամ երևեսցի նշան որդւոյ մարդոյ յեր-
կինս. զի որ յայնժամ երևելոցն իցէ՝ այսօր իբր
նախատիպար դրօշակ փայլեալ հրաշացաւ։ Եւ
երկնանկար պսակ քրիստոնեայ անուանելոցս
լուսապանծ արփիացաւ։

Ա Երգ երգոյ Ի դիմաց։

Գ. ՝Ո՞ւր՝ քանի՝ նշանս սիրացոյց ՝ի՛ր. քանի՝
քանի՝ զարմանալիս բարձրացոյց. քանի՝ քանի՝
զօրութիւնս երևեցոյց։ Ոչ՝ ամի յայսոսիկ զքեզ մե-
այն զՀրաշալի փայտդ կենաց սահմանեաց նշան
իւրոյ թագաւորութեան և մեծի իւրոյ յաղթութեան.
նշան համայն քրիստոնէութեան, և հաւատացե-

լոցս անյեղլի հաստատութիւն. նշան կատարիչ
խորհրդոց և կալգիչ ՝ի՛ր և սրբազան իրաց։
Արքան ինչ ունէր ՝ի՛ր. որոց մասուանք պաշտին
՝ի հաւատացելոց. այլ դու միայն յիսմի երկրաբ-
պագիս ՝ի՛ծային երկրպագութիւն. և ՝ի քեզ յան-
դիմանն ցուցանելով զ՝ի՛ր փառաց՝ փառաւորիս
նովին պաշտամամբք։
Պարծի համարեալը անարգուն, թագ եղեր փա-
ռաւորուն։ Պարհաստագունից խորշելի էիր, ՝ի
գլուխս արքայից պանծալի ցուցար։ Զգաց և
ազանց սոսկալի էիր, ՝ամ լեզուաց փառատրելի
հաչակեցար։ Խորշից ՝ի խորշս բացաթողլի է-
իր. ՝ի ձակատս տաճարաց փառաբ բարձրացար։
Մահապարտաց սարսափելի էիր. մարտիրոսաց
և նահատակաց, մեծաց և փոքունց փարելի
փայլեցար։
Անիծանաց առիթ առակեալ էիր. Քզի գրեալ
է. * անիծեալ ՝ամ՝ որ կախեալ կայցէ զփայ-
տի ॥. գաղ. Գ. 13. և ահա անհատական օրհ-
նութիւն հոսարան աւկայեալ ցուցար. քանզի
գրեալ է. * օրհնեալ է փայտն որով լինի սբ-
դարութիւն ॥. խասդ. ԺԲ. 7։ Որովք և մեք օրհ-
նեալքս ՝ի քեզ՝ բերկրանաբ օրհնեմք զքեզ. և
զքեզ ունելով մեզ անբարբառ բարեխօս՝ փա-
ռաւորեմք զփառաւորիչդ զ՝ի՛ր մեր յիսքս, որ է
օրհնեալ յաւիտեան։

ԼԸ.

Վեցերորդ կիւրակէ յինանց։

Մխիթարութեան սրտի։

ՇԱ. Ի բազմահոլով կենացս անիւ յամի և յամ ժամ սիրտիանացդ ժամանել յիս աւետումն, և զերուս յանձն իմ ցոլ մխիթարութեանս՝ ՇԾ իմ և ՇՐ։ Իսկ ես հանապազ յանմխիթար կեանս մաշիմ, և 'ի ցաւս դառնագինս վարանիմ։ Ուր է թէ գոլեալ է մարգարէին. * ըստ բազում ցաւոց սրտի իմոյ մխիթարութիւնքդ ուրախ առնեսցեն զանձն իմ։ սաղ. ղգ. 19։

Ոչու բարերար, ոչ դադարիս 'ի տալոյ, ես եմ որ պակասիմ յընդունելոյ։ Դիմեմ 'ի անոտիս առ 'ի գտանելոյ զզբօսանս, և ընկրկիմ 'ի ժողովելոյ յիս 'ի քէն զիայիայանս։ Մեծ է տարփումն իմ, որով մխիթարութիւն փափաքեմ մաւսին. այլ ես 'ի քոյ ՇՀմարիտ մխիթարութենէդ 'ի բաց հրաժարիմ։ Հնարիմ ձեռն արկանել յո և իցէ բերկրութիւն կենցաղոյս, զի անդորրացայց 'ի նոսին և ոչ մաղիմ 'ի շտեմարանդ ուրախութեան՝ զոր բացեալ ունիս առաջի իմ։

Յամի հանգիստ որոնեմ՝ 'ի քէզ միայն է իմ հանգիստ, և յայն ժամանել ոչ երագեմ։ Ընչափ ինչ գոյացուցեր 'ի մխիթարութիւն իմ. ես փոխանակ 'ի գոյացուցիչդ յարելոյ՝ 'ի նոսին ևեթ զբօսանիլ բերիմ։ Խարերարութեց քոց ոչ գոյ չափ և ոչ պայման, և ես յայնս միայն վայ-

ելել յանկամ. և զի նոքիմքք ընդեմքս զինիմ, առ 'ի նոցունց ոչինչ նպաստիմ։ Դարբառիմ 'ի սրտէ՝ զի՞ է զի ամիսիթար կամ, և առ մխիթարիչդ ամի ոչ մերձենամ։ Յոգւոց ելանեմ, ո՞ տայր ինձ թևս՝ զի թռուցեալ դադարէի յանապատ անդորրուն. և զթևս թեթևուն հոգւոյ խորտակեմ։ Հառաչեմ, եՀրբ իցէ զի հանգեայց. և հանապազ յանհանգիստ վայրս դեգերիմ։ Դողոքեմ, մինչև յեՀրբ յանբերրի երկրի արածիմ. և միշտ յանարգասիս բերեալ տարածիմ։

Ո՞ւրողապէս մծտաւորիմառ որս ինձ կապգուբիչ համարիմ, և ամենալից մեղմեալ տարագրիմ։ Ա երանեմ 'ի պատիճ և 'ի փառս, և նոքիմքք 'ի սգոյ ոչ փարատիմ։ Յարձակիմ 'ի մեծութիս, և խռովութիւն հոգոյ լցեալ սարսռիմ։ Փարիմ զփափկութիւնքս մարմնոյ, և վանիմ անարգութիւն հոգւոյ։ Յայս սրանամ, և յայն ելանամ. և յամենայնի վատանամ և վատթարանամ։

Օ ումմէ՞ կարեմ գանգատ ունել, մինչ ես ինքնին յանառապարս խառն 'ի խուռն շփոթուեց տարուբերիմ, և 'ի զարտուղի գնացս եղնջալիս տատանիմ։ Ա.յլ գանգատելով ևս գանգատիմ՝ զի արարածք ամ՝ զորս 'ի սփոփանս իմ կարգեցեր, յորոգայթ ինձ լարեցան, ոչ յիւրեանց բարեկարգ լաւութէ, այլ յիմոցս մասանց անկարգութէ։ Ա.ՀՀ իմ 'ի գեղեցկութենէ՝ հայելով՝ 'ի նոյն ընկղմեալ զանեալ զկս. ականՀք իմ 'ի ձայն նոցին զուՀարձանալով, 'ի լսելոյ զքան քո խաղցուցանեալ զկս. բերան իմ զքաղցրութենէ նոցին ձա-

շակելով՝ ի սով ներքին մնանէ զնս. ընդունք իմ՝ ի հոտ նոցին բերկրելով՝ ի հոտոյ սրբութեանն զրկէ զնս. մարմին իմ՝ ի հեշտալնս նոցին մոլեգնելով՝ զՀոգևորական հեշտուենս մերկացուցանէ յինէն։ Օ՜ամ ինչ բարի արարեր, այլ ես՝ ի բարութիւն պատրեալ՝ ի չարուն միտեմ. վայ և յամենապատիկ մխիթարութեանց վրէպ գտանիմ։

Ը. Կպաստամատոյց առ օգուտ անձինս հաստատեցեր յիս զնամ զօրութիս ոգւոյ իմոյ, եթէ՝ ը բանական մասին, և եթէ ըստ զգայականին. և նոքա այսր օգնեն ինձ՝ բայց ոչ ըստ սահմանելոյ քո զի զանցեան, այլ ըստ թելադրելոյ բնաւորութեան իւրեանց, զի ապարատանացան։ Կամք իմ՝ որ առ անսահման բարիդ սահմանեցաւ, ի սահմանաւորս բազմիլ ախորժէ։ Միտք իմ՝ որ՝ ի խորհիլ զերկնաւորս հատեցաւ՝ զերկրայնովք գայ։ Յիշողութիւն իմ զՀոգևորս մոռացեալ, ըզմարմնաւորսդ ազգմունս յինքն գանձել փութայ։ Լրևակայութիւն իմ զպատկանաւորսն թողեալ՝ զանպատեհս նկարէ։ Հասարակ զգայութիւն իմ անհոգ լեալ զկառավարութիւն հնգիցս զգայարանաց՝ ըստ հաճոյս առաջնորդեն ինձ։ Ցրամախոհութիւն իմ որ մտաց է ներքին պաշտօնեայ՝ յընտրութեան բարւոյ և չարի՝ յոչ բարին խենարհի։

Լսակ զանազան կրիցս յարուցմունք յանհնարինս տառապեցուցանեն զնս. ատելութիւն ալէկոծէ. սէր սահեցուցանէ. տրտմութիւն փլուցանէ. բարկութիւն բորբոքէ. երկիւղ յեղափոխէ. նախանձ այրէ. ագահութիւն այսահարէ. և ամենեքին

միահաղոյն զնոմ բարեկարգուն հոգւոյս վերʼի
վայր կացուցանել. և որպէս մարթ իցէ սոքիմիք
մխիթարութեանն ողջոյն տալ։

Հայսմ ամի և պատահաքք ներքինք, և պատա-
հաքք արտաքինք՝ʼի խռովուիս խորասոյզ առ-
նեն զկեանս իմ։ Հոգք ազգի դիպու�
ծոց տագնապեն. խնամք ընտանեաց և ծառայից
վրդովեն. զրկմունք զաւակաց ʼի սուգ կապեն.
զբաղմունք առից և տրից փշապատեն. յարուց-
մունք թշնամեաց երգիծանեն։

Ընդ սոսին և աղքատութեան չու�առացուցանեն.
հիւանդութեան տալտապեցուցանեն. ցաւք վշտաց-
նեն. վիրք վարակեն. պարտաւորութիւնք ʼի
տուիչսանս պարանեն։ Ուռ այսոքիւք և հրդե-
հուիք տուչորեն. սասանուիք ահաբեկեն. կայ-
ծակունք սարսեցուցանեն. սովք մեռուցանեն.
ալեկոծութիւնք վտանգաւորեն. ջերմ և ցուրտ
տաժանեցուցանեն։

Ուվրʼ այսոցիկ և գազանք սարսափեցուցանեն.
սողունք և զեռունք տաժանեցուցանեն. ճանճք
և մեղք զզուեցուցանեն. որդունք և ժժմունք
նողոկացուցանեն. թոռչ և զայլ զանարգ զգայ-
նոց տաժանաւորութիւնն։

Ոմանքʼ առաւել ևս վտանգաւորեն զիս անմար-
մին թշնամիք իմ։ Հանապազ դարանին զՀետ
իմ. յամի որոգայթ լարեն կորստեան. խայծ
քաղցր պատեն զժամեօք հնարից իւրեանց, և
առʼի մահ որսան. զանուշունս դնեն ʼի թա-
կարթս, և ʼի լինիլս իմ հուպ՝ ըմբռնեն. խնձոր
ոսկի կարկառեն, և ʼի սուր երկաթի սպանա-
նեն։ Հաղօթեալս իմ գծնին և պղտորեն. յերդ-

կարիլ իմում 'ի խոկմունս 'ի ննջիւն խոնարհեցուցանեն. յառնուլս իմ՝ ոգի՝ յուշնայն խորհուրդս յածեցուցանեն. և 'ի կազդուրիլ առ սակաւ մի՝ պէսպէս պատկերս առաջի նկարեն յերևակայական կարողութենէ. զի մի տեսցեն զիս 'ի յանդգնութիւն, այլ 'ի վրդովմունս՝ ըստ իւրեանց ամենաթշնամւոյ և չար վիճակի։ Եւ գլուխս սոցա սատանայ իբրև զարիւծ գոչէ. շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ։ Ա. պետ. Է. 8։

Իսկ արդ յորոց արդեօք 'ի սոցանէ միսիթարեսցի անձն իմ. 'ի քաջալերիլ 'ի միոյն՝ 'ի յոգուոնցն նուազիմ. և 'ի սփոփիլս իմ յաջոյ կողմանէ՝ յորդեն վշտագնիչք 'ի ձախոյ կուսէ. մինչև հատանել զիս իսպառ 'ի յուսոյ։

Գ. Զի՞ արդարև ահա յուսահատել 'ի սոցուանց՝ առ քեզ միայն դիմեցից առ միսիթարութիւդ նոր ոգւոյ. զի 'ի քեզ ևեթ գտանեմ՝ զոր խնդրեմ. դու միայն ցնծութիւն ցանկալի, և ուրախութիւն ամենալի. դու միայն անդորրութիւն տարփալի, և խաղաղութիւն փաբելի. դու միայն երանութիւն փափաքելի, և բարեբարութիւն տենչելի. դու միայն կենդանութիւն երկրպագելի, և էակատութիւն անսահմանելի։

Միայն 'ի յիշել զանուն քո՝ միսիթարի անձն իմ, զի՞նչ ապա 'ի յարիլս իմ 'ի քեզ. միայն յաղաւաքանելս իմ առ քեզ՝ քաջալերիմ 'ի հոգիս, զի՞նչ ապա 'ի միաւորիլս իմ ընդ քեզ։ Լութէ 'ի կրել իմում ինչ վա՞ք խնդամտիմ, զի՞նչ ապա 'ի սիրելս զմի միայն բարութիդ։ Լութէ համբերելն վա՞ք զուարճացուցանէ զկեանս իմ, զի՞նչ ապա գործեսցէ յիս ցնծալն ընդ քեզ։

Լ.Եթէ յօգնելՔ ինձ զօրանամ, զի՞նչ ապա և 'ի ներգործելՔս յիս 'ի հոգիս։ Լ.Եթէ բանք քո բերկրեցուցանեն զիս, զի՞նչ ապա եթէ և ազդեսցեն 'ի ներքս 'ի յիս։ Լ.Եթէ պատգամք օրինաց քոց 'ի գիրս հորդեն ինձ ճանապարհ արքայութեան, զի՞նչ ապա եթէ դու ինքնին իբր հայր և դաստիարակ խօսեսցիս ընդիս 'ի ներքուստ։ Լ.Ու զի՞նչ կայ իմ այնուհետև բնաւ յերկինս, և զի՞նչ ևս խնդրեցից բաց 'ի քէն 'ի վերՔ երկրի. ՅԾ սրտի իմոյ, բաժին իմ ՅԾ յաւիտեան. սաղ. հԲ. 25։

Ոչ ամենաբաւական ժառանգութեան տարփալի. ոչ ինքնաբուն անբաւուն անձառելի. ոչ ամենահրաշ մեծվայելչութեան տենչալի. ոչ անպարագիր գեղեցկութեան պաշտելի. ոչ ամեներջանիկ յաւիտենականութեան անհասանելի։ Լ.ո քեզ հառաչէ անձկութեան անմիխիթար հոգւոյս. 'ի քեզ սլանայ տարփանք տառապեալ անձինս. Ը.քեզ լինել ցանկանայ իղձ վշտատատան կենաց իմոց։ Ոչինչ միխիթարէ զիս՝ որ յաշխարհի ասա փայլէ. և եթէ միխիթարեսցէ ևս՝ ոչ կամիմ, այլ ընդմարգարէին գոչեմ. ոչ կամիր միխիթարիլ անձն իմ ոչ յայս և ոչ յայն. յիշեցի զՅԾ և ուրախ եղէ. սաղ. հՁ. 4։ Լ.ու արդարև եթէ դու ոչ հաձեսցիս միխիթարել զիս՝ նոքա որք երևին՝ փոխանակ միխիթարելոյ տխրեցուցանեն զիս և խաւարեցուցանեն։ Լ.ու եթէ միխիթարեն ևս՝ խաբեն. այսօր մերձին, 'ի վաղիւ մեկնին. այսօր խրախ առնեն, և վաղիւ խռովեն. այսօր ձեռն կարկառեալ կանգնեն, վաղիւ գլխովն։ Լ.ու եթէ չխաբեսցեն ևս՝ չեն ինձ ինչ հաձոյ.

զի չէն այն ինչ, յոր բերի կենաց իմ։ Հաճոյ
ևս կարէն լինել ինձ՝ եթէ 'ի հաճուէ քումմէ
հասցէն առ իս. և ըստ նմին օգնեսցէն և կազ-
դուրեսցէն զիս։ Բայց մերժելի ևս էն՝ եթէ
հակառակ հաճոյից քոց իցէն. զիարդ և իցէն՝
ինքեանց իցէն, և մի՛ ինձ. յիւրեանս իցէն և
յինէն 'ի բաց կայցէն։ Բարուեթէ նոցին՝ նոցա
գրաւեսցի, միայն թէ զիս մի՛ վտանգեսցէն.
մեկնեսցէն յինէն ուր և կամիցին, զիս միայն 'ի
քէն մի՛ մեկնեսցէն, կարգեսցին՝ յոր ինչ և ա-
խորժին, զիս միայն 'ի ձեռաց ամենակալիդ մի՛
յափշտակեսցէն։

Մեծ է ինձ և շատ է հոգւոյս՝ քև միայն մխի-
թարել, և առանց նոցին 'ի քեզ բերկրել. 'ի
քեզ կեալ և ընդ քեզ մնալ. զքեզ միայն
սիրել և զքեզ միայն փառաւորել 'ի կենցա-
ղումս, և 'ի հանդերձեալ յաւիտենին։

ԼՐ

Համբարձումն Տն։

Ամբարձաւ այսօր մեծվայելչութիւն քո
մեծ մեր. վասն որոյ նուագեմք վերա-
կանգնեալքս, ընդ հոգերգողին * համբարձաւ
մեծ օրհնութիւն ॥. սաղ. խգ. 5։ Լոյս համբարձար
փառօք, և փառատրեցար բիւրաւորօք. բարձ-
բացար հոգեղինացդ կառօք, և վերացար լուսա-
փայլ ամպօք. ելեր 'ի քրովբէս, և թռեար հա-

գիասպէս ։ Ալեացար մնարմնով անմարմնապէս , և վերաչուշեցեր ինքնին ուծապէս ։

Պատառեցան բարձունք , և բացան երկնից դրունք , հեղան ի առաջ վերինք , և ընթացան հրեղէնք . թափեցան պետունք , և սարսեցան ուրուքիք . սոսկացին զօրուքք , և հնչեցին իշխանութիւնք ։

Լ,զանակուն բարձր եզանակեցին միանգամայն համայն գումարութիք անմարմնոց 'ի ձայն նորահնչիւն փողոյ . ահա գայ թագաւոր փառաց . գայ ահա ինքնաբաւ ինքնիշխան զօրուքք . * համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր . համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ թագաւոր փառաց ‖ . սաղ . ԻԴ . 7 ։ Գայ մտանել փառաց 'ի փառս . Ճանապարհ հորդեցէ՛ք ոգոյն ելի , թագաւորին մերոյ , փառաց արքայի ։

Ո՞վ է սա թագաւոր փառաց ։ Դու ինքն ես միայն թագաւոր թագաւորաց՝ ուծ իմ յո՛ քա՛ . դու ինքն ուր . դու ինքն իշխանդ ուսի . քո՛ են երկինք և քո՛ է երկիր . ուղղեա՛ լարեա՛ և թագաւորեա՛ յաւիտեան ։

Լ 'ի ելը երկինք փառաք ուծուեն քո . լցեր և զերկիր անօրէնութի՛ մարդեղուն քո . այլ կրկին վերստին լցեր այսօր և զերկինս երկնից մարդկայինդ բնուն լուսով ։ Իջեր յերկնից և առեր զմերս . և մերովս ելեր այսօր յերկինս իբր արփի նոր ամենապայծառ ։ Ոգեցար զտկարուն բնուն մերոյ . զգեցար այսօր և զզօրուն ուծուքիե՛ քո ։ Օ՜ր ունեիր իրաւամբք , ստացար ըզնոյն և արդեամբք . և զոր սեպհականեցերդ՝ այսօր լուսափայլեցեր . և նստեալ ընդ աջմէ

հօր՝ հաւասար նմին բարեբանեցար յերկնաւո-
րաց և յերկրաւորաց։

Բ. Անչարչարելոց Ամ՝ չարչարեցար չարչարե-
լի բնութիւն. և որով չարչարեցար՝ անչարչարե-
լի հանդիսացար։ Ա՝էոլոր և յարեալ Ամրդ կե-
նաց, և կենդանացուցիչդ մեռելոց. և Լ ընտ-
բեալդ քառասնօրեայ կենցաղելով՝'ի կենցա-
ղոյս յափշտակեցար. եղիր յամպս զչնացս քո
յինքնաչու վերելս. առեալ ընդ քեզ՝ զորս յա-
ռուցեր ըստ քեզ, և զորս երանացուցեր'ի քեզ.
չքնաղընթաց ուղևորեալ զանպատում էլեցդ
և մտից հանդէս յերկինս։

Գ. Մտանելդ յաւանակաւ յԵղէմ՝ գղոդեցաւ քա-
ղաքն. ով իցէ սա. բարձրացաւ և բարբառ ժո-
ղովրդոց'ի ձայն աբձակել, օրհնութիւն որդւոյ
դաւթի. ովսանա. օրհնեալ եկեալ անուամբ
Ամ. ձայնակից նոցին լինելով տղայոց ասդիե-
ցաց Լ նոցին եղանակութիւն. օրհնութիւն'ի բար-
ձունս. մաթ. իա. 9։ մարկ. ժա. 9։ ղուկ. ժԲ. 38։

Դ. Հիացութիւն. զի՞նչ ապա վերինն Եղէմ'ի
մտանել քո անդր Լ հաղարս հազարաց, և ընդ
բիւրս բիւրուց դերահրաշ բազմութ զուարթնոց
վեհից։ Դ. Թէ քանի՛ ամենազուարճ ցնծութիւն
սաղարթացաւ այսօր յերկնայինս, և քանի՛
հրճուալի նուագութիւն, քանի՛ և երջանկաւետ
լսութիւն։

Ասկ զի՞նչ մեզ տառանելոցս յերկրի, և դեգե-
ռելոցս'ի վտանգի։ Ողբասցեն զմեզ այսօր դասք
պարելոցն յերկինս. զի առին նոքա և ընկալան
որում սպասեին. մեք երանազուրկք իբրև որ-
քրս աւաղեմք, և'ի նոցունց աւաղիմք. և'ի

Հիւթանիւթից աւաղելի քարոզիմք։

Ոչ ասպաքէն գու ինքն խոստացար ով բարի յիս, ընդ մեզ լինել մինչև 'ի կատարած աշխարհի. զմի՞ ապա մեկնեցար 'ի մէնջ, թողեր զմեզ, և յաներևոյթս ծածկեցար։

Լուսատիպ ամպդ վերնային, ընդհեր յափշտակեցեր 'ի մէնջ զլոյսդ կենաց, որով ցուցար մեզ մթագին, և արկեր զապերջանիկ տառապեալքս 'ի ստուերս թախծութեան սաստկագին։ Ագամք աւասիկ, և տխրալից մաշիմք, հառաչեմք և յոգւոց ելանեմք ով միածինդ հօր, զի առար 'ի մէնջ կեանքդ մահացելոց. հեռացար 'ի մէնջ լոյսդ խաւարելոց, ծածկեցար 'ի մէնջ երանութիդ սրտից մաշեցելոց։

Ա.յլ 'ի քեզ որ յս անդրէն քաջալերեալ՝ նորոգապէս մխիթարիմք. զի թէպէտ և մեկնեցար մարդկայնով, այլ ընդ մեզ ես ոծայնովդ. ա նեարևութացար 'ի զգայականս զննութէ, այլ նովին զդալեաւդ զննես և կառավարես զմեզ յամի. թողեր զմեզ ըստ արտաքինս երևութե, այլ նովին իսկ մարմնաւոր ակամբ հայիս 'ի մեզ, և մեզիդ ունկամբ լսես մեզ։

Ընդ մեզ ես և երկրպագելի մարմնովդ 'ի ձեռն ամենակեցոյց խորհրդոյ հաղորդութեան, զոր 'ի սոյն յայս սահմանեցեր. յոր և անմիաբ բռվանդակութիւն իջեալ յաթոռոյ քումմէ՝ նովին հաղորդիս ընդ մեզ և համբուրիս, անմեկնելի մնալով 'ի բարձրութէ երկնից։

Գ. Տրտմիմք, տխրիմք և տուայտիմք, զի տրկարուն տեսութեն մերոյ ոչ ժամանեմ առ քեզ յս. այլ շատ է մեզ այս, զի քոյդ ամենահայ-

եաց տեսութիւն բացերևակի հասանել առ մեզ։ որով և յանչափելի բարձրութիւն գոլով իբր 'ի մեծոյ նշմարեաս ամենամերձ հպատորութիւն զնմա շարժ մաւնս սրտից և երիկամանց մերոց։ տեսա՛ նես և զորս կրեմք և զորս գործեմք։ 'Ի դոյն յայդ ահա սքանչելահրաշ տեսուն ԷՀովանա՛ ւորեալ՝ պաղատիմ առ քեզ յո՛։ զի զորս տեսա՛ նես յիս՝ եթէ զարատս մեղաց, և եթէ զաղդ՛ մունս ախտից։ եթէ զգնացս թիւրս և եթէ զիսորհուրդս վատթարս, սրբեացես զնա՛մ և քա՛ ւեսցես, և զկեանս իմ՝ նորոգելով յուղղութի՛ վարուց առաջնորդեսցես։ ()գնեսցես ինձ 'ի տկարութի՛ն, և զօրաւիգն լիցիս 'ի վանգաւառ՛ ութիւն։ Կազդուրեցուսցես և կարողացուսցես զիս՝ ընթանալ զհետ երկնընթաց ուղևորու՛ թիւդ։ և 'ի կատարած լրման անօրինանանացդ՝ ամի, ձեռն մատուցեալ առ իս՝ մուծցես զիս ուր ես, և օրհնեցից զքեզ յաւիտեան։

ԼԳ.

Երկրորդ ծաղկազարդ։

Ա՛ռ 'ի նոյն կարգ հանդէսի համբարձման։

Ա՛ռ. Երկնային է տօնախմբութիւն վերատիայ՛ լուծն՝ յերանաւէտ խնդութիւն պարս ի՛. նունց դասուց վերին քահանայապետութեց։ Յինչանեալքս առ 'ի ստորինս յայս աշխարհ՝ զարմանացան, հիացան և ապշեցան վերինք։ Օ՛ի՞ եթ

ասելով՝ զի զմեզ զհոգեղէնքս բացաթողեալ՝
եղջ 'ի հոգեղէնս. և միացեալ ընդ բնութի նոցա
եղև իբրև զմի 'ի նոցանէ կատարեալ մարդ։
'Ի տեսանել ապա զկենդանի 'ի մահ խոնարհեալ մարմնով, և 'ի քառաթև փայտի ընդ
աւազակս կարգեալ և կախեալ, սոսկացան և
սգացան զսուգ իմանալի։
'Ի յառնել ապա յարուցչին՝ յարեան և ինքեանք յօրհնութի քո. և աւետարանեցին յուսաբեկ վարանելոցս զկենդանութի կենարարիդ։
Այս յայմմ օրէ հետէ տարփացեալ ցանկային՝
ընդ իւրեանս ունել զյարուցեալդ, և ընդ յարուցելոյդ նորոգապէս ցնծալ 'ի փառս մեծի
քոյդ զօրութենէ և յաղթութենէ։
Ժամանեցին աւուրքս համբառնալոյ քո առ հայր երկինս. ժամանեցին առժամայն և նորա ընառաջ չուէոյ ելիցդ. ձայն եղուն ուրախութենէ,
և բարբառ արձակեցին խնդութենէ։
Ձայն եղուն վերնոց՝ ձանապարհս հոգեցեալք թագաւորին թագաւորաց. աղաղակ բարձին
և միջինք, համբարձեալք բարապանդք իմանալիք
զիմանալի դրուռնս ձեր 'ի վեր. և միաբան՝ խընդութենէ բարձրացուցեալք աւետիս։
Այս զի յանհնարին հիացմանէ անհասանելի իմն
ըմբռնեին. զի՞ արդ որ զհոգեղէն զգեցեալ է
բնութի, ինքնիշխան ինքնընթաց բարձրացեալ
սլանայ յերկինս, մատեան 'ի քննութենէ հարցուն ընդ երագաթռիչ աւետաւորսն։
Ա.ԼՀ՝ զք իբր ՝ի զնա խորհրդազգեաց երևեալք՝
դարձեալ միւսանգամ աղաղակելով փութացուցանէին զնա՝ համբառնալ զգրունս առաջի

Եւ ելից վայելչութեան։

Բ. Բարձրացար ապա փառաց ոգոյ, և մներ յանձնաւոր և յանհասական բարձրութեան, մինչև ի նուազս դասուց նոցա միաբան աղաղակել և ասել. Համբարձաւ այսր ոգի, համբարձաւ Թագաւոր փառաց։ Ինդ որս ահա և մեզ հողեղինացս ի հաս խրախմամբ նուագել. Համբարձաւ ոգի ձայնիւ խնամալի փողոց անմեռութեան։ Լոյս այս ոգոյ ոգի մեր յոր քո, համբարձաւ արքայութեան հրաշ զորութեան քո ի վերոյ քան զերկինս։

Լոյս լրմբունիլ մեր և ի համակիլ ի սուգ սաստիկ վասն ի մէնջ հեռացեալ տեսանելոյ զբեզ տէր, նորա առ ինքեանս առընկալեալ սարգ եցին ոգոնս տարեկանս զենեակ սուրս ըստ հնուանց քահանայապետութեանց, ի հրեշտակաց սկսեալ՝ մինչև ի վերնայինսն աւարտելով, միանգամայն և ուրախութեամբ հանդէս կատարելով ի գիւտ մոլորելոցս և անառակ գնացելոցս, ըստ հաճելոյ հօրն գթութեանց։

Լոյս քանզի ի չորրորդն դասակարգութեամբ՝ ի լիխանութիւնք վերադասելոյ՝ պաշտպան և պահապան կարգեալ էր մերոյ լուսաւորչին տրքնելոյ ի խոր վիրապին, և զնմա օր երևեալ նմա խօսակից և կենակից լինելոյ ընդ նմա ի միութարութեան քաջալերութեան սրտի նոր յանբերելի ճգնանցն համբերութեամբ, ի հասանել պաշտաւմանն չորրորդի՝ յաւուր յայսմիկ, ի նոյն փութացեալ ուրախութիւն ոգոնակցուն՝ ոչ ժամանեաց ի նմին սուրբ այցելու լինել սոցին։ Ինդ որ հիացեալ նոր՝ յերևիլ հրեշտակին ի վաղիւ անդր՝ եհարց ցնա. և տեղեկացեալ մեծահրաշ

այսմ խորհրդոյ՝ ոճնակից եղև և ինքն ի նմա։
Յս ցանկանալով զորդիս իւր ևս՝ զՀոգևորս
հաղորդս առնել այսմ գեղապար բերկրաշգե-
ցուն՝ աւանդեաց մեզ զչիշատակ լրման սորին
սնորացուցանելոյ։ Զոր և մեք ամի ամի անխափան
կատարելով գոհունս և փառս մատուցանեմք
քեզ Թագաւորիդ երկնաւորաց և երկրաւորաց,
և 'ի սմին յայսմ աւուր պարակիչ եղեալ ընդ
ամ հրեշտակաց դասապետութիւն, ընդ նոսին
բարեբանեմք և օրհնեմք զքեզ ՏԵՐ։
Դ. Գիտեմք՝ զի չունիմք հաւասարութիւն ոչ 'ի
սրբուն վարուց և ոչ 'ի զգաստութի խորհրդոց.
բայց զգերազանց յարգ արժանաւորուն երկ-
նայնոցդ առաջի արարեալ արքայիդ մեծի սրբոյ՝
նոցին միջնորդութիւն, և մերոյս հօր լուսաւորչի
բարեխօսութիւն, մատուցանեմք քեզ և զմեր օրհ-
նութիւն։ Ընկալ աղաչեմք զնոցայն ընդ մեր, և
արա առ մեզ զողորմութիւն քո։
Մի հայիր 'ի բազմավրէպ և 'ի մշտամնաց մո-
լեգնութի մեր, այլ յանարատ և յամբիծ սրբութի
նոցա, և յարժանավայել օրհներգութիւն և գո-
հութի նոցին, և ընդ նոսին արժանի արա զմեզ՝
ըստ նոցին փառաւորել զքեզ յաւիտեան։
Յս քանզի 'ի մեծահանդէս յայսմ տօնախմբ-
ութիւն աւետարանք ողոգմութան աւուրն, այն
ինքն է աւուր ծաղկազարդի, միմեանց համբոյր
տուեալ հնչեն 'ի չորից աւետարանչաց, 'ի նո-
սին վերացուցեալ զօրս զայս՝ անուանակոչեմք
զսա՝ երկրորդ ծաղկազարդ, առ 'ի զուարթնոցդ
երկնից յիշատակ յընդունելութի Թագաւորիդ
երկնաւորի յերուսաղէմն վերին, ըստ աւուր

մտիցդ ոստոմք արմատնեցաց և ձիթենեցաց յերուսաղէմն ստորին։ Յօրում և կրկնապատիկ ծաղկեալ հաւատացեալքս՝ գովեմք միաձայն, և օրհնաբանեմք զամենասքդ զերրորդութիւնդ։

ԼԴ

Հոգեբանություն։

ա. Կեանք և կենդանարար սքՀոգի՝ ած Ճշմարիտ. Լացուցիչ և գոյացուցիչ ամի, հաստիչ և տածիչ եղականաց, քննիչ և որոշիչ հնչոյ և ոգւոյ։ Անեղական սկիզբն կենդանութեան և ամենալի աղբիւր անմահութեան, մշանջենահոս բղխումն ողորմութեան, և երանաւետ վրատակ խմաստութեան։

Դու ինքն'ի լմնեալսն աշխարհիս համայն՝ շրջելով'ի վերայ ջուրց անքննական խորհրդոց'ի ցուցակուն ածեր զտիեզերս. և'ի գումարուն բանաւորաց յառաջապահ զգուշութն ընտրեցեր մնախահարս, և անձառելեօք լցեր զմարգարէս, և'ի ձեռն նոց յայտնեալ ծանուցեր զբիւրապատիկ խորհուրդս. առաւելքն զառաւել զփառակցիդ քում զանձառելի մարդեղութեն զտեսուն։ Որոյ'ի պարագրիալ յանապականումն արգանդի՝ անհարմնացեալդ հարսին քո միայնակուսի՝ հովանաւորեալ կատարեցեր'ի նմա ըզնախագուշակեալդ'ի լրումն մերոյ փրկու-

ԹԵՄԱՆ։

Բ. Դ՝ու ինքն համագոյ հօր և որդւոյ սքանչելի հոգի, որ ընուս զերկինս և զերկիր՝ յաւարտ սահմանաւորիլ ստեղծուն անքննականդ այցելուն՝ յերկնից յերկիր առաքեցար, յուսուցանել և յառաջնորդել՝ Էակցին քուսմ զՀետ ընթացելոց։ Լ՝ռաքեցար իբրև զեղուն լեռնթ՝ պարգևել որոց ցանկան՝ հոգի իմաստութեան և հանճարոյ, հոգի գիտուն և զօրուն, հոգի հեզութեան և ուսմնաշատուն, և լեցուցանել հոգւովք երկիւղի զխոնարհս։

Լ՝ռաքեցար իբրև լոյս և իբրև հուր 'ի տիպ նմանութեան կերպարանաց լեզուի, նաև իբրև հողմն ուժգին։ Իբրև լոյս ծագեալ՝ պայծառացուցեր զստուերամածեալս. իբրև հուր ի ջեալ կիզեր զմեղս և զաղտեղութիւնս. իբրև հողմն ազդեալ զաւեալս հնչեցեր ը տիեզերս։

Ո՞վ ամենափարելի լոյս որ զանստերիւր ճշմարտութեան հաւատոյ յայտ յանդիման յամենեսին գեղափայլես, և զիմաստուն ուծային գիտութեան 'ի սիրտս յստակս լուսածագես, զաղջամուղջին մթութեան թափագին թախանուն հոգւոց 'ի բաց փարատես, և զծածկութեան գաղտնեաց զանխուսլ բերման իւրաշարժ արձակմանց սրբոտից և երիկամանց՝ իբր 'ի հանդիսոյդ երևեցուցանես. և որ ճշմարտուն է իսկուն՝ 'ի նոյն զոր կամիս՝ յարփշտակես։

Ո՞վ երջանկաբորբոք հուրդ երկնային, որ վառես զուրմանս հոգիացելոց անճանց յուծատրաշ նշոյլս, և բարձրացուցանես զցոլմունս տիրանուն վերացութեց մտաց և ընծայութեան

կամաց ինքնայօժար նուիրելոց։ Որ հալեա և ծախեա զՀոգաշնչելոցս զանմաքրութիւն, և 'ի խրատս չարին մխելոց զանխառնութիւն. և քանեա 'ի բովս ազգի ազգի փորձանաւորութիւնց զմարդկային մտաբերութիւնց զզգաստմունս. և իբր թրծմամբ սնդեա 'ի հաստատութիւն բարեաց զկաւաղանդո

մակ ներդործես՝ զոր առնել ախորժես։ Լ. մեղեցուն՝ որոց խնդրեն տաս, որոց հայցեն՝ չնորհես, որոց բաղխեն՝ բանաս և բաշխես։ Լ. որ սխրալին է՝ յոմի յայսոսիկ ամենաբաւական լիութիւն քո յանսիաղ ճոխութիւն գերապանծ հրաշանայ. քանզի՝ ի պարգևելդ ոչ իւիք նուազի, և յընձեռելդ երբէք ոչ պակասի, յաղբերանալդ՝ բնաւ չընդհատի, և՝ ի զեղուլդ՝ կրկին և կրկին հոդի. ՝ի ցօղելդ յաճախ՝ բազմաքաթարդաւաճի, և՝ ի հոսելդ լիուլի՝ յընդունելութիւն հոգւոյ ընդարձակի։

Գ. Ով մեծդ և ամենամեծդ յանձնաւ բարութիւն, ով անվայրափակ ովկիանոսդ միսիթարութիւն, ով ամենապարարդ անբաւութիւն երանութիւն, աղաչեմ զքեզ՝ հաղորդս արա և զիս ա՝նբասարելիդ քում բարութիւն. հան ինձ մանն բերկրանաց քումդ միսիթարութիւն. վերաբերեա զհոգի իմ՝ ՝ի փափաք քումդ երանութիւն։ Դիտեմ՝ եր զի օրէսի անհնարին է ինձ համայնարբու լինել հեղմանդ ձրից, այնչափ հնարաւոր է էիդ՝ ամի բաւականս առնել զանարժանս քումդ լիահոսան չնորհաբաշխ առատաձեռնութիւն։ Լ. Այլ ինձ բաւ է և շատ կաթիլ մի ևեթ անհատահոս պարգևացդ և ամենազեղ չնորհացդ։ Ցուր ինձ՝ եր տուր աղաչեմ. տուր ՝ի քոյոցդ, և արա՝ քո զօտարացեալս ՝ի քոյոց. տուր զի տաց, և արա՝ զի արարից։

Պաղատիմ և կրկին աղաչեմ, օծ զանկեբպաբան հոգիս, և կնքեա՝ ՝ի կերպարանս որդւոցդ լուսոյ։

Ցարածեա՝ ՝ի վրդ սարտուցելոյս զտածողական

խնամարկութեան ամենապարփակ թեւոց անեղծ աղաւնոյ։ Հայս և էջ 'ի վեր անձինս յաւազանին ջուր իջելոյ մկրտութեան ՝ յորդանանու նմանութեան՝ կոյորդակից կարգել զանարժանութեան իմ գոյակցիդ տնօրէնութեան։ Հրաշալիք զանգէն սառնացեալ ոգիս 'ի յորդորումն հրափայլ սիրոյ սիրալի շարժութեան արփիավառ երկնային բոցոյդ։ Հան զիս յանապատահետ կազդուրումն առաքինասջան ընծայութեան, արիսնալ քոյին օգնականութեան և զօրանալ ընդդէմ փորձողին, բարձրացեալ 'ի վեր բռնութեան նոցին. նախագիծ օրինակ յարացուցի առաջի ուղեղոյ զփառակցիդ հանդէս մարտի 'ի խորտակումն զինուց խորտակողին բնութեան մերոյ։

Էր հանդիսադիր և յիսուսմ մարտի 'ի բիւրաղգի փորձութիւնս՝ երբեակ դիմադրական հնարից նախաչարին, ոչ 'ի մեղկացուցիչն բերիլ պատառ հեշտութեան մարմնոյ, և ոչ 'ի յոգնագանձ ստացուածոց խնդամիտ բերկրիլ ձոխութեան, և ոչ 'ի անտեսափառ վերացութեան թանիլ ամբարտաւան խորհրդոց։ Կամ առաւսիկ առաջի քո ով ամենաբարի հոգի ՝ այ, ընդ քոյոդ օրհնեա, ընդ ընտրեալոդ միացո, ընդ ծառայոդ պատսպարեա. զի ընդ նոսին հաճոյացեալ քումդ ինքնաբաւն բարեհաճութեան՝ փառաւորեցից զքեզ զերլոդդ 'ի հօրէ և յորդւոյ այժմ և յաւիտեան. ամէն։

ԼԱ

Առաջին կիւրակէ զկնի Հոգեգալստեան։

Ի պարէնս ամենաՅԷ երգարանքն։

Ա. Սէ, որ, որ ես Ձնմարտապէս՝ Համագոյ և միանակամ որ երգարդուն անբաժանելի. որ էնդ, և եղդ, և էդ. ինքնագոյէութիւն, անհասանելի խոկութիւն. ամենայ երանութիւն. անսահմանելի գեղեցկութիւն. ամենաբաւական կատարեալութիւն. անպարագիր յաւիտենականութիւն. անբաւելի բարութիւն. ամենաբաշխ բարերարութիւն. ամենառատ քաղցրութիւն. անդորրաժառանգ խաղաղութիւն. բերկրապատար ցնծութիւն։ Խորհուրդ անքննին. խորհուրդ անձառ. խորհուրդ 'ի վեր քան զնամ՝ խորհուրդ. մի ՅԱծութիւն անեղ յերիս անձինս՝ 'ի Հայր, յորդի և 'ի Սբ. Հոգի։ Հայրդ անծին և անսկիզբն, որդիդ ծնունդ յաւիտենից 'ի Հայրական ծոցոյ. Հոգիդ Սբ անսպառ բղխումն 'ի նոցունց էութեանց։ Հայրդ յանձնեալ, որդիդ 'ի Հօրէ. Հոգիդ Սբ 'ի նոցունց և 'ի նոսին. որով և յերիս քառագիր անուանմամբ Հայր, Որդի, Հոգի, յոգի երկրպագելի անունդ Երրորդութիւն։

Ա՝ի ինքնութիւն և մի նոյնութիւն. մի գոյութիւն և մի բնութիւն. մի լոյս և մի զօրութիւն. և մի կարողութիւն։ Անհամեմատ յամի. անօրինակ յամի և անմանն յամի. * որ ոչ նման է քեզ ‖ սաղ. ԼԷ. 10. Հ. 19։ Յէութիւնք անհամեմատ. յանձնաւորութիւնք անօրի-

նակ։ 'ի զօրութեանն անմահ։ Այնքան իշխեցից առաջի առնել զդոյաւորուն բանական հոգւոյ, որ է մի էակ անքաժան յինքեան յերիս էութիւնս զանազանեալ 'ի բանական, 'ի զդայական և 'ի անկական, այո՝ ինչ ոչ համեմատի անհամեմատ միութիւն և զանազանութիւն անձանց ՝նոր երրորդութեան։ Բայց ամին և անօրինակ իմն է. աւասիկ մի հնչումն յերիս գիրս տրոհեալ, 'ի Ա. Հ. Ս. Բ. յորոց յօդի աչք. այբ յանձնէ. չա յայբէ. քէ 'ի նոցունց. է և այս օրինակ անօրինակ ինքնութիւն երրորդութեան։ Այդպէս և անմահն ամենեքեան. ահա մի անտրոհելի ներգործութիւն յերիս գոյաւորեալ տեսանի, յառնելուն, 'ի կրելուն, և 'ի շարժման. այլ զինչ այս նմանուի անմահն խորհրդոյ համագոյ երից առանձնաւորուց 'ի միութիւն էութեան։ Ամենեքեան անհա, ամենեքեան անբմբռնելի, ամենեքեան անխմանալի։

Բ. Բանի վիճակաւորելոյս անձին՝ զի զայսպիսի անձառելի ունիմ զնոծ, ցնծամ զի զայսպիսի գիտեմ արարիչ։ բերկրիմ զի զայսպիսի պաշտեմ՝ նոր։ Ոչ ամենացանկալի լոյս։ ոչ ամենապարելի կեանք. ոչ ամենապատաքելի երջանկութիւն։

Օ՝ զրպիսիս արդեօք՝ նոծ ճանաչեն հեթանոսք, և զրպիսիս պաշտեն. զինչ խորհին զնոծոց իւրեանց սուտ. զոր յոյս ունին յինքնահնար կրօնս իւրեանց։ յինչ բերին արդեօք, և յինչ միխթարին։ Այս զոր պաշտեմն՝ ճշմարիտ դատիմ, և ոչ մոլորիմ. զի ոչ 'ի նանրութիւն հոգաց ծնելոց ծանեայ, և ոչ 'ի ճարտարութիւն բանաս-

տեղծիչ ուսայ, այլ 'ի քէն ՝որ. զի դու ցուցեր
և դու յայտնեցեր. վասն և յայտնեցելումդ երբ
կիրպագանեմ. նա զի գիտեմ զի ոչ խաբեաս ո-
րոց զքեզ յայտնես. յաղագս որոյ աննենդելի
խորհրդով հաստատեալ 'ի ՃՇմարտութիւն յայտ-
նութիւնքո ինամ անդորը 'ի հաւատս յայտնե-
ցելոյդ, և 'ի յոյս խոստմանց քոց։

Փառք մեծ է ինձ ունիլ զքեզ ինձ ՝ուծ. և որ-
չափ մեծ է ինձ այս, այնչափ մեծ է արժանա-
պէս պաշտել զքեզ, անմեկնելի յարիլ 'ի քեզ,
և բոլորով սրտիւ սիրել զքեզ։ Օ ՝ամ արհա-
մարհել վա՞ քո, և միայն զքեզ համբուրել.
զ՝ամ լքանել և թողուլ, և միայն ՝ի՞ քեզ ինալ.
զ՝ամ մոռանալ, և զքեզ միայն յիշել, և ասել.
ինձ մերձենալ առ ՝ուծ բարի է, և դնել 'ի քեզ
զյոյս իմ. սաղ. ԿԲ. 28. զինչ կայ իմ քնաւ յեր-
կինս, կամ՞'ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի.
՝ուծ սրտի իմոյ, ՝ուծ բաժին իմ, ՝ուծ ժառանգ
դուքեզ իմ, ՝ուծ երանութիւն իմ յաւիտեան.

սաղ. ԿԲ. 25։

Քանի երանութիւն է ինձ, զի 'ի քեզ կեամ, և
առաջի քո կամ. 'ի քէն եմ, և քեզ շարժիմ.
կրկին ևս երանութիւն, զի քեզ օրհնեմ զքեզ. և
յօրհնելն օրհնիմ 'ի քէն։ Փառք քեզ ով փառք
իմ, փառք քեզ ով փառքդ յաւիտենական.
փառք քեզ ով փառքդ ՝ամի. փառք փառաւո-
րեալ ՝ուծութեդ։ Յանկամ յ՝ամի և յ՝ամ ժամ փա-
ռաւորել զքեզ յօրհնութիս ուղղալիցս. այլ չեմ
բաւական. ցնծամ ևս, զի ոչ բաւէ անհաս մե-
ծութիւնքում բաւականութիւն ՝ա և իցէ օրհնութիւն։
Դու բարձր լեր ՝ուծ իմ յանբաւութիւնքոյ փառաց

քոց, և ես անբաւական երևեցայց. շատ է ինձ այս՝ զի դու մեծասցիս. այս և եթ բերկրուի է հոգւոյս՝ զի դու բարձրասցիս. այս է զոր կամիմ, արդարև այս է յոր փափաքիմ. զի դու փառաւորեսցիս՝ անկարծոյդ փառաց, և ես անկար ցուցայց 'ի փառաւորել զփառաւորեալդ յամի յաւիտեան։

Ք. Ա՞յլ արդ քանի՞ անարգանք լինէր ինձ նուազիլ կամ նՀանջիլ 'ի դատանելոյ զամենագիւտ էնդ էից ամի, և զամենապատրաստ գանձդ. զինքնաբուն բարիդ, և զինքնաբուղխ ցանկալիդ. զինքնաբաւ փարելիդ, և զինքնիշխան տնտեսելիդ։

Ոչ քաղցրութիւնդ սիրալի, զիաՀրդ անմանն և անբաժ երևեցայց անսիրազութիւնդ լիութիւն, անքննութիւնդ բարձրութիւն, և անՀաւատութիւնդ թագաւորութիւն։

Ոչ աւաղեմ զանձն իմ առ անարդս կոպարանալոյ, այլ ողբամ զաղդ իմ, զի 'ի ժառանգելոյ զմի միայն սիրելիդ պակասելով պակասիմ։ Պատկառիմ և նուազիմ, հալիմ ես՝ ոչ յարիմ՝ յոր բերիմ յամենաժառանգելն ցնծութիւնդ իմ. այլ մոլեգնեալ ցնդիմ, և ՀՀ խելացնոր յիմարաց տարուբերիմ. 'ի սնոտիս դեգերիմ և 'ի նանրութիւս տատանիմ։ Օ որ յայտնի ճանաչեմ՝ իբր յանճանաչելիս նայիմ, և զոր գիտել խնդրեմ՝ յիս ոչ նշմարեմ. 'ի խաւարի խարխափիմ, և յանկերպս կերպարանիմ։

Դու լոյսդ, դու յոյսդ, դու միայնդ 'ի բարութիւն, լոյս արա խաւարելոյս, և յուսովք մնասն ձեռն 'ի յուսոյն անկելոյս. ընկալ և կալ զա-

Ը. Տէն եկեղեցոյ 'ի լուսաւորչէ։
նակնկալ կորուսեալս. և կարողացո՛ զապիկարս՝
զօրանալ յօրհնութիւնս քո ոնծ իմ, և տալ փառս
յանմի ամենաթագ երրորդութեդ՝ այժմ և յամ՛ յա-
ւիտեանս. ամէն։

Լ.Օ.

Լրկրորդ կիւրակէ զկնի հոգեգալստեան։

Տէն եկեղեցոյ կարդեալ 'ի լուսաւորչէ, յեր 'ի Վերջանէն։

Ա. Ասեալ կայրն ոտք մեր 'ի դրունս քո
երուսաղեմ, սաղ. ճԿ. 2. յեկեղե-
ցիս կատարելոց, ընդ քեզ և 'ի քեզ զօդելոց՝
յընդհանուրդ հօտ ինքնիշխան հօտապետին
քոսի ոչ մերոյ։ Լրուսաղեմ շինեալ ոնդ քաղաք,
և բնակութիւն իւր շուրջ զնովաս. սաղ. ճԿ. 3.
առանձնաւորելոց եկեղեցեաց՝ յազգս ազգս
քրիստոնէական խմբից ուղղադաւան դասուց,
հաստատեալ 'ի վերջ հիմանն առաքելոց և մար-
գարէից, և բարձրացեալ 'ի վերջ վիմին հաւա-
տոյ՝ առաքելապատին պետրոսի և յաջորդաց
նորին ըստ կարգի. ամրացեալ համանդամայն
'ի մի կրօն անսասան և 'ի մի յօդ կատարման,
յառաջընթաց առաջնորդութիւնք առաքելաշա-
ւիղ հայրապետաց, անմոլորատած հովուաց,
առ 'ի քէն նախասահման որոշելոց, և տիրահր-
ամանն ժամանելոց։
Բոլորից սոցա բովանդակութիւն բերկրասատար
լցեալ ուրախութիւն և համայնազօր խնդութիւն բարձ-

բաբաբբաւ ընծայեալ՝ փառատրուի մատուցա-
նեն քեզ փառաց թագաւոր՝ ըստ իւրաքանչիւր
պարուց և կարգաց Ամ աշխարհ սփռելոց։
Ամենեքեան առ հասարակ յաներկեան ճշմար-
տութեամբ ուղղափառ հաւատոյ հաստատեալք և հիմ-
նեալք, յանսնեղելի և յանստեղի վկայութի
խաչսխեալք առաքելական և կաթուղիկէ միոյ
միայնոյ Աստ. եկեղեցւոյ։
Ամ զաղանկ և նախածնունդ եկեղեցի հայաս-
տանեայց, նորոփրետուր պանեալ և զարդա-
բեալ 'ի ձեռն հաւատարիմ ծառայի քո բազ-
մաչարչար նահատակի Ներսի դրիգորի, որ 'ի
չորեքտասան կտտանս տանջեալ, և չորեքտաս-
սան ամաք 'ի խոր վիրապին ճգնեալ, առ ընկա-
լաւ յայնչափ մարդասիրութեանէ զշնորհս
դարձի մերոյ յանմեծ մեղրութենէ 'ի ճշմարիտ
հաւատս ճշմարտութեանէ, ընծայելով քեզ նոր
ժողովուրդ և երկրպագուս անուանդ քում
սրբոյ։
Ամ. Ամ արդ ամ բարեբար, նուաղեալքս 'ի
լիաբաշխ ողորմութենէ քումմէ վերագոչեմք առ
միածինդ որդի ամ, դու ամենիշխան և ամե-
նակալ ամ, որ հաճեալ և հաւանեալ ընդ ծա-
ռայ քո՝ ընտրեցեր և առեր 'ի ձեռս գործի
գործնեայ յայցելութենէ փրկութենէ մերոյ. և
զօրացուցեալ կարողացուցեր կանգնել նոսա
զսպասաւորս 'ի պաշտօն փառաց քոց. և կար-
գեալ զնա հովիւ բարի և հսկող արի, նորին
առաքինութեամբ խնամեցեր զմեզ 'ի փարախ
սրբութենէ եկեղեցւոյ։ Ամրդ դու ինքն մշտին
ջնեաւոր թագաւոր մշտնջենաւորեա զինման

պահպանութեան քո 'ի վրայ մեր առ 'ի հաստա-
տել զմեզ 'ի ճշմարտութեան. պաշտպանեա յար-
կածից գաղտամուտ թշնամեաց. վանեա 'ի
բաց զդիւթանիւթ նենգութեան խորամանկու-
թեան չարին, և ամիտոփեա զմեզ ընդ անդորրա-
ցուցիչ հովանաւորութեան աջոյ քո սրբոյ։ Հա-
լածեա զգաղանութեան դժոխային գայլոց, և
ամրացո զտկարացեալս և զվատանդեալս յամ-
բութեան ամենապահեստ ձեռին քո։

Մի յամեթ առներ զմեզ տէր ամ մեր՝ որ 'ի
ձեռն բարեխօսութեան քահանայապետին քո և
վկայի 'ի քեզ եմք ապաւինեալ. մի 'ի բացեայ
առներ 'ի մէնք զանտեսութեան հայրական տես-
չութեան քո։ Մի դարձուցաներ 'ի մէնք զհա-
մայնահայեաց երեսս քո յերեսաց խժդժագը-
նաց վարուց մերոց։

Հայեաց յո յերեսս օծելոյ քո Տրդն գրիգորի.
մի մոռանար զկիրս չարչարանաց նորա. տես
տէր՝ թէ յօրպիսի և յօրքան գանս հարաւ և
'ի տանջանս, 'ի կաղմել և 'ի կացուցանել յան-
դիման քումդ բարձրութեան նորատունկ ե-
կեղեցի։

Նէ արդ տէր բարերար, մի յընդունայնս թո-
րեալ թափեսցի հոգատարութիւն քրտանց քումդ
հսկողի. այլ զօրասցի և պտղալից ծաղկեսցի։
Մի՝ խառնեսցի 'ի վաստակս նորա որոմն չա-
րին 'ի հեղձուցանել զսերմն ցորենոյ կենսա-
բեր վարդապետութեան նորա։

Օ ցաւս հարուածոց սորա ամենաբուժիչ դար-
մանօքդ ապաքինեա. զպատառուածս վիրաց
սորա զօրաւոր սպեղանեօքդ առողջացո։

ԺԲ

ՁԵ. Պիտեսցեր, թէ քանի՞ քանի՞ թշնամիք հարստահարեալ հարուածեցին զմեզ յարիւն ապաժոյժ, զիարդ կեղեցին և կեղեբեցին, մինչև և զաշխարհս մեր բնակչաքն հանդերձ յաւերս և յաւար մատնեցին. կործանեցին ըզշինս մեր և զքաղաքս. քակեցի՛ք քակեցի՛ք ասելով, մինչև 'ի հիմն հասուցի՛ք. սաղ. ճԼ. 7։ Օ այսոսիկ գործեցին նեղիչք մեր արտաքոյ, և նկուն արարին զմեզ։ Իսկ մեք զի՞նչ. ամաչեմ ասել. ապերախտեցաք, անօրինեցաք, անիրաւեցաք առ բարերարդ մեր, և զշնորհս բազմապատիկ պարգևացդ անտես առնելով, գտաք արժանի պատուհասիդ ասելոյ 'ի վերոյ մեր. մոռացաք զցանկալի խաղաղութիւնն միաբանական սիրոյ, զոր աւանդեցեր մեզ իբր կնիք հաստատութեան աշակերտելոյդ։ ատեցաք զեղբարս, հեռացաք յընտանութենէ, և զմիութիւն քրիստոնեական անդամոց բաժանեցաք տարաձայնութիւնք. աղօտացուցաք զնաւակատիս ուրախութիւնն տօնիս, զոր ծառայ քո քրիստոնէիսն վաստակաւք անբերելի տանջանաց երկնեայց և սահմանեայ 'ի լուսոյն բոլմանդակութիւն հօտին ընծայելոյ 'ի քեզ։ Որով և յամենի արարաք զանձինս մեր յերախտաւորութիւն բարեացս պարտ հօրս մերոյ, 'ի դերև հանեալ զվկայս կան ջանս և զմաղթանս նորուն։ Օ ինչ արդեաք 'ի նկատել և 'ի զննել նորա զմեզ՝ առասցէ ցմեզ։

Այդ է իմոց վաստակոցս փոխարէն հատուցումն. այդ է ընտրութիւն ձերոյ երջանիկ բաժդ.

րեալութեան. աղդ է որդեգրելոցդ Հշմարտին
ոչ պանծալի բարեմանութեան։ Լ. պաքէն էս
Հանդիսացուցի զաւուրս տօնախմբութեան, առ
անքակտելի միաբանութեան ոնծաւանդ սիրոյ Հա-
ւատացելոցդ. և զի՞ է, զի յայլ խորդ վիճակ
և օտարոտի կերպարանս տեսանեմ զձեզ։
Լ. ւաղ ցաւագին յանդիմանութեան. զինչ այսմ
տացուք իրաւացի պատասխանի. չունիմք ար-
դարև չունիմք ինչ ասել, այլ վերստին 'ի նո-
րա բարեխօսութեան ապաստան լեալ՝ 'ի ձեռն
մաղթանաց նորին աղաչել զքեզ փրկիչ մեր
և կեանք յո՛ քո՛, դու նորոգեա՛ զմեզ 'ի նորո-
գութեան Հշմարտութեան և ուղղութեան. Հաստա-
տեա՛ զմեզ յանմեկնելի միութեան ուղղափառ
Հաւատոյ. և 'ի յօդակապ սնդութեան սերտ
սիրոյ. ժողովեա՛ զտատանութեան ցրուՀելոցս 'ի
խորՀուրդս օտարոտիս. և ամփոփեա՛ զմեզ 'ի
գոգ ամենագութ գրկաց քոց. և արա՛ զմեզ
արժանի վստահաքայլ ընթանալ ՚ի անստե-
բիւր շաւիղս Հրամանաց քոց, և զՀաբթերեսս
ժամանել յանեղծական վայելս երանաժա-
ռանգ միաբանութեան 'ի քումդ արքայութեան և
փառաւորել զքեզ միշտ և յաւիտեան։

ԼԸ.

Յիշատակ գոհութիւն ամենայն

հաղորդութիւն։

ՅԱ. Յանձնառ և յանքննին փառս փառաւորեալ՝ փառաց թագաւոր, պատկառանաք և խոնարհութիւն մատչիմ աւասիկ յաթոռս բարձրութեան քո յանհասանելի խորհուրդս սրբոյ հաղորդութեան. յորում տեսանեմ բազմեալ զնորդ տերանց ընդ հրաշագործին տեսանկօք, անտեսանելի ծածութիւն և աննշմարելի մարդկութիւն։

Ի՞նչ խոստովանիմ՝ զոր ոչն տեսանեմ, և մարդդաւանիմ, զոր ընդ ամպով անքննութեան պաշտեմ։ Ոչ թէ քանի մեծ է և անհաս այսր խորհրդոյ բարձրութեան ծած իմ. հիանամ և քննել անկարանամ. հաւատամ և երկիրպագանեմ. զինչ այլ մարթացայց ասել, և կամ զսր բան արժանաւոր զմնաւ ածել։ Որոմ գովութիւն մատեայց օրհնել զանբաւելի իմաստութեանդ, և որոմ գոհութիւն մեծացուցից զամենազեղ բարերարութեանդ. ոմ ամենապարելի քաղցրութեան, և աննիրազելի լիութեան, որ զայս պիսի կատարեցեր 'ի մեզ խորհուրդ. և այսպիսեաւ հաձեցար լինել ընդ մեզ՝ ոչ 'ի միում ևեթ տարածութեան ասպարիզի, այլ յամ սահ

մանս տիեզերաց՝ ծագաց 'ի ծագս երկրի, յարևելից մինչև 'ի մուտս արևու, ընդ կիզ-
զիս հեռաւորս, Ը հիւսիս և Ը հարաւ։
Ո՞վ զարմանալեացս. զու որ յամ տեղիս ես
անպարագիր ՃՃուԹՃ՝ կամեցար և մարդկու-
Թեամբ լինել ընդ ամ աշխարհ անհասուԹՃ
խորհրդոյս այսորիկ։ Լռաւել ևս զարմանք,
զի զոր մեք յաներևոյԹս նշմարեմք ՃՃու-
Թեամբդ յամի, Թագուցեալդ մարդկուԹՃ
յանհամար մնասուս ըմբռնեմք անԹիւ նշխա-
ռաց. և զանբովանդակելիդ երկնի և երկրի
բովանդակեալ դաւանեմք 'ի հատուՃածս փո-
քունս անսպառ տրոհուԹՃ։
Ա՝ի ես, և 'ի բաշխիլդ 'ի յոգունս՝ ոչ բազ-
մանաս, և 'ի փոքունսն ոչ փոքրկանաս. այն-
չափ 'ի մեծին՝ որչափ 'ի փոքուն. 'ի մեծին
նոյն, և 'ի փոքուն հաւասար, յամի նոյն. նոյն
որ 'ի յերկինս բազմիս, նոյն և որ յաշխարհ
ամ յիւրաքանչիւր սեղանս երկրպագիս։
Ընդհատազատելի տեսուԹիւն. մի մարմին ամ
բաժանելի, մի և նոյն 'ի մատաւորս և 'ի հե-
ռաւորս՝ առ 'ի միմեանց բացակայս. ո՛ այսմ
կարիցեմ հասանել։ Կարե արդարև մի հրեշ-
տակ յերիս և 'ի չորս լինել տեղիս. այլ այս
նորա է յատկուԹիւն. զի պարզ հոգի է անմար-
մին. իսկ քո ՃՃդ մարմին առեր կենդանի և
ՃՃնմարիտ. զի բանդ մարմին եղեր. և սակայն
նոքին միով մարմնով բովանդակապէս պարա-
գրիս յերիս և 'ի բիւր տեղիս յանբաւ նշխարս,
մի և նոյն գոլով յամենայնի։
Ը. Յայսպիսի անօրինակ կերպարանս երևեա-

լով՝ օրինակ ընծայիս անօրինակ խորհրդոյ աՀմենամեծ երրորդութեան. զի ահա նշխարք երեք յերիս ձևս, և մի ՀՀմարիտ քս. ահա երեք անձինք յերիս դէմս, և մի ՀՀծ անբաժանելի։ Ի՝ հուսմ 'ի նշխարաց երկիրպագանեմք՝ ՀՀ իբր այլուսմ քոի, այլ միոյդ միայնոյ յայլ և այլ նշխարս. միուսմ անձին երրորդութեան երկիրպագանեմք՝ ՀՀ իբր այլուսմ ՀՀ, այլ միոյ միայնոյ յերիս անձինս։ Ի՝ ՀՀաշակեալ մեր զայս նշխարս և ՀՀ զայն՝ զայլ նշխարս ՀՀաշակեմք, բայց ՀՀ զայլ քս. յառնուլ մեր 'ի բերան զանուն հօր ՀՀ և ՀՀ զանուն որդւոյ, արդարև զայլոյ անձին անուն առնումք, այլ ՀՀ զայլոյ ՀՀ։

Երկրորդին այս խորհուրդք՝ խորք են խորհրդոյ՝ ամենևին անբմբռնելի և անՀառելի։ Այլոց ևս խորհրդոյ թէպէտ ՀՀ հասանեմք, սակայն իւրաքանչիւր բանիւ պատշաՀողական պատՀառս յարմարեմք, յեցեալ յամենաՀնար իմաստութենէ քո, և յանբաւական կարողութենէ. զի ՀՀ տկարանայ առ 'ի քէն ՀՀմ բան։ Այս սակայն երկաքանչիւր այս խորհուրդ 'ի վերայ են քան զՀՀմ խորհրդոյ տեսութեան, ամենևին անքնին, և բնաւին անթարգմանելի։ Այս որով իբր առ հրով հալի ընչին իմաստութիւն մեր. վՀՀ և գերեմք զմիտս մեր, և խոնարհեցուցանեմք զՀանաչողութիւնս մեր. վՀՀայ ունելով մեզ զընդՀանուր եկեղեցի քս ՀՀ. որով և անշարժ հաստատեալ մեր ամենեցուն 'ի ՀՀմարտութեան հաւատոյ՝ երկիրպագանեմք ՀՀմարտիդ ՀՀ։

Ընդ որս և ես օրՀնեմ և փառաւորեմ զքեզ ՀՀծ իմ. և յողորմութիւնդ քումմէ օժանդակիլ

աղերսեմ. մի զուրկ և անմասն դատայց Յ ինորհաբաշխ օրհնութեանէ մեծի խորհրդոյս. հաղորդս արա զիս աղաչեմ բազմազեղ ինորհացդ, և կարողացո՛ զտկարութիւն անարժան ծառայի քո, առ անստերիւր հաւատոյս՝ անսոգտանելի գործս ցուցանել, և նոքին բարձր առնել ընդ-բարձրեալդ յանմի յաւիտեան։

Արէնն ասա զարմանս։

Ք. Ունիմք զանծ անտեսանելի և անշօշափելի, անհպելի և անձաշակելի. Յ լուր ականջաց ևեթ ըմբռնելի։ Ամ՛ Յ սքանչելաշնորհ խորհուրդդ հաղորդութեանէ աչօք տեսանեմք զանծդ անծոց, և ձեռօք շօշափեմք զանորդ փառաց. համբուրեմք շրթամբք զբարեբանեալդ յանմի, և ձաշակեմք բերանով զկեանդ հրեշտակաց, ընդ-հանդ կենաց, զկեանդ երկնային։

Տեսանեմք այո՛, այլ ընդ ամպովք հաւատոց. շօշափեմք այո՛, այլ ըստ ծածկութիւն բանից քոց. համբուրեմք այո՛ և ձաշակեմք, այլ ընդ տեսակաւ խորհրդոյ. որով ունիմք զսա մեզ գրաւ յայտ յանդիման տեսութեանէ քում, և անձառելի ծառանգութեանէ երկնից արքայութեանդ։

Ամ՛ռաքելոյդ գումարք տեսին զքեզ և շօշափեցին Յ մարմնի. այլ մեք Յ միգի։ Հերեւիլ և Յ շրջիլ քո յաշխարհի մարդկութեանդ՝ ծածկեալ ունելիր զանծութիւնդ. իսկ Յ նշմարիլ և Յ պաշտիլ քո յայս խորհուրդ՝ թագուցեալ ունիս և զմարդկութիւնդ. և ըստ սովին թագնութիւնքն իսկապէս տեսանիս, և տիրապէս շօշափիս. անծա-

ղսարար Ճաշակիս, և անՃառաբար կերպա-
ռանիս։

Ա. ՅԼ ես՝ զոր 'ի Թագստեան տեսանեմ՝ Ճշմա-
ռիտ հաւատով երկիրպագանեմ. և զոր ընդ
մուԹ նշմարեմ՝ կենդանի յուսով պաշտեմ. և
զոր ընդ գոյիւ տարերց ակնարկեմ՝ անմեկնե-
լի սիրով յիս գրաւեմ։

Ա՛Է յերկրայս բերիմ և ոչ յայլամիտ խորհուր-
դս գերիմ. այլ 'ի Ճշմարտութիւնդ ևԹԷ յարիլ
փափաքիմ, և 'ի կենդանութիւնդ յամ սրտէ միա-
ւորիլ յօժարիմ։ Ա՛Է զգիտարդն քննեմ, այլ
զիսկդ համբուրեմ. ոչ հարցանեմ, որպիսի ի-
ցէ, այլ հիացմամբ ընդ իսրայելեանն գոչեմ.
զինչ է այս. զինչ է այս. ԵԼԷՅ. ԺԷ. 15. որով և
անմահացուցիչ մանանայ զսա Ճանաչեմ, և ա-
մենաՃաշակ քաղցրութիւն. ԽՆՍՓ. ԺԷ. 20։

Ա՛Զ բարերարութիւն տանելն, որ յանչափ սիրոյ
քո և յանբաւ գԹոյ՝ որով հաՃեցար ընդ մեզ,
զսոյն զայս խորհուրդ հրաշացուցեր 'ի մեզ 'ի
պանդխտացեալս յաքսորանաց վայրի, 'ի նքո-
ղեալս և 'ի սոփացեալս յամի։

Դու ցնծութիւնդ երկնի և երկրի. դու ինքն
սահմանեցեր և տնկեցեր զսոյն զայս հրաշալի
հանՃարով՝ ծառ կենաց 'ի դրախտիս Եկեղեց-
ւոյ սիրելի քո. և ետուր ինՁ զսոյն՝ պտուղ անմա-
հութիւն։ Հաստատեցեր զսա դեղ նորոգութիւն վա-
ղուց, և կարգեցեր սպեղանի վիրաց հոգւոյս։
Պատրաստեցեր զսա ապաքինութի ախտաւորու-
թեց, և կացուցեր կաղդուրիչ տկարութեան իմոյ։
Լազմեցեր զսա ամենալի սեղան քաղցելոց. և
յօրինեցեր ուրախարար խնջոյք տխրեցելոց։

Դու որ կեանքդ ես մահացելոց, սոփաւ եղեալ յուսահատելոյս խարիսխ յուսոյ փրկութեան, և ալեկոծելոյս նաւահանգիստ ապատութեան. վշտացելոյս արգահատութիւն մխիթարութեան, և տաժանեցելոյս սիրտուն բերկրութիւն, տատանեալոյս նեցուկ հաստատութիւն, և վրդովելոյս այցելու խաղաղութիւն. փորձեցելոյս ելք անդորրութեան, և վտանգելոյս հնարաւորութիւն պաշտպանութեան. հիւանդացելոյս դարման բժշկութեան, և հոգացելոյս հնչումն կենդանութեան։

Ո՞վ թէ քանի՞ մեծ էր ինձ՝ ամենաբարի մատչիլ առ քեզ, և արժանապէս ընդունիլ զքեզ. հոգեպէս միանալ ընդ քեզ, և ցնծալոյ բերկրիլ՝ի քեզ, տիրապէս ճանաչել զքեզ, և անմեղանելի մնալ ընդ քեզ։

Գիտեմ թէ, այո՛ գիտեմ, զի չեմ բաւական օգնեանս տալոյ քումդ բնակութեան. դու բաւականացո՛. դու յարդարեա՛. դու յարմարեա՛, դու յօրինեա՛. դու արա՛, և եղիցի. ասա՛ և եղիցի։

Լ՚այ դու թէ, դու՛ արա, և մոյծ զիս՝ի տուն խրախութեան սիրոյ քո. արբո՛ զիս բաժակաւդ տենչալի տեսլեան քո. ցոյց ինձ զդէմս քո, և երևեցո՛ յիս զփայլումն լուսոյ երեսաց քոց. միացո՛ զիս ընդ սիրալի կենացդ բարեկամութեան, և բազմեցո՛ զիս՝ի ցանկալիդ սեղան ամենատարփալի ծառանգութեան քո։

Օ՜ այսպիսիս և զայսքանս ցուցեր ինձ զանակնունելի բարութեան՝ մինչ ոչն յուսայի. միթէ՞ ոչ հաճեսցիս՝ի յուսալ իմում զակնունելիդ ընորհել բարեմասնութեան։ Լ՚ուանց իմ՝ի խնդիր լինելոյ՝ զայդպիսի պարգևեցեր ինձ ընորհս

մարդասիրութիւն. միթէ ոչ մատուցցես ի խնդրելն իմ ի քէն զինամս գթասիրութեան։ Լ. ռանց մերձենալոյ իմ առ քեզ երևեցուցեալ ինձ զքեզ. միթէ ի հալիլս իմ զլացս ինչեն զոր յուսամ ընդունիլ ի քէն։ Յուսամ և կրկին յուսամ զխոստմանդ գրաւականեալ յիս զշնմարտութիւն ասա ի վայրս մթամարտ տխրութեան, և ի հանդերձելումդ ի մշանջենաւոր պայծառութիւն. ուր անանցանելի գովութիւն և անլռելի բարեբանութիւն փառաւորեցիս զքեզ ընդ հօր և Ը սոյ հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԼՐ.

Նրրորդ կիւրակէ զինի հոգեգալստեան։

Լսոհէմուն։

Ա. Կանոն կենաց հաստեցեր ի միտս մեր հաստիչդ բնութիւն զբնական օրինացդ լոյս իբր զՀաղորդութիւն լուսոյ ճշմարտին խմաստութեդ. որով իբր կնքով կնքեցեր ի մեզ զնմանութիւն նորին, և նկարագրեցեր զնոյն ի հոգիս մեր իբր ի հայելւոջ, տեսանել նովաւ զաւն և զվատթարն, զլաւն և զաարին, զուղիղն և ըզթիւրն՝ առ ընտրելոյ կամաց զմին, և առ ի միւսոյն խոտորելոյ։

Լ. Այս լոյս յաղօտանալն ի մեզ՝ խաւարին ինն նշմարի. իսկ ի խանդարիլն խսպառ՝ խաւար առձայնի. ըստ որում վկայեաց բարեբանեալ բերան քո, յասելդ * եթէ լոյսդ որ ի քեզ է՝

խաւար է, խաւարն որչափ և ս ॥. Մաթ. Ը. 23։
Սոյն այս բնաւորականս լոյս եթէ ոչ յարդա-
բեսցի առաքինութիւն խոհեմութեան՝ մնայլ առ-
նու, և սակաւ զօրէ. և փոխանակ կանոնաւո-
բելոյ զկենս՝ զարտուղի անկեալ՝ թիւրէ և մո-
լորեցուցանէ. իսկ խոհեմութիւն զարդարեալ
ուղիղ կառավարէ. և ըստ առաջնորդելոյ օրի-
նաց քոց յարժանաւոր առնելիս յաջողեցուցա-
նէ. զի այս առաքինութիւն սահմանի * ուղիղ
բան առնելեաց ॥։

Օ այս յայտնի գիտելով իմ, զսոյն ունիլ յիս
փափաքիմ, և զսոյն սեպականել ցանկամ լիս-
զին։ Ա.յլ արդ զի՞ արարից. գուն գործեմ, և
ոչ գտանեմ. նկրտիմ, և ոչինչ շահիմ. աշխա-
տիմ և ինչ ոչ օգտիմ. առ վտակօք սորա տրն-
կիմ, և անպտուղ ստեղնիմ. յոստ սորուն պատ-
ուաստիմ, և այլատարազ բողբոջիմ. խնջիմ
և տանջիմ, և յունայնս տարուբերիմ։
Համայնահաս օգնութեդ կարօտիմ ՝ուծ իմ և
ՈՒՐ, և զլիաձիր շնորհայդ նպաստից կախիմ.
կարկառեա առիս զբազուկ քո ամենակալ ՈՒՐ,
և տուր ինձ ձեռն այցելութեան ամենազօր հնա-
բաւորութեդ. զի կարողացայց արձանագրել
յանձն իմ զայսր առաքինութեան չքնաղ գե-
ղեցկութիւն։

Ք. Որչափ գերագոյն է սորա ազնուութիւն,
այնչափ ինձ ստանալ զսոյն դժուարին. և որ-
չափ ինձ է անհնարին, այնչափ և առաւել քան
զչափ մատին քում դիւրին. տ՚ինա որքան ան-
զօր են ջանք իմ՚ի սոյն, այնչափ զօրաւոր են
ամենազգու շնորհք քո՚ի տարբայցուցանել յիս

զսորայս վայելչութիւն։

Շատ է ինձ հաճելի միայն՝ի շնորհել ինձ զայս ձիր իմաստութիւն. զի թէ հաճէսցիս, տալ ես ախորժեսցիս։ Գիտեմ զի հաճիս, գիտեմ զի կամիս. իսկ ես յիմարեալ՝ի վայրենի բերմունս՝ արգելս կառուցանեմ քումդ տուչութիւն. սա կայն կարօղ է ամենաբաւական ձեռն քո և զարգելմանս ջապարասանուն խափանել, և զցնորելոյս զդիմադրութիւն՝ի նուճաճութիւն ածել, զանդէպ և զանպատեհ զթմրութիւն իմ զարթուցանել, և զվարանումն տարապարտ տատանմանս յանդորր հանել։ Օ՜ցրուել և զցնորեալ խորհուրդս իմ՝ի զգաստութիւն վերաբերել, և զխորտակեալ մտածուն իմ նորակազմ ներակերտել. զանհարթ զանյարմար ուրուանկանութիւն հոգւոյս յարմարաւորս հանդերձել, և քոյին ամենաճարտար գրաւորութիւն զկենդանագրութիւն այսր առաքինութիւն գեղեցկաբայլ՝ի նմին պատկերել։

Յոյց ինձ զճարտարուն մատանցդ հնարաւորդ ամի և յայսմ արուեստագործուն. և զոր ոչն ես կարեմ՝ի սմին, դու կարողացո՛ և արա՛. և յորում տկարանամ՝ի սոյն՝ դու զօրացո՛. և յորում ստերիւրիմ աստի՝ դու հարթեալ դիւրացո՛. և յորում սայթաքիմ՝ի սահման սորին, դու կանգնեալ կազդուրեցո՛. և յորում զարտուղիմ և մոլորիմ յայսմ ճանապարհի՝ դու ամիսիւեա՛ և ուղղեա՛։ Մի՛ թողուր զիս ինքնաճեմ զգնալ յայսմ ասպարիզի. ապա թէ ոչ՝ յանել ելս ըմբռնիմ։

Զ. Օ՜այսոսիկ տարածեալ առաջի աննիւաղ

ողորմութիւն քո՝ աղաչեմ, մի՛ եւս յապաղեր 'ի շնորհել անարժան քումդ ծառայի զձիր այսր պարգեւի. զի մի՛ առաւել եւս վաստակոծ ելցից 'ի տաժանմունս բանից, եւ մի՛ այլ եւս աշխատ արարեալ ձանձրացուցից զԹասիրութիւն քո շատխօսութեամբ Թախանձական աղերսանաց։ Փութա՛ բարերար Տէր. եւ տուր զոր խնդրեմ յանսպառելի գանձուցդ զայսր առաքինութիւն մասն, եւ՝'ի սին յայսմ երախտապարտ կացո՛ զիս։ Որով եւ ես լուսաւորեալ 'ի խորհուրդս իմ եւ զօրաւորեալ 'ի հոգիս՝ արժանաւոր գոհութեամբ փառաւորեցից զքեզ յանսահման իմաստութեան քումդ եւ յանչափելի գթութեան ամենառատ մարդասիրիդ։

Լ.Թ.

Զորրորդ կիւրակէ զկնի հոգեգալստեան։

Ա.ՐԴԱՐՈՒԹԻՒՆ։

Ա՜. Կիւ անձնիշխանական կամացս զօրութեամբ աւանդեցեր զիրաւունս արդարութեան, ոչ՝'ի գիտել եւ՝'ի դատել. զի այս խոհեմութեամբ է գործ, այլ՝'ի կատարել ըստ օրինի, հատուցանելով իւրաքանչիւր զիւրն եւ զիւր արժանն, եթէ՝ զպարտ՝ զպարտն, եւ եթէ զպատի՛՝ զպատիւն։

Սովաւ հաստատեալ՝'ի կամն ուղղութեամբ՝ ուղիղ բերիմք առ իշխանդ ամի, եւ առ անձինս եւ առ ընկերս։ Ա.ռ քեզ բերիմք ուղիղ, զքոյդ քեզ

մատուցանելով, և հրամանի քում հնազանդելով. զպատուհիրանս քո պահելով, և զՏաճոյս քո անսնեղ խնդրելով. զմեզ զլեսովին քեզ յանձն առնելով, և զամ գործս մեր 'ի փառս քո կատարելով. յամի զկամս մեր ամենեսեան կամաց քոց հպատակեցուցանելով, և զյաժամանս մեր համայն նախախնամութեանդ զթասիրիդ համանձայնեցուցանելով։

Ա. ռ անձինս մեր ուղղիր բերիմք, մնաքուր ունելով զմիտս մեր 'ի մոտիախնդիր խորհրդոց և 'ի մոլար դատողութեց։ Աթ պահելով զկամս յանիրաւս ընտրելոյ և յանպատեհս սահմանելոյ և վճռելոյ։ Ցանդորդու տաժելով 'ի ձեռն արիութեանդ զցասմունսկանն յանկարգս բարկանալոյ, և 'ի զուր վրէժս խնդրելոյ։ Շ ըՔաւ պահ պարսպելով նպաստիւք բարեխառնութեանդ զցանկականն՝ 'ի զգայութիւնս չհեշտանալոյ, և 'ի զեղծութիւնս չպարարելոյ։ Ա.ջաց դնել պահապան՝ չհայիլ յայրատ, ականջաց՝ չլսել զանպատեհս. ձեռաց՝ չհպիլ 'ի գարշելիս. ոտից՝ չընթանալ զարատուղի։ Օ.ուսպ ունիլ և զայլ ամ զանկարգ շարժմունս մնարմնոյ ողջոյն։ Ի սոսին գնալով՝ ընումք զոր'ինս արդարութեանդ առ անձինս մեր, իւրաքանչիւր բերման զիւրն պատշաճաւորելով։

Ա.ռ ընկերս մեր բերիմք ուղղիր, ընդ բարին նոց խնդալով և ի չարն տրտմելով. և որ առաւելն է՝ ընդեմ նոց չար ինչ տառնելով, ոչ խորհրդով, ոչ բանիւ և ոչ գործով. 'ի խորհրդածութիւնս մնաց ոչ նկարել զնոցանէ զանարժանս, և ոչ 'ի պահարան սրտի ձուլել ինչ

զնոցանէ զՀաստակարս։ Արանիւք բերանոյ չնա-
խատել զնա, և ոչ լեզուօք նեղգաւորօք բամ-
բասել։ Ոչ հատուցանել նոցա գործով անիրաւ-
ինչ, և ոչ նահանջել զնա 'ի գիմելոյ յօգտա-
կարն։ Ոչ առնել նոցա զայն ինչ՝ զոր մեք ոչ կա-
միմք թէ այլք արասցեն մեզ. այլ ըստ անա-
զարտելի և ըստ անշուշտ պատգամոյ Թագա-
ւորիդ Թագաւորաց, զոր ինչ մեք կամիմք թէ
արասցեն մեզ մարդիկ՝ զնոսն արասցուք և մեք
նոցա. Մաթ. Է. 12։ Այլ ինն այսու լրանայ 'ի
մեզ սահման արդարութեան, 'ի հատուցանել
իւրաքանչիւր զիւրն, և յոչ հատուցանել ումեք
զընդդէմն, զի այն չէ՛ իւր։

Զ. Իսկ ես զայսպիսի զառ 'ի քէն առանդեալ
կշիռ բարի՝ չարաչար վարելով խանդարեցի և
թիւրեցի. և փոխանակ ՀԷ այսր առի 'ի ձե-
ռին կշիռ անիրաւութեան. և զգործս իմ գրե-
թէ զամ նսովիմն չափեցի. որով և զիս ինքն
բազմիք յանցաւոր ցուցի. և զՀոգի իմ փոխա-
նակ 'ի ծանրութեան մեղաց թեթեւացուցանելոյ՝
առաւելապատիկ բեռնաւորեցի, և բիւրապա-
տիկ պարտուց պարտապան դատեցի։

Է. զի օրինակ առանց կշռոյ ոչ ուղիղ չափի
որ կշռի, սոյնպէս և ես անկշիռ մնալով՝ յան-
ուղիղս չափեցի զկեանս իմ. որով և յանդգդ-
նեցայ անիրաւիլ առ իս և առ ընկերս, ես և
առ բարերարդ իմ գթած։

Ը. Այլ գուշ որ զամ արդարութիւն խնամես,
և առ ամենեսեան զգութ սիրոյ քո արդարու-
թիւն ժամանեցուցանես, և ամենեցուն արդա-
րութիւն և ըստ արդարութեան հատուցանես. մի

յերեսս իմ հարկաներ զորս ԸՆԴԵՄ արդարութիւն գործեցի. այլ ըստ բազում ողորմութիւն քում ներեա՛ և քաւեա՛, և յարդարութիւն քում նորոգեա՛. և տուր ինձ նորոգութիւն կենաց անստերիւր ընթանալ յայսմ հետէ յարդարութիւն քում, կեալ ըստ արդարութիւն և մեռանիլ յարդարութիւն, գալ առ քեզ արդարութիւն, և պսակիլ յարդարութիւն քումմէ յարքայութիւն քում յաւիտեան։

Լ

Հինգերորդ կիւրակէ զկնի հոգեգալստեան։

Աղթանք։

Ա՜. Ա՜ բիւացո՛ զիս ամենակարող թագաւոր և յամի ինքնազօր, զօրանալ արիութիւն առաքինութիւն ընդդէմ անկարգս բերման՝ հընդգեցումն կրից ցասմնականիս զօրութիւն, այսինքն յուսոյ և յուսահատութիւն, երկիւղի և համբաձակութիւն, և առաւելապատիկ ևս՝ բարկութիւն։ Դու անկեցեր զսոսա յիս՝ զբարեաց գալ և 'ի չարեաց զգուշանալ. և զի սոքա 'ի ինչաւոր մասինս յածին 'ի սրտի, 'ի զօրանալն՝ 'ի բանաւորականն ևս մտանին, և 'ի զանցանելն զաստիսոլ՝ յափշտակեն զնոցն և վտանգաւորեն. իսկ առաքինութիւն արիութիւն կառավարեալ կոպարաւորին և 'ի լաւ անդր պարասնդին։

Յուսոյ ներգործութիւն առ ստացումն օգտի ձկտի, և յուսահատութիւն՝ ընկրկեալ յինքն

թարշամի. երկիւղ 'ի փաստուէ 'ի վերայ հաս-
սելոյ կծկի, և համարձակուի ընդդէմ վտան-
գաց կանգնի. այլ բարկութիւն առ 'ի վրէժ բոր-
բոքի յարեան զսրտիւ։

Օ այսոսիկ կիրս եռուր ինձ իբր զարդ զօրու-
թիւն, իսկ ես զի՞նչ. խանդաղեցի և վատթա-
րեցի զ�։ Օ՜ սոսա ընձեռեցեր ինձ իբր ըզ-
գեստ պահպանութիւն կենաց. իսկ ես մոլեգ-
նաբար պատառեցի։ Օ՜ սոսին յանձնեցեր ինձ
իբր զէն պաշտպանութիւն անձինս. իսկ ես ընդ-
դէմ իմ վարեցի և խորտակեցի։

Դարձեալ և այլ ինն պատկառ դժնդակ խե-
լագարութիւն. զի փոխանակ լիսկապէս բարին
յուսալոյ՝ յանարգ և յանպիտան բարեաց ե-
բեւոյթ հաստատիլ յօժարեցայ. և փոխանակ
յանարժան և յանպատկան իրաց յուսահատե-
լոյ, յառաքինական վարուց և 'ի ներողամիտ լի-
նելոյ՝ զսիրտ իմ զատանել խորհեցայ։ Փոխա-
նակ 'ի մեղաց և յառաթիչ վտանգաւորաց երկն-
չելոյ, 'ի վայելուչ և յանդորր շաւղաց կծկեալ
նահանջեցայ. և փոխանակ ընդդէմ ախտա-
գրգիռ յարուցմանց համարձակելոյ՝ 'ի յոխոր-
տալոյ նոցին կքրեալ վատացայ. և փոխանակ
ընդդէմ հոգեկորոյս խլրտմանց բարկանալոյ՝
տարապարտ առ 'ի նոցունց խռովեցայ և այլայ-
լեցայ, ցնորեցայ և 'ի նանիր ջորացայ։

Զ. Ոչ ապաքէն արժան էր ինձ, ըստ դասու
կարգաց այսոցիկ հնգեցունց կրիցս՝ 'ի քեզ
միայն յուսալ, և յինէն յուսահատիլ. յանձինս
կործանմանմէ երկնչիլ, և զդաժանութիւն գազա-
նական շարժմանց համարձակութիւն վանել. և
ժէ

առաւել ևս ընդդէմ լերբ կարեաց ցասմամբ զայրանալ։ Լսկ ես յիս և 'ի սնոտիս խաբսխեալ զյոյս իմ, զյուսահատուէն կոթող արդեամբք արձանացուցի. և յաներկիւղ ընթացս գահաւիժեցայ. և անձնապատան յանդգնեալ յանդէպս համարձակեցայ. ևս և 'ի հուր բարկութեանն վառեալ այրեցայ և տոչորեցայ։

Լ.ս արդ զո՞ կացուցից առաջի 'ի յանդիմանել զլիմարութիւնս իմ, և 'ի դատափետել զնակուտն անզգամութիւն իմոյ. և կամ զո՞ կոչեցից 'ի լալ զտուգանս իմ և յողբալ զվայրավատին ցնդումն իմ։ Լ.ս ո՞ խօսեցայց, կամ առ ո՞ բողոքեցից. ես եմ որ յանցեալ և պարտաւոր գտայ. վասն որոյ և ես ինձէն 'ի խղճէ հարեալ ստիպիմ ինքնին նշաւակել զիս. և 'ի գումարս անբաւնից ակնարկելով անձամբ զանձն քարկոծեցից։ Պատշանք 'ի կոպարի տածեն զայսոսիկ կիրս. անասունք և թռչունք 'ի չափու սահմանաւորին 'ի սոսին, և եթէ իւիք զանցանիցեն՝ գանիւք կամ հնարիւք սանձին և ուղղին։ Լսկ ես վատթար քան զտարացոյցսդ՝ յանմի և հանապազ զարտուղիմ, և 'ի խրատիլս իմ՝ առաւել ևս խոտորիմ և խեղանթիւրիմ։

Դ. Պարտ էր ինձ 'ի ձեռն առաքինութեան արիութեան ըստ բազմապատիկ մասանց նորին զՏնգեցուցս կրիցս այսոցիկ զամբարձմունս յարդարել, և յարմարել. իսկ ես համայն առ հակառակն բերայ, ընդ հակառակն հակեցայ, զհակառակն ընթացայ, 'ի հակառակն չոճառացայ։ Լ.ս ահա 'ի կշռելս իմ զայս ամենայն՝ ամաչեմ հայիլ յիս. և զորս տակաւ 'ի նեղբս նշմարեմ, արժէ

տայայտել արտաքս չլսրեմ և չիշեմ։
Բեզ միայն ածդ ածց յանդիմանն առաջի եդեալ
զսոսին՝ կողկողագինս պաղատիմ. դու ինքն
քննեա՛, դու ինքն փորձեա՛. դու ինքն պարզեա՛.
դու ինքն նորոգեա՛. դու ինքն կազդուրեցո՛, և կարողացո՛։ Այնուհետև յիս աղաչեմ
զզօրութիւն հնորհաց քոց. և մանաւորեա՛ հիգացելոյս 'ի պարգևաց հոգւոյդ սրբոյ՝ զինաւորիլ և
հանդիսաւորիլ սովին այսու առաքինութիւնք՝ յարդիւնս գործոց բարգաւաճումն 'ի բարեկարգութեան
ցասմնականս կրից։

Ո՛վ Թէ քանի՛ երանաւէտ կենաց կցորդ դտանեի յանդորրանալս 'ի սմին յայսմիկ վայելչավիճակ ժառանգութիւն. և 'ի սոյն յայս 'ի կայս
հանդստեան խաղաղական ոգւով կեալ, և բերկրալից խնդութիւն ցնծալ առաջի փառաց Թագաւորութիւնքս, և յամի փառաւորել և մեծացուցանել զամենակալ հորութիւնքս։

ԽԱ.

Վ էցերորդ կիւրակէ զկնի հոգեգալստեան։

Բարեկենդան վարդավառի։

Բարեխառնութիւն։

Ա՛ խորս ծովու ծփական ալեաց բռնութիւնք
ախտից տարուբերեալ և տատանեալ
տուայտիմ. երևիմ առ սակաւ մի յերեսս ջուրց
խաղաղուն. և անդրէն առ նմին սուզեալ յան-

գունդս յատակիմ։ Ա տանգիմ և տագնապիմ, և առ ամենաբարի Տէրդ աղաղակել պատկառիմ. զի ես ինքնին ընկեցի զիս յայսպիսի պըղտոյտս թշուառութեան։

Ա՛յս դարձել՝ յայլ իմն տարաբոյոյ տարայ. քանզի ես ինձէն կործանեցի զՀոգեակաստյարմարուն շինուածոյ Հոգւոյս, ես ինքն անձամբ անձին խաթարեցի և յաւէր դարձուցի զբերկրաբար պարարիզիս վայելչուն։ Ա՛յլ զոր դուն շինեցեր՝ ես կործանեցի. և զոր դուն գեղաստ՝ նեցեր՝ ես եղծի. և զոր դուն զարդարեցեր՝ ես մերկացուցի։

Ա՛ ելցէքումբք շարամանեալ շարժուածք ցանկանն մասինս կրկի՝ ցանկ Հոգւոյս յօրինեցեր, կրկին դիմաւորուած, (ցաւ) սիրոյ և ատելութեան, ըղձանաց և խորշանաց, բերկրուն և տրտմուն։ Ա՛հաբէ, եթէ զսատս ՚ի կանոնաւոր չափու կարգաց օրինաց քոց յառաքինութի բարեխառնութեան պատրաստեալ եր իմ, յոր բարձրութի երջանկանայի՝ 'ի Հոգիս։ Ա՛յթէ փոխանակ գնանրութեան մտատիս սիրելոյ՝ 'ի պատուիրանս քո յարեի. եթէ փոխանակ զլանն ատելոյ՝ զբարի վարուք փարեի. եթէ փոխանակ ունայնութեանց ըղձանալոյ՝ յառաքինութիս փութայի. եթէ փոխանակ յախտս համակելոյ՝ 'ի ժանտութենէ նոյ խորշեի. եթէ փոխանակ յանպատեհս բերկրելոյ՝ յանծպաշտուն զուարճանայի. եթէ փոխանակ ՚ի ձախորդութիս տրտմելոյ՝ ՚ի անօրինութիս պժգայի։ Ա՛ղդարև յիրաւի 'ի վիճակ բարեմասնութեան ցնծայի, և ՚ի որդիս լուսոյ պարեի։

Ճ. Ասկ ես՝ ներշկանս իմն դիմադրեցի. զայն

սէր՝ զոր առ բարին հաստատեցեր յիս՝ առ'ի թիւրն կորացուցի, և զատելութեն յոռութիւն ընդեմ-ալ ուշ սրբութեանն կանգնեցի։ Օ ընդանացս յարձակումն՝ առ հրաժարելիս թողացուցի, և զխորշանաց խոտորումն յանձնառելեաց կիրս՝'ի կիր արկի։ Օ բերկրութեն ծաղիկ խորշակաւ չարին թառամեցուցի, և զարտմութիւս 'ի ներքս 'ի յիս տնկեցի։

Ուռոգեցի մեղք, տածեցի անօրէնութիւն, մնուցի անգիտութիւն, պարծեցի յիմարութիւն, պարարեցի նենգութիւն, և տարբացուցի չարութիւն։ Լաւ զնմ զառ 'ի քէն յանկեալ կարդ կրիցս վեր 'ի վայր տապալեցի. և յառաւելն բերեալ՝ զնմ միանգամայն յախտաւորուելս փոխարկելով նեղիչս և դահիճս անձին իմոյ կացուցի։ Լաւ աւասիկ

Յոգիս ապաստան տանջիմ և նուաղիմ։

Լսել արդ եթէ ամենաբաշխ ձեռինդ տարածմամբ բացեալ զգանձ անսիաղելի շնորհաց քոց՝ հեղուլ անտի հաճեսցիս յիս կաթիլ մի միայն՝ Ոչ ամենաբեր հոգի ՀԱՅ. զբարաւորեալ և իմ, և բուռն հարեալ զառաքինութիւն բարեխառնութեանդ՝ բարեպատեհ յարդարել մարթացայց զնմ. և ըստ զանազան մասանց սորին զանազան շարժութեցս այսոցիկ հնարս հայթայթեցից։

Գ. Դիւրին յաջողի հոգացելոյս զսոսին զնմ ըստ սմին սակի յարմարաւորել, եթէ ցուցցես ինձ զբաղմազեղ նպաստիցդ զգնականութիւն, ՈՒԾ ԻՄ ՀՈԳԻ։ Յոյց աղաչեմ, և տուր աղերսեմ. ընկալ զուխտ փափաքանացս, և կալ զկարկամեալ ձեռն գօսացելոյս։ Ոչ հաստիչդ համայնից և լիացուցիչդ լուսեղ գոյից՝ ՈՒԾ ՀՈԳԻ, կրկին

պաղատիմ. զու ինքն ամենատարած թեւօքդ տեսչութիւն տածո՛ զնուազելս. և ամենահաս այցելութիւնքդ քով հնարաւորեա՛ յիս զամենաձարտար հնարս։ նամոյ քոյ, սկիզբն հիմնաւորել անխոտորելն և անանենգաւոր մտօք սմին ոյսմ գեղեցիկ յօրինուածոյ, 'ի սմին զարգանալ, և 'ի սոյն կատարիլ. և յամենայնի անգոսրրավայել կենօք զհաճոյս քո խնդրելով քեզ հաճոյանալ և 'ի քեզ պանծալ. քեզ նուիրիլ, և քեզ եղողիդ 'ի հօրէ և յորդւոյ երգել զօրհնուն և զփառս յամի և յամ՝ ժամ։

ԽՐ

Յօն պապանային։

ՆՈ. ուչակաւ և փողով հնչեցուցին մարգարէից կանխագուշակ աւետաւորութիւնք զաւուրս մեծի պայծառութե՛ի պատիւ սո՛ղ եկեղեցւոյ։ Լաստիկ էիդ հրամանաւ տպաւորեաց զսոյն մովսէս, յօրինեալ զնախատիպար սորուն կերտուածն, պատեալ ոսկւով սուրբերայ ներքոյ և արտաքոյ։ Բանզի արդարև շքեղապատեալ պահի՝ զբ եկեղեցի ոսկւով սո՛ւվ. 'ի ներքոյ ձուլեալ 'ի ձեռն սրբարար շնորհաց, և արտաքոյ օծեալ 'ի ձեռն ձրիատուր պարգևաց։

'Ի տապանակի աստ իբր գաւազան սքանչելապէս լուսածագի կենարար խաչ քո՝ ծաղկեալ զօրութիւնք նշանաց և արուեստից. կատարիչ սրբութեց և տրիչ կարգաց. սարսիչ սանդարամե-

տականաց և հալածիչ այսականաց. անհետա-
յուցիչ դիւթականաց և տապալիչ ցնորական
ցնդմանց։

Ի տապանակի աստ տախտակք կտակարանաց,
ԵԲԲ. Ա. 4. անխորտակելի տիրակերտ հաստա-
ուճածք ճծայնոյդ աւանդիս և օրինաց, անա-
ղարտելի ճշմարտութեց և անստերիւր կրթական
ուսմանց, գերամբարձ քարոզութեց և ցօղացրն-
ցուղ ողջամիտ վարդապետութեց։

Ի տապանակի աստ բուրվառ ինքնավառ աղօ-
թիս և մաղթանաց հրաբուրեան վերընծայու-
թեց. երկնաւորացդ հանդիսատիպ օրհնառաք
նուիագումն համբուրելի, և անմարմնական խրմ
բիս գովաբանողաց անլռելի պաշտամանց խնկա-
պարար նուիրումն սիրալի։ Ի տապանակի աստ
սափոր ոսկեղէն, անապական և աննենգելի հա-
ւատոյս մերոյ լրականութիւն. յորում պաշտի և
երկրպագի ամենաճաշակ անմահական մանա-
նայս կենդանի և կենդանացուցիչ. անծախ ի
ճաշակել, և անեղծ ի շօշափել, անկտա ի
քննել և անճառ ի պատմել։

Զ. Սա ինքն համեմատագումամբ եկեղեցի քո՝ տա-
պանակ իմանալի, միանգամայն և զգայնոցս
երևելի. յանփուտ փայտէ, յանեղծական ճիշ-
մարտութէ ոգի հաւատոյս մերոյ և յանապական
եօթնաջիւր խորհրդոց աքանչելակերտել քրով
ելիւք և սրօքէիւք պարագաքոլ Ը քաւութեան ծած-
կութիւն ի լրումն կատարելութեան. և յինքն բոլո-
բեալ պսակէ միահամուռ զհաւատացեալս ի
քեզ։ Յորում միաբան և միակրօն ցնծալով
քնեանքս՝ յամենայնի և յամենայն ժամ օրհ-

նեմք և փառաւորեմք զքեզ։

Սովաւ հերձեալ և պատառեալ զյորդանան, 'ի մահ մահայուցչիդ մահու մկրտելով, ել ցա-մաքաչնաց մաքրութիւն սրբուն յայնկոյս անցա-նեմք նորոգուն կենաց, և կործանեալ տապա-լեմք զբռնութիւն դժոխայնոյն երիքովի փողովք քոյինատուր պատգամացդ. և հարկանելով ըզ-յարձակմունս մեղաց, և զդաժանութիւն ազգի ազգի պիտիոյ չարութիւն, արագեմք ժամանել և ժառանգել զվայելչութիւն վերնայնոյդ եկե-ղեցւոյ՝ անկիր անտաժան յաղթանակողի։

Այն սա 'ի հնումն անդ նկարագրեաց յինքեան պտիպ նորոյս. և 'ի նորումս ցուցաւ օրինակ երկ-նայնոյ խորանին։ 'Ի հնումն առաջնորդ եղև սմա յեսու նաւէան. 'ի նորումս դուռ ինքն յս բանդ ՝ած։ 'Ի հնումն կործանեաց զքաղաքս և զլաւգինս. 'ի նորումս զդժոխոյդ դրունս, և

Ա. զանդարամեռտականաց բռնութիւս։

Ք. յս տապանակ ամենահաստ ձեռինդ կա-ռուցեալ՝ ապրեցուցիչ դոլ ցուցաւ 'ի հարուա-ծոց և յարկածից չարաց և 'ի վտանգիչ կենաց առելից պաշարողաց և պատսպարան ամի որ մեր-ձին 'ի սա և հանդչին ել հովանեաւ սր։ Որ ե-ձեցան առ սա 'ի սկզբան և չարակամք եղեմաս մնդ և սուտն սիմն, և կորեան. մերձեցան և նենդամիտք և եղծան, բասիլիոս ժանտ և ա-բիոս չար և որ 'ի կարգի. մերձեցան և մոլիք և անարգեցան, վաղաշոտք և բամբասողք։

Ա.յլ որ անդորրացան յանենդելի երաշխաւո-րութիւն սորա, և հովուեցան ել հովանաւորութ-վարդապետուն սորին, բարեպարիշտ բաղմութ

բոյլք՝ ուղևորելոյն անսայթաք. և որ աշխատ
եղեն 'ի շինուն սորա, և 'ի վայելչութեն գեղոյ
սորին՝ առաքելոց դասք և հետևողաց նոցին ե-
բամք, բարձրացան և փառաւորեցան։

Այս տապանակ սրբութեն՝ զոր եկեղեցի նախա-
նկար լինն խորհրդով առաջնորդ եղև 'ի յուս ա-
նապատի երկոտասան աղգացն իսրայելի։ Այս-
'ի լման ժամանակաց կանգնեալ հաստեցաւ
սիւն ուղղաբերձ բարձրութեն և վեմ վստահըն-
տեալ ապաւինուն։ Այս որ միանգամ հարաւ ը-
սա՝ խորտակեցաւ. իսկ որ շինեցաւ 'ի սմա՝ նո-
րոգեցաւ և կազդուրեցաւ, ոգիացաւ և կեն-
դանացաւ։

Ընդ սոսին և ես անպիտան և խոտան, անար-
ժան և տաժան ծառայս 'ի սոյն ապաստանեալ
և խաղաղացեալ՝ ցնծալից բերկրիմ, և առ քեզ
առ փրկիչդ իմ մեծայոյս դիմեալ խանդաղա-
տանօք պաղատիմ՝ պահել և պատսպարել զիս
անսասան յամրուն սորա. և ընդունիլ 'ի վերը-
նային քո յիմանալիդ տապանակ. ուր ուխտե-
ցեր ժամանեցուցանել զիս. յոր և ակնունիմ
հասանել, և կատարել անդ զուխտ իմ, զոր
խոստացան քեզ շրթունք իմ, օրհնել զքեզ
յա, և փառաւորել ընդ ամ յաւիտեանս։

ԽԳ.

Վարդավառ։

Բ. յանձնարարութիւն գն։

Ա. Որ եիր յանեղական ինքնուն՝ բանդ ՝ն՝ծ, եակից հօր և փառակից ՝ն՝ը հոգւոյդ • անայլայլելիդ յանպարագիր եուն՝ և, անժամանակդ և անքանակդ յանեղր յաւիտենականութեն, յեղական բնուես խոնարհեալ՝ ի ժամանակի՝ յանպայմանս այլակերպեցար յարգանդն կուսին, ոչ առ երևոյթս, և ոչ առ վայր մի, այլ ՀՀմարտապէս, և նոյն յաւիտեան։

Ա. Որ զերկինս և զերկիր լնուս, և զամ՝ քլաւ չափեա՝ հին աւուրցդ, մերումն կերպիւ՝ ի մուր անբանիկ բազմեալ, իբր տղայ այլակերպ ցուցար, ոչ առ աջօք պատրողանս, այլ իսկապէս և տիրապէս։

Ա. Որ Թագաւորդ ես փառաց, և ՝ն՝մի կենդանարար, անարդաբար՝ ի խաչին բևեռելով և՝ ի նմին մեռանելով, յայլակերպս երևեցար՝ ի լերինն դողգոթա՝ ոչ կարծեօք, այլ իրօք։

Ա. Որ առաւել ևս հիացուցիչն է, դու որ կերպարանօք մարդկայինս բնուն՝ ՝ի մարմնի շօշափեցար, ՝ի կարդել քում զխորհուրդ մարմնոյ և արեան քո՝ ի վերնատան, ՝ն՝մի՛ յայլաձև տիպար տեսար՝ ի նմին, ոչ կեղծմամբ և ոչ եղծմամբ; այլ ստուգութ • յորում և միշտ և յամ տեղիս այլափոխ տեսանեմք զանսիսխեալդ ը

ամպով սրբազան տեսակաց. և զոր Հաց և բաժակ նշմարեմք, որդի՜ այ՜ ՀՀ նշմարիտ դաւանեմք ը՜ եկեղեցւոյ քո սո՜ր։

Օ ի՜նչ ապա յաւուրս յայսմիկ. դու որ՝ ի մահկանացու և՝ ի չարչարելի մարմնի շրջելիր՝ ի վերերկրի՝ իբր անմահաւանակ, ո՜չ մեծուրՀ ահեղացեալ առաջի ազգաց, և ո՜չ զօրուրՀ աքանչացեալ յաչս հրեշտակաց, կամելով յայտնի երևեցուցանել՝ զոր յանյայտս՝ ի ներքոյ պարագրեիր, ելեալ՝ ի Թաբորական լեառն ընդ երիս քոյդ սիրելիս, զեղմամբ փառաց քոց, սփռեալ զՀաւատագայԹուՀն լուսոյ քո ներքնոյ՝ անՀառաբար պայծառակերպեցար յայլ ի՜մն կերպարան արեգակնային երևեալ՝ ի սմին։

Պանդի իւղովդ ուրախուՀ՝ որով՝ ՀՀ օծար՝ այսօր վառեցար. նշուլիւքդ երանուՀ՝ որով կնքեցար՝ այսօր ծանուցար. Հոգւովդ սրբ՝ որով վարեցար՝ այսօր սիրացար. արքայուրՀդ երկնից՝ որով վերացար, այսօր վկայեցար։

Ը. Ա՞վ Թէ քանի՜ երանի՜ էր ինՁ բարձրանալ այսօր՝ ի Թաբորականդ բարձրուրՀ. այլ շատ լաւ է ինՁ գէԹ՝ ի ստորէ կալ և՝ ի հեռուստ նկատեալ զբարեբանեալդ՝ ի մարմնի։ Մեծ լաւ էր լսել զքաղցրաբարբառ ձայն վկայուԹՀ Հօրդ բարձրելոյ. դա է որդի իմ՝ սիրելի, Թերևս սա վիճ լինիր ինՁ մանակից դառնիլ և որդեգրուԹեանս շնորՀի։

Տեսին արդարև և լուՀան երանելի աշակերտք պետրոս և որդիքն զեբեդեայ. տեսին և զմայլեցան. լուՀան և աքանչացան։ ՓուԹաց եկին և մոլեան. եՀաս և եղեա՝ մին՝ ի մեռելոց, և

միան 'ի կենդանեաց. վկայեալ և յուցեալ ըզ-
քեզ՝ կենդանեաց և մեռելոց տէր։ Հաւատիր ե-
ցան սորա ոչ իբր զննակիանք, այլ իբր խորհրդ-
ական խորոցդ, և խօսեին զելիցդ տնօրէնու-
թեաց՝ զոր կատարելոց էիր յերուսաղէմ։
Յայլ է այլոյ փոխեցար պետրոս. այլափոխե-
ցան և այլք է նմա. յափշտակեցան յարբեցուն
հոգւոյ։ Լու զոր նշմարեին՝ 'ի նոյն համայն
ապշէին. և զխորհուրդն մեծ՝ զոր յայտնի ոչ
իմանային՝ երից տաղաւարացն յօրինմամբ դա-
ւանէին։
Ընդ սոսին և ըստ սոցին դաւանիմ և ես զան-
հասուն խորհրդոյ տնինանաթ երրորդութեդ, և
զՀնմարտուն երկրպագելի մարդեղութեդ։ Ընդ
մովսէսի և ընդ եղիայի բարբառիմ զբանչե-
լազօր զելիցդ, որովք կատարեցեր զիրկութեն
մեր։ Մովսէս օրինակ յարացուցի երևեացի
հաստատութեն կարգաց և կրօնից քահանցս. և
եղիա կացցէ տիպ տարացուցի ուղղութեն գոր-
ծոց։ Վէմն հաւատոյ վիմիդ կենդանւոյ՝ նե-
ցուկ հաւատոյ իմոյ. և յակոբոս ընտրեալ՝ ա-
ւազան յուսոյ. և յովհաննէս սիրելի՝ տիպար
անՀաւատ սիրոյ։
Դ. Լու արդ աղաչեմ զքեզ, ծագեա խաւարե-
ալս զիմաստութեդ ՀաՀանչութեն, Հանաչել ան-
երկբայելի հաւատով զխորհուրդ երկրպագե-
լի պայծառակերպութեանդ, ոչ լոյսդ անտես-
զելի։ Հաստեա յիս 'ի տատանեալս հոգւով
զքանդ ազդու՝ յարիլ անՀանջելի յուսով 'ի
շնորհս փրկութեն քո. ոչ յոյսդ անսասանելի։
Պառեա և բորբոքեա զսիրտ սառուցելոյս՝ սրբե-

բալն և ՝ի՛ն հրով քո, միանալ ընդ քեզ անմեկ-
նելի սիրով, ով սերդ անչիջանելի։

Ա. Յրեա՛ և ջնջեա՛ զամ ախտաւորուն աղտեղե-
լոյս։ Պաքրեա՛ և սրբեա՛ զամ յանցաւորութի՛ն
թշուառացելոյս։ Լորացո՛ և զօրացո՛ զկար զ-
ռութե՛ տկարացելոյս. բերկրեցո՛ և զուարճացո՛
համայն զկեանս իմ՝ մեծի աւուրս ամենասպ-
տիկ հնորհի՛։

Ա. Յլակերպեա՛'ի հոգիս յելանելս իմ'ի թա-
ւոր վերին խոկմանց. յորում միտք իմ և կամք
հանգոյն մտաւեսի և եղիսի խօսեսցին զելիցդ։
Լ՝ զօրուն՛ք իմ ընդ պետրոսի և ընդ որդւոցն
զբեթեայ բարբառեսցին զաքանչելիս քո. և
՝ամ ոսկերք իմ ասասցեն. ՝ո՛ ո՛նման ե՞ քեզ։
Ո՞վ փարելի այլակերպուն՝ս. քան զոր չկամիմ
ունել'ի մարմնի գանձ լի և ցանկալի։ Լցէ՞ ար-
դեաք զի և յելանելս իմ'ի կենաց աստի ժամա-
նեցից և մտից յայլ ինն այլակերպուն՝ յաւիտե-
նական, զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուա՛ւ,
և'ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ։ Լ՝ և'ի նմին յայնմ
անձաւելի այլակերպուն՝ փառաւորեցից զփա-
ռաւորեալդ ընդ հօր և ընդ սո՛ի հոգւոյդ յա-
ւիտեան։

ԽԴ

Առաջին կիւրակէ զկնի վարդավառի։

Խոնարհութեան։

Ասոնարհեցո՛ւր զուն ինքդ առ խոնարհէլս ամենապատկառ, լուր ինձ և ընկալ զաղաչանս իմ, և կատարեա՛ զինդրուածս սրտի իմոյ։ Մի՛է խնդրեմ 'ի քէն մեծ ինչ, այլ որ դրի իբր ոչինչ։ Զմի զայս խնդրեմ և զսոյն աղաչեմ՝ բնակիլ յիս խոնարհութեանդ շնորհիդ, և նովաւ բնակեցուցանել զՏոգի քո 'ի հոգիս, և հանդուցանել 'ի նմին զսէր քո. քանզի դու 'ի խոնարհս և եթ բնակիլ հաճիս։

Ամէն ես բնաւին 'ի բացէ յայսմ առաքինութենէ տեսանելով զիս, և զսոյն յինէն խսպառ հեռի նշմարելով՝ տխրելով տխրիմ և յոգւոց ելանեմ։ Այլ զի մերձիլ 'ի նոյն անձամբ անձին չեմ բաւական, բաւականութեանդ քում կարօտիմ. և զոր յինէն անհնարին դատիմ՝ քեզ հնարաւոր տեսանելով քաջալերիմ։ Այս զի զոր փառաց՝ այսր առաքինութեանդ տարացոյց ունելով, 'ի սոյն բերիլ վստահիմ, և 'ի սոյն կերպարանիլ փաքիմ։

Պաքէն դու ինքն բարձրեալ որ 'ի բարձրութենէ խոնարհելով՝ ցուցեր և ինձ խոնարհիլ, ոչ 'ի բարձրութենէ ինչ՝ այլ 'ի ցածութենէ և 'ի ստորեւ։ Դու ինքն աբքայ երկնաւոր՝ յերկնից 'ի վերուստ 'ի ստորինս յայս ինքեալ վայր՝ ուսուցեր և ինձ

զիջանիլ ոչ եթէ յերկնից ; այլ յերկրէ. զի ես
յերկրէ ասասի եմ, և յերկրէ յերկիր ունիմ
սուզանիլ։ Զոր ամենապայծառ արփիդ լուսա-
ւոր՝ 'ի հողեղէնս թափեալ՝ միացար և նսեմա-
ցար. այլ ես զիջեալս լոյս, և առկայծեալս
պատրոյկ՝ պարուրիմ ինքնին խաւարիլ։
Լախատինք մեծ է տեսանել զՇորդ փառաց յա-
նարգուն վայրաբերիլ, և ինձ 'ի պատիճ և առ-
'ի փառս վերաբաղմիլ։ Զ՚մեթ անհնարին պա-
տէ զինև՝ յակնարկելս իմ յանսահմանն մեծուն
արարչիդ 'ի փոքրկութիւն սահմանաւորիլ, և ինձ
անարգեցեալս մեծամտիլ և 'ի մեծուն մոլեգ-
նիլ։ Զատափեսեալ՝'ի խղճի մտաց ամենեմ'ի
Ճանաչելս իմ թէ երկնաւոր վայելչութիդ փասն
իմ նոճաստացար. և ինքը նոճաստս ես համար-
ձակիցիմ'ի շքեղութիւն փոնդալ։
Ը. Զոր նստիսդ'ի քրովբէս՝ 'ի զիջանելով'ի խոնար-
հութիւն՝ սքանչելի ինն ցուցեր զխոնարհութիւնն
պատուականութիւն. և յայտնեցեր սկիզբն գոլ
զսա առաքինութեաց ամի. զի թէ սոյն սա չէր
այսպիսի՝ դու ինքն ոչ խոնարհէիր 'ի մարդկու-
թիւն. խոնարհելովդ մարդացար, և մարդանա-
լովդ խոնարհեցար. մարդանալդ եղև այն ինչ՝
յոր խոնարհեցար. և խոնարհիլդ եղև այն ինչ՝
որով մարդացար. և նովին ցուցեր զսերդ 'ի խո-
նարհութիւն պայման, և զխոնարհութիդ 'ի սիրոյ
սահման։
Զ՚մեթ չէր այս առաքինութիւն ուղևորիչ կառա-
վար կենաց բարելաւուն, ոչ տայիր զանձն քո
սմին օրինակ ընդ հետքուն, յասելդ. * ուսարուք
յինէն, զի հեղ եմ և խոնարհ սրտիւ ॥. Մաթ.

ԺԲ. 29։ Լսեա՛ ոչ իսկ 'ի սոյն յորդորս մատչելոյն մարգարէիցն գոչմունք և առաքելոյ պատգամք ասելով. * խոնարհեցարուք առաջի տն ։ յակ. Դ. 10։ Արասջ ևս կարդացին՝ թէ սովաւ ևեթ մարթ է մարդոյ բարձրանալ առաջի քո, և թէ սովաւ յաջողի վերանալ 'ի Ճոխութիւն հոգևորականն, և 'ի փառս աքքայութիւն։

Ո՞վ բարձրացոյց զորհնեալն 'ի կանայս յայն անհաս բարձրուն՝ յոր ոչ ոք 'ի ստեղծուածոց հպաւորիլ կարաց, եթէ ոչ սոյն այս առաքինուն։ Ը որում և ինքն վկայեաց յասելն. * զի հայեցաւ 'ի խոնարհուն աղախնոյ իւրոյ ։ Ո՞վ հրաշացոյց զայնչափ ծանր բաղմութիւն, և նոքօք պանծացոյց զերկինս. բայց միայն այս առաքինութիւն սխրալի։ Որչափ որք սովաւ զիջան՝ այնչափ 'ի վեր ամբարձան։

Այս որ աքանչելին է՝ կրկնեցեալ. ո՞ ապրեցոյց զորդիս մարդկան 'ի ծառայութենէ սանդարամետաւ կանայ և 'ի պարտաւորութենէ անիծիլ, եթէ ոչ այսր առաքինութեան ուժգնութիւն։ զի սովաւ խոնարհեալ 'ի մեզ որդիդ ՝՝՝

խոնարհութիւն, և դատելի ինչ այլ ոչ մնաց 'ի քեզ յայսմ չափու 'ի չափել՝ թէ արդեօք 'ի՞նչք պակաս իցէ։ Զ.ինքան գերապանծ ցուցաւ այս առաքինութիւն յաչս բարձրելոյդ՝ մինչև զարդարել սովաւ զնմ անօրինական գործս քո, և սո-

վին փայլեցուցանել զկեանս քո։

Յարգոյ ինն է սա և առ արտաքս և պաճուճանք գեղեցիկ. մինչև հպարտութիւն անգամ սովաւ փութալ պանելի և շքեղապատիլ, սին իրի և որդիք մարդկան առ հնարկ 'ի հպարտանալն անդ՝ գուն գործեն զհպարտուն իւրեանց սովաւ իբր ոսկեաւ օծանել, և զանձինս 'ի խոնարհութիւն երևեցուցանել։ Զ.ի նա ինքն ստատանայ՝ որ առ ոաջին ամբարտաւանն է՝ սովաւ նկարի ծածկիլ

առ արտաքս։

Զ.ռանց այսր առաքինութիւն գտեալ զոք բելիա բայ՝ տապալել զնա և ցրուէ. իսկ 'ի տեսանելն զմարդ 'ի սին՝ տապալի և ցրուի. և որ հիանալեն է՝ նա ինքն որ ոչ իւիք նուաձի, սովաւ մաշի և ցնդի։ Զ.ռանց այսր առաքինուն ընդունայն ընթանայ հսկայ։ Զ.ռանց սը 'ի զուր արօրադրէ այր առաքինի։ Զ.ռանց սորա որչափ ինչ շահի մարդ հոգևոր՝ բացերախ անօթով ալիւր ածէ ընդդէմ հողմոյ։ Զ.ռանց սորա՝ բարձրութիւն առաքինական կենաց շինուած է 'ի վեր աւազոյ։ Զ.ռանց սորա կեղծուպատիր շնորհք է առաքինուն, և մոտրիպան վաստակ է բարեգործութիւն։ Զ.ռանց սորա նանրաթոր քիրան է ո՛ և և ցէ ձգնութիւն, և խաբէական աշխատուն է ո՛ և ևցէ բարեպաշտութիւն։ Զ.ռանց սը սուտ է սէր, և սուտ՝ յուսոյ վստահութիւն. փոքր է մեծագոր-

ծուն, և նանիր՝ ուսումնականուն։ Բ. ուանց սէր երազ է՝ աղօթիկ տքնութիւն. երազ է և պահոց անդութիւն։ Բ. ուանց սորա անտակ նաւ է ողջախոհութիւն. և անպարան խարիսխ է զգաստուն։ Յոմար առաւելու արդարուն մեր քան զդպրաց և զփարիսեցւոց։ Յոմար որոշի քաղաքավարութիւն մեր 'ի վարուց ինքնասպանծ փիլիսոփայից։ Յոմար գերազանցէ կեանք մեր քան զկեանս իմաստնոց աշխարհի։ Սա բուրումն է անուշութեան խնկոց եդելոց 'ի վէր սիրոյդ ՅՍ։ Սա է քաղցրութիւն հոգեձաշակ նիւթոց ծաբելոց 'ի ներգործութիւս առաքինութեանց։ Սա է հնչումն բերկրական ձայնի ոլորելոյ 'ի նուագարանս բանից բերանոյ։

Բ. յս այն առաքինութի է՝ որ զսրամտութիւն բարկութեան ամենակալիդ փնստուցանէ. և վերժխնդիր արդարութեան քում ախոյեան երանէ և հանգուցանէ։ Բ. յս այն ձգողականծ զօրութի է՝ որ ըզքաղցրութեան սիրոյ ամենաբարերարիդ առ մարդիկ խոնարհեցուցանէ. և զհոգիս հոլանծնելոց անվայրափակ էիդ վայելչութիւն հոյակապ պալատ յօրինէ։ Բ. յս է արդարև անյատակ խորութիւն առաքինութեան՝ որ ոչ նշմարի. և 'ի մէջ առաքինութեանց՝ ամի անձառելի քարոզի։

Բ. յլ ամ առաքինութիք ասին և լսին, և 'ի միտս կերպարանին. իսկ ձշմարիտ խոնարհութի ոչ առելով տպաւորի և ոչ լսելով իմանի։ Օ. այլ առաքինութիս գիտեմք, և 'ի կատարելն զգամք. զայսր առաքինութեան անուն լսեմք, և զիսկն ոչ գիտեմք։ Բ. յսր առաքինութեան ներգործութիւն ոչ այն է՝ զոր 'ի կատարելն նշմարեմք. այլ այն՝

զոր յառնելն ոչ խմանամք. եթէ խմանամք, այն ոչ է 'ի մեզ առաքինութեան խոնարհութիւն, այլ ստուերք նոր։ Եթէ 'ի խոնարհիլ խմաւմ խմանամ թէ խոնարհիմ՝ այն ոչ է խոնարհիլ, այլ՝ 'ի մտոտիս ցնդիլ։

Ոչ եմ խոնարհ՝ ցորչափ ճանաչեմ զիս խոնարհ։ Եթէ յիս տեսանեմ զխոնարհութիւն, այն ոչ է ինքն խոնարհութիւն՝ այլ պատկեր նորին, և ես ինքն զուրկ գտանիմ 'ի խոնարհութենէ, և խոնարհութիւն իմ մեռեալ համարի։ Երկեն այն վայրի՝ որ 'ի լերինս բազմաւորի՝ եթէ տեսցէ զինքն կենդանի՝ անդէն մեռանի. սին իրի և յրմնելն զջուր՝ փակէ զաչս՝ զի մի տեսցէ զերեսս իւր։ Խոնարհն եթէ տեսցէ զինքն խոնարհ՝ ոչ ևս է, այլ մեռանի 'ի նմին։

Դ. Զոր ստացումն այլոց առաքինութեաց բազում իրաց կարօտիմք, և բազում ջանից զհետ պրնդիմք. իսկ առ ստացումն այսր առաքինութեան ոչ հնարք է պիտոյ, և ոչ վաստակ ինչ է գործոյ. շատ՝ զմեզ 'ի մեզ նկատել, և նովին խոնարհիլ։ Զայլ առաքինութիւնս յիրս իրս տեսանեմք թէ՝ և չգտանեմք. զսա 'ի մեզ գտանեմք և ոչ տեսանեմք։ Ոչ ուստեք ստիպիմք որոնել, այլ միայն 'ի մեզ ինքեանս պարտանել. զմեզ չափել և 'ի մեզ զնջանել. մինչև ոչ ևս տեսանել թէ իցեմք ինչ. այլ ամենևին ոչինչ։ Երբ զայս տիպար ոչինչն գոլոյ՝ եթէ արդարև խոնարհ իցեմք՝ ոչ եթէ 'ի մեզ նկարեմք, այլ այսպիսի գոլ զմեզ ըմբռնեմք. քանզի այսպիսի եմք։

Ասնայն է ճանաչել զիս իշխան կամ թագաւոր՝ եթէ չիցեմ. անմտութիւն է համարիլ զիս փար-

թամ և ձախ, եթէ զուրկ իցեմ. յիմարութիւն է վարկանել զիս իմաստուն կամ զօրաւոր, զի չեմ. տգայական է առդնել զիս առողջ և ուժեղ, եթէ տկար իցեմ կամ հիւանդ. և զոր ինչ այլ ասիցեմ՝ եթէ չիցեմ, խանգար իմն եմ և խելագար ոք։ Ա՚. Ճանաչելս իմ զիս յիմի ունայն և տկար, վատթար և չար, անպիտան և խոտան, ոչ խաբիմ և ոչ ստեմ. զի միշտ այնպիսի եմ, և յամի նոյն եմ։ Ա՚. զի դիւրին է ինձ այսպիսի տեսանել զիս և այսպիսի ճանաչել, դիւրաւ մարթիմ խոնարհիլ յիս. զի ես յիս եմ, և առ իս մերձ եմ. և 'ի նշմարել զիս՝ վիշտ ինչ ոչ կրեմ։

Օ՚ինչ վիշտ իցէ առողջ աչաց զսեաւն սեաւ տեսանել, և զդեղինն դեղին. զի՞նչ դժուարութի իցէ կիրթ ձաշակելեաց որոշել զդառն գոլ դառն, և զքաղցրն քաղցր. զի՞նչ աշխատութիւն իցէ ճանաչել կուրի զինքն կոյր, և խլացելոյ գիտել զինքն խուլ։ Ա՚. պա զի՞նչ և ինձ ծանրութիւն իցէ՝ զչարն իմ գոլ՝ ճանաչել չար, և զանարգս գոլ՝ տեսանել անարգ. զթշուառութիւն իմ՝ թշուառ, և զվատուն իմ վատ։ Ա՚չ դիտական 'ի սոյն կարօտիմ, և ոչ կարապետողն զհետ նկրտիմ. հերիք է թէ չիցեմ ցնորեալ և յուշոյ թափեալ։

Ա՚. ահա ոչ միայն հեշտ իմն է ինձ խոնարհիլ, այլև հարկ իսկ է թէ խոնարհեցայց. նա՛ կամայ և ակամայ պարտաւորիմ խոնարհիլ։ Ա՚թէ այլ ազգ ինչ խորհիցիմ՝ նոյն եմ. և եթէ չկամիցեմ՝ այլ ազգ ոչ եմ։ Ա՚. պա յիս ինքն եկեալ՝ յիս հայեցայց. և յիս հայելով՝ խոնարհեցայց՝

առանց խմանալոյ իմ զնոնարհիլս իմ. միայն դու ՝ի՞ր դու խմացիս և ծանիցես։ Լթէ դու միայն՝ և ոչ ես, յայնժամ հաձեսցիս ընդիս, և օրհնեսցես զիս, բարձրասցիս յիս, և բարձրացուսցես զիս ՝ի բարձրուն այսր առաքինուն. և վերածեալ ժամանեցուսցես զիս ՝ի վերին փառս արքայութեն։

Խ Ն

Երկրորդ կիւրակէ զկնի վարդավառի։

Հեղուն։

ա. Ա՛ծ կենդանի, օրհնեալ յամի, և փառաւորեալ յանհաս ինքնուն. ամենաբաւական բարուն և անկարօտ էականուն։ Որ անձաւելի քաղցրուն՝ հաձեալ ՝ի յաւիտենից սահմանեցեր արարչագործեալ զիս ՝ի պատկեր ՝ծծուութեն քո. և ամենակարող զօրութի՝ն յանեից ՝ի գոյուն ածեալ՝ կանոնափակ կարգեցեր՝ անդորրիլ և բերկրիլ ՝ի քեզ յուղիղ վարս և յամբիծ դնացս. և քեզ ՝ի կամն քո սեպհականել զանձն իմ՝ իբրև զվայր կալուՀածոց քոց, հանդարտացեալ և խաղաղացեալ յամի՝ քեզ ՝ի հաձոյս։ Լտուր և զերկիրս համայն ՝ի ժառանգել ըստ օրինացդ սակի. ՝ի բարիս ա՛ր վայելել, և արարածովքս որ ՝ի սմա՝ խրախանալ ՝ի փառս քո. արօրել ՝ի սմա զառաքինական կեանս՝ վայելուչ կարգաւ, և գանձել գանձս հոգևորս՝ ոչ որ

ՀԱՅԱՑ ԻՑԵ 'Ի ՍՄԻՆ, ԱՅԼ ՈՐ ԺՈՂՈՎԵԼՈՅ Է 'Ի ՀՐԵՄԱՌԱՍ ԵՐԿՆԻՑ։

Պատրաստեցեր և յերկինս երկնից զարքայութիւն քո 'Ի սկզբանէ աբանչելի զարդուք սանոյ բարեաց՝ աւետիս հնչելովաւ իս՝ ժամանել անդր, և ցնծալ անդ յաւիտեան ի բոլոր յերկիր կենդանեաց անապականելի ժառանգութիւն յանտրտում ուրախութիւն։

Զ. ՍԼ սակայն բազմապատիկ բերմանցս յարուցմունք, և յոգնախուռն շարժողութեամբ բռնաւորութիւնք՝ անմասն կացուցին զիս յայսմ երջանկաւէտ ժառանգութիւն։ Ա՛ եր 'Ի վայր տապալեցին զՀոգեակապ կառուցմունս բարեվիճակ խաղաղութիւն. և ցնդեցին ցրուեցին զգեղեցիկ շինուածք հոգևորական անդորրութիւն։ Որով և ես փոխանակ զիս 'Ի քեզ գտանելոյ՝ 'Ի քէն 'Ի բաց հեռացեալ՝ յաղմկայոյզ շփոթմունս ամբոխեցայ. և փոխանակ քև զերկիր ժառանգելոյ՝ յերկրաւոր վարանմունս վարատեցայ. և փոխանակ 'Ի կենդանեաց երկիր ժամանելոյ՝ 'Ի վերուստ անտի գլորեալ՝ 'Ի վայրենի վրդովմունս տրորեցայ։

Բաժանեցին զիս յիւրեանս ախտապարար կրիցս գումարութիւնք. նա եղծին և զոր համ եղծանել փութան զչքնաղուն գոյաւորուն հոգւոյս։ 'Ի՝ ջանալս իմ զմին նոճաձեռ՝ այլք գլուխս շարժեն. 'Ի վանել զնորոխտացեալն՝ այլուստ բազմութիւնք յոխորտան. յողբել զնորն՝ հնացեալքն բողբեն։ Ա՝ յին ևեթ բաւական էր բառնալ զիսաղաղութիւն իմ, և տարագրել 'Ի ժառանգութենէ աւետեացդ վերագրելոց. զի՞նչ ապա գործեսցեն

յանձն իմ այսքանեւացս յաձախուելք, ոմն այս-
պէս և ոմն այնպէս, մին խոստացուցանելով, և
միւսն դառնացուցանելով. սա նուաձելով, և
նա հեղձուցանելով։

Յամի 'ի սոսա առաւել քան զառաւել մին է՝ որ
յանհնարինս յուզէ և սուզէ. այն ինքն է բար-
կութիւն շարժուին և ոգի զայրանալոյ. յորմէ և
մարդարէն ազատանալ խնդրէր. * ակն ունէի
ասէ յայ՝ որ փրկէր զիս 'ի կարձմտութենէ զայ-
րանալոյ, 'ի մրրկեալ նեղոյրտութենէ ‖. սաղ.
ԺԲ. 7։

Զ. Այս կիրք 'ի մոլուն յեղաշրջեալ՝ քայքայէ
զկեանս իմ, եթէ զզգայականն և եթէ զբանա-
կանն, և և զգերբնականն։ Օ մենդգականս զ-
բութիւն 'ի զգայական մասին խանգարէ, և ըզ-
բերկրական բարի բերմունս հոգմակոծէ. զան-
գորրական կենցաղականութիւս փայրենացուցա-
նէ, և զդարմանիչ հոգացողութիւն կարողուեցս
տկարացուցանէ։ Օ տեսութիւն մտաց 'ի բանա-
կանս մասին մթագինս կացուցանէ, և զանձ-
նիշխանականս պետութիւն իսպառ նկուն առնէ։
Օ բնակութիւն շնորհաց հոգւոյդ՝ որ 'ի գերբնա-
կան կարգի՝ հալածէ, և զարդիւնս հոգևոր բա-
ղեաց իբր զխուիՀ հողմոյ տայ։

Ա. Այս ախտ 'ի վառիւն զբոլորիՀ՝ վառէ և այրէ զբոլ-
գանակ. ոչ յինքն ինայէ և ոչ յայլս. ոչ ողո-
քանաց անսայ, և ոչ բոզբմանց ունկն բանայ.
ոչ բարեկամ ճանաչէ, և ոչ զթշնամին որոշէ.
ոչ զՀայր գիտէ, և ոչ զորդի զատանէ։ Ոչ 'ի
ասաստից սոսկայ, և ոչ 'ի սպառնալեաց դողայ։
'Ի մեծէ ոչ ամաչէ, և 'ի փոքրէ ոչ զանգիտէ։

Յիմարի և յիմարեցուցանել. ցնորի և ցնորեցուցանել, կատաղի և կատաղեցուցանել։

Այս յիս ինքն առնում և ունիմ զփորձ բռնակալութեան սրբ, և զամենի հարեալ շառաչնիմ. ոչ զի 'ի բարկուն բորբոքիմ, այլ զի 'ի շիջուցանել զնոյն անփոյթ գտանիմ, մանաւանդ թէ իբրև 'ի վերջ հրոյ փչելով առաւել ևս զնոյն արծարծեմ և սաստկացուցանեմ, ոչ 'ի ծանուցանելեթ, այլև 'ի նոճազունս։

Բ. Սասիկ 'ի ժամանել 'ի լսելիս իմ զոյն ինչ խստութեան բանից ընդդէմ ճանաչողաւն մտացս առաջամայն զայրագնիմ. և 'ի տեսանել իմ ինչ ընդ որ ոչ հաճիմ, իսկոյն այլագունիմ։ Յրդգալ իմ ինչ հակառակ բնաւորուն՝ վաղվաղաւ կիս ամբոխիմ, և 'ի յիշել իմ զոր արար ինձ ընկեր իմ՝ վրդովիմ և 'ի խնդիր վրիժու յարձակիմ։ Այս յառաւելն զայրանալ՝ յանդգնիս բանամ զբերան իմ, և խօսիմ զոր չէ արժան։ Հակառակիմ և մաքառիմ. նախատեմ և հայհոյեմ. խորտակեմ զսիրտ բարեկամաց, և լուծանեմ զբազմաժամանակեայ գութ սիրելեաց։ Զ այս պիսեաց կոհակաց տեսեալ յիս յարուցմունս՝ նկուն լեալ ամաչեմ և պատկառիմ, նողկամ և տաղտապիմ։

Այթէ տակաւիկ մի աշխատ լեալ էր իմ 'ի սանձահարել զսոցին յարձակմունս՝ շահեալ էր իմ արդեօք ընդդէմ սոցա զառաքինուն հեզուն. որ միայն է կառավար կրից բարկութեան, և կանոնաւորիչ նորին շարժուն։ Բանզի հեզութեն է նոճաձեալ զբարկութեան բռնուն, և հանդարտեցուցանել զսիրտս. որով լինէր և ինձ հրաման

գիւլ յիս և բարեկարգիլ'ի հոգիս. խաղաղել'ի կեանս և տարրանալ'ի բարիս։

Եթէ ստացեալ էր իմ զայս բարեհամբոյր առաքինութիւն, ոչ էր իմ զեղեալ բարկութիւն արտաքս քան զիս. մնայի յիս և վայելեի զիս. ոչ ցնդէի յայլս'ի վերժինդրուն, այլ դադարումն առեալ յիս՝ ժառանգեի զիս իբրև զկալոնաց ժառանգուն. զի * որ հեղգն են՝ նոքա ժառանգեսցեն (զինքեանս իբրև) զերկիր ॥ սաղ. ԼԷ. 11. նա՛ գերապանծ ինն հանդիստսցին քան զՀզբոյս և քան զմեծամեծս. * լաւ է.... որ յաղթեալ բարկութիւն՝ քան որ առնուցու զքաղաք

Հզբոյ ॥ առակ. ԺԶ. 32։

Եթէ գրաւեալ էր իմ զայս սերալի առաքինութիւն, իմ էր աշխարհ՝ ամ'ի վայելել. իմ էր անդորրուն կենաց. իմ էր և երջանկութիւն կենցաղոյս. զի'ի դադարիլ հոգւոյս յամպրոպային մրրկեալ նեղսրտութեանց, և'ի հանգչիլ'ի հոգեվերդով հակառակութեց՝ յամ բարուիս երկրի արձակ անդորր ձեմեի և զգնայի. և անզեաղ'ի նոսին զմայլեի. որով և երանական բանից երկրպագելի բերանոյ քո արժանի լինեի, յաստեղգ. * երանի՛ հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն

զերկիր ॥ մատ. Է. 5։

Եթէ սեպհականեալ էր իմ զայս խնկելի առաքինութիւն, 'ի դատաստանաց քոց ազատագերծ պրծանեի. և 'ի պարտաւորիլս իմ՝ զտրդ և ըզդատաւորդ՝ ապրեցուցիչ անձինս գտանեի. քանզի ՝ի նոսա՝ զի՝ մ հանդոյն՝ 'ի դատաստան առնել քում ապրեցուցանես զամ հեզս երկրի. սաղ. հԷ. 10։

Յապրիլս իմ ապա անդէն յահեղաստատ դատո-

ղուԹՂ քումմԷ՝ կայը և մնայը ինձ չու�Ել յերկիրն կենդանեաց, և ժառանգել զնոյն անկասկած. որով առաւելապէս բովանդակիւր յիս առաւեսիս բանիցդ՝ ԹԷ հեղք ժառանգեսցեն զերկիր՝ յաւետ որ կենդանեացն է, քան որ մեռելոց

իցկ։

Գ. Այս առաքինութիւն սքանչելի իմն շահատակութիւն է, որոյ վս զքոյդ սմին եռուր օրինակ ԸՆ խոնարհութիւն՝ յասելդ. * ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ ։ Մատ. ԺԱ. 29։ Այս առաքինութիւն վայելուչ իմն դեղ է հոգւոյ, յոյր սակս 'ի խնդիր ելեալ որոնելիր զժառանգաւոր սորա 'ի բնականալ 'ի նմա, յասել քում. * Այս յո՞ հանգեայցէ՝ եԹէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս ։ Եսայ. ԿԶ. 2։ Այս առաքինութիւն պանծալի իմն առաւելութիւն է, սմին իրի յառաջ ուղղեալ զսա սաղմոսանուագ մարգարէին՝ Է. զանակէ զդաւեթայ. * Հիշեա՛ տո՛ր զդաւեթ և զնամ հեզութիւնդ ։ Սաղ. ՃԼԲ. 1։ Վանի՛ քանի առաքինութեաքդ զարդարեալ էր այրն ԸՆ սրտին նոյ. այլ Թողեալ զքանի քանիսն՝ զսա իբր մեծ քան զԹողեալսն 'ի մէջ արձանացուցանէ՝ 'ի ցոյց առաւել սորա պատուականութեան։ Օ որ և 'ի նախամարգարէն քարոզէ գիրն ԹԷ՝ * հեզ էր յոյժ քան զնամ մարդիկ ։ Ռու

. Գ. 3։ Այլ որ յիշատակաց է արժանի, 'ի պաղատիլ Է. ըից մանկանց առ քեզ 'ի հնոցն՝ զքոյդ հեզուն ըստ առաւելուն ողորմութեդ յանդիման եդին՝ յասելն. * արա՛ առ մեզ ըստ հեզուն քում և ըստ բազում ողորմութեն քում ։ Դան. Գ. 42։ Լաւ ինձ ընդ բիւրս ցաւոց. զի յայսպիսի և

յայսքան չքնաղ երանացուցիչ առաքինութիւն անմահն գողով իմ՝ 'ի շուկ և յաղմուկ հոգւոյ խնայեցիմ. և 'ի գայանային կատաղութիւն երկամանցս գողման մոլեգնիմ։

Դիւրին էր ինձ պատկանել և պատուհասել զսա յիս, մանաւանդ թէ և արմատացուցանել, եթէ սրտի մտաւ գուն գործեալ էր իմ զշահեկանութիւն սէր զհետ սնդիլ։ Այլ առաքինութիւք թէպէտ և դիւրին թուին, բայց դժուարաւ արդիւնանան. զի կամ աշխատալի են. որպիսի է համբերութիւն, ողջախոհութիւն, ողորմածութիւն, և նմա. և կամ անզգալի և նուրբ, որպիսի է խոհեմութիւն և խոնարհութիւն։ Իսկ սա թէպէտ և 'ի սկզբան խիստ թուի, բայց 'ի սակաւ աւուրս դիւրի։ Այնթէ հնմարտիւ ձեռն արկեալ էր իմ 'ի սոյն՝ ամենօրեայ ժամանակ բաւական էր։ Օ՛ի թէ հեթանոսք կարացին առանց դերբնական շնորհաց 'ի սակաւ աւուրս զսոյն հեշտին շահիլ, և սովաւ անվրդով վարիլ, չկարիցեմ ես շնորհօք մարդասիրիդ դիւրագոյն ևս բերել զսա 'ի բուռն, և ամիոփել յիս։

Այլ արդ քանզի ամ ինչ քև և 'ի ձեռն քո յաջողի ով ամենահեզդ յո՝ թագաւորդ հեզոց՝ յամ սրտի պաղատիմ սուքեզ, և աղաչեմ. զգրացո՛ զիս և արիացո՛. և շնորհօք քո յարդարեա և հանդերձեա՛ զիս. և յաջողեա՛ ինձ յափշտակել զայս ձիր առաքինութեաս մեծի, և առնուլ իբր բաամբ. և սովին զինոնորիլ ընդէմ բռնութեանն կրից բարկուն. զգեստաւորիլ սովաւ իբր զարդուք զրուեց երկնից, և ախոյեան կանգնիլ ընդդէմ յոխորտանաց կատաղի չարին. և

յաղթանակեալ իմոյ հակառակամարտին՝ վեր-
բաթևել՝ի դասս որոց հեզութիւն պսակելոց, և ի-
նոսին փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սոյ
հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից։

Խ.Օ.

Երրորդ կիւրակէ զկնի վարդավառի։

Լուսաւորութիւն, որ է պսակ ողջախոհութեան։

ՇԱ. Արմնայելոյ բանիդ նոյ ամենաքաջ կա-
մացդ հաճութիւն սիրելի ազգման ա-
ռարկայ ընծայեցար՝ ողջախոհութիւն առաքի-
նութի։ Ամին սակս՝ի սկզբան անդ՝ի գալ քո
յաշխարհ կոյս մայրն ընտրեցեր անտեսութիւնդ
խորհրդոյ մարդեղութիւն, և՝ի կուսական աբ-
գանդի նոր կուսութիւն յղացեալ՝ կուսութիւն ծնար։
կուսական կաթամբ կերակրեցար, և կուսա-
կան խնամով մնար և տաճար։
Ընդ կուսական մայրութիւն և զկոյս հայր քեզ
սեպհականեցեր։ և ընդ կուսակրօն կենաց նո-
ցին կենցաղեցար։ Լսեա յընտրութիւն անդ ա-
շակերտացդ, զկոյսն որ՝ի նա՝ առանձին սիրով
փայփայեցեր։ մինչև վերառնայիցիս նմա սիրելի
աշակերտ յոր։ զոր և ինքն բան աւետարանին՝
թէ * աշակերտն այն՝ զոր սիրէրն յս ॥։ յովհ։
ԺԲ. 7։

Նա զոր օրինակ՝ի ծնանիլ քո յորովայնէ, և՝ի
սկզբնաւորիլ մտից քոց յաշխարհ՝ կուսութիւն
յայտնեցար, սոյնպէս և՝ի ծնանիլ քո՝ի դե-

բերգմանել, և՛ի հաստատել երկոց քոց յաշխարհէ՝ կուսութիւն հանդիսացար. զի ոմն՝ի կոյս մարդ ծնար, սոյնպէս և՛ի կոյս գերեզմանել փայլեցար։ Ի սկսմանդ և՛ի կատարմանդ՝ կուսութիւն գեղ քարոզեցար։ Որով յայտնի ծանուցաւ՝ թէ քանի հաճոյ իցէ մեծութիւն քում այս առաքինութիւն։

Որք միանգամ յայսմ հնաշխարհիկ չքնաղուն ամբիծութիւն ծաղկեցան, քեզ փարելի նոսիրեցան. և իբր անարատ հարսն երկնաւոր փեսայիդ հաճոյացեալ՝ քեզ պսակեցան. և՛ի քեզ բերկրեալ ընդ քեզ միացան։

Ի մեծայն առաքինութիւն ընդունելի քոյդ առաջի և յարգոյ ուղերձի, և յամենամաքուր այս քո ըղձալի նկարի. իսկ սա հեշտալարար իմն տիպար ընծայի, մինչև ցանկալ սմա թագաւորիդ երկնաւորի. սաղ. Խ. 12. և ներածել սովաւ զՀոգիացեալ հարսն յառանձին իմն ներքին քոյդ ընտանուն օթևան. և նմին իսկ հարսին բերկրալոց ցնծալ և զուարճանալն բարբառիլ և ասել. * տարաւ զիս արքայ՝ի սենեակ իւր ||.

Երգ. Ա. 3.

Այս սենեակ ոչ այլոյ ումեք մարթէ մտանել, բայց որոյ միանգամ սրբութիւն պաշտեալ իցէ զկուսութիւն։ Կուսանաց և՛ևեթ է այս ժառանգաւորութիւն, և նոցա միայն է գնալ զհետ գառինդ անմահի։ Նոցա այն միայն է երգել ընդ քեզ զերգս նորս. և նոցա է խօսակից լինել քեզ՝ի լեզու այնպիսի, զոր ոչ սա իմանայ, և ոչ նա գիտել վստահանայ. ըստ որում յայտնատեսիլ ետես կոյսն յաւետարանիչս. յովհան.

Ք. Պարիսպ է սուրբ Երկիւղ նոցն, և պահապան՝ զգուշութիւն յառաջիկ կործանմանն։ Խորհրդատու է սմա զգաստութիւն մտաց, և գլխաւորութիւն է սուրբ հաստատութիւն կամաց։ Անընդարար գարմանիչ է սմա խոնարհութիւն հոգւոյ. և յարդարիչ պատկանաւոր՝ պարկեշտութիւն մարմնոյ։ Պատաւոր է սի՛ Ճնշումն զգայական բերկրութեց, և ձեռնկալու հզոր՝ պահեցողութի՛ն յաւելորդատած հոգատարութեց։ Լիր բիւ ական զգուշանալի, և իբր սիրտ ներքին անմերձենալի։

Հրեշտակք հոտոտին և զմայլին ընդ սա, և զարմանան ընդ գեղեցկութի՛ն սո՛ր. զուարճանան ընդ սա և խնդակցին ընդ սմա։ Դեռք սարսին այո՛'ի համբերութէ և հալին 'ի խոնարհութի՛ն. պժգան ընդ հեզութի՛ն, և փաղեն զերկիւղիւ՛ն նոցն. այլ ընդ սա նախանձաբեկ ՃենՃերին, և յանհնարին մախանս մտամտին։ Պ՚ո որոյ և'ի կեա՛ իւրաքանչիւր վայրկենի՛ 'ի կործանումն սո՛ր գարանին, և'ի խորտակումն սորին վարանին։ Ունին նպաստամատոյց և զմարմին մեր յաւելել և յեղծանել զվայելչութի՛ն սորա, ուր յընկրկիչն 'ի բաց՝ 'ի յուսոյ ոչ հատանին, դարձեալ վերատին նկրտին, և միւսանգամ յարձակին։ Ա.յլ'ի ժամանել հնորհաց հոգւոյդ սիրՅ՝ մերընչելով գալարին, և ամենաՀաար ընկլուզանին։ Յամանեցո՛ ասա և առիս նոր նոՀ իմ՝ յա քո զայցելութի՛ն օգնականութի՛ն թեւոց քոց։ և ա զատեա՛ զիս ամենազոր զորութի՛ն քով 'ի չարաթեակարթ վտանգէ որսողին. պարապիակեա՛ 'ի

թիւնամուխս ՝ն ետից չարին, և շուրջ պահեա՛ ՝ի չարարուեստս հնարից նորին։ Ամրապահեստ աջով քո պարտպանեա զքանձս զայս ցանկալի, և ամենայաղթ ձեռամբդ վանեա զնենգախոշոշ հետամուտ սորին։

Պահեա՛ աղաչեմ, պահեա՛ և ամրացո՛ զիս. զի և ես քեզ պահեցից զսա իբրև զքաղաք բնակութեան քո, և զգուշացայց զանոր զգելի աւերմամբ, և զանդառնալի կորստեամբ երջանկաժառանգ վիճակիս։ Լութեամբ ոչ դու շինեսցես զքաղաքս զայս՝ ՝ի նանիր աշխատին շինողք սը. և եթէ ոչ դու պահեսցես զպալատս զայս՝ ընդունայն տքնին պահապանք սը։ Զոր ի պարգևել և քո է պահպանել զայսր եղեմական առաքինութեան սահման։

Պարգարիտ ամենագեղ և ակն պատուական է սա ՝ի մեջիս կայս քանաւոր արարածոց։ Զքնաղութեան իմն է երկնային յանմահ հոգիս, և փայլողութեան հրեշտակային ՝ի մահկանացու մարմնիս։ Դասակարգութեան կենակցութեան վերամբարձ հոգւոց անմարմնոց. և հաւասարակցութեան ը պարտաւորութեան դերաւուն զուարթնոց։

Գ. Երանի՛ որոց գտեալ և ժառանգեալ իցէ զայսր շնորհի բարեմասնութեան. և բիւր ևս երանի՝ որոյ ամբիծ կացեալ իցէ ՝ի սպասաւորութեանս սը։ Լռաւեալ քան զառաւեալ երանի՛ որոյ քնաւին հոգիացեալ իցէ ՝ի սմա իբր անմարմին, և հասեալ իցէ ՝ի սկզբնադալար նախաստեղծին վիճակ անմեղութեան։ Յեանուսն այսմ փափաքիլ ինձ ցորչափ կեամ ՝ի մարմնի՝ անմար-

թելի իմն թուի։ Օ առաջինն խնդրեմ 'ի ստանալ, և զերկրորդիւնն փարելով պաղատիմ 'ի կալ և յանդորրանալ։ Յառաջնումն ժամանեցից՝ որում ցանկամ. և յեկեղուն բերկրեցայց՝ յորում խաղաղիլ ըղձանամ։ Յառաջնումն գբաւականելով զօրացայց. և յեկեղուն հաստատելով զուարճացայց։ Ա. յլ եթէ ոչ նպաստեսցէ ինձ առանձին ընտրեալ օգնականսուն հոգւոյդ սրբոյ՝ կրկին վնասեմ, ոչ զառաջինն գտանեմ, և ոչ յեկեղուն վայելեմ. քանզի յայտնաբանութիւն իմաստնոյն * գիտացի եթէ ոչ այլազգ լինիմ ժուժկալ, բայց եթէ ճշ տացէ ‖. Եմասք.

Ը. 21։

Ա. յս հրեշտակային գեղապանծութիւն՝ սպակ է առաքինութիւն ողջախոհութիւն. այս չէ ամենեցուն հասարակ. այլ որոց տուեալ իցէ 'ի վերուստ. սա չէ պայման չափու 'ի փրկութիւն հասանելոյ, այլ եւ լքն 'ի դասս հրեշտակաց ձախ բելոյ։ Սակ ողջախոհութիւն առաքինութիւն հաստատուն իմն պայման է գտանելոյ զփրկութիւն. զի չափաւորիչ է և կարգաւորիչ վայրենի բերման վաղաշ ցանկութիւն՝ եթէ 'ի կուսանս, և

Եթէ յամուսնականս։

Ա. ռանց սանձ արկանելոյ սրտ ըրբացելոյ մարմնոյ՝ ձկտի յանարժանս, և յիմարեցուցանէ ըզհոգին։ Սառուցանէ զյիշողութիւնն, և տոչորէ զերեւակայութիւնն։ Ոչ խղճի մնաց անսայ, և ոչ օրինաց տոկայ։ Ի՞՝ օրէգնի և մնրեգինս արբեցուցանէ։ Չոչ վանիլն, ոչ մեռանի եթէ ոչ մեռուսցէ։ Ա՞՝ որ որոյ կարօտի մարմինս միտղա կան՝ առաքինութիւն ողջախոհութիւն զուսպ ու-

նիլ զինքն, և ոչ տալ թոյլ յառնել հակառակ հոգւոյ. բարեկարգիլ սովաւ յինքեան, և անդորր պահել զհոգին։

Իսկ թէ զիարդ կալեալ իցէ զսա ուխտաւորելոյ անձինս, և զիարդ մնուցեալ, դու գիտես ՅԱԾ իմ։ Լ՝թէ չիցէ ինչ իմ վերիպեալ՝ի սմա, առ՝ի քէն է. իսկ եթէ զարտուղեալ ինչ՝ յինէն է։ Զունիմ ասել ինչ. այլ միայն՝ի գթութիւն մարդասիրիդ ապաստան լեալ՝ աղաչեմ. և զողորմութիւնդ դուռն բաղխելով մաղթեմ, և ընդ սաղմոսերգուին գուշեմ. * ՝ի գաղտնեաց իմոց՝ զբ արա զիս ՅԱՐ, և յօտարէ պահեա զծառայս քո ॥. ԺԷ. 13։ Դրաւեա՛ և նորափետուր զարդարեա՛ զիս. պահպանեա՛ և պատսպարեա՛. և սնսայթաք առաջնորդութեամբ ժամանեցո՛ զիս յանվթար ելս կենաց, գալ առքեզ սրբութեամբ, և ժառանգել զքեզ արդարութեամբ։

ԽԱ.

Զորրորդ կիւրակէ զկնի վարդավառի։

Համբերութիւն (Խպոտ։)

Ա՛. Ի սաստկէ որոտալոյ զանազան կրից սաստանէ՝ վարանիմ. և չունելով պատրաստարան երկայնմտութիւն և համբերութիւն, նոնա զիմ և լքանիմ։ ՝Ի բռնութիւնէ այլ և այլ ախտից վտանգաւորեալ՝ յուսաբեկ լինիլ ստիպիմ, և անսպասատ անմտութեան գտեալ յընկրկիլ և՝ի վա-

ԺԷ

նիչ առաքինութիւն համբերութիւն՝ պարանիմ և պարտասիմ։

Պատերազմունք ահեղք, և ես անդէն զենուիս։ Նեղութք և տարափք յորդք, և ես անվեր բարկու շրջիմ։ Հանապարհք խորտաքորաք և դժուարինք. և ես անկոչիկ գնամ։ Եղութիւնք և վիշտք յամ կողմանց. և ես անժոյժ ընթանամ։ Ի գազանաց միջև կամ, և անցուպ յոխորտանամ։ Յալեկոծութիւն կենցաղոյս նաւեմ, և անխարիսխ անդեկ տատանիմ։ Փոթութիւն է կեանք իմ համայն. և ես յանհոգս վտտեալ վտտանամ։

Այս ընթացք կենաց յասպարէզ կենցաղոյս զարտուղի ուղևորեալ՝ տաղտապեցուցանել և տագնապեցուցանել զիս. տառապեցուցանել և վշտացուցանել։ Ահանջկ զիս յամ բարեաց, և ածէ զանձն իմ յորոգայթ բիւրազգի չարեաց։

Այլ արդ ո՞ւստ ուստեք եկեսցէ ինձ օգնութիւն։ և ո՞ մնտուսցէ ինձ խորհուրդ մնտեսելոյ զգտարութեամբ վարանմունս իմ զայս։ Ո՞ցուցցէ ինձ հնարս ելից ապահովութեան. և ո՞ առաջնորդեսցէ յապաւէն յուսոյ ազատութեան։

Ի սէց խրատիմ բազմապատիկ բանիւք՝ բուռն հարկանել յիրս իրս բարեդէպս։ Ի գրոց յորդորիմ յաղգի ազգի կարգս բարեաւութեանց. հուսկ ոմի յամենանաք բերանոյ փրկչիդ յոի խրատիսիմ Ի համբերութիւն. յասելոյ. * Համբերութ ձերով ստասջիք զոգիս ձեր ‖ Լուկ. Խ. 19։ Օ այսոսիկ ակամջք լսեմ, և աչք իսկ վերծանեմ. և սակայն արտաքոյ իմ է՝ զոր լսեմ, որ.

տաքոյ իմ է՝ և զոր տեսանեմ. իսկ յիս 'ի ներքս ինչ ոչ պարանեմ, և ոչ ինչ կերպարանեմ։ Զեռն արկանեմ, և ինչ ոչ հայթայթեմ. ընկիզեն առնեմ, և ոչ կատարեմ. վառիմ, և առ ժամայն շիջանիմ. պնդիմ, և անդրէն ընկրկիմ. զօրանամ, և առ նմին թուլանամ։ 'Ի մին յա-ռաջանալ՝ 'ի բիւրոց յետս մնամ. 'ի սակաւիկ մի վստահանալ՝ 'ի յոգունս վստահարանամ. 'ի չա-փաւորն արդիւնանալ՝ յանչափս անպտուղ մնամ։ Վանզի յամի անզօր եմ. յամի տկար եմ. յամի թափուր եմ. նա՛ յիւրաքանչիւր հոլովմունս անուճագնաց կենաց իմոց փոփոխաքայլ ընթաս-նամ, և մոլորաշաւիղ աստանդանամ։

Ոչ բանք մարդ արեից ազդեն յիս, և ոչ պատ-գամք առաքելոց խոր անցանեն 'ի հոգիս. ոչ բանախօսութիւն արտաքնոց կաղդուրեցուցանեն զիս, և ոչ ընթերցանութիւնք գրոց ընթացու-ցանեն. ոչ յորդորմունք սրբոց կարողացուցա-նեն, և ոչ օրինակք բարեաց 'ի բարին ընտրեալ-ցուցանեն. զի չեն յինէն, և ոչ յիս։

Ը. Դու միայն ո՜ծ աստուծոց և ո՜ր տերանց, ո՜մի հնարաւոր և համայնից ևեթ գոյաւոր, կարող ես ակնարկելով միայն ձարտարապետել յիս և տպաւորել 'ի հոգիս զհաստատութիւն անցնիւր առաքինութեց, և զթագ նոցին ո՜մի զհամբերութեն ընտրհ։ Դու սակայն յիս ակնար-կելով՝ ինդրել պատկաւիմ. զի ես չինեն ար-գելանիմ, և անձամբ անձին ընդդէմ ներ-հակիմ։

Բայց ես ոչ եթէ յիս ինչ բարեկրութիւն և կամ յանձին արժանաւորութիւն յեցեալ աղաչեմ,

այլ յամենադգութիւն խնամն մարդասիրութիւն քո
զիս ողջոյն ապաստան առնեմ։ Լցեալ յարժա-
նաւորս ցուցցես զշնորհս՝ բարերար քարոզիս.
իսկ եթէ յանարժանս զեղցես, ամենաբարի
բարերար բարեբանիս։
Լ�չ զի՞նչ մեծ է, եթէ և յիս մեծասցիս. մա-
նաւանդ զի հաճիս ի ըղձանալս իմ՝ի սոյն, և
ախորժիս ի խնդրելս իմ զսոյն։ Կամիս և տաս,
ոչ որչափ ետս խնդրեմ, այլ առաւել ՝ի զոր պա-
հանջել կարեմ։ Լցեալ՝ի սակաւուն մատեայց
մաղթումն, զյաճախն ընձեռեալ ոչ գժգոհիս։
՝Ի խնդրել իմում զհամբերութեն շնորհ, ոչ
զնոյն և եթէ շնորհես, այլև զառաւելուն նորին
ձրի մատակարարել յօժարիս. զի ոչ միայն սոսկ
զհամբերութեն պարգև՝ զոր պաղատիմ, այլև
զիսպառն՝ որում չեմ արդիւնական, առատա-
ձեռնես. զոր եթէ ոչ կամիր շնորհել, և ոչ
իսկ հաձիր՝ի նոյն խրախուսել՝ ասելով. * որ
համբերեսցէ խսպառ, նա կեցցէ ॥. Մաթ. ԺԳ. 13։
ԼՉ որ փարելին է՝ ոչ միայն զոր թախանձեմ՝
շնորհես, այլև տաս գլխաւորել՝ զոր ձրի ընձե-
ռես։ Օ սոյն ներգործել փութաս յամ՝ առա-
քինուիս և յամ՝ բարեգործուես. քայց տիրա-
պես՝ի պարգևելդ ընդ համբերուեն զիսպառն
տևողութի՝ խրախանաս. զի՝ի նմին բուսանդա-
կի սահման չափու աւուրց կենդանութեան, և
սկզբնաւորի յաւիտենականուի հոգւոյ փրկու-
թեան։ Օ ի թէ՝ի սպառումն անդ ոչ գտցէ ժա-
մանն համբերութի՝ կործանի շինուած հոգւոյ
կենաց. և՝ի դերև ելանէ՝ամ ջանացողութի
անցելոց վայելուչ կարգաց։

Ապաքէն շահատակութիւնք մարտիրոսաց եթէ ոչ մատչէին 'ի համբոյր աւարտման ցաւանդութեան հոգւոյ, ոչ փայլէին, և ոչ պակէին։ Եւ ահա մին 'ի յորից տատանց յետ տանելոյ անտանելի չարչարանաց 'ի լեռին սառուցելոյ՝ նահանջեալ 'ի տանելոյ՝ նահանջեցաւ 'ի պակելոյ. իսկ որ յարիշատակեացն զայն՝ տեւողական գտեալ 'ի նմին, յորս տանջեցաւն՝ 'ի նոսին փառաւորեցաւ։

Բասիկ և Ճգնաւորական տաժանակրութիւնք ցյետին շունչ յակաստանի կալով՝ ամբարձան 'ի լուսազգեցութիւս։ Եւ կուսական ժուժկալութիւնք 'ի յարակայսէ ժամանեալ եղջ՝ իբրև ստեղն ծիոյ խնկաւորեցան 'ի բարձունս։ Իսկ որ երկարատև ալետանջ նաւարկեալ՝ 'ի մօտաւորիլ 'ի նաւահանգիստ՝ զքարի հարան, յանդունդս վայրաբերան։

Եհա և նախարարութիւնք հայոց զամն բազումս 'ի բանտի տուչայտեալք և տրոբեալք՝ և 'ի նմին 'ի համբերուն առկայեալք, հասին յերանուն վինակ. իսկ որք չհանդուրժեալ մեկնեցան՝ մերժեցան։ Եւ ապաքէն և դշխոյն այն վարդանեան զամն վեց տանջեալ և վտանգեալ յուրացելոյ անտի՝ աւանդեաց զհամբերութիւն իւր Ը հոգւոյ իւրոյ 'ի ձեռս տուչողի ամենեցուն զշ-

համբերութիւնն հնորհս։

Ք. Յամ կարգս սրբութիւն, և յամ սահմանս առաքինութեց՝ համբերութիւնն է որ պակէ։ Եթէ 'ի հասանել կատարածի անձին արդարոյ՝ սպառեսցի համբերուն 'ի տարր ոճայնն սիրոյ, ջնջի և չքոտի սէր։ Եթէ ոչ տիրասցի համ-

բերում ցկէտ մնում 'ի կշիռ արդարութեան մեռանի արդարութիւն։ և ոչ ևս իցէ։ Լինի ոչ զբաստի համբերում յարատևեայ 'ի նիւթ ողջախոհութեան, 'ի չէութիւն բացագառնայ։ Լինի հացեալ համբերում 'ի նպատակ իւր իբրև զօրավար, այլք ևս նմին նպատակիչք՝ ժամանեսցեն զկնի նոր իբր զօրք նորին և բարեկամք։ Ա՛ռ այսր նմի սա համարի բռվանդակիչ և պարագրիչ նմ առաքինութեց բնականաց և գերբնաւկանաց 'ի հնորհաց կարգի։ Լու զորօրինակ խոնարհութեան առաքինութիւն՝ սկիզբն ասի և հիմն այլ նմ առաքինութեց, սոյնպէս և համբերութեան իսպառ՝ պսակիչ է նմի նոցա։

Առաքինութիւն մեծ է արդարև համբերութիւն, զոր կարեմք ջանիւք և խնդրոհածովք շահաւորիլ։ իսկ յարատևութիւն նորին ոչ է առաքինութիւն, այլ ձրի ինն պարգև, զոր ոչ ումեք հնար է անձամբ անձին արդիւնաւորիլ, և ոչ ումեք մարթ է ինքնին 'ի նոյն արժանաւորիլ։ Զո միայն է հնարելի զսոյն։ դու միայն պարգևեա և տաս, և ախորժիս տալ։ Ցուր և ինձ աղաչեմ, ասա թէ զուրկ ասցի գտանիցիմ, յունայնութեան աւարտի կենաց իմ։ և զի՞նչ օգուտ յաշխատելոյ իմ 'ի մշակութի գործոց բարեաց, եթէ սա չէութեան մշակեսցէ։ զի՞նչ օգուտ 'ի համբերիցս ձչմարտութեան հաւատոց։ զի՞նչ օգուտ յընդունելութի զանազան սրբազան խորհրդոց։ զի՞նչ օգուտ յարգասաւորելոյ յառաքինութիւն։ զի՞նչ օգուտ 'ի բարգաւաճելոյ յիմաստութեան ուսմունս։ զի՞նչ օգուտ և 'ի ձգնաւորելոյ յուղղութի վարուց, եթէ այս պսակ բեկեալ երևեսցի։

Օ՛ի՞նչ օգուտ իցէ նաւու՝ եթէ 'ի ժամանել 'ի ծոց հանդարտութեան խորտակեսցի և ընկղմեսցի. զի՞նչ փառք իցէ մարդոյ, եթէ 'ի վերանալն յիշխանութի թագաւորութեան՝ անդէն և անդ յաթոռոյ արգելցի. զի՞նչ պարծանք է Ճարտարապետի՝ եթէ 'ի տանել 'ի գլուխ զգործն՝ շինուածն կործան տապալեսցի։

Օ՛ի՞նչ շահ ասա և ինձ եթէ յարագել իմում յեզը կենաց՝ պակասելով յիսպառ համբերութենէ յարատևութեան քարոյ՝ ոչ մտից յառագաստ երանաժառանգ լուսոյ։

Լաւ սակայն եթէ զորասցի յիս հնորհք քո, և նուիրեսցի հնորհօք յաջողեսցի ինձ համբերել՝ որում մարթ է ինձ տանիլ, ակն ունիմ թէ հնարհեսցես ինձ և զիսպառն 'ի համբերել, և 'ի հնարհսն անդ յարատևել։ Ի՛նձալս իմ 'ի սոյն ցայն վայր՝ որում յաջորդէ յետին վայրկեան աստի կենաց, ժամանեցից և յայն՝ յորում սկըսանի առաջին վայրկեան յաւիտենական բարեաց։ Ոչ ոչ 'ի համբերութեան բերի, և ոչ այլոց առաքինութեց կարօտի. այլ անշիջանելի սիրով ճաշուեթէ քո յարքայութեդ լուսափայլի. և ինայ յաւիտեան։

ԽԸ.

Հինգերորդ կիրակէ զկնի վարդավառի։

Ռաբէկենդան ՁԾԾԻՆ։

Ռաբերարուէ ՁԾԱՅԻՆ։

ՁԱ. Զորանուհեր ընծայութիւն յոգնապատիկ գոհացողական բանից՝ յերկրպագուն խոնարհեալ առաջի ինքնաստեղծ ամենահզօր զբուն հաստատիդ համայնից՝ փառաբանութեան մատուցանեմ քեզ, Թագաւոր փառաց. և հիանալեաւ ինն զարմացմամբ շնորհս վերընծայեմ շնորհողիդ ապաշնորհ ծառայիս զբիւրաբեղուն բարիս. զորս յանդիմանս տեսանեմ, և յանթիւս գտանեմ, և 'ի կշիռ բերել չկարեմ։ Լինթէ մարթ ինչ եր 'ի համար առնուլ զաստեղաց որ յերկինս հոլլք, և կամ զկենդանեաց որ յերկրի բազմութիւնք, ընդ որս և զաւազահատից զառաւելութիւն, հնար էր ինձ և զամենապատիկ բարերարուեց քոց 'ի հաշիւ արկանել զտեսակս։

Օ՞ն առացից, և զո՞ն յանդիմանս կացուցից։ Յառաջինն իսկ անդ հպիլ հիանամ։ Լ՞պաքէն յոչնչուէ էի ես, և չէի ինչ. և եթէ չէր քո զիս գոյացուցեալ, մնայի յոչնչուէ անդ. և ո՞ի յաւիտենից չէի 'ի կայսն, սոյնպէս և այժմ յանեղուէ էի, և չէի. նա զի ոչ միայն զիսն գիտեալ չկարէի գոլ ոչ ինչ, այլև ոչ գիտացեալ

ումեք լինելի իբր ինչ։

Ա. Այլ այժմ զի՞նչ, ո՛չ եւս ոչինչ. զի ամենակարող եւ ամենաբաւական զօրութիւն քով՝ 'ի յաւիտենից որոշեալ զիս յոչնչութենէ իմում, յոչնչութիւն անտի ընչացուցեալ՝ 'ի գոյաւորութիւն վերածեր զիս։ Զոր ինքն արարեր՝ զի որ չէի՝ 'ի լինեմ, եւ յանգոյութիւն իմում ինն լինեմ։ Ա. Յս արարչականութիւն՝ գործ ինն է ամենահայեաց տեսուն քո եւ ամենակալ կարողութեդ. նա թէ ներգործութիւն ինն է անձառդ սիրոյ. քանզի հայեցեալ քո յանհունս՝ յանբաւ կարելի էակս՝ յոչ լինելիս եւ ո՛չ գոյանալիս՝ յանչափելեաց անտի իբր ձեռամբ ընտրեալ, հաներ զիս յանհնութիւն 'ի գոյ ինչ։ Ա. Այլ արդ եթէ չէիր սիրեցեալ զիս, զի՞ կայր քո եւ լինելուս իմոյ. ընդէր զայլ զանհամարս թողեալ 'ի բաց՝ զիս եւ զքոս ըստ իս՝ սահմանեալ էացուցեր։

Ա. Որ առաւելն է՝ ո՛չ անկենդան ինչ ընծայեցուցեր զիս, եւ ո՛չ զգայուն անբան կերպարանեցեր, այլ կենդանի բանական, եւ անմահական կենաց հաղորդական։ Ա. Որ եւն է՝ 'ի վեր առեր 'ի պատկեր քո տիրական եւ 'ի նմանութիւն ճանական։ Զրոմ յայտնի ցուցեր՝ եթէ 'ի սիրոյ գործեցեր. զի եթէ ո՛չ 'ի սիրելոյ՝ ընդէր յայսպիսի պատիւ պանծացուցեր՝ զոր 'ի խորս չէուն անդնդոց նշմարեցեր։

Ճ. Ա. Արդարև մեծ եղև ինձ այս՝ զի 'ի գոլ այսպիսի էացուցեր զիս, եւ սակայն մեծ ևս եղև՝ եւ է. զի զոր հայեցուածոյք ևեթ և 'ի սիրոյ ստեղծագործեցեր, նովին միով հայեցուածով՝ 'ի նմին գոյութիւն պահեցեր և պահես, տածես

և խնամեմ։ Լաւ զորօրինակ յանկարկեալ իմ 'ի հայելւոջ՝ 'ի նմին նկարի դիմացս կերպարան իւր յոչնչէ. և ցորչափ հայիմ՝ մնայ որ 'ի նմա, և յոչ հայիլս իմ ոչնչանայ։

Ամին հանգոյն որդւոյ հայելւով գոյացուցեր զիս յոչչէից, սոյնպէս հայելւով յիս՝ պահես զիս յոչչէուն. եթէ դադարիցիս յառ իս հայելոյ. դադարիմ և ես իսպառ 'ի գոլոյ, և դառնամ անդրէն յառաջին իմ յոչն գոլ։

Այլ արդ եթէ չէիր հաճեալ ընդ իս՝ զի պիտոյ էր կալս իմ յիս. միթէ ինձ ուներիր զոհարձանալ, և կամ ինձ շատանալ. միթէ իմովն կենաց կամէիր կազդուրիլ, և կամ իմայնովն վարուք զբօսանիլ. միթէ առընդունիլ յինէն ինչ ակնուներիր, և կամ իմանալ ինչ մի 'ի պատկերէ աստի հոգայիր. ես յոչնչուն էի և յոչնչի պարտիմ. յոչնչէ միթէ ինչ երևեսցի։

Զարմանամ և կրկին զարմանամ՝ զի պահես ոչ զիս միայն, այլև զա իմ զերկիր, զարեգակն ի աստեղս, զծով ի ցամաքի, զկենդանիս և զտունկս համայն. սոքա չենքեզ ինչ պիտոյ, և ոչ անմարմնոյ ինչ յարգոյ. զի ոչ դու կարօտիս սոցա, և ոչ նոքա նպաստին 'ի սոսա. զա իմ ուրեմն պահես զսոսա, և զիս՝ քոյդ զա։

Լաւ առ անվտանգ մնալոյ առ արտաքինսն 'ի պահպանուն կենաց, և առ անվնաս ընթանալոյ զանապարհ ազգի ազգի պատահարաց՝ պահպան կարգեցեր ինձ զհրեշտակսն դաս. և զրջապահ արկեր զինև զանակս նոց 'ի զգուշութեան պաշտպանութեան 'ի զանազան փորձանաց, և 'ի վարանական դժրողութեց։

Օ այս ամ դ Թասիրաբար յուցեր առ իս . ոմն զի 'ի սոսին հայելով՝ սոքիմբք ծանեայց զքեզ, և գովելով գովեցից զքեզ . այո՛ ծանեայց և գո հացայց զքեզ . ծանեայց և զսեր քո , և սիրեցից զքեզ . ծանեայց և զմեծվայելչուն քո , և ծա ռայեցից քեզ . ծանեայց և զՀզօր զօրութիւն քո , և երկեայց 'ի քէն . ծանեայց և զբիւրաբան կա տարելութիւն քո , և ուրախացայց 'ի քեզ . ծա նեայց և զՀայրական խնամն քո , և յարեցայց 'ի քեզ։

Լ. Այլ ես փոխանակ 'ի սոսին վերբերելոյ և այս պիսեօք զքեզ փարելոյ , և սոքիմբ զբարերար կամն քո կատարելոյ՝ սկզբնաչարին անսալով՝ Թիկունս դարձուցի յարարչէդ , և 'ի ժանիս մտանեցայ բելիարայ։ Հանմահական կենաց վտարեալ՝ 'ի յաւիտենականն դատակնքեցայ մահ , և 'ի գեհենոյն պարտաւորեցայ հուր . 'ի գերութիւն դժոխոց կապեցայ , և յանդարձ տա րագրութիւն դատապարտեցայ։

Գ. Եւ 'ի յաւաղս կարդալ և 'ի յուսոյ 'ի յետս դառնալ՝ ահա դարձեալ սքանչացաւ բարերա րութիւն քո առ իս ով միածին որդի՝ քանզի 'ի տեսանել քո զիս յայսպիսի կնճիռն վարակեալ՝ և յանդառնալն կորուստ գրաւեալ , յանբժշկե լի հիւանդութիւն տրորեալ և 'ի դառնագէտ յու սահատութիւն համակեալ , ոչ լքեր 'ի ձեռաց իսպառ . այլ հնարս ծանուցիս հնարաւորեցեր . իրքեր յերկնից , եկիր յերկիր . խնդրեցեր զիս , և գտեր զիս , ապատեցեր և ձգեցեր առ քեզ . ոչ սին սոսկ բանիւ , և ոչ արտաքնայարդար իմն գոյիւ , ոչ ապականացու ստացուածով և ոչ

այլով իւՀիք ստեղծուՀածով. այլ զկենաս քո 'ի փրկանս իմ գրաւականելով, և զարիւն քո զնամ 'ի վՀր իմ համայն հեղլով, անարդաբար 'ի փայտին բևեռելով, և 'ի տանջանս խաչի մեռանելով։ Ո՞ ընդ իմ եՀեղ կաթիլ մի արեան. և ո՞ ելաց 'ի վՀր իմոյ կորստեան։ Դու միայն ա մեՀագԹած փրկիչ իմ. դու միայն արարեր զայս։

Լ՝ս յետ զայս ամ իրագործելոյ, 'ի կամիլդ վերանալ յերկրէ՝ ՀՀ կարելով մեՀնիլ 'ի մՀնՀ՝ մեՀնեցար 'ի քՀն յայլ իմն տեսիլ տարաղու, յորում հրաշացուցեր զխորհուրդ մարմնոյ և արեան քո, անյեղլի զնոյն սահմանելով. որով և մնացեր և մնաս ընդ մեզ և 'ի մեզ մինչև 'ի կատարած աշխարհի։ Լ՝ս սովին այսու 'ի համբոյր սիրոյ միաւորեալ ընդ մեզ տիրապես՝ բնակիս և հանգչիս 'ի մեզ իրապես։

Օ՞ինչ տայ տրիտուր ընդ այսր ամի՝ զորս ցուցեր առ մեզ. զի՞նչ արդեաք ուՀիցիմ գՀԹիմուն միայնոյ մասին յայսքանեաց բարերարութեանց հատուցումն հատուցանել։ Լ՝այց ես ՀՀ միայն 'ի սոյն չքաւեմ, այլև առաջի առնել ամաչեմ՝ զորս կարեմ. զի քո է՝ ամ, բաց 'ի մեզաց. և որ ինչ իմ է՝ նանիր իմն է և ոչինչ. նա՛ չար ինչ։

Ա՝յլ 'ի վՀր այսր ամի 'ի տեսանել իմում զայս պիսի երախտաւորուն հաստչիդ և փրկչիդ՝ մոռանալ չկարեմ. այո՛ ՀՀ իմ ՀՀ մոռանամ և ՀՀ մոռացայց, և ՀՀ ապաշնորհ գտայց. ընկալ և դու ՀՀ զայս իմ փափաքումն իբր փոխարէն հատուցումն. որով և ես զուՀարՀացեալ՝ յանմի

զքեզն գոհանալով մեծացուցից զաբերարդ իմ. և յոմի զՀաձոյս քո ըստ հաձելոյ քո առնել փութացայց. և յամ ժամ փառս վերառաքելով ինքնաբուն փառաւորուեդ՝ Ջանացայց հաւատարիմ ծառայութիւն պաշտել զգութ բարեսեր կամայ քոց. զի մի զայսքանեաց անձառիցդ վաստակաւորումն 'ի զուր հանից առ իս, և զայս պիսի գործովանաց սրտի քո խնամողութիւն ել իմ ընդունայն կացուցից։

Ո՛նաչեմ, զի ցարդ մոռացութիւն քոյոցդ բաբեաց խորդացայ. և 'ի խնամն մոլեգնն չարեաց խոտացայ. գիտեմ և՝ զի եթէ թողեալ լքեալ լինիցիմ 'ի սիրոյ քո՝ խսպառ խոտանանամ և դերևանամ։ Լ.յլ ակն ունելով շնորհացդ առաւելուն, պնդիմ զօրանալ նովաւ, և նովին փութամ կամակատար ընծայիլ կեցուցչիդ ամենեւ 'ի վերջոյ քումդ արժանանալ վերջնում բաբերարուն յարքայութեն երկնից յաւիտեան։

ԽԱ.

Շ ՈՂԱԿԱՆ։

Ա՛. Ի տարրանիւթ աշխարհիս՝ աշխարհ նոր հաստատեցեր զեկեղեցի քո։ 'Ի վերայ ծովու խորուն հաւատոյ արկեր զՀիմունս սուրբ. և 'ի վերոյ գետոց եօթնաստեղնեան խորհրդոց պատրաստեցեր զսա. մարգարէագուշակ պատգամաբ իբր ցողովք ամպոց ամենարձելոց ոռոգեալ զուարթացուցեր. և աւետարանաբար

բառ քարոզութիւն առաքելոց իբր կենդանական
ոգւով հաստատմամբ։

Յերաստիճանեալ եպիսկոպական փոխանակութիւն,
և քահանայական պարու դասակարգութիւն իբր
ոսկեձոյլ նոր օրէն անսասանելի կայացուցեր. և
անվանելի վիմին պետրոսի անընդհատ յաջորդութիւն քահանայապետուն տիեզերաստատուն իշխանութիւն պարապետաեալ շրջապատեցեր։ Գ. Ծառ
բանական վերին վարդապետութիւն իբր ականա
կիտ վտակօք զուարճացուցեր, և ցողմամբ հեղ
մամբ անձնանուէր մարտիրոսաց իբր երփնագեղ
գունով վայելչացուցեր։

Բարեբեր բարելոյ անկովք համայնասիւռ հա
ւատացելոց զարդարեցեր, և առաքինափայլ
վարուք ուղղադաւան քրիստոնէից՝ իբր անօ
թովք ընտրութեամբ դասաւորեցեր. ՚ի դասուց
դասուց զանազան կարգաց կրօնաւորացանթիւ
բելի ձողաբարձիւք զգուշապահ զօրացուցեր.
և մաքրակենցաղ սրբութեամբ զգաստամիտ
կուսանաց իբր ջահիւք շողշողեալ փայլեցու
ցեր։

Հրեշտակացդ պարուք իբր աստեղօք երկնից
պայծառաղարդ ճոխացուցեր, և երանելեացդ
սրբոց յարքայութեամբ փառս բարձրացելոց երջանիկ
գումարութիւն սխրացուցեր։

Ք. Դու ինքն արեգակն արդարութեամբ հրա
շալի արփիացար և ՚ի մեզ յաւուրս լուսաւոր
չին մերոյ. դու լոյսդ անեղական նշուղիւք
աքսնչելեացդ պանծացուցեր զզօրութիւս քո.
դու աննիսաղելի ճառագայթ փառացդ հօր ՚ի
փառս վերամբարձեր զսոսկական տեսիլս աշ-

խարհին մերոյ, յորում տեսաք և վայելեցաք զանբծնին սքանչելիս մարդասիրութեանն։ Օ՛ի յաւուր յիշատակիս երջանկանկատ տեսլեան ծառայի քո Ցրիգորի՝ ի վաղարշապատ նահանգի՝ ի վաղարշակերտ քաղաքի, սպասաւորեցեր, ցեղեր զանհպելի բարձրութի հաստատութեանէ երկնից, երևեցար իջեալ միածնիդ հօր անհամար և անթիւ յոգնախուռն բազմութեամբ զօրաց երկնաւորաց. հեղեր՝ կաթեցեր զգերափայլ լուսոյդ շողդ սիրալի, բաղխեցեր յիջման քում ուռամբ զօրութեանդ զերկիր։ Ոչոզաց յայնժամ սանդարամետ անդնդոց և հնչեաց զձայն ահաւոր ողբոց. և՝ ի նուաստութեան գագաթան սարսեցելոցն, ամբարձան գլուխք նորափետուր մանկանցն սիոնի, և ընթացան ամբեան յօրհնութիւն բարձրեալ։

Ղ. Այս սքանչելափառ տեսութիւն անչուշտ յայտնեցաւ մեզ՝ ի ձեռն բազմաչարչար և ամենահաւատարիմ ծառայի քո սրբոյն Գրիգորի՝ ի հաստատութիւն ճշմարտութեանդ հաւատոցն, զոր ուսոյց ազգի մերում. մանանակիցս առնելով զմեզ կրօնից սրբութիւն ընդհանուր որ եկեղեցւոյ. յորում յամի և յամ ժամ պանծացուցանես և հանդիսացուցանես զբիւրապատիկ այցելութիւն քո հրաշաւորութեան. զորդիս սորա օրհնես, և զգաւակս սորա յոլովապատկես. զոր սորա յաճախես, և զաղքատս սորա լիացուցանես։ Ցածես և դգաճես. դարմանես և մտուցանես։ Ի ծագաց մինչև՝ ի ծագս սորա տարածանես զհռչակաւորումն իշխանա-

կան մեծութեան սորա, ընդ մեանչենափայլ շո-
ղոյ զեղմամբ առ 'ի քէն կաթելոյ 'ի գլուխ
պետայ պետի արժանաժառանգ յաջորդի ա-
ռաքելոյն վեհի։

'Ի յառնել թշնամեաց՝ մենաղենեալ վանեա
զնոսա. 'ի խրոխտալ գլուխ՝ հալածական տա-
բագրեա զնա. 'ի գլուխ շարժել հեթանոսաց՝
խորտակեա զնա. և 'ի միգապատել հերեսիով-
տայ իբրև զլեաւոր՝ խորասուզեա զնա։

'Ի տկարանալ անդամոց սորա՝ կազդուրեցուցա
նեա, և 'ի վանդաւորիլ որդեկայ սորուն՝ ձե-
ռին կարկառեա. 'ի բորբոքիլ յուսահատահաս
հալածանաց՝ նեղքնոց և արտաքնոց՝ ձգեա ըզ-
բազուկ քո և պաշտպանեա. 'ի շրջել 'ի խնդրել
աներևոյթ որսողին՝ տարածեալ զթեա բարե-
խնամ տեսչութեդ ժողովեա զերամն ձագուց
սորա, և շրջապահ զգուշութիւն իբր առագաստիւք
բոլորապատեալ պարապեա։

Վքանչելի են խնամարկութեանքո օրինակք՝ զորս
ցուցանեա կաթողիկէ եկեղեցւոյ քում՝ սրբոյ
յազգի ազգի և 'ի բիւրազգի նեղեալ ործուխս.
զո՞ր կարասցուք ասել, և զո՞ր մարթասցուք
հրատարակել. զի յոգունք են և բազմադիմի,
ո՛չ ըստ արգահատելոյ հոգւոյ ևեթ, այլ և ը՛ն
մարմնոյ. ո՛չ ը՛ն նեղքնոցս միայն զոլաւորելոյ,
այլ և ըստ արտաքնոյ. ո՛չ 'ի սահմանափակ
տեղւոջ սոսկ, այլ և ը՛ն ամենածաւալ տարա-
ծութեան տիեզերաց, ընդ ա՛մ վայրս ընդ ծով
և ընդ ցամաք. յորս և փառաւորիս միշտ և
զթասիրութեան քո անձնաւելի ձառի. և այցե-
լութեան քո անսպասելի արփիաւորի. և հայ-

բանիսամ տածողուն քո՝ գովի և օրհնաբանի։ Լոյսդ թէ և ապիրատես և ապիկարս երբէք մի անհաղորդ այսքանեացդ գտայց բարեմասնութեանց հնորհի. այլ՝ ի սոսին յամենեսին խնդալ ելից վայելեալ՝ աներկեան ցնծութիւն ժամանել արժանացայց ամենացանկալի քումդ վերնում տեսութեան. և ժառանգելոյց զլիութիւն ծածանողդ երանութեան յաւիտեան և յաւիտեանս։

Ծ.

Ի էրափոխումն ածածնի։

Ն. Փառաւորեալ սէր ածածին, արքայութիւդ երկնի և երկրի. ահա օր, յորում մեծահանդէս մեծարանաց բարձրացար յերկինս. ընդ որ սքանչացեալ ցնծային երկնայինք։ Ի համբառնալ միածնի որդւոյ քո՝ աղաղակէին առ միմեանս. * ՈՒՄ է սա՝ որ դիմեալ գայ... բուռն զօրութեամբ ‖. Եսայ. կդ. ։. Ի վերափոխիլ և օգոստատիրութիւնդ՝ հիանային և հարցանէին. տպաքէն եկն եմուտ թագաւորն փառաց, Ի փառս իւր. իսկ * ՈՒՄ է սա՝ որ երանեալ յանապատ յեցեալ յեղբօրորդին իւր ‖. Երգ. Է. 6. յելանել Ի վեր երկնաւոր արքայի՝ մեք եղաք հանդիսակից. իսկ յելանել սորա՝ նա ինքն արքայ

Հանդիսագիր նմին երևի։

Ի հարցաքննել երկնաւորաց՝ գոչեմք առ նոս և երկրաւորքս. սա ինքն է դշխոյ փառաց, Թագուհի ամ արարածոց։ Հնչեաց ձայն յշնդարձակուն երկնից. արիք ընդ առաջ օգոստատիրուհւոյդ մեծի և մեր արարչի։ Զդեաց և փող իմանալի. Հանապարհ արարիք այնմիկ որ գայ յերկրէ մտանել ի փառս։ Խարբառ եղև և խնդուն. շաւիղ հորդեցեք այնմ՝ որ անցեալ մտանէ հուպ յաթոռ ամենանաք երրորդուն։ Դիտեին՝ զոր տօնախմբեին, տիրուհի, և ոչ թէ նորոգ ինչ իմանային. քանզի ինքեանք իսկ եղեն խորհրդածուք իրացդ, և աւետատուք եղելոցդ։ Ա՜ զի յառաջագոյն իսկ մինչև էր համբարձեալ որդի քո՝ ցանկանալով առ իւրեանս ունել զնա, ընդ նմա և զտիրուհիդ մեծ՝ գոչեին առ նա. * արի՜ ՝որ ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութեան քո։ Լու ի համբառնալ նի՝ լցան այո՛ ցնծու�. բայց ոչ տեսեալ և զքեզ ընդ նմա, փափաքելով և զքեզ ընդունել՝ զտապանակդ կենդանի, կրկնեին զաղաղակ իւրեանց, ասելով. Ժամանեսցէ և տապանակ սրբուն քո։ Տեսա և որդի քո միածին տարփայր՝ առ իւր ունել զքեզ, և հաղորդս առնել զքեզ իբրև զմայր՝ փառաց համայնից ըստ ամ վայելչուն. միանգամայն և հոգի քո՝ի նոյն բերիւր բերկրալից։

Ճ. Ի մերձենալ ապա սահմանելոյ աւուրն՝ տիեզերքն հրեշտակք ի օլորտս տիեզերաց հրաւիրել զառաքեալս և զաշակերտս ի տեսութեան վերափոխման քո։ Հրաման եղև և գաբրիէլի՝

աւետամատոյց լինել օգոստափառ մարդ. ընդ որ ապրեալ նոր՝ փութացաւ յերկրպագուն սքանչելոյդ. և 'ի հիացումն ըմբռնեալ 'ի վայելչութիւնք քումմէ՝ ողջոյն ետ բերկրանաց ասելով. Ողջոյն լեր բերկրեալդ և լեացեալդ հնորհօք բարձրելոյն։ Ողջոյն լեր շքեղաշուք հարսն երկնային՝ հովանաւորութիւնք սրոյ հոգւոյն պարասքողեալ։ Ողջոյն լեր տաղաւար լուսասահման՝ անքննին բանին ծածուկն։ Ողջոյն լեր, զի ահա հաձեցար ամենաշնորհ երրորդութիւն փոխադրել զարժանապատիւ տապանդ լուսոյ յերկինս 'ի վայր անմատոյց յեօթնարփեանն խորան. ուր ամ գունդք երկնային քահանայապետութեաց, և գումարք ամ սրոց սպասեն մեծափափաք անձկանօք քումդ տօնելն տեսլեան։ Լ'կ պատուհեալդ յարարչէն ամի և նեբբոդեալդ յամ աբարածոյ։ Լ'կ օրհնաբանեալդ և բարեբանեալդ 'ի շրթունս ամենն, մայրդ Էմմանուէլի։ Լ'կ ցանկալիդ երկնաւորաց և երկրաւորաց, և պսակդ յոգնանկար սրոց ամի. եկ իշխեա և թագաւորեա է որդւոյ քո յաւիտեան 'ի վրայ ամի, և 'ի վրայ մեր։

Յայս աւետաւորութիւն գաբրիելի եկին հասին առաքեալք 'ի ծագաց աշխարհի. և մատուցէք առ մայրդ ամ՝ բոլորեցան զքեզ իբրև զնագս առանեաց. այլ իմացեալ զերս չուշոյ քո և վերանալոյ յերկինս՝ մրմնջէին. աւաղ մեզ ասելով. ապաքէն 'ի մեկնիլ 'ի մէնջ որդւոյ քո և ամն մերոյ՝ զքեզ ևեթ ունեաք վշտաց մխիթար. զի՞նչ արասցուք և 'ի մեկնիլ քո. որո՞վ կարասցուք սփոփիլ. ուր մարթասցուք ապաւինութիւն

պատասխան դատանէլ։

Յաղդ առնել անդ տիրուհւոյդ ժամանեցին և կուսանք 'ի տեսանել զՀանդէս փոխման քո. և լուցին անդէն զլապտերս իւրեանց Հանդերձ ջահիւք. զի պատրաստ երևեսցին ընդ առաջ գալստեան որդւոյ քո։ Պատրաստեցան և յերկինս նահապետք, և ամենայն երկնայինք՝ խրախուլից խնդութիւն լսունիլ զքեզ առ ինքեանս։ 'Ի պարաւորել սոցա յերկինս՝ չՀանդուրժեալ առաքելոյ և կուսանաց լնել նոր, վերստին թախծագին խօսելին զքեզ. ոչ մայր մեր. ոչ թագուհի մեր. ոչ ցնծութիւն մեր։ Ո՞ւր թողուս զմեզ, ընդէր գնաս. եթէ գնաս՝ տար և զմեզ ընդ քեզ. զի չէ մեզ Հնար առանց քո կեալ 'ի վերս երկրի. դու տիրուհի եղանես յերկինս տեսանել զորդի քո և վայելել զնա յաւիտեան. մեք 'ի վաղուց զլիկեցաք 'ի նմանէ, և քեզ սիրեաք. և այժմ 'ի վերանալ քո 'ի մէնջ՝ զի՞նչ գործեսցուք թշուառականքս։

'Ի խօսիլ ապա արքայուհւոյդ զնոր և 'ի քաջալերել՝ սկսան հրեշտակք յաներևոյթս քաղցրաձայն եղանակել։ Լու 'ի բարձրանալ ձայնից նոր երևեցան անդէն բազմութիւք յառաջնոցն զուարթնոց. երևեցան և գունդք նահապետաց և մարգարէից. երևեցան և հոգիք երանելի սրբոց. և ամենեքեան ցնծալից բերկրութիւն և ըզմայլմամբ հայեին 'ի քեզ։

Յառաջեաց անդէն ադամ. և բարբառեցաւ առ ծոր կոյսդ. Ո՞վ զաւակդ իմ օրհնեալ. դու իմ միխիթարութիւն. դու աւետիս փրկութեան մեր քում եւայի. դու բարձող պատուհասի անէծ-

նաչանդուեն մերոյ։ Արէք փակեցաք զդուռն դրախտին, դու զդուռն երկնից բացեր. մեք մոլորեցաք, դու Ճանապարհ բարի ցուցեր. մեք կերաք 'ի մահացու պտղոյն և մեռաք, դու զկեր տուդն կենաց ետուր մեզ. մեք սանդուղք եղաք ի ջանեալոյ մարդկան 'ի դժոխս, դու հուն եղեր և անցք ելանելոյ նոցա յերկինս. երանի՛ քեզ դուստր իմ, որ այդպիսի եղեր մայր, և յայդպիսի պատիւ բարձրացար։

Այս ձայն ապամոյ խնդակից լինէին և դասք նախահարց առ հասարակ, և ասէին. ո՛վ երանելի բոլորեցուն, ո՛վ պարծանքդ կուսանաց, ո՛վ փառքդ տիեզերաց, աւասիկ քոյին միջնորդութիւն կատարեաց ՅԾ զամ զոր խոստացաւ 'ի ձեռն մեր. լցան այժմ և փափաքք մեր. արի՛ արդ կոյսդ գեղեցիկ. արի՛ եկ առ մեզ։

Զայնակից սոցին լեալ և հրեշտակաց գոչէին առ քեզ ընդ երանելեաց. առանց քո անզարդ մնայ արքայութիւն երկնից. առանց քո անկատար է ուրախութիւն մեր։ առանց քո ոչ լրանայ երանելի երկնաւորացս. արի՛ եկ 'ի հանգիստ քո, և հանգո՛ զկարօտ մեր. միածնիդ կարօտեալ, ահա գայ առ քեզ, ըստ որում խոստացեալ է քեզ։

Զայն հնչեաց յայնժամ և 'ի դասուց աշակերտաց միածնի քո՝ բերանով ընտրեցելոյն յուեթիեսոն. ոչ է ձեզ շատ ո՛վ երկնայինքդ յափրշտակել 'ի մէնջ զնոսա մեր և զնոսա յոքն. զի՞ փութայք յափշտակել և զմայրդ կենաց, զարմատդ օրհնութեան, և զտունկդ անմահութեան։

Յապշիլ և 'ի հիանալ ամենն յանկարծակի ծա-

գեաց 'ի վերնատան անդ լոյս սաստիկ. և երևեցաւ անդէն արեգակն արդարութեան որդի քո միածին պարառեալ 'ի սրովբէից և 'ի քրովբէից, և քաղցրութիւն հայեցեալ յերեսս մօրդ օրհնելոյ՝ օրհնեալ ձեռամբ եցոյց զքեզ անմարմնական զօրաց և սրբոց ամենեցուն, դա աւադիկ՝ ասելով՝ զոր տեսանէք, դա է՝ Աշմարիտ մայր իմ, մայր ամբիծ, մայր կոյս. 'ի դմանէ և դովաւ առի զմարդկայինս իմ բնութիւն. դա զգեցոյց ինձ զմարմինս զայս. դա գիւեցոյց զիս, դա սնոյց զիս. դա է նա՝ որ միայն հաճոյացաւ ինձ 'ի մէջ դրստերաց աշխարհի։

Օ՜ի՞նչ ապա և առ քեզ առ մայրդ. է՛կ մայր իմ՝, է՛կ առ իս. զիս կամիլիր տեսանել, է՛կ և տե՛ս. և վայելե՛ա յաւիտեան. է՛կ մուտ յանձառ փառս իմ, և լե՛ր ընդիս 'ի փառս քո՝ զոր պատրաստեցի քեզ յերկինս։ Լրի՛ է՛կ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ, կատարե՛լ իմ. է՛կ 'ի լիբանանե. արի՛ է՛կ, զի ահա ձմեռն էանց. է՛կ և կա՛յ ընդ աջմէ իմմէ, և իշխեա՛ 'ի վերայ ամենայնի։

Լու եղև 'ի բարբառիլ քո առ նա. ո՛վ որդեակ իմ և ո՞ծ իմ՝ յափշտակեցար յանչափս 'ի սէր նը։ Ընդ որ սիրացեալ անմարմնականայ՝ նորոգ սկսան եղանակել զերդս հիանալիս. և 'ի նոր՞ագելնդ զնոր՞ագս զմայլեցուցիչս՝ աւանդեցեր զՀոգի քո նոր 'ի ձեռս որդւոյ քո միածնի։ Լու ահա անդէն կարգեցան կազմեցան կառք եղիցք քոց բազմութիք երկնային զօրաց՝ ամբառնալ զթագուհիդ մեծ յերկինս։ Յառաջընթացք 'ի վեր սլացեալ փութային պատրաստել

և բանալ զդրունս երկնից։ Եւ որք զկնի ընթանային՝ առ վերինսն աղաղակէին. Համբարձէք զդրունս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ տագաւնակ ուխտի նոցն։ Համբարձան և բացան դրունք վերին. և մտեր օգոստատիրուհիդ 'ի վայելս ՝ճոճելոյն երանութեան. և զնախուն մեծուն անբաւին քեզ սեպհականեցեալ։

Գ. Եւ արդ ցնծա՛ յաւիտեան յարքայութեան միածնի քո միայն արժանիդ անհաս բարձրութեան. խնդա՛ և ուրախ լեր արժանաւոր մայրն՝ այ յանէզը ուրախութեան երկնից բարութեան. զուարճացիր և բերկրեա՛ յանբմբռնելիդ յեղակեանաց վիճակաւորութեան միայնդ ընտրեալ արժանաւորանգ մեծի վայելչութեան ամենանոր երրորդութեան։

Պերացար հոգւով, վերացար և մարմնով. առնարատ հոգւով 'ի թեւս սլացութեան ամբարձար. և անապական մարմնով իբր անմարմին յերկինս թռեար։ Յամենակալ հօրն բարձրութեան պատուեցար, և յամենապատիկ լեռնէ որդւոյդ ՝ճոխացար. յամենապարար հոգւոյն զօրութեան պլՃնապարդեցար, և յամենանոր երրորդութեան ամենահրաշ մեծութեան պսակեցար, վայելչացար, և անՃառացար. 'ի սրովբէից և 'ի քրովբէից վերհագոյն վերիոյ պաշտեցար, և յերկնային զուարթնոց թագուհի վերին դասանեցար՝ յամ՝ սրաբածոց իբրև մայր՝ այ երկրպագեցար, և յամենեցունց՝ որ կանս և որ գալոցն են՝ երկրպագիս միշտ և վերապատուհին յաւիտեան։

Ընդ որս և մեք հողեղենքս երկիրպագանելով քեզ վերագոյնմ առ քեզ. մի մոռանար զմեզ

մայր ՝ոբ. յիշեա՛ և փրկեա՛ զմեզ. պահեա՛ և պաշտպանեա՛ զմեզ. օգնեա՛ և օրհնեա՛ զմեզ. և մեք օրհնեսցուք զքեզ յաւիտեան, և փառաւորեսցուք զմեծուն քո յանկեա՛ և յանվախճան յնծուն։

Ի՝ՆՔՆԵՐՅԵՐ ՀՂՊԱՓԷՐ ԾՕՆԷՑ. Ծ. 371։

ՕՎ.

Ա՛ռաջին կիւրակէ զկնի վերափոխման։

Պաշտպանութիւն սքոյ կուսին։

ՀԱ. Բարձրացար իշխանութիւդ պետութեաց վերնոց 'ի բարձունս երկնից. և հայեցեալ 'ի բարձանց անտի յողորմելի վիճակ մեր՝ գթացար 'ի մեզ. և իբր ամպ լեսցեալ 'ի մեծութենէ ծովու ՀԾՈՒՆՆ՝ ցօղեցեր 'ի մեզ զցօղ ՀԾայնն շնորհաց. հրաշացեալ անճառելի երանութիւնք առատաձեռնեցեր առ մեզ զՀիրս զանազան պարգևաց։

Ա երացար 'ի լուսին ՀՄ փառաց. և փառաւորեցար յՀՄարարածոց։ Ա երացար և անճառացար յանբաւ և յանհաս վայելչութիւն։ Ա երացար և վերակարգեցար յամենամբ երրորդութիւն՝ թագուհի երկնի և երկրի. թագուհի հրեշտակաց և մարդկան. թագուհի հիցս ամի։ Ա երացար և սահմանեցար 'ի հօրէն ամենակալէ միջնորդ հաշտարար. փաստաբան խաղաղարար, և բարեխօս բարերար։ Կարգեցար և 'ի հոգւոյն սքոյ գանձապետ շնորհաց, բաշխող ան-

հատական ձրից, և մատակարար անսպառ բարութեց։ Կարգեցար և յորդեցար քումմէ մայր մեր և մայր ողորմութեան, ինամոզ ոամի. օգնական 'ի բարին, և ապատարար 'ի չարէ։

Երանի՛ մարդոյ՝ որ գտանիցէ զքեզ. զի քեզ գտանէ զկեանս և զնամ բարի, և զիրկուն յաւիտենական. առակ. Ը. 35։ Երանի՛ էր և ինձ եթէ արժանանայս մերձենալի առաջի քո, և սրբութեամբ ծառայեի քեզ. յամի պաշտեի զքեզ, և յամ ժամ փառաւորեի զքեզ։ Արկին և կրկին երանի էր ինձ, եթէ այցելութիւն քո շուրջ պատէր զինև 'ի պատսպարել զանձն իմ յամ վտանգից հոգւոյ։

Դարձեալ վերստին մեծապէս երանի էր ինձ՝ եթէ յամի առ քեզ դիմել փութայի, և յանդիման մեծվայելչութեամբ մարդ էմմանուէլի իբր առաջի մեր կալով բերկրեի. որով իբր նշանաւ փրկութեամբ զրահաւորեի. և իբր գլուշակաւ երանութեամբ զուարճանայի։ Դանալի զքեզ ետ ոոր մեզ նշան ազատուն յամին անքնին իմաստութեամբ՝ օրինակութեամբ աղեղանն հաշտուն. ծն. Ը. 13. ինքնին ցուցեալ մեզ զքեզ բանիւն եւ սայեալ յասելն, ահա կոյսդ՝ զոր ետու ձեզ նշան յաւիտենական փրկուն. Եսայ. Է. 10։ Սոլին այնու պայմանակշիռ սահմանաւ կնքեցար Ճշմարտիւ 'ի պաշտօն անսահանջելի միջնորդութեան ընդ մեզ և ընդ հաստիչն մեր. զոր և արդեամբք սկիզբն կալար հրատարակել յաստիս 'ի հարսանիս՝ որ 'ի կանայ գալիլեայսոյ. յովհ. Բ. 3 = 5։ Հիրաւի առաջին միջնորդ մեր և բարեխօս յամի գիտեմք զմարդն յս քս, բայց վճիռ

հատաւ 'ի հօրէ և 'ի հոգւոյն Ազգ՝ թէ * ուր է բարւոք մարդոյդ միայն լինել, այլ արասցուք դմա օգնական ՝՝ դմա ||, զքեզ զկոյսդ Ազգ յանդիմանն առնելով. ԺԸ. Ը. 28։

Սովին այսու և փաստաբան մեր կարգեալ մաւտեար 'ի գաղանիս աթոռոյ ամենանոր երիցդութիւն ըստ համարձակելոյն Եսթերայ, և անցուցեր զյաւսուն բարկութիւն նիր. և ապրեցուցեր զազգ մարդկան 'ի դաւաճանութիւն անմարմին համանայ. և զվիճս դատապարտութիւն մերոյ արկեր 'ի գլուխ նորա և դիւաց նորին. Եսթեր. Ժէ. 5։

Ը. Ոչ բարեխօս մեր, դու հաշտարար մեր, դու խաղաղարար մեր. դու աւետաբեր աղաւնի սիրալի, որ ածեր բերեր 'ի տապան աշխարհի և 'ի տապան եկեղեցւոյ զտերև ձիթենւոյ հաշտութիւն. որով գիտացաք՝ թէ ցածուցեալ են ջուրք ՝՝ածային բարկութիւն. և համարձակեցաք ըստ նոյի մատուցանել ՝՝ն հաճոյական պատարագս բարեաց գործոց՝ իբրև զկենդանիս ՝՝ազս և ընտիրս. ԺՆ. Ը. 11. 20։ Ոչ կենդանի տաճար հրաշալի՝ զոր կանգնեաց Զիմարիան սողոմոն. առ որ և մեր ապաստան լեալ՝ բարեխօսութիւն քով զերծանիմք յամ չարէ, և գտանեմք յայ զամ բարի։ Ոչ ձեռն քո մատչիմք առ ՝՝ած, և 'ի ձեռն քո ՝՝ած մատչի առ մեզ. Գ. Խագ. Ը.

29. Ա Ե. 3։

Ոչ դուռն երկնային՝ զոր ետես յակոբ. ԺՆ. ԺԸ. 17. և դուռն գեղեցիկ 'ի տաճարի ՝՝ն. յոր ապաւինիմք կաղացեալքս յորովայնէ մօր մերոյ Եւայի սկզբնական մեղաւ. և քև գտեալ զողոր-

մուն բժշկիմք 'ի կաղուէ մերմէ. և 'ի վերս վա-
զեմ մնանել յիմանալի տաճարն այ. Գործ. Է.
2։ Տառապելոյն այնր աղաչանք 'ի կաղուէ առ
կաղս կողկողէր. իսկ տառապելոյս պաղատանք
առ քեզ հառաչէն առ դանդգ անսահման ողոր-
մութեան. գիտացեալ թէ 'ի ձեռին քում է
անսպառութիւն նորին. զի քեզ յանձն արար զայն
համայն որդի քո՝ բաշխել որոց և կամիցիս։
Մենաղոր քարոզն և է միածին քո յամենակա-
լողութիւն իւրում ըստ աստի կենաց 'ի հաստատել և
'ի կազդուրել զնա։ Աքանչելի է և յարդարութիւն
իւրում 'ի հանդերձելումն 'ի հատուցանել իւ-
րաքանչիւր ըստ գործս իւր. ըստ սմին անհաս և
անճառ է յանբաւ ողորմութիւն իւրում։ Օ առա-
ջինն ինքեան սեպհականեալ՝ զողորմութիւն իւր
քեզ յանձնեաց. քանզի ետես զձեռս քո ճա-
խարակեայս. Երգ. Է. 14. յողորմիլ փութով,
յողորմիլ ամենայնի ըստ ամ կարի, յողորմիլ
ամենաղեղ լիութիւն։
Է. Բոլոր այսուհետև և 'ի ձեռս քո լիութիւն
նորին. որով և ողորմիս առաւել քան զոր մեզ
հնար իցէ ըմբռնել. ողորմիս յանչափս քան զոր
չիք կար՝ չափ կարգելոյ. ողորմիս և ոչ իւիք երբ
բեռ նուաղիս. զի դու 'ի քեզ ընկալար և ծնար
զինքնարաւ աղբիւրն անհատանոս ողորմութեան. և
որ հաւակիւր ողորմած, գթած, երկայնամիտ
և բազումողորմ, զնոյն զայն 'ի լոյս ընծայելով
մայր ողորմածին եղեր տիրապետ. բայց յաւէտ
մայր ողորմութեան վերաձայնեցար քան մայր ողոր-
մածին. զի զողորմածն միանգամ ծնար, իսկ
զողորմութիւնն միշտ ծնանիս. զողորմածն յայրն

միւմ ծնաբ, իսկ զողորմութիւն ընդ ամ երկիր ծնանիս։ և ահա ողորմութիւն տիրուհւոյդ լի եղև երկիր։ Լու զոր օրինակ զողորմածն անցաւ և անկիր ծնաբ, սոյնպէս և զողորմութիւն անցաւ և անկիր ծնանիս. ոչ ստիպմամբ և ոչ յոչ կամայ, այլ բնաբար և ինքնաբերաբար. ոգի հուր որ իւրովն ծնանիցի զջերմութիւն. որով և հանգոյն արևու փայլեալ ինքնին ծաւալեաս զշառաւիղսդ լուսոյ ողորմութեան, առանց այլայլելոյ, առանց արգելելոյ, առանց պակասելոյ, և առանց 'ի կոսպար սահմանելոյ։

Ընդ որ կողմն ակն արկանեմք, զողորմութիւնքս իբր հորիզոն պատեալ զմեզ տեսանեմք. ուր և ընթանամք, յամենեսին զողորմութիւնքս նշմարեալ՝ հիանամք. յինչ և խորհիմք՝ յողորմութիւնքս զադարիմք։ Լու դու ինքն իբր կեղրոն ողորմութեան՝ զամենեսեան առ քեզ ժողովել փութաս. զամենեսեան խնամել հոգաս. զամենեսեան մեծացուցանել ըղձանաս. և ոչ զոք 'ի քէն 'ի բաց մերժել կամիս. նա պէտքաս լեր ոք արտաքոյ մնասցէ ողորմութեանքս. քանզի չէր վայել անչափելի ողորմութիւնքս մամ անմանն առնել և անկցորդ կացուցանել առաւելութեանս։

Դ. Յայսմ ամի գերագոյն լմնի ցուցակութիւն առաւել քան առ այլս՝ առ մեզ առ հաւատացեալս զեղուս ընդ ողորմութեան և զշնորհս և զպարգևս. քանզի քև, և 'ի քէն, և 'ի ձեռն քո յորդեն յեկեղեցիս ընտրելոց հաճոյարար շնորհք և երկնաձիր պարգևք. վասն զի յանքնանծաւալ ծովն անսահման բարութեանցն 'ի քեզ ժողովեալ ամ

շնորհաց և պարգևաց իբր յաղթիւր , առ 'ի քէն հոսեն և պարարեն զնա՝ հաւատացեալս։ Լ՚նձ-նիւր՝ որք իբր առանձին աղբիւրք ոռոգանեն զսա և զնա իւիք իւիք շնորհօք. իսկ աղբիւրդ եդեմայ՝ առեալ անընդմիջապես յայ զնա՝ բարի՝ ոռոգանես և արբուցանես զնա՝ երեսս երկրի.

ՅՆՆ. Է. 5. 10։

'Լա՛ իբր վայելուչ խողովակ առընկալեալ 'ի քեզ յանծային աննիւթ լիութիւն անտի զհոսանս ամ բարութեան՝ առատացեղ հոսմամբ հեղուս 'ի մեզ։ Լու որ զարմանալին է, իբրև ամպ՝ զդառնութի ջուրց վերաժխնդրուեն այ 'ի քեզ քաղցրացուցեալ, փոխանակ ի այնր յոգես 'ի մեզ զշնորհս իբրև զանուշահոս անձրևս։ Շ նորհք և պարգևք հոգւոյն որչ զորաւոր են և սքանչելի. և սակայն մատակարարութիւն ձեռին քո զորագոյն ևս ազգեն 'ի մեզ իբրև զճառագայթս արևու, որք անցեալ ի ապակի՝ զորեղագոյնս և սաստկագոյնս ներ-

գործեն։

Տինա առանց անցանելոյ ընդ ձեռն քո՝ ոչինչ շնորհք և ոչինչ պարգևք ժամանեն առ մեզ առ հաւատացեալս, որք 'ի սրբումն կամք յեկեղեցւոջ։ Վանզի դու սահմանեցար լինել անձառահրաշ պարանոց նորոյս սիոնի. ի որ անցեալ սքանչելաւոր ազդուեաց շնորհաց և պարգևաց 'ի գլխոյն մերմէ յեկ քեզ ինքանեն առ մեզ իբր առ անդամս նի զորէն անուշարար կերակրոյ և անապական ըմպելւոյ, և սնուցանեն զմեզ. և իբր դեղ դարմանեն զմեզ. և 'ի մէնք ևս վերառաքին առ ամ ընդ ձեռն քո աղօթք և փաքանաց սրտի ընծայութիւնք։

Է. Զ։ու եղեր մայր մեր տիրուհի՛ որ ա՛ծածին. և իբր մայր տածողապէս հոգաս զմինչ և մնուցանես զՀոգիս մեր։ Լ։ի յիրաւի մայր. զի դու ծնար զմեզ յորդիս. մ՚ զի ծնանելով զգլուխն մեր զքո՝ ծնար այնու և զմեզ զանդամքս նորա. քանզի ո՛չ ոք մայր երբեք ծնաւ զգլուխ առանց անդամոց. ուստի որպէս Ճշմարիտ մայր եղեր գլխոյն մերոյ քոյ, սոյնպէս Ճշմարիտ մայր եղեր և մեզ. քո՛ի՝ ըստ բնութեան, մեզ ՝ի՛ շնորհաց։ Լ։ի զոր օրինակ նա ինքն քո՛ գոլով որդի ա՛յ եղև որդի մարդոյ, սոյնպէս և դու գոլով մայր ա՛յ՝ եղեր մայր որդւոց մարդկան. և զոր օրինակ որդիք մարդկան լինին որդիք հօր նո՛ր, սոյնպէս լինին և որդիք մեր նորա. զի որ լինի որդի հօր ուրուք՝ լինի և որդի մեր նորուն։

Լ։ի՛ սոյն յայս պայման իրաւամբք վստահիմք գոչել, թէ եմք որդիք հօր ա՛յ, և եմք որդիք մեր ա՛յ. և նա ինքն միածինն անդրանիկ եղբայրս մեր. զի զոր հայրն ծնաւ իբր անդրանիկ, զնոյն և դու ծնար ըստ նմին իբր անդրանիկ. ղ-ե։ Է. 7. մ՚ զի և ինքն գոլով այնպիսի՝ ո՛չ ամօթ համարեցաւ եղբարս անուանել զմեզ և ասել, * պատմեցից զանուն քո եղբարց իմոց ॥ Եբր. Բ. 12։ Ի՛ստ որում և արքն իսկ ասելով. * ա սացէք եղբարցն իմոց ॥ Մատ. Իբ. 10։

Օ՝այս կամելով միածնի քո անտարակուսելի ցուցանել և աննահանջելի կացուցանել, ՝ի տաղնապիլ իւրում՝ ՝ի խաչին, մոռացեալ ըզցաւս իւր՝ քեզ որդիացոյց զմեզ յանձն յոլհանեաց ասելով ցքեզ. * ահա որդի քո ॥ և ցյոլհաննէս թէ՝ * ահա մայր քո ॥. Յոլհ. Ժթ. 26.

27։ Այլ քանզի սովին ստացաք անշուշտ զքեզ մայր, պարծանօք կարեմք ասել. * ունիմք մեք մայր զմարիամ ||. որպէս պարծէին հրէայք, թէ * ունիմք մեք հայր զաբրահամ ||. Մատ. Գ. 9։

Զ. Այլ արդ օրհնեա՛ զմեզ մայր մեր, մայր բարի. և օգնեա՛ մեզ՝ զի զՀետ լիցուք մօրդ սրբութեանէ, և փութասցուք ըստ հաճոյս քո կեալ. զի մի՛ յանդիմանեսցուք յորդւոյ քումմէ յասել նմա՛ ցմեզ. * Եթէ որդիք մեր իմոյ մարիամու էիք, զգործս մարիամու գործէիք ||. Յովհ. Ը. 39։ Պատուցէ՛ ի յետանիլ մեր՝ դանդատեսցէ զմինչև առելով. * որդիք մեր իմոյ մարտեան ընդիս ||. Եբր. Ա. 5։

Ի՞նանր է մեզ լսել զայս յետ ուսնելոյ զքեզ մեզ մայր. դու երաշխաւորեա՛ մեզ ով ամենագութ մայր. դու հաշտեցո՛ զմեզ, և մատո՛ մեզ մատն այցելուն. ցոյց մեզ զգորով սիրոյ քո, և զգեցո՛ մեզ զնմանութի՛ որդւոյ քո. լեր մեզ ոբեբ կայ՝ որ զգեցոյց յակոբայ զնմանութի՛ անդրանկան իւրոյ. զի տեսեալ՝ ի մեզ հօրն երկնաւորի զկերպարանս որդւոյ իւրոյ յօի՝ օրհնեսցէ զմեզ.

ԾԺԺ. ԻԷ. 15։

Օրհնիլ մեր՝ ի սոյն, ոչ՝ ի նմանութի՛ ևեթ արտաքին՝ այլև՝ ի կենդանութի՛ ներքին նորոգիմք և հաստատիմք. և սովին իսկ մայր կենդանութի՛ դաւանելով զքեզ՝ ի քեզ խրախուսեալ յանուն քո բերկրիմք։ Լաւայ կեանք կոչեցաւ և մայր եմ կենդանեաց. բայց մահացուցիչ գտաւ, և մայր մեռելոց ցուցաւ. դու միայն եղեր մայր կենդանեաց՝ ի շնորհս ծնելոց։ Ա՛յս անկաւ՝ ի

վէր մեր, և մեռոյց զմեզ. զոչ ապրեցուցեր և ապրեցուցանես զմեզ'ի մահուանէ, և կենդանի կացուցանես'ի մեռելութենէ։

Պարքէն վա կեցուցանելոյ զմեզ եղեր մայր կեցուցչին մերոյ. մի ուրեմն թողուր զմեզ'ի մեռելուն, այլ լեր մեզ կեցուցիչ մայր. և ձեռանտուս'ի վերուս մեր և'ի ցաւս։ Պատանց ցաւոց ծնար զանդրանիկդ. ցաւօք ծնար զմեզ առ խաչին զկրսերս. լեր աղէ մեզ ցաւակից յիմ նեղութիւնս մեր և'ի վտանգս հոգեւոր մահու։ Օ միածին որդի քո պատարագ սիրոյ նոմիրեալով'ի խաչին ազատեցեր զմեզ'ի դատապարտութենէ. մինչև պարծիլ մեզ և ասել. * այնպէս սիրեաց զմեզ կոյսն, մինչև զորդին իւր միածին ետ ॥ ցոյց ապա և այժմ զսէր քո։ յովհ. գ. 16։

Լուսոյ զորդի քո, և գտեր զորդեգրեալս. եւ տուր վերջօք և գտեր վերջոք, մի ևս լքաներ զմեզ վերջալոյս։

Է. Յորքանս և յորպիսիս պանծացուցեր զբխնամն սիրոյ քո. ցոյց և մեզ զնոյն ազաչեմք. զորքան մեղաւորս'ի փրկուն ժամանեցուցեր. զորքան խստացեալս'ի ջարիս՝ կազդուրեցեր'ի շնորհս. զորքան վտանգեալս'ի փորձանս ծանուանս զերծուցեր։ Լու որ մեծն է. նաև զտարամերժեալս յերեսայն ՀՍ, և զառ'ի բաց թողեալս'ի քարոզաց և'ի խոստովանահարց, յանկանիլ նՀ յոտս ողորմութեանդ՝ կանգնեցեր, և'ի գիրկս գթոյ քո առեր։ Հաւատ բարի ցուցար. և հանգոյն նմին զլքեալ հասկս յանդ բոյսոն'ի մէջ որ եկեղեցւոյ գտեալ ժողովեցեր. հուսոն. Է. 3 = 17։ Յողովեա՛ և զիս աղաչեմ

ով ամենագուն մայր. քանզի 'ի քեզ եմ ե-
դեալ կոյս իմ։

Եթէ հայեսցիս առ իս՝ կանգնիմ, եթէ խնայես-
ցես յիս՝ քաջալերիմ. եթէ ձեռն կարկառես-
ցես առ իս՝ զօրաւորիմ. եթէ լսցիս ինձ առաջ-
նորդ ըստ դեբօրայ, իբրև բարակ վանեմ զսի-
սարա և յաղթեմ. և առ քեզ գոչելով աղա-
ղակեմ. քո է, և քո լսցի յաղթուն. դաս. Բ.
8։ Զոր գիտեմ՝ զի 'ի գիմել իմ առ քեզ՝ ոչ
դարձուցանես զերեսս. յապաւինիլս իմ 'ի քեզ՝
ոչ առնես անտես. 'ի պաղատիլս իմ առաջի քո՝
ոչ արհամարհես. և 'ի յուսալ իմում յողորմա-
թիւն քո՝ ոչ ամաչեցուցանես, որով և համարձա-
կիմ անկասկած մատչել առ քեզ։

Ուր ինձ և օգնեա՛ ինձ ով իմանալիդ ունկն
սնարալի՝ պատրաստ 'ի լսել, պատրաստ և յօգ-
նել. սաղ. Ե. 39։ Ես օգնելով, և օգնես լսե-
լով։ Անարժան եմ այս օգնութիւն քում. բայց
դու առաւել հաճիս անարժանիցս պատստել՝ քան
զարժանաւորս բարձրացուցանել. առաւել պան-
ծալի ցուցանի օգնականութիւն քո յապրեցուցա-
նել զմեղաւորս, քան 'ի փառաւորել զարդարս.
առաւել փայլէ խնամք քո յապաքինելդ զկիսան-
դացեալս հոգւով, և 'ի բուժելդ զվիրաւորեալս
մեղաք, քան 'ի կազդուրելդ զառողջս և զան-
վէրս։

Ք. Բանի երանուն էք տիրուհի գիտելս և եթէ
զքեզ ինձ օգնական և պաշտպան. զի որում
դուն օգնես՝ անեղկեան փրկի. և որում դուն
ոչ օգնես՝ անյոյս կորնչի։ Զոր պէս անհնար է
փրկիլ մարդոյ յորմէ դու զաչս դարձուցանես,

սոյնպէս Հարկ է մարդոյ փրկիչ՝ առ որ դու դիմիցէ Հայիս։ Դու յոյս կենաց, և դու ինքն դանձ ողորմութեան. դու լոյս կենաց, և դու ինքն դեղ անմահութեան. դու ծառ կենաց և դու ինքն աղբիւր երանութեան։

Դու լեառն ոն՝ յոր 'ի վերծանիլ մեր ապրիմք 'ի կիսմանէ երկնատեղաց բարկութեան. ԺՆՆ. ԺԸ. 17։ Դու տապան նոյեան, յոր յամփոփիլ մեր փրկիմք 'ի հեղեղաց յարեաց. ԺՆՆ. Է. 23։ Դու քաղաք ապաստանի, յոր յապաւինիլ մեր ազատիմք. ՅԵՍՈՒ. Է. 3։ Դու աշտարակ Հզօր յերեսաց խմանալի թշնամւոյն. զորոյ ջաղխեցեր զգլուխն, և պաշտպանեցեր զանկեալսն 'ի քեզ. ԳԱՓ. Ե. 53։

Դու տապանակ ուխտի. յոր ոչ կարաց մերձենալ նաբուգոդոնոսորն բելիար. այրեաց զնմ անօթս տաճարին, և գերեաց զաղգ մարդկան. այլ սարսեցաւ 'ի քէն, և փախեաւ. Գ. ԹԱԳ. ԺԵ. 14. և որ 'ի քեզ ապաւինեցաւ՝ ազատ կացուցաւ. քանզի ծառայ քո գտաւ. Ե. ՄԿ. Ե. 5։ Ապաւինեցան 'ի տապանակ ոն ադոնիա և յովաբ. և ոչ ապրեցան, զի ոչ ուղղուէր սրտի մերձեցան. Գ. ԹԱԳ. Ա. 50. Ա Ե. 28։ Տակ աբիաթար քահանայ՝ որ արժանի գտաւ մնալոյ՝ նովինն փրկեցաւ. զի կրեաց զնա, և ծառայեաց նմա. Գ. ԹԱԳ. Ե. 25։ Մերձեցաւ 'ի նա և ոչ զայ. բայց հարաւ և մեռաւ, զի ոչ կրեաց զնա յուսիւր. Ե. ԹԱԳ. Ղ. 7։ Ապ. Յլ էս մերձեցայց 'ի քեզ ուղղուէր սրտի, մերձեցայց և կրեցից զի մանալիդ տապանակ յուս հոգւոյ իմոյ. և ծառայեցից քեզ յամ սրտէ. և ակնուսիմ՝ քև ա-

զատութիւն գտանելոյ և փրկութեան հասանելոյ։

Թ. Ի քեզ են տախտակք կտակարանաց. որով ուսանիմ զՀաճոյս ՝ի մէջ։ Ի քեզ է մանանայն երկնային իբր ՝ի սափոր ոսկի, որով լիանամ վերնային բարեաց։ Ի քեզ է գաւազանն ահարկուն, որով խրատիմ խոտորիլ ՝ի ջրէ։

Ա՛վ տապանակդ հրաշալի. ՝ի մերձենալ իմում առ քեզ՝ մերձեցիր և դու առ իս, և հար զփղշտայիս ջարայոյզ սխտիս, և կործանեա զդագոն անձնասիրութեան իմոյ. ա. Ռագ. է։ Ի՛ անդի առ քեզ են աչք իմ. ՝ի քեզ է և յոյս իմ. լեր ինձ պաշտպան փրկութեան։ Ասասարա զիմեալ ապաւինեցաւ ՝ի յայել և սպանաւ. գաբ. ը. 17։ Հաստատեաց զիս ապաւինեալ, և ՝ի մահ դառնաղէտ մատնեցաւ. Եսթեր. է. 7։ Լաս ՝ի քեզ եմ ապաւինեալ. արժանի իցէ քումդ գթութեանդ մերժել զիս, և ՝ի կորուստ մատնել։

Ի՛. զատեա՛ զիս աղաչեմ, ազատեա՛ և զամ միաբան եղբարս՝ որդեգրեալս քոյին ՝ի մայրուն. ազատեա՛ և պաշտպանեա՛. պահեա՛ և օրհնեա՛ զամենեսին զմեզ որք ՝ի սմին աւուր տօնախրմբեալք զտարեկանդ պաշտպանուն քո հանդէս. և առ ընկալ զմեզ ՝ի յաւիտենական փառս ՝ի փառս միածնի քո. որ է օրհնեալ ՅԷ հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն ընդ ամ յաւիտեանս։

Ի՛ՆԵՐՏԻՐ ՂՊԱՊԷՐ ՊՕՆԷՅ. Ծ. 399։

ԾՐ

Երկրորդ կիւրակէ զկնի վերափոխման։

Հանակցուցեալ։

Ա. Արիպէցան նախասահմանեցիցն խորհուրդք 'ի մտաբերիլ նոցա՝ 'ի նմանութի անմահ նելոյ ածութեդ վերանալ։ Զոսոյն մոլեգնութի անմոռացաւ և արուսեակն խաւարին, յասել անդ իւրում. * եղէց նմանող բարձրելոյն ‖ . Եսայ. ԺԴ. 15։

'Ի զբաղ անկան հանդերձ ծննդովք. և սա կոչեաւ հանդերձ իւրայնովք։ 'Ի զբաղ առաջինք և գերագոյնք քան զամ երկրաւոր էուն, և թաղաւոր մարմնաւորացս համայն. և սա առաջին և վերագոյն քան զամ երկնաւոր գոյուն, և պատակ նոցին։ 'Ի զբաղ 'ի պատակեր ածութեդ. և սա կնիք նմանութեանս, լի գեղով. Եզեկ. ԻԸ. 12։ Զարմացար անփոփոխելիդ ածն. զի՞ եղև սա, զի յայսպիսի յանդգնեցան վստահուն։ Մորքաւցար անայլայլելի բնութիդ, զի արարեր զսոսա։ Եւ պիծացեալ ընդ անմոռութի սոցին՝ ոչ ևս խնայեցեր 'ի սոսին. զսկզբնաւորն՝ (որ անզգոյ գտաւ 'ի չարութեն) իջուցեր յանդունս յանարգութի յաւիտենական. փոխանակ զի քան զերկինս կամեցաւ ելանել 'ի վեր. և ոչք պատրեցանն 'ի նմանել նախահարքս մեր՝ ընկիցեր զնոսա 'ի փառաց դրախտին, փոխանակ զի յառաւելն ձկտիլ ժպրհեցան. բայց քանզի խոնարհեցան

և զղջացան՝ ողորմիլ ևս յԺամարեցար։

Այս սակս հաճեցաւ ամենասէր երրորդութիւնդ 'ի խորհուրդ մտանել, զի՞ արասցուք. աւասիկ զոր սամենարուեստ հանճարով և բարեբար խնամով պանծացուցաք, նոքա յանկանալով նմանիլ բնութեան մերում՝ մերԺեցան, և զբարեբարութիւն մեր 'ի նանիր հանել փութացան։ Եւ արդ քանզի նոքա ըղձանան՝ հանդուգնատիպ մեզ կերպարանել, արասցուք ինչ մի այնպիսի, յոր 'ի վեր բերիլ նոցա՝ վերաբերցին 'ի փառս։ Օրինակ ապա. մին 'ի մենք խոնարհեսցի առ նոս, 'ի բնութիւն մարդկային, և լինիցի իբրև զնոս. և տացէ նոցա զինքն տարացոյց ըստ իւր քատակերոյ. որով և յայնպիսի բարձրասցին մեծութի՝ մինչև ժառանգել զՅաժութիւն մեր բովանդակ, և լինել նման մեզ յերանութեան։

Եւ վիճակն աքանչելի՝ որդեսդ ՅՍ. վիճակ, ԸՍ որ հաճեալ հաւանեցար և կնքեցեր ասելով. վիճակ եղ ինձ յընտրութեան երից անձանցս։ Եւ զայս վիճակ ժառանգելով իջեր յերկնից և եկիր առ մարդկութիւս, և ետուր զանձն քո 'ի մահ խաչի 'ի լերինն գողգոթայ՝ սկզբնատիպար գաղափար փարելի։

Հայեցեալ հայրդ երկնաւոր՝ Ը հանդէս սոյնպիսի որդւոյ քո միածնի՝ գորովական հաճութիւն զմայլեցար. և մեզ ազգ առնել փութացար. տեսեալ ասելով և զդոյշ կացէք օրինակիդ՝ զոր ցուցիր ձեզ 'ի լերինն. Ելից. ԻԷ. 40։

Ա.յլ արդ եթէ անմամնիկ էութեան պատկան երևեցաւ նմանիլ նուաստացելոյ բնութեան, մեք զիարդ ըմբռստասցուք հրաժարիլ առ 'ի նմա-

նուէր քումմէ. յոր և հրաւիրեցեր զմեզ քաղցր
ձայնիւ ասելով. եկայք զկնի իմ, և ուսարուք
յինէն։ Մաթ. ԺԱ. 29։

Ի. Ա՛ՅԼ աւա՛ղ ինձ. զի ես այսմ բարեյորդոր
հրաւիրման անսասան գտայ, և հրապուրանաց
չարին հաւանեցայ։ Բաղցրութիւն կոչմանդ զա-
կանջս խցի. և թեւադրութիւն հակառակորդին
ունկն մատուցի։ Ի գթալից մարդասիրութենդ
խորհուրդ ոչ հայեցայ, և յանխորհուրդ յօ-
ժարմունս նախասատեղծից իմոց յարեցայ։ Բաստ
ոճծային հոգեկեցոյց պատգամացդ վէտ քո
չընթացայ. այլ ըստ բերման աղականեալ բը-
նութեան գնացայ։ Որչափ ինչ ցուցեր ինձ
բարեգութիւն քո՝ քեզ լինել նմանակից. և ես
յանմի անմման արձանացայ։

Ի համեմատել զիս ընդ կենարարիդ՝ պատկա-
ռիմ և վհատիմ. զի հանգիստուն ինչ տարազ ոչ
նշմարեմ, և ոչ յիմիք իւիք ամենեին. ոչ 'ի խո-
նարհութեան, զի յելս հպարտութեան անընկճելի
կամ։ Ոչ 'ի հեզութեան, զի 'ի մրրկեալ սրտանուն
համակեալ եմ։ Ոչ 'ի համբերուն. զի 'ի վշտա-
տեաց անժուժուն վարակեալ եմ։ Ոչ 'ի սրբու-
թեան. զի յանմաքուր վարս աղտեղութեան շաղա-
խեալ եմ։ Ոչ յողորմուն. զի յանգութ բարս
բնաւորութիւն խոտացեալ եմ։

Ցեսի զնոցդ փառաց յանարգանս աղքատուն.
և ես 'ի փառս և 'ի մեծութիւս ձգտիմ։ Ցեսի
զերանութիւնդ 'ի չարչարանս և 'ի տանջանս. և ես
'ի փափկութիւնս և 'ի սփոփանս ձգտիմ։ Ցեսի
գանստուէր լոյսդ 'ի խաչին սփռեալ մարմնով.
և ես 'ի ստուերաց խաչի խուսափիմ։ Եւ զի

դործեցեալ եղկելս 'ի հետապօտիլս իմ յաւուրն համառօտի (թ յաւուրն պատասխանի) ոչ գիտեմ. և կամ զկարդ մարթացայց մատչիլ առաջի առ 'ի տալ պատասխանի՝ հասու լինել ոչ կարեմ։

Լութիւն արդարև սահմանեալ իցէ իմ 'ի հօրէն լուսոյ՝ ժամանեալ յարքայութիւն փառս, կնքեալ ևս է՝ քեզ լինել կերպարանակից. զի զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել քեզ. հռովմ. ը. 29։ Ոչ ապաքէն սՕք ոմ ըստ սմին պայմանի 'ի քեզ կերպարանեալ՝ քան փառաւորեցան յարքայութիւն։ Լսեալ առ քեզ. և փառաց քոց հաղորդակից եղեն։ Լոստոստմնօղք և ճգնաւորք, կուսանք և ոմ արդարք, զմարմինս իւրեանց ընդ քեզ 'ի խաչ հանելով՝ յերանալուծարձ և յանապական ուրախութիւս երկնից բարձրացան։ Լու որք միանգամ առաւելեան 'ի կերպարանակցութիւն քում, աստիճան քան զաստիճան առաւելեան և 'ի փառակցութիւնդ։

Ը. Յոմի 'ի սոսա և 'ի վերք քան զամենեսին զսոսա՝ անճառութիւնք անհասականաւ, և անհամեմատ դերազանցութիւնք բարձր տպացաւ նմանակցութիւն ամենօրհնեալ մոր քո և կուսի, ըստ նմանակցութիւն մոր և որդւոյ, ծնողի և ծնեցելոյ, հարսնացելոյ և փեսայացելոյ. և այնպէս առաւել՝ քան զոր չէ հնար զմտաւ ածել. ոչ

միայն յառաքինութեաց սակի, և 'ի շնորհաց սահմանի, այլև 'ի բնաւորական կարգի։ Լսակ 'ի խաչակցութիւն՝ անպատուամ և անպայման. զի թէ պետ և ոչ բևեռեցաւ 'ի խաչափայտի, բայց զՀեղուսեալդ 'ի նմին 'ի հոգի իւր ընկալեալ առ խաչին՝ զնամ տանջանացդ կսկծագին ցաւս սեպհականեաց յինքն։ Այնչև հիմնալ անմարմնական պետութեց՝ և ապշիլ ի այսպիսի նորոյն խաչակիցն գոլ։ Լսև թագաւորդ փառաց՝ որ 'ի խաչին տանջիր, ի երաշխեպ կրից նորին զարմացեալ կայիր։ Լսս զոր դուն գոչէիր, լցաւ չարչարանաց անձն իմ, սաղ. ՀԷ. 3. Նա զնոյն բարբառ արձակեր յայլ ինն ձայն առ սեղոմ. Լցկ՞ արդեօք ցաւ ըստ ցաւոցս լեալ.

ողբ. Ա. 12։

Լսս քանզի դու ինքնին որ վկայեցեր՝ թէ պարտեր քեզ չարչարիլ, և այնպէս մնանել 'ի փառս իւր. զոհ. ԺԲ. 26. զնոյն և 'ի մայր քո սանծաց ցուցեր. և 'ի փառս իւր՝ զոր վա ոնծամայրութեանն և շնորհաց առաւելութեան ժառանգեցուցեր, խաչակցութիւն ևս 'ի նոյն վերս առեալ աքանչացուցեր զերաստիւնն համարին արարածական բնութեան։ Որ վերաբազմեալ յանհաս բարձրութեան բարեբանի 'ի վերին զօրաց իւր վայելչատիպար նկար քումդ կերպարանաց. և երկրպագի յիմ գոյից ոչ միայն իւր մայր այլ և իւր գանձ ոնծային շնորհաց, այլև իւր համանիստակիր չարչարակից հանդիսին աշխարհակեցոյց քումդ տանջանաց։ Որոյ անանահանջելի մայրագութեան բարեխօսութիւն աղաչեմ զփրկիչդ իմ զօրացուցանել զիս 'ի փոյթ կերպարանակից լինելոյ

քեզ 'ի քումդ խոնարհութիւն և հեզութիւն. 'ի քումդ սրբութիւն և արդարութիւն. 'ի քումդ համբերութեան և տանջանացդ յանձնառութիւն։ Լուկիր առ իս յո՛, և եղիր իբրև զիս. զի և ես եղեալ իբրև զքեզ, և եկիցուք առ քեզ։ Բայց քանզի գիտես զի տկար եմ և անզօր, նա՛ յընթացս իմ կասկածաւոր, և 'ի կեանս իմ վտանգաւոր, դու ինքն արիացո՛ զիս 'ի սոյն. և դու ինքն արա՛։ Յօրինեա՛ և յարդարեա՛ զտաճար հոգւոյս 'ի նմանութիւն կերպարանաց ՅԾՄՈՅԼ խորանիդ. և շնորհօք քո զարդարեալ զիսոնարհուն շինուածոյ մարմնոյս՝ ընկալ զիս 'ի դասակարգութիւս խաչակիցելոց Ի՛ քեզ, և փառաւորելոց 'ի քեզ յաբբայութիւն քում. զի և ես ընդ նոսին օրհնեցից զքեզ յաւիտեան։

ԾԳ

Լորդոր կիւրակէ զկնի վերափոխման։

Համաձայնուած կամաց մեր ընդ կամացն ՅՈ։

Ա. Աեծափափաք տենչանօք ըղձանամ՝ 'ի միակամութի հաստատիդ քերիլ, համաձայնեցուցանելով զկամս իմ Ի՛ ամենամբ կամաց քոց. յորում՝ քոյդ իցէ իմ, և իմն գլխովին քո։ Բոյդ կամք կանխեսցէ առիս. և իմն յետի զքոյդ երթիցէ զհետ, ո՛չ իբր այլ, այլ իբր նոյն. ո՛չ իբր երկու 'ի միասին զօդեալ, այլ իբր մի՝ 'ի միութիւն հաստատեալ։ Յետի քոյդ ևեթ թագաւորեսցի, և իմն ընդ քոյդ լրասցի։

Մի՛ արձանացսի՛ ի հոգիս կամք՝ ինձ սեպհա-
կանեալ, այլ կամք՝ ի քոյդ փոխարկեալ և քոյդ
լեալ՝ ըստ երանելեացն վիճակի։ Զայնիւ և եթ
ասասցի իմ և քո. ՝ի գոյութեանն ամենևին և յամի
քոյ։ Որով և ձշմարտեսցի յիս ասել առ քեզ
* ոչ իմ կամք, այլ քոյդ լիցի ॥ ղուկ. ԻԲ. 42։
Իմ կամք այն է՝ զոր դու կամիս, և ոչ այն զոր
դուն ոչ կամիս. զի զայն միայն կամիմ՝ զոր դու
կամիլ ախորժիս. և զայն և եթ չկամիմ, զոր
դու կամիլ ոչ հաճիս։ Ի տարբանալ այսր միա-
կամութեանէ՝ ի հոգիս՝ մասն և բաժին երջանկու-
թեան սքոց հանդիցէ յիս։ Ի արձցի յինէն այնու-
հետև խռովութեան վարանական, և հաստատեսցի
խաղաղութեն անդորրական. անհետասցի շփո-
թութեան տագնապիչ, և տիրեսցէ հանդարտու-
թեան բերկրեցուցիչ։ Ի՝ չիջցին և չիջցին՝ ի ընչա-
ւորս մարդ՝ յարուցմունք կրից, և ստեղնեսցին՝ ի տեղի նոցին հոգևորական բուրմունք ա-
նուշից։

Յամի՛ ի սոսա՝ ի զօրանալ կամաց հաստչիդ՝ հա-
մակամութեան հոգւոյս և զօրացեալ՝ կազդուրի
և կազդուրեցուցանէ զիս. և զբորբոքմունս այլ
օրինակ բերմանց զգայութեանս դիւրացուցա-
նէ։ Ի՝ ազդմունս անդիպս ընութեան բարե-
կարգէ. և զամենայն կասկած և զերկիւղ կո-
պարաւորէ։

Ի՝. Այսմ տարացոյց ետուր մեզ զանձն քո
միածին որդի՝ այ. քանզի՝ ի տագնապիլդ՝ ի
պարտիզն, և՝ ի պաշարիլդ յերկիւղն մեծի՝ ըզ-
միակամութեան քո ընդ հօր քում կամաց՝ առա-
ջն առնելով՝ զերկիւղ քո փարատեցեր, և ըզ-

տագնապ Հոգւոյդ տարագրեցեր. ոչ զի կարօտ
էիր՝ ստիպեցար զայս առնել. այլ զի կարող
էիր՝ կամեցար մեզ օրինակ ցուցանել։
Սմին սակս և մեք ի տագնապիլ ի չարաչար
կրից՝ յանդիման մատուցանելով քոյդդ զհամա-
ձայնութիւն կամաց մերոց՝ անդորրանամք. և յան-
կարելի մեր յաղագի ազգի վիշտս՝ զսոյն ունելով
յանձինս՝ առ քեզ ապաստան լեալ՝ անվրդով
մնամք. քանզի հաւատաւոր գիտեմք, զի ա-
ռանց քոյդ կամելոյ ոչինչ ներգործի յերկրի.
ոչ մնալ մի ի գլխոյ մերմէ բարձեալ անկանի, և
ոչ տերև մի ի ծառոց ինքնին ոչ շարժի։
Դու ես՝ որ գոյաւորես զնոմ, և ի ձեռս քո սպ-
բագրի ամ. ի կամիլդ կատարի՝ որ լինելին է. և
յոչ կամիլդ՝ ոչ վճարի ինչ։ Լցեթ պատիժք պա-
տուհասի սեղապին զմեզ՝ չունիմք ինչ ասել՝
բայց եթէ զդաւթին բարբառել զձայն. * լուա
Եղէ, և ոչ բայցի զբերան իմ, զի դու արարեր։
սաղ. ԼԷ. 10։ Լցեթ լերինք տապալեսցին, և ե-
թէ պետուրթիք կործանեսցին, զնոսյն վերագո-
չեմք. ի ձեռին քո է ամ, և ոչ ոք է՝ որ հակա-
ռակ կայ կամաց քոց. Եսայի. ԺԴ. 9-11։ Լցեթ
սովու խստուրիք ի վրայ հասցեն, և եթէ ծովու
ալէկոծութիք բարձրասցին, աղաղակեմք առ
քեզ. քո է երկիր, և քո է ծով. և ամ ինչ
քումդ սպասէ հրամանի. սաղ. ՃԾԸ. 91։ Որ
կամիս՝ պատրաստ եմք պատկառ կալ ակնարկու-
թեան քում։ Լցեթ յաջողութիք ձեռին գործոց
յաճախեսցին, և եթէ բարօրութիւնք կենաց
պայծառասցին՝ ցնծալից եղանակեմք. օրհնեալ
է բարեհաճութեան կամաց բարձրելոյդ։ Օր ոչ

զոր մեքս ախորժեմք՝ զայն կամիմք, և ոչ ընդ
որ հաճիմք՝ զայն խնդրեմք. այլ զոր դու ՝ուրդ
ախորժիս, և ընդ որ դու միայն հաճիս. զի ՝ամ
յօժարութիւք մեր և ՝ամ կամեցողութիւնք մեր՝ի
քեզ են և առ քեզ լերին. քանզի են և՝ի քոյդ ա-
մենահաստիչ խնամն յեցեալ կան։

Բ. Այս բարբառ հնչէ՝ի բերանս բոլորեցուն՝ ե-
թէ հաւատացելոց և եթէ՝ի հաւատոյ թիւրեալ-
ոց։ Զամենեսին բարբառ է արտաքին, այլ՝ի
սակաւս է հաստատութիւն նեբբին. ՝Ձնմարտուն
է՝ զոր խօսին, այլ բռնադատութիւն է՝ զոր խոս-
տովանին։ Օ՛ի թէպէտ և գիտեն՝ թէ այնպէս
է, բայց ոչ կամին թէ այնպէս իցէ, այլ ըստ
կամաց անձանց իւրեանց վինձակեսցէ. և յոչ
յաջողել այսր՝ խուճապին այլայլաբանել. զի՞նչ
կարեմք ասեն առնել, ՝ուժ է՝ որ այսպէս կամի.
և սովին այսու զոր ՝ձնմարիտ ՝ճանաչեն՝ ակամայ
առաջի գնեն։ Այլ է այս կամաց միակերպուն,
այլ՝ մտաց և եթէ համաձայնութիւն։

Ըստ սմին սակի և իմն սահմանի վայրագուն.
քանզի յիրաւի բերանով խոստովանիմ, բայց
այնպիսի գալ ոչ հաճիմ։ Կամիմ զի կատարես-
ցին՝ ոչ զոր դու կամիս, այլ զոր ես ախորժեմ.
է՝ զի ակամայ կամիմ, և է՝ զի արտանձնօք զի-
ջանիմ. է՝ զի տուժանօք մաշիմ, և է՝ զի տա-
ժանմամբ տարուբերիմ։

Գ. Օ՛ մի՞ ոչ մտաբերիմ, և հիմ չխորհիմ թէ
քանի՛ բարի են կամք քո. ուշիշ և արգար. ո-
րով վարես զ՝ՀՍ ըստ անհուն իմաստութեանդ։
Զ՝թէ որ չափասահման իմաստութիւն կամիցէ
ինչ առնել, և առնէ՝ հաճելի համարի զոր գոր-

ծէ. քանի՛ եւս զոր կամիս գու, և առնես անսահման իմաստութիւն քոյ։ Լա՛ զի նոյն իսկ հաճութիւն կամաց քոյ՝ յանբաւ բարութիւն հաստատեալ՝ յամի զարին ներգործէ, և որ բարեգոյնն է՝ ի նոյն կատարէ։ Ո՛չ երբեք մարթի վրիպիլ, և ո՛չ բնաւ ինչ կարէ թիւրիլ։ Ո՛չ առնէ՝ զոր ո՛չ ուղիղ ճանաչէ. և ո՛չ վարէ՝ զոր ո՛չ արժան տեսանէ։

Ի՞սա սմին չափու չափեալ զամ՝ ի կամիլդ ինչ՝ ո՛չ միայն զփառս քո կշռես և ուղղես, այլև զոգուտ մեր դատես և դիտես. նա՝ համարձակիմ վկայել ես արտաքին իմն անտեսութիւն, թէ առաւել հաւանիս յօգուտ մեր հայել, քան՝ ի փառս մեծվայելչութիւն քո միտել։ ՝Ի կոռավարելդ զամ՝ յամի զարիս վանել փութաս, և զարին մատակարարել հոգաս։ Ի՞մնեցուն նպաստել փափաքիս. և ամենեցուն զիւր արժանն պարգևել յօժարիս։

Օ՜այդպիսի գորովագութ հաճութիւն կամաց տեսանելով յարարիչդ իմ՝ յայսմհետէ յո՛ և ի՛ցէ դիսպուճածս զլսութիւն այդր քոյին կամաւորութիւնդ առաջի իմ ունելով՝ ուրախութիւն և անդորրութիւն նմին զհետ ընթացայց. և ըստ նմին անտրտունջ և անտրտում զկենաս իմ բուլոր՝ անօրինել փութացայց։ Ո՛չ եւս խոժոռամիտ խորհեցայց՝ թէ ընդէ՞ր այս այսպէս և այն այնպէս իցէ. այլ միշտ բարեբանելով զարեհաճութիւն քո՝ ցնծութիւն երգեցիս և ասացիս. եղիցի կամք քոյն օրհնեալ. յովբ. ա. 21։ Ո՛չ եւս հոգովք հաշեցայց՝ թէ զի՞նչ լինելոց իցէ, և զի՞նչ անձինս պատահելոց. այլ զամ՝ ինչ ամե-

նախնամ տեսչութեան քում յանձն արարեալ՝ ոչ զիմն խնդրեցիս կամսոյ կատարումն, այլ զքոյդ միայն՝ ասելով. բարձրասցի յանմի կամք քո 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի։ Լինիցի յայսմ ամի միացուցիս զկամն իմ ընդ կամսոյ քոյ, 'ի լինել կամսոյդ՝ լինիցի և կամք իմ, թէ և ընդդէմ թուիցի. զի այն ոչ ևս է իմ, այլ քո. որով և 'ի կատարիլ կամսոյ քոյ՝ կատարի և իմ։ Ա՛ռ այն եթէ հասցե 'ի վերայ իմ յետ այսորիկ աղքատութեան, գիտելով թէ այն է կամք քո, ընկալայց սիրով, և տարայց խնամով։ Լինիցի վտանգեսցէ զիս հիւանդութիւն մարմնոյ՝ ոչ դժկամակեցայց, այլ յօժարութիւն փարեցայց, և բերկրալից սաղմոսեցիս՝ ասելով. զաւակ փրկութեան ընկալայց 'ի ձեռանէ քումմէ, և զանուն ամենայն իմոյ կարդացից. սաղ. ՃԺԵ. 4։ Լինիցի պաշարեսցէ զՀոգի իմ դառնութիւն դժոխոյ՝ ոչ յուսահատեցայց և ոչ պժգացայց. այլ 'ի քեզ եղէց ապաստան, և աղաչեցիս ասելով, * Հայրդ իմ՝ եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու ։ մատ. ԺԶ. 39։ Լինիցի յարիցեն 'ի վերայ իմ ընդդիմութիւնք և հակառակութիւնք, չարախօսութիւնք և ձախողդութիւնք, վրդովմունքներբինք և դրդռութիւնք արտաքինք, յանմի 'ի սոսա սփոփեցայց 'ի կամս քո անդեսս խորհրդով, ասելով. այս է կամք ամենայն. այսպէս կամի ամենայն. այսպէս կամիմ և ես։ Այսպիսի կենաց տարփամ կեալ ամենայն իմ, և այսպիսի կենաց ցանկամ ընդ քեզ լինել. յայսպիսի կենաց ծառայել տերութեան քում, և այսպիսի կենաց ուրախանալ 'ի քեզ. յայս և 'ի սոյն

խաղաղութիւն ունելոյ, և 'ի սոյն յայս զուհաբ-
թութիւն մեռանել։

Դու ես ի սոյն հաճիս, և զսոյն յինէն խնդ-
րես. եթէ հաճիս՝ յաջողեա ինձ աղաչեմ ըստ
սմին անդորրիլ. եթէ խնդրես՝ խնդրեմ և ես
արժանի առնել զիս այսմ հնարքի. զի առանց
քո չեմ ձեռնհաս յիր ինչ։ 'Ի քեզ ապա ապա-
ւինեալ՝ քեզ յանձն առնեմ զկամս իմ. և
յայսմ յանձնարարութիւն անշարժ մնալով օրհ-
նեցից զքեզ 'ի կեանս իմ, և 'ի կեանսն յաւի-
տենականս։

ԾԴ.

Աղաչեալ ի Տէրն։

Ո. Ո արեգակն արդարութիւն կրելով յամե-
նամաքուր քումդ որովայնի, ոչ ա-
մենատայծառ երկինք վերհագոյն, արփիացար
այսր 'ի տան զաքարեայ և եղիսաբեթի. և լու-
սով նորին լուսաւորեցեր զյարին անլոյս։ Լու
յողջունել քումդ հրեշտակային շրթամբք զե-
ղիսաբեթ՝ լցեր զնա հոգւով Ցով. և զՀառա-
գայթ սրբութեդ ծագեալ յարդանդ նորին՝ սրբ-
քեցեր՝ որ 'ի նմա գյաւաջընթաց լուսինն։
Որոյ 'ի յանդիման լինելն գեղջապանծ արևուդ՝
լքացաւ և կատարեցաւ ըստ կանխագուշակին լի-
նելոյ մարգարէին՝ թէ 'ի ժամանել արդարու-
թեան. * կատարեսցի լուսինն ॥. սաղ. հա. 7։
Զոր և յայտնի ետես աւետարանիչն 'ի տես-

ղեան. յայտ. ԺԲ. 1։

Յերևիլ քո՝ի տան եղիսաբեթի երկինք ցուցաւ տունն. յորում մեծ իմն նշան փայլեցաւ. յայտ. ԺԲ. 1։ Լու՝ի բարբառիլ քո՝ բանն ոՀ՝ որ յարդանդի քում՝ ձայն բարբառոյ յօրինեաց զմանուկն. քանզի բանի է բնական՝ յելանել անդ արտաքս՝ ձևացուցանել զձայն։

Ընդ որ սպշեալ և նմին իսկ սրբեցելումն յարգանդի՝ ցնծացաւ ցնծութիՀ մեծ. և ընդ առաջ ելեալ երկիր եպագ յղացելումն յորովայնի քում և քեզ. զի ծանեաւ զնոր իւր և զմայր նոն իւրոյ. և չկարելով յանձկութիՀ վայրի բերանով բարբառ արձակել՝ եբաց զբերան մեր իւրոյ՝ աղաղակել առ քեզ բարձրաձայն, և ասել. օրհնեալ ես դու՝ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո. և ուստի՞ է ինձ այս, զի մայր ա բարչին իմոյ եկեսցէ առ իս, յինքն ունելով զնա, և նովին այց արասցէ ինձ. զիարդ է՝ զի տիրուհի՝դ իմ և տիկին ինձ՝ի յանարդ յարկ աղախնոյ իւրոյ. և թագուհի՝դ երկնի և երկրի խոնարհեսցէ՝ի տեսութիւն մեր ծառայի իւրոյ.

ղուկ. Ա. 42 – 45։

ԼուՀար զայսոսիկ և ոչ զարմացար, զի ոչ նորոգ ինչ իմացար, և ոչ յայլօրինակ իմն բերկրութիՀ յափշտակեցար. զի՝ի լուսի ցնծութիՀ եկիր, և՝ի նմին գերամարտ ՀՀոխանայիր։

Օ որ և մասնաւորել կամելով եղիսաբեթի, ՝ի բովանդակիլ բանից գաբրիելի՝ ՝ի նոյն փութացար՝ փութանակի ընթանալով՝ ՝ի լեռնակողմն, առ՝ի լեռնայնոց իմն խորհրդոց բարձրագոյն լրումն։

Հընթանալ քում սրբուն 'ի տուն անդր՝ ոչ տարակուսիմ թէ նաև զօրք երկնային ընդ քեզ ընթանային յառաջոյ և զկնի · և իբրև անիւք կառաց փառաց անեղին վերանթևէին թռուցանել · առաւել հիանալով ընդ խոնարհութիւն բարձրացելոյդ քան ը բարձրուն խոնարհեցելոյդ ։ Կա զի նոր ինն տեսին · կոյս մի յարգանդի ունելով զոնծ իսկապէս , հանդոյն տատրակի՝ ուր և կամի , որպէս և հաձի գնայ փութապէս ։ Լոցին արագութիւն մեծ էր · այլ քոյդ առաւել ևս , ոչ ըստ քայլիցդ ընթանալոյ , այլ ըստ զօրութեանն ներգործելոյ · քանզի հոգի ոչ թեւաւորեր զքեզ հոգեպէս · և բանն ոնծ յընթացս կառավար լիներ տիրուհւոյդ մեծի տիրապէս ։

Ը · Կրկին զեղուս աւասիկ ձառիս բնաւորուն՝ բերիլ վերստին 'ի բանիս բերկրութիւն ։ Բանզի զմտաւ ածել հիանամ , միանգամայն և զուարձանամ · 'ի հասանել քում 'ի տուն անդր , և յընծայելդ զողջոյն խնկելի , որ ուրախութիւն հնչեաց յականջս եղիսաբեթի և զաքարեայ և նորին իսկ յովհաննու · յաիշտակեցան և ապշեցան · և սկսան գոչել · * ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում ‖ · Երգ · Բ · 12 ։

Ի մեռնելոցն և 'ի սքանչացումն մեծ՝ 'ի հասուս լինել նոյ , թէ քնակեալն յորովայնի կուսիդ սրբեաց զնակեալն յորովայն ամլոյն · քանզի յայտնի տեսին , զի * արար ոնծ զիրկութիւն 'ի մէջ երկրի ‖ 'ի յարգանդ հողեղենի · սող · Կգ · 12 · Փրկուն մեծ՝ ընդ որ ոչ ևս կարաց սատանայ ձեռն արկանել ։ Լսմուտ տասպանակ ուխ-

տէն 'ի տաճար փղշտացւոց՝ և անկաւ դագոն. խորտակեցան և դաստակք նր։ Լ՝ մնանել և երկնային տապանակիդ 'ի տուն զաքարեայ՝ անկաւ սատանայ, որ բանիւ սկզբնական մեղաց տաճարացուցեալ էր ինքեան զյղացեալն. և հատան դաստակք ձեռաց նր. և ոչ ևս մարթացաւ մնան միսել 'ի նա։

Լ՝ նա ինքն բանն ասծ՝ որ կործանեաց 'ի տաճարի անդ զսատանայ, լցոյց զնոյն զայն տաճար շնորհօք և պարգևօք. և եղծ զնա անդէն մարգարէ, և զուշ խորհրդոց նորուն էրայ, մինչև յայտնի ճանաչել՝ թէ որ կայ յարգանդի քում, որ իւր է. վայ և յորովայնէ յորովայն երկիր եպագ նմա և քեզ։

Տէ՛նա յառաջագոյն իսկ բռնութիւն ի՛ն 'ի սոյն ցանկայր նա ինքն, և սմին սպասէր. և 'ի շուրջն հայել՝ ոչ նշմարելով յիմիք զփափաքելին իւր, իբր յոգւոց երանելով հառաչէր։ Հայսպիսի ըմբռնիլ փափաք այսր նորոյս եղիայի՝ ինչեաց ասկաղոնացին իբրև հողմն, թէ ինքն իցէ. հայեցաւ 'ի նա. այլ ոչ 'ի հողմն որ։ Շ արժ եցաւ տերութիւն հռովմէական՝ թէ իցէ ի՛ն. և ոչ 'ի շարժման որ։ Ա առեցաւ հուր խնկոց և ողջակիզաց 'ի ձեռն քահանայից, թէ իցէ ինչ. և ոչ 'ի հուրն որ։ Լ՝ ահա ձայն մեղմոյ ողջուն՝ յամենամաքուր օդդ սիրալի. 'ի քեզ եմ ես զնա և ցնծացաւ ը առաջ նր յորովայնի մոր իւրոյ իբր յայրին եղիայի. և երկիրեպագ խայտալով։

Գ. Թագ. ԺԹ. 9 – 13։

'Լ՝ տեսանել փառաւորեալ Թագուհւոյդ ըզպանծալի իրսդ, և 'ի լսել զգերազանց բանսդ՝

ցոլացուցեր և դու զՀուր բորբոքման բոցոյդ Ը
ամենանոր բերան քո , հրաշաբանելով բանս 'ի
վեր քան զբան , յասելդ . * մեծացուսցէ անձն
իմ զՏեր ‖ . ղ.ԽԵ. ՝ . 46 ։ Յայս ձայն եբաց զբե-
բան քո բանն ՝ուծ՝ որ բնակեալն էր յորովայնի
քում։

Օ արմանամ, զի դաւիթ մարգարէ 'ի ցանկալն
մեծացուցանել զՏՀ՝ ոչ բաւելով ինքնին բո-
վանդակել՝ հրաւիրէ զամենեսեան 'ի նոյն , և
գոչէ ասելով . * մեծ արարէք զՏեր ինև ‖ սաղ. ԼԴ.
3 . իսկ դու օրիորդ 'ի չափս՝ յանչափս բերեալ՝
պանծագոյնս հրաշացուցեր այսօր զբան քո ա-
սելով . զոր ոչ զօրէն արարածք համայն մեծա-
ցուցանել՝ ես ինքն անձամբ անձին մեծացուցա-
նեմ զնա ։ Լու յիրաւի մեծացուցեր . զի որ յա-
ռաջն էր ՝ուծ ՝ուծոց՝ արարեր զի իսկ ՝ուծ ՝ՀՀմաբ-
տին ՝այ յղացելոյ մարմնով յարգանդի քում։
Մեծամեծս արար Ը քեզ Հզօրն . Հզօրացար և
դու մեծ առնել զնա . վՀՀ և անսահման օրՀ-
նութիՀ մեծացար 'ի նմանէ ։ Լու ահա յայսմ
հետէ երանեն քեզ ՝ամ ազգք և ազինք , երկ-
նաւորք և երկրաւորք . երկիրպագանեն քեզ և
սանդարամետականք . և սարսին յանուանէ
քումմէ ։ Լայս անՀաւ գերազանցութիւն քո
հրատարակեցաւ այսօր 'ի տան Եղիսաբեթի .
որով ցուցար գեր 'ի վերոյ քան զամենայն արա-
ածս։

Ը . Ոչ գերամբարձ բարձրութիՀ տիրուհւոյդ.
նախասահմանեցար 'ի միտս ՝այ 'ի վեր քան զՀՀմ
իբրև մայր ՝այ . և 'ի գալդ յաշխարՀ ցուցար
բարձրացեալ 'ի գլուխս լերանց բարձրացելոց

յերկրէ յերկինս, իբրև զլեառն մածեալ և պա-
բարտացեալ յանսահման իմաստուէն ոյ. սաղ.
ԺԷ. 16։ Լեառն մածեալ՝'ի սահմանիլդ ծնօղ
որդւոյն ոյ, և լեառն պարարտ՝'ի ծնանիլդ
զորդին ոյ։ Լեառն մածեալ՝ յինքնդ, և լեա-
ռքն պարարտ առ որդիդ։ Հորոյ բարձրութիւն
յորդեն իջանեն'ի մէջ ընորհք և պարգևք. և
հոսեն'ի ծառայս քո ոսկեաւազք ազգի ազգի
առաքինութեաց։
'Ի քեզ իբր'ի լեառն բարձր էջ ոճ հայր. և'ի
քէն ետ մէջ զպատգամ իւր զքանն յաւիտենա-
կան. Եսայ. ԺԸ. 20։
Հնիջանել նը'ի քեզ՝ լսարբոքեցար բոլոր բոցով
ոճուութիւն, և'ի նոյն վերանալով՝ եղեր իմանալի
երկինք հրեղէն, և սքանչելի երկինք լուսեղէն,
նա ամենահրաշ երկինք ոճեղէն։ Երկինք բար-
ձրը և առաւել բարձր. մինչև զկայ առնուլ ա-
մենակարողին ոյ յայլ ևս եկանելոյ'ի վեր։ Ո
զի կարող է՝ որ կարէն, ներգործել հրաշս մի
քան զմի գերազանցս. բայց ոչ գեր'ի վերոյ
քան զքեզ. զի բազմեալ կաս'ի ծագ հրաշից։
Օ արմանամ և ապշիմ, զիարդ է, զի'ի հողե-
ղինաց գոլով սահման՝ քան զսահման հոգեղէ-
նաց բարձրացար. և զամենակալին ինքնութիւն
'ի քեզ կրելով կալար զբազուկ նը՝ չկարել'ի
վեր քան զքեզ ստեղծագործել ինչ'ի գերբնա-
կան կարգի։ Թէ արարչագործեսցէ ևս զմի-
ծամեծս՝ զամենեցուն նոցա բովանդակէս զկա-
տարելութիւն բովանդակելով'ի քեզ զբովանդա-
կիչն ոճմ կատարելութեաց։ Ի Էականութեաց կա-
տարելութիւք ասին և են ինչ. իսկ քոյդ իբր ա-

նօթ նոցին։ Որ ինչ են յաշխարհի՝ իբր ի քաւ զաբի են. զու քաղաք ՅՍ, յորում ամենեցուն պարագրին զանձք և մեծութիւք։ յայտ. իԲ. 18։

Ա.Յնչափ է քոյդ գերազանցուն տիրուհի, մինչ չեւ ջրբել աւետարանչաց ի գովութիւն առնուլ, և զայն իւիք արտայայտել. զայս ասէթ եդին առաջի՝ թէ է մայր ՅՍ. առ որ ոչ հասանէ միտք մարդոյ։ Ա.յլ՝ ոչ գրել նՅ և այլոց, նա ինքն որդի քո միածին գրիչ առեալ զսոդոմին նովաւ գրեաց զզարմանալիս. քայց քանզի անՁաւ և անպատուս են գերազանց կատարելութիւք քո՝ նա ևս նահանջեալ՝ նմանաբանութիւք խօսեցաւ և զքան իւր աւարտեաց ի լուսի։

Լսակ զոր մեզ հնար է ասել՝ ինքեմք. մի միայն է երանուհին մարիամ, փառաւորեալ յաւիտեան։ Օրոյ այսօր տեսաք զսկզբնափայլութիւն ի տան զաքարեայ. և ամենանիմք ևս վայելել յանհասանելի բարձրութիւն երանութեանն քո յաւիտեանից։

Ի՝ՆՆԵՐՈՅԻ ՂԼԱՓԷՐ ԳՈՒՆԻ. Է. 215։

ԾԵ

ՆՈՒՈՒՆԴ ԱԲ ՅԱԾԾԻՆ։

Ա. Ի՝ խոր խաւարի տատանեալ խարխաբէաք, վարակեալ ի մեղս, և տրորեալ յանօրէնութիւն։ Ոչ ի բարին հայիլ զօրեաք՝ զոր առնել պարտաւորէաք. և ոչ զբարն նշմարել կարէաք՝ յորմէ խորշիլ հրամայեաք։ Ի՝ մթան

անդ ոչ դոյր տեսուն, այլ միայն շշաֆումն։
ուստի և խաւար շշաֆելն ասացաւ։ Ելից։ Ի։
21։ քանզի շշաֆմամբ փոքանոյ փարանեաք և
դանդաղեաք, գլորեաք և տապալեաք։
Լարկարեցաւ գիշերն մեր, և հիւանդութիւն մեր
ծանրացաւ։ Հոգ տոնայտուն մերոյ առաւելաւ,
և տագնապ թշուառութիւն մերոյ սաստկացաւ։
Հեծուն մեր յոգւոյ ելանելոյ մաշեցաւ, և ա-
զաղակ սրտից մերոց բարձրացաւ։ Ոչ լոյս տե-
սանելոյ, և ոչ յոյս ելանելոյ։ ոչ ուստեք այցե-
լուն, և ոչ ելից հնարաւորն։
Ի տառապել մեր յայսպիսի յուսակաւոր աղէտս
փառք երևեցար մեզ այսօր պանծալի ծննդեամբ
սուրբ ամենափառաւորդ։ զի կոյս մարիամ։ և ահա
ընդարձակեցաւ ընկճեալ և նուաստեալ հոգիս
մեր։ և պարզեցաւ միգապատ սիրտ մեր։ ան-
դորրացաւ ցաւալից մեր կեանք, և բացան շըբ-
թունք մեր յօրհնուն գոհուն։ Երևիլ քո այ-
սօր իբր արուսեակ գեհարթարար՝ առաւօտ խա-
ղաղուն ցուցար մեզ։ և փարատեցեր զթանձր
թախանձութիւն մեր։
Յայս վայր ի թախանձանս մնտուցեալ առ ած
աղաղակեաք՝ նայիլ ի մեզ և լուսաւորել զմեզ։
և իբր պայքարելով կագեաք ընդ նմա՝ անհան-
գիստ առնելով զնա։ Եւ նա փոխանակ լսելոյ՝
ի բարկուն շարժեալ սպառնայր, և զմեզ վա-
նել և վարել փութայր։ Եւ ահա ի ծագել
քում յաշխարհս հրաշափառանոս՝ զիջաւ և էջ ի
սրտմտութիւն։ և ձայն արձակեաց առ մարդկութիւն՝
դադարիլ ի կռուոյ թախանձանաց ասելով։
*արձակեա՛ զիս։ քանզի այդ եղև։ Ծնն։ Լ։ 26։

խաղաղասիրը այսուհետև, զի ծագեսցէ առաւօտ բարի. ծագեսցի զկնի նոր և արեգակն յաւիտենական փառաց. և լրացուսցէ զնամ։

Գ. Զարձեալ յիրաւի, 'ի ծագել իմանալի առաւօտուդ մեկնեցաւ աշխարհակուլ գիշեր տխրութեան մերոյ. և սկիզբն եղև աւուրց ուրախութեան և խաղաղութեան. և որ մեծն է՝ գագարումն եղև գաստապարտութեան, և տոնաւ գթաւականութիւն փրկութեան. փախեան դևք իբր գողք և իբր գազանք խաւարընթացք. և մարդիկ ելին 'ի գործել զգործս արդարութեան. սաղ. ՃԺ. 23։

Գ. Թանացեալ ապա մեր այսմ մեծի շնորհի յողորմութիւն բարձրելոյն՝ գոչեմք առնս. * լցաք առաւօտու ողորմութիւնքդ ով ||. և հանգոյն բևեռաբնակ հիւսիսայնոց խնդամք և պարեմք. և գովութիւն մատուցանելով բերկրանշոյլ առաւօտուդ՝ օրհնեմք և բարեբանեմք զծնունդ քո՝ զի,

ով ամենազոր կոյս Մարիամ։

Յառաւօտանալդ առ մեզ՝ արփիացար մեզ. և իբրև արեգակն Ճառագայթեցար 'ի մեզ. որում ոչ երբեք պակասի հեղուն նշուլից ողորմութեան, և ոչ նուազի զեղուն երկնային լուսաւորութեան։ Այս ահա 'ի ծագելդ առ մեզ իբր ակն արևու՝ զուարթանան 'ի մեզ ծաղիկք հոգևոր կենաց, և զարթնուն կենդանի գործք բարեաց։ Յաղթել քո ըստ արևու 'ի խորս սրտից մերոց՝ գոյաւորին 'ի մեզ ծոյլք ոսկւոյ շնորհաց, և հանք ականց ազգի ազգի առաքինութեանց։

'Ի փայլել քո 'ի մեզ իբր յերկիր բացալքեալ՝ պարզես զմիտս մեր, և ջերմացուցանես զցրտացեալ կամս մեր. և նորոգես զզօրութիւն հոգ-

ւոց մերոց։ Ի Ամառագայթել քո 'ի մեզ իբր 'ի խոնարհ հայելիս՝ հուր սիրոյ բորբոքես՝ 'ի սիրտս մեր, և վառես 'ի բարին. այրես զախտս, և հաւլես զմեղս։

Յերևիլդ 'ի մեզ հանգոյն արևու յիշխանուն տուչնչեան՝ պայծառանաս և իբրև լուսին յիշխանութիս գիշերոյ. և առեալ զլոյս 'ի լիութէ արեգական արդարութէ՝ լուսաւոր առնես զմեզ զնստաւալքս 'ի խաւարի մեղայ։ Յամիտիել 'ի մէնջ ամենաձանձնչ արևու զլոյս իւր՝ դու իբր լուսին լուսաւորես զմեզ լուսով հնորհայ նորա. և զծովայեալ սիրտս մեր իբր ծածանմամբ բերկրեցուցանես. և տիրելով մեզ՝ ձգես զմեզ իբրև զծով յոր կողմն և ախորժես. և գիշերագլնաց եղելոցս՝ օգնական լինելով 'ի կեանս առաջնորդես։ Ոչ ինքն զբրէն լուսնի քան զամ աստեղս պարուց՝ զոց մեզ մերձ գոլով, մեծ ցուցանես զգթութի քո առ մեզ՝ մինչև հիանալ անմարմնոց և հարցանել ցմիմեանս. * ովք է սա ||.

Եր. Գ. 9։

'Ի յղանալդ յարգանդ աննայի՝ երկիր օրհնեալ քարոզեցար. երկիր՝ լի ողորմութիւն. իսկ 'ի ծնանելդ՝ երկինք վերհագոյն յայտնեցար. երկինք բարձր քան զամ՝ անմատչելի արկածից ապականութիւն. զարդարեալ անհամար աստեղօք առաքինութեաց, որովք պատմեցեր զփառս ՝ի։

սաղ. ԾԷ. 1։

Լու բովանդակութիւն կատարելութեցդ պարունակեցեր զամ՝ հնորհս և զամ լիութի իմաստութեն և երանութեն. և որ սքանչելին է՝ պարագրեցեր 'ի քեզ զնա ինքն զպարագրիչն երկնից.

և ցուցար երկինք երկնից. առ որ ամբարձեալ
զաչս մեր՝ ընդունիմք երբ յերկնից՝ զոր խընդ-
րեմք. քանզի 'ի քէն յորդին 'ի մեզ ամենայն
բարիք. նա զի և նոյն անհուն բարութիւն առ'ի
քէն եկս առեալ գանձ լիուն տուաւ մեզ. քանզ-
զի գրեալ է թէ՝* 'ի ծագաց երկնից են եկեալ
բա ‖ . սաղ. ԺԵ. 6։

'Ի տապիլ մեր 'ի սրտմտութիւն անեղական արփ-
ուոյն՝ զորին ամպոյ հովանացար 'ի վերս մեր. զովա-
ցուցեր զմեզ. սաղ. ՁԾ. 39. և իբրև մայր անձ-
րևոյ և ցօղոյ ցօղեցեր 'ի մեզ 'ի պապաքեղբս զձիր
ողորմութեան։ Այս 'ի հեղեղիլ մեր 'ի ջուրց անօ-
րէնութեան՝ դու գտար ամպ սքանչելի. յոր եդ
հայրն երկնաւոր զծնունդ և զպատկեր իւր նը-
շան հաշտութեան 'ի բարձունս. ԺՆԵ. 13։ 'Ի տա-
տանիլ մեր 'ի մնոտի վաստակս իմաստութեան աշ-
խարհի, արտայայտեցար մատեան սքանչելի՝
Ճարտարապետեալ 'ի մտաց անբաւ իմաստութեան.
յորում գրեալ տեսաք զնոյն ինքն զիմաստու-
թիւն անսահման զբանն ՅԱԺ՝ Ճշմարիտ մարդե-
զութիւն. առ որոյ կատարումն եկն 'ի քեզ հո-
գին սուրբ, և անՃառելի շնորհօք յարդարեալ
պատրաստեաց զքեզ 'ի սոյն։

Ք. ԱՅԼ թէ քանի՛ մեծ եղև 'ի քեզ շնորհաց
առաւելութիւն տիրուհի, ո՛ կարէ հասանել և ո՛
բաւեսցէ Ճառել. քանզի յանչափութիւն եհաս
սահման 'ի վերս քան զամ չափ։ Հնար է չափել
զշնորհս ամ ստեղծուածոց. այլ քոյդ միայ անչ-
չափելի։ Այլ թէ՛ հրեշտակաց իցեն շնորհք, և ե-
թէ մարդկան. եթէ՛ անցելոց, և եթէ որ կանս
և որ գալոցն իցեն. եթէ՛ ըստ մեծութեան և ե-

թէ ըստ սահմանուն, միանգամայն առեալ զամ, և զ քոյդ համեմատեալ, քոյդ գեր 'ի վերոյ է քան զնամ. զի նոցայն ամենեցուն առ ինքեանս սահմանաւորի. իսկ քոյդ առ արժանաւորութիւն զնծ ծնանելոյ մարդկային բնութիւն, և առ ինծ առնչանալոյ ձիմարիա մայրութիւն. առ որոյ ընդունելուն չհասանէ չզօրէ ո և իցէ հնորհք սոսկ ստեղծուածոյ. զի անհուն գոլով այսր արժանապատուութիւն՝ անհունապէս հնորհս ներպարունակէ։

Տէ՛ր՝ և սկզբնաւորութիւն այսր հնորհայ 'ի վերէ քան զլրութիւն նախագրելոյդ ամի. զի՞նչ ապա բովանդակուին նորին. որ յամ վայրկենի ամէլ ամէր և գրաւէր զնամ ընդունակութիւն ստեղծականդ զօրութիւն. մինչև ոչ ևս գալ 'ի չափ ամէլութիւն, այլ հասանէլ 'ի կարգ ինծամայրուն։ Լու ահա յայսպիսի և յայսչափ հնորհս սիրացեալդ՝ ծնար այսօր յանմայէ՝ առ 'ի ծնանիլ մարմնով զծնունդ անծին էին։

Լ. Յլոց ամենեցուն հնորհք առանձին իմն էին, միոյն յայս 'ի չափ, և միւսոյն յայն՝ ըստ անձնիւր վիճակի. իսկ քոյդ՝ ամենեցուն պարունակօղ և յինքն ունօղ, քանզի ամ հնորհք 'ի լայնատարածդ ծով ժողովեցան. և որ ժողովեացն 'ի քեզ՝ ծով կոչեաց զքեզ. որ առձայնի մարիամ. ՅՆՆ. Ա. 9։

Լ. Յլոց հնորհք կամ սոսկ ծառայի է, և կամ լոկ աղախնոյ. իսկ քոյդ՝ այլ ծնողի։ Լ իայսպն հնորհօք նոքք ամ. բայց իբրև առուք, կամ իբր գնեալք և ուղիք. իսկ դու իբր ամենածաւալ ծով. յոր պարագրին ամ հնորհք նոցին. զի

* ՝Ամ ուխք 'ի ծով գնան ॥ . ծող . ա . 7։ ՝Լա զի յիջանել՝ ամ անձրևաց հոգւոյն սէր յիմանալի գեղմն , միայնդ կրեցեր զամ ըստ ամենայնի . գաղ . գ . 36։

Այս զինչ զարմանք . զի թէ կարող եղեր կրել և պարագրել 'ի մարմնի զանպարագրելի և զանքաւելի էն , առաւել ևս կարող եղեր կրել և պարագրել զլրումն շնորհաց 'ի հոգի քո . զի հոգի առաւել ընդունակ է կրել զշնորհս այ , քան մարմին 'ի կրել զամ։

Այս զի բովանդակապէս կրեցեր 'ի մարմնի իբր յերկրի զՏեղինակն շնորհաց , ապա և բովանդակապէս կրեցեր 'ի հոգի քո իբր յերկնի ըզշնորհս նորին , որով լիացոյց զքեզ ամենաթանելի երրորդութիւն . մինչև վկայել զքէն հօրն երկնաւորի , և ասել . * միթէ զերկրին և զերկիր ես ոչ լնուցուցեալ ॥ . Երեմ . իգ . 24։ Ա կայ ըստ սմին և համագոյակից նմին՝ թէ հոգի ասելով . միթէ ես ոչ լնուցուցեալ շնորհօք զՏարսն իմ ըստ բանական մասին հանգոյն երկնի , և ըստ զգայական մասին հանգոյն երկրի։ Զնոյն արդեամբք վը. կայէ միածին քո որդի . ես եմ որ համբրէն լնուցեալ զմայրդ իմ իբրև երկինք և երկիր . երկինք ըստ շնորհաց՝ զոր ետուս քեզ . և երկիր ը լնուցեալ՝ զոր առի 'ի քէն։

Գ . Ա՛յս ոչ ամենաբերկրեալ կոյս՝ յայսպիսի արժանաւորութիւն և յայսչափ գերազանցութիւն ծագելով այսօր՝ լցուցեր զտիեզերս խնդութիւն։ Բանզի այսմ սքանչելի քումդ ծննդեան սպասեր աշխարհ . սու

փափաքեր ցնծալ . 'ի սոյն հառաչեր , և զսոյն տեսանել ցանկայր։

Լու ահա ցնծայ այսօր երկինք 'ի վերուստ. զի
եառեալ զքեզ 'ի վերս երկրի երկինք նոր։ Ցնծան
'ի միասին և արև ընդ լուսնի և այլ աստեղք
ընդ նոսին, մինչև կրկին լուսափայլել 'ի ծա-
գել իւրեանց։ Ցնծայ այսօր և զանգոնաձ երկ-
րի. զի եառեալ զքեզ 'ի վերս իւր նորահրաշ ի-
ն երկիր, որ հանդերձեալ եր բուսուցանել զո-
ղորմութիւն աննիպաղ, ըստ եսայեայ կանխաձայ-
նելոյ, թէ *բղխեսցէ երկիր զողորմութիւն ||.
Եսայ. ԽԵ. 8։ Լուաղձեր և տրտմէր երկիրս, զի
կորոյս զդրախտն. 'ի գտանելն զքեզ այսօր՝ յու-
րախութիւն ամբարձաւ. և 'ի տեսանելն զքեզ՝ 'ի
վերս իւր իբրև զծառ կենաց վերաբուսեալ՝ մա-
ռացաւ զսուգ իւր։

Ցնծան այսօր և կանայք. վասն զի Եհաս սփոփիչ
իւրեանց. զի որք յառաջն յամսոյ մեծ պաշա-
րեալ էին, և նախատելի երևէին՝ առ պատրա-
նօքն եւայի, 'ի նշմարելն անդ թէ ծնաւ ազա-
տեցուցիչն նախատանաց իւրեանց՝ լցան ցնծու-
թեամբ։ Ցնծան այսօր ադամ և եւայ. զի տեսին
ծնեալ զբարձողդ անիծից իւրեանց, և զփարա-
տիչդ տրտմութեան և զաւետաբերդ երանութեան.
ցնծան այսր, զի ծնաբ առ 'ի տալ նոցա զկեանս
զոր աղաւաղեցին, և առ 'ի գտանել նոցա ըզ-
շնորհսն՝ զոր կորուսին, և առ 'ի դարձուցանել
զնոսա 'ի հայրենիսն յորմէ արտաքսեցան։ Ցնն-
ծան այսօր և ծնողք քո յովակիմ և աննա. զի
յանձինս իւրեանց տեսին լքացեալ ակնկալութիւն
ամենեցուն։ Ցնծան այսօր արարածական բը-
նութիւք առ հասարակ. զի քեզ և 'ի ձեռն քո հան-
դերձեալ էին ազատիլ 'ի դատապարտութենէ։

և նորոգել 'ի կեանս։

Օրհնանելով քո այսօր ով ամենամբ կոյս՝ պատուհէրեցեր զմամ ծնունդ վատաբախտ բնութիւնս, և պարծանք եղեր ամենեցուն. բայեր զբերանս քոլորիս 'ի խնդութիւն, և բարձրացուցեր զսիրտս նոցա 'ի մխիթարութիւն։ Այլ և ամենեքեան միաբերան օրհնաբանելով զծնունդդ քո գովեմք ըզքեզ և գոհանամք զքեզն. և պաղատելով խնդրեմք 'ի քէն՝ մի զքեզ զմեզ յօրհնութիւն ծնընդեան քո սրբոյ. որով վայելեալ մեր 'ի շնորհս մարդ լուսոյ և յուսոյ՝ մարթասցուք ժամանել յերկինս, և յանդիման տեսանել զմեզ անդ 'ի փառս քո, և ցնծալ յաւիտեան։

Ընդերձէր զղաղէրս ոօնէց. Ք. 53։

ՕՐ. Զ.

Ամենայն կուսին մարիամու։

Ա. Յանուն յոյն քոյ ամ ծունը կրկնեսցի յերկնաւորաց և յերկրաւորաց և 'ի սանդարամետականաց. և ամ լեզու խոստովան լիցի թէ որ է յս քա 'ի փառս այ հօր։ Գ. Ի. Ք. 10։ Ամպա և յանուն քո մարիամ կոյս, ամենայն ծունը կրկնեսցի. և ամ ազգք և ազինք խոստովան լիցին թէ տիրուհի է մարիամ վերառեալ 'ի փառս աստմանյրութիւն։

Ամարաստք ամ յօրհնութիւն 'ի վեր առեալ յանսահման պայման՝ օրհնեսցեն, մեծացուսցեն և

փառաւորեցին զքեզ յանուանէն քում, և զանուն
քո 'ի քեզ։

Օրհնեալ է և օրհնեալ եղիցի ժամուն այն պա-
տահումն՝ յորում կոչեցար մարիամ. օրհնեալ
լիցի և բերանն այն՝ որ անուանեաց զքեզ մա-
րիամ. օրհնեալ լիցին և ամենեքին նոքա՝ որ որ
ժանապէս առնուն 'ի շրթունս իւրեանց զմա-
րիամ անուն քո. օրհնեալ լիցին և նոքին՝ որք
յանդիման նկարեցին զաբրեանեալ անուն քո
մարիամ։

Լ՚ծնանիլ քո սրբուհի՝ վերինք ցնծացին և ընտ-
տորինք խայտացին. իսկ 'ի լսել այսօր զկոչիլ
քո մարիամ՝ աբանչացան, և 'ի գերագոյն խրն-
դութիւն վերացան։ Ցնծացաւ ծով, զի յիւր յոր-
ջորջումն ետես ամբարձեալ զկոչումն անուանն
քո. վա՜ զի ծով վերադարձցի մարիամ։ Լերկրե-
յաւ և կենցաղոյս լուծականութիւն իւր ծով. զի
զդառնութիւն նոր՚ի քաղցրութիւն յեղանակեցեր.
վա՜ զի քաղցրացուցիչ դառնութիւն լսի մարիամ։
Պայծառացաւ այսօր և աստղ ծովային. զի 'ի
քեզ ընթերցաւ զանուն իւր. վա՜ զի աստղ ծո-
վու հնչէ մարիամդ անուն։ Լուսափայլ կատա-
րեցաւ այսօր և իշխանուհին ջուրց լուսինն, 'ի
քեզ նշմարելով զանուանն իւրոյ զպղտումն.
վասն զի տիրուհի ջուրց հռչակի անունդ մա-
րիամ։

Ճ. Պարէ այսօր մարգարէութեաց պարագլուխ
ահարոնեան մարիամ. զի ստուերք քո էր 'ի կու-
սութեան, և պատկեր մեծի քումդ անուանն.
որոյ այսօր նորանկարեցաւ խորհուրդ յանուանդ
քո սիրալի։ Վայ և յառաջեալ 'ի մէջ բոլորա

գուսմար կանանց՝ յանուն քո փառաւորեր զփա-
ռաւորեալն յամ յաւիտեանց՝ եղանակելով.
*օրհնեսցուք զնոր՝ զի փառաւք է փառաւորեալ։.

ԵԼԻՍ. ԺԷ. 21։

Օրհնեսցուք և մեք զնոր, զի ընտրեաց իւր մայր
զՄարիամ և ծնաւ 'ի նմանէ իւր 'ի ծովէ։ Օրհ-
նեսցուք զնոր, զի փառաւք է փառաւորեալ 'ի մա-
րիամ, և մարիամ 'ի նմա։ Օրհնեսցուք զնոր,
և զմայր նոր մարիամ, զի նովաւ օրհնեաց զմեզ
նոր, և 'ի յաւիտենական վերածեաց փրկուն։
Օրհնեսցուք զնոր աղաղակելով. նոր նոր զի՞
սքանչելի է անուն քո 'ի վերս համ երկրի։ Օրհ-
նեսցուք և զքեզ ո՛վ կոյս մարիամ, գոչելով.
տիրուհի՛ տիրուհի. զի՞ սքանչելի է անուն քո ընդ
համ տիեզերս։

Լ.նուն քո ո՛վ ամենամբ կոյս մարիամ՝ յանուն
ածամոր հրաշացեալ՝ բարձրանայ 'ի վերս քոյ զամ
անուն ստեղծականաց։ Լ.նուն սերովբէից և
քերովբէից. անուն իշխանութեց և պետութեց, և
համ անուանն անուանելոյ, ոչ համանչեն ընդ
անուանն քո, այլ 'ի խոնարհ և 'ի վայր նշմարին.
իսկ անուանդ մաթամ 'ի վերս Հոխանայ։ 'Լա զի՝ ե-
թէ զամենն նոյ զանուանն բարձրուն 'ի մի բերէր
կշիռ ամբարձուք, քոյոյ անուանդ գերազան
ցուն անկշիռ բարձրանայ։

'Լ կենցաղել քո 'ի վերս երկրի՝ ամենօրհնեալ ա-
նուանդ մարիամ փակէլ իմն էր և գաղտեալ իրք
յանօթ եւ. այլ իբրև վերացար փառաւք յերկինս՝
իբրք մայր ոյ, անձառացաւ. և զորութեն նորա
թափեցաւ յերկիր 'ի վերս համ անուանն. և քան
զամենն գերազանց ցուցաւ. հանդոյն իւղոյ թա-

փեսելոյ և քարձրացելոյ 'ի վերս ջուրց. վասն զի
* իւղ թափեալ է անուն քո ॥. Երգ. Ա. 2։
Ի. Յանուն յոի որդւոյ քո մեծամեծս իրաւ
գործեն ծառայք նորա. և յանուն քո զնոյն ներ-
գործեն ծառայք քո 'ի փառս անուանն որդւոյ
քո։ Յանուն յոի սրբին և փրկին ամենեքեան
որք կարդան զնա. և յանուն քո 'ի նոյն նորո-
գին 'ի պատիւ անուան որդւոյ քո։ Յանուն յոի
ցնծան արարածական բնութիւնք, և սարսին դի-
ւական բնութիւնք, և յանուն քո 'ի նոյն բերին։
Զիք անուն այլ 'ի ներքոյ երկնից՝ որով հնար
իցէ ումեք կեալ, բայց միայն անունն յոի. զիք
և անուն զկնի անուանն նորա քան զմարիամ ա-
նուն քո՝ առ 'ի կեալ։
Յանուանիլ քո 'ի սմին աւուր մարիամ՝ լրումն
եղև վեցեցուցեալ դարուց անցելոյց, յանուն քո՝ 'ի
վեց գիրս բովանդակելով։ Լաւ վասն զի սխրալի
անուանդ տառք պարագրեն զամն հինգ հազար
չորս հարիւր քսան և երկու, 'ի գլխաւորիլ ա-
մայգ՝ իբրև լոյս ծագեցար և արփիացար. և ա-
նուն քո հուչակեցաւ. * զուգաթիւ աւուրց դա-
րուց անցաւորաց ॥։
Ոչ հրաշալի զօրութիւն անուանդ. հովանի նո-
րին և եթ բաւական է նմին՝ ապատել ոչ միայն
յարկածից կենցաղոյս, այլև 'ի դատապարտու-
թիւն հանդերձելոյն։ Զանգի ով որ է՝ որ ապա-
ւինեցաւ յանուն քո. և ոչ զերծաւ 'ի վտանգէ
կորստեան. ով որ յուսացաւ յանուն քո՝ և ոչ
ապրեցաւ 'ի հաղթից թշնամեաց հոգւոյ. ով որ
կարդաց զանուն քո՝ և ոչ ընկալաւ զօրհնութիւն
ոգւոյ. ով որ սրտի մտօք աղաղակելով յիշեաց զա-

նուն քո՝ և ոչ ազատ գտաւ յո՛ և իցէ փորձուէ։ Լնդ սոսա ամենեսին գոչէ առ քեզ հոգի իմ. գոչէ և սիրտ իմ. գոչէ և բերան իմ։ Զնթա՛ յիս վա՛ անուանն քո մայրդ գթութեա՛. աղաչիւրդ կենդանուե՛. յոյսդ աներկիւղելի փրկութեա՛։ Շատ է ինձ՝ եթէ անուն քո կոչեսցի՛ ի վա՛ իմ յորդեգրութեա՛ սահմանի. քանզի ակնունիմ քեզ գտանել զքեզ և զմիածին որդի քո Ի՛ քեզ, և փառս տալ յաւիտեան։

ՆՈՒ

Բարեկենդան խաչի։

Խաղաղութի՛ հոգեաց։

Ա՛. Խաղաղութիդ երկնաւոր որդի՛ այ, ամենիշխան թագաւոր. աղաչիւր երանութե՛ և սկիզբն ամենայն բարութե՛։

Խաղաղութի՛ եկիր ընձեռեալ աշխարհի, խաղաղութի՛ մերձաւորաց և զխաղաղութի՛ հեռաւորաց. եփես. Բ. 17։ Զոր և ասաց պատգամաւք բերանոյ քո վկայեցեր յասելդ անդ. * խաղաղութի՛ թողում ձեզ, զխաղաղութի՛ զիմ տամ ձեզ ‖ յովհ. ԺԴ. 27։ Լաւ վա՛ խաղաղութի՛ առնելոյ ընդ մեզ և Ի՛ հայր քո՝ առ 'ի մահ խոնարհեալ և 'ի մեռելոց յարուցեալ՝ յերեւիլ քում աշակերտաց քոց՝ յողջոյն զնոյն շնորհեցեր՝ ասելով. * խաղաղութի՛ ընդ ձեզ ‖. ղուկ. ԻԴ. 36։ Լաւ պատուէր հրամանի աւանդեցեր նոցա՝ 'ի մնանել ուրեք զնոյն բաշխել։ Լաւ զի չբա-

ելին նոքա յամ տեղիս անձամբ անձին կատա-
րել՝ գրութիւն վարելին, յամ գիրս իւրեանց
զսոյն ցուցանելով։

Յորոց առեալ և եկեղեցի զո՛նս՝ յամ պաշտա-
մունս իւր խաղաղութի աւետարանէ. ոչ միում
ումեք և եթ, այլ բոլորից՝ ասելով. * խաղա-
ղութիւն ամենայն ։ Զ. որ յորդոր մատչին միշտ և
սարկաւագունք՝ գոչելով. * և եւ խաղաղութիւն
զնոր աղաչեսցուք ։

Զ. սոյն և սիրտք բոլորեցուն հնչեն, և առ'ի
սոյն հառաչեն. զայս խնդրեն և զսոյն սրտեն,
ոչ միայն վասն անձանց իւրեանց, այլև սակս օ-
տարաց. յոյր սակս 'ի պատահիլ միմեանց՝ ողջ-
ոյն տան խաղաղութիւն, և զխաղաղութիւն իրերաց
հարցանեն։

Հրեշտակայ իսկ զինուորութիւնք զսոյն ցանկանա-
լով նշմարել 'ի մարդիկ՝ խաղաղութիւն բարբառ
արձակեցին. զոր տեսեալ զմուտ քո յաշխարհ
վասն խաղաղութիւն, յերկնից յերկիր վայրաբերեալ՝
ցնծութիւն երգեցին. * փառք 'ի բարձունս ամենայն և
յերկիր խաղաղութիւն ։ զուսկ. Ե. 14։ Զ. ու արդ՝
աւասիկ ամ ուսուցեալ խաղաղութիւն քարոզի, և
խաղաղութիւն աւետիս սրտի. * խաղաղութիւն խաղա-
ղութիւն. և ո՞ր է խաղաղութիւն ։ երեմ. Զ. 14։
Զ. ուստ ինձ ասասանօր. որ յայսմ բարեմասնու-
թիւն զուրկ զիս գտանեմ. յիս Հնարտի առածն
եզեկիելի. ԾԶ. 10. * խաղաղութիւն խաղաղութիւն
և ոչ գոյր խաղաղութիւն ։ անունն և եթ ասի և
լսի, այլ ինքն յիս բնաւ չերևի. արտաքուստ
թերևս իբրև նկար փայլի, այլ 'ի ներքս աղ-
մուկ խաւարի։

Բ. ո՛ կարեմ բողոքել. ես անձամբ իմով վնաս բեցի յինէն՝ զոր ամենեքին հետամուտ են յափշտակել։ Ուր մարթ եր ինձ խաղաղութիւն գտանել՝ անտուսաս տարագիր հեռացայ. և ուր հրապոյր խոտորեալ ստեղներ՝ առ 'ի նոյն յուժար մերձեցայ։ Խոտղի զաղբիւրդ ջուրց խաղաղութեան. և փորեցի ինձ գուբս գուբս ծակոտս, յորմէ հանել չկարացի կաթիլ մի խաղաղութիւն։ Յարեցայ յանցաւոր բարիս առ 'ի գիւտ խաղաղութիւն, և գտի զաղմկայոյզ չարիս. մատեայ 'ի մնոտիս, և ամբոխմամբ լցի զՀոգիս. ցանկացայ վայելել զերկրաւորս, և ընկալայ զտարժանաւորս. փափաքեցայ մեծութիւն և փառաց, և նստայ յանիւս ամպրոպայ. զակատեցայ զՀետ զբօսանաց, և մերկացայ 'ի հոգեմնոյց սփոփանաց։

Բ. անզի չէ հնար կենցաղականաբս 'ի յանդորրութիւն կենցաղել, և անցաւորաբ անանցական հոգւոյս գոյութիւն պարարել. մարմնաւորաբ՝ տարփանաց սրտիս կազդուրել, և հիւթանիւթից պաշտամամբ առ 'ի ներքս յիս ինքն բերկրել։ Այնթէ մարթ իցէ մարդոյ ծարաւելոյ 'ի նկարեալ անօթի ջրոյ մատչիլ, և անտի ըմպել և յագիլ, կամ քաղցելոյ յուռնայն սեղան բազմիլ, և հայելով ևեթ՝ 'ի սովոյ քաղցու ազատիլ. միթէ հնարք իցէ անյատակ բաժակաւ գինարբուն լինիլ. և կամ յերերեալ ոստ ծառոյ թռչիլ, և 'ի նմին անշարժ հանգչիլ։ Բ. կամ դարձեալ՝ կարելի՞ իցէ շինեալ ճրագի նշոյլ արձակել՝ կամ մթին վայրի զայլս լուսաւորել. փոյթ թուպ պտղաբերել և աղտաղտին տեղւոյ ջուրք քաղցր

առնել. յակ. Գ. 12։

Լ.պա չէ հնար և ինձ յանցաւորս յարելով 'ի նոսին խաղաղուի ժառանգել. և յունայնուիս ընկղմելով 'ի նոսին հանդիստ գտանել։ Լսկ ես խելագարեալ 'ի խորհուրդս՝ 'ի նոսա պաբանեցայ և կաշկանդեցայ. 'ի նոսին ցնդեցայ և ցնորեցայ. զնոսա 'ի վարձու կալայ, և չարաչար խաբեցայ. զնոսին ժողովեալ դիպի, և խաղառ դատարկացայ. ունայնացայ և թափուր գտայ. զնոքօք պատեալ փարեցայ, և վատթաբացայ. նիհարացայ և տկարացայ։

Զ. Ա.յլարդ եթէ 'ի նոսին՝ զորս մարթ էր առանց մեղաց վարել, փոխ խաղաղուէ՝ խառնուի համբուրեցի, զինչ լինիցի թշուառեցելոյս 'ի հպելն 'ի նոյն իսկ 'ի մեղս, որ մասն խաղաղուէ մանաւորեսցի ինձ. որ հետք հանգատեան առաջի իմ երևեսցի. որ նշմարանք անդորրուէ յանդիման ցուցցի։ Լաքէ. ողբալի անցք ազատիս նկարեալ նշմարի առաջի իմ. զի որ 'ի նոսա ցնորեցայ՝ 'ի սոսին անօրինեցայ. որ 'ի նոսա պատրեցայ, 'ի սոսին կամաւ կորացայ. որ 'ի նոսա ընդարմացայ, 'ի սոսին 'ի կորուստ մատնեցայ։ Լու քանզի յայսպիսի խորխորատ ինքնագրաւ գլորեցայ, զիարդ գանգատեցայց, թէ չունիմ խաղաղուի 'ի սրտի. միթէ քաղցիցի միրգ 'ի ծառոյ չորացելոյ, և կամ տեսանիցի շունչ 'ի հագագ մարդոյ մեռելոյ. միթէ վառիցի պատրոյկ 'ի ջուր սառուցեալ, և կամ անկէզ մնասցէ խըծուծ 'ի հուր բորբոքեալ. միթէ զովասցի պապակումն 'ի վայր անօդացեալ, և կամ զեկավարեսցի նաւ 'ի դաշտ ցամաքեալ։

Օ՛ի՞մարդ ապա բնակեսցէ և խաղաղուի յանձն մեղաց վարակեալ. զի՞մարդ տեղի գտցէ անդորրութիւն 'ի հոգի 'ի հոգւոյն սէր լքեալ. զի՞մարդ անկեսցի հանդիստ կամաց 'ի մարդ 'ի հնորհաց զրկեալ. զի՞մարդ բուսցի տունկ հոգևոր փափկութեան 'ի խիղճ մտաց 'ի սատանայէ խաբեալ. զի՞մարդ ծաղկեսցի հանդարտութիւն մտաց 'ի պարտէզ բանաւոր՝ մշտնջենաւոր անիծից ներքոյ անկեալ. զի՞մարդ արձանասցի անամբոխութիւն յայր ջար՝ ըստ արարչին իւրում թշնամացեալ և ընդ վեհագոյն դատաւորի 'ի պայքար մտեալ. 'ի թագաւորէդ թագաւորաց յայստամբութիւն զինեալ, և 'ի յաւիտենական երանութենէ թիկունս դարձուցեալ։

Լ՛թէ արդարև յայսպիսի իցեմ մնասնեալ վիճակ, զի՞մարդ նշմարեսցի լիս ստուերս խաղաղութիւն. ոչ ապաքէն գրեալ է թէ * ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց ‖. Եսայ. ԺԷ. 21. զի՞նչ ապա. խռովութիւն և ամբոխութիւն. կոծումն և ծփումն. զի * անօրէնքն իբրև զծով ծփեսցին, և զհանգիստ մի գտցեն ‖. Եսայ. ԺԷ. 20։

Լ՛այլ արդ զի՞ գործեցից եղկելիս ամենավաքան. քանզի յուսահատութիւն բացան դրունք առաջի իմ. և դժոխոց ծանրացան դժնդակութիւք 'ի հոգիս. չունիմ ապաստանարան և ոչ տեղի ներկեան յապաշխարութիւն։ Լ՛ռ քեզ միայն է յոյս իմ յոյսդ ամենեցուն յս փրկիչ իմ. որ յայսպիսի տուժայտանս թշուառութիւն տեսեալ զիս և զբրս ըստ իս, քաղցրաձայն բարբառ արձակէիր հրաւիրեցեր՝ ասելով. * եկայք առ իս ամ վաստակեալք և բեռնաւորք, և ես հան-

Գ. Հաստատեալ եմ այս յունայնուն աշխարհի, և ծանրաբեռնեալ մեղօք և դեղովք սատանայի. յիրաւի յայսոսիկ պարապանդեալ և 'ի սոսին կաշկանդեալ՝ ըստ տաժանացելոցն 'ի շղթայս երկաթիս կորացեալ եմ 'ի բռնութէ կապանաց մեծամեծ յանցանաց. և ոչ դոյ ինձ հանգիստ։ Դու որ տիրայորդոյ ձայնիւ կոչեցեր զիս 'ի տաժանմանէ աստի ամբոխմանց, կոչեա և ներքնահրաւէր բաղխմամբ 'ի հանգիստ անդորր կապդուրանաց. և ազդոզականաւդ քո գթասիրութեամբ շարժեա և ձգեա զիս առ քեզ։

Յիմանէ և յինէն չունիմ կար զօրութեան առ քեզ գալոյ. դու

ՕՐ.

Լատակարէ պատարագն։

Ա. Պարսանեաց Հանդէս Հոգեհոգիչն ձայ-
նիւ հաչակի այսօր 'ի տաճարի մերում։
Ուրախուն է օրս, և խրախուն նաւակատեաց
որդւոց նորոյս սիոնի։ Փառաց թագաւոր, փե-
սայդ երկնաւոր, փառաւորեալ փառօք յերկինս
և յերկրի. առ քեզ ժողովեալ՝ առաջի քո կամք
յանդիման. 'ի քեզ են աչք մեր, առ քեզ աղա-
ղակեն սիրտք մեր. ընդ քեզ ցնծալով 'ի քեզ
բերկրիմք և փառաւորիմք։ Ո՛ծ արդ զսուր ի-
մեջ քո հոլոր վայելչութիւն և գեղոյ քո, և ցոյց
մեզ զչքնաղութիւն քաղցրութեան երեսաց քոց. լա-
րեա ուղղեա և թագաւորեա յաւիտեան. սաղ.
խբ. 3. 4։

Ցնծայ այսօր հարսն քո կոյս նոր եկեղեցի. ցն-
ծայ և ամենասքի կոյս մայր քո. ցնծան և առա-
քեալք իբրև փեսաւորք. ցնծան և մարգարէք
իբր հարսնածուք. ցնծան և սրբոյ քոց բազմախրմ-
բուիք իբր կոչնականք. ցնծան և որդիք սորա
բերկրասատար՝ իբր առագաստի մանկունք։
Ոչցէն և անմարմնոց դասաւորուիք. և պար ա-
ռեալ ընդ մեզ ի մարմնաւորացս ուրախութիւն
կատարեսցեն խրախական տօնս։ Պոչէսցուք
և մեք ընդ նոսին. բարձր լերուր, և բարձրաս-
ցի սիւտութիւն արքայուն քո։ Խոստովանութիւն և
վայելչութիւն զգեցար 'ի տաճարի սրբութիւն քում.

զդեցն և մեզ ոչ ոչ փրկուէ մերոյ զՀաՀաւԹիւն կամայ քոյ. և բարձրացո զեզ ՚ի ջուր յուսոյ մերոյ. ցրուէա զՀեԹանոսս՝ որ կամին ՚ի պատերազմ. և մեք ՚ի ձայն փողոյ աղաղակեսցուք և հուչակեսցուք զյաղԹանակ Թագաւորիդ մերոյ սՀՅ։

Ի. Յայս հարսանիս այլ իմն տարփողն, և այլ լսչան տեսիլ նշմարի. բարբառ ուրախուԹիւն նաւակատիք անուանմամբ բերկրալից որոտայ յերկինս և յերկրի. այլ սուգ տրամուէ ՚ի սիրտս հաւատացելոց ոլորի։ ՈՉ զարմանալեացս. հանդերձեցաւ հարսանիքս. պատրաստեցան սպասաՀարկուԹիք. հրաւիրեցան կոչնականք. ՈՀ ասա փեսայ, և ՈՀ հարսն. ՈՀ փեսաւերք և ՈՀ հարսնածուք։ Սոսկամ՚և հիանամ. զի փեսայդ ամենագեղ՚ի խաչին բևեռեալ տեսանիս, տարածեալ ունելով զձեռս քո և հեղուսեալ զոտսդ. տանջեալ և կախեալ՚ի փայտի, և Թաթաւեալ յարեան բոլոր՚ի մարմնի. փշեայ Թագիւ զդլխդ՝ որ պսակաւորեալ, և՚ի պասակումն տոչորման՚ի ծարաւի խորովեալ։ Հարսդ՝ որ եկեղեցի՚ի սուգ համակեալ յոգւոյ ելանե, այս իցե իմն ուրախուէ հարսանիք ասելով. ո՛ զայսպիսի ետես հարսանեաց հայրԹայԹանս. ուր նՀաղիմ՚ի յաւոյ սրտի իմոյ։ Այլդ յաւալն յերաշխեպ յաւագին բոցակիզեալ առ խաչիդ տագնապն։ Փեսաւերքդ, առաքելոց և աշակերտաց գունդք ցրուէալք։ Հարսնածուք քո՝ մարգարէից պարք ընդ սղոցմամբ և ՚ի քարկոծմամբ ընկձեալք. բարեկամք քո և ազգականք նկուն լքեալք։

Տեսանեմ և զմանկունս առաքաստի հարսանեացս զդասս մարտիրոսաց ընդ հուր և ընդ սուր խաղացեալք, զելանօք և զերանօք չարչարեալք, և յարեան վտակս խայտացեալք. ընդ որս և խոստովանողաց և կուսանաց երամք հալածեալք և վտարանդի վտանգեալք։

Գ. Ոչ վշտատխուր տեսարանիս. որոյ հարսանեաց խրախուճի հաւասարեսցի այսմ. ոչ տեսաք և ոչ լուաք ինչ երբէք այսպիսի։ Այո՛ այս է ահա այսր հարսանեաց հանդէս. այս է յիրաւի նորուն նկարագրուն հաստուած. յորում և մեք հանդիսակից շահատակեալք ը նոսին ճրագնիմք 'ի փառս քո ով երկնաւոր փեսայդ փարելի, և ընդ նմա հանապազ մեռանիմք մեք, համարեալք ոչ ոչխարք 'ի գլենումն. սաղ. խգ. 22։

Այլ յորս տանջիմք և նահատակիմք, 'ի նոսին ցնծալից բերկրիմք, և սխրալից բարբառիմք. ձայն ուրախութիւն 'ի վեր բարձրացուցանելով, և յանձինս մեր քաջալերելով 'ի փարելի բարբառ բանից քոց, յասելոյ. * դուք տրտմեսջիք. այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի ॥ Գիտա՛ զի՝ գիտեմք, և զերանութիւն աւետիս ամենեցուն ընծայելով աղաղակեմք. * ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն, որ յայտնելոց են 'ի մեզ ॥ 'ի յոչնաւացեալքս. հռովմ. Ը. 18։ Տինա յոյս կենդանի և հաստատուն առաջի ունելով արիական ոգւով զօրութիւնս հոգւոյն սքանչելի դիմեալ ընթանամք զընթացս սաստիկս՝ ժամանել յանխիզելի խրախճանութիւն վերինդ հարսանեաց, և անդ տեսանել յանդիման զամենայանկալի փեսայդ երկ-

նաւոր յանձառ և յանհաս փառս, և փառաւոր
բեալ զքեզ ի հոր և ի հոգւոյդ սրբոյ յաւիտեան։

ԾԻԹ

Խաչվերաց։

Ա. Բարձրացաւ այսօր փառօք եկեղեցի քո
ոգի միածին որդի այ բարձրելոյ։ Յե-
ռիս քառեակս ամաց 'ի սուգ էր նստեալ, և 'ի
տխրութիւն դառն տուն՝ այտեալ, 'ի նոյն հեծեր
ցառագին, և զնոյն հառաչէր լալագին։ Լատեա
և սոսկացաւ. զի բարձաւ լիւրմէ և հեռացաւ
կենացն տուն՝ օղ փայտակերտ. յոր բարձրացար
մարմնով բարձրացուցիչդ գլխոց մերոց։ Ա՛ռ զի
եկն եհաս խեռն խռռեմ՝ ոսկերիմ թշնամին՝
խոսրովու երկրորդի փեսայ (յամի ՇՌն 614 յամ
սեանն յունիսի.) և եառ 'ի կոխումն զառ 'ի քէն
կոխեալ զերկիր ոգ. և յափշտակեալ զգոլորա-
ձոյլ փայտն կենաց՝ տարաւ 'ի վայրենակոխ եր-
կիր իւր. * սա է ոճն քրիստոնէից ‖ փոնգալով.
յառակ նշաւակի կացուցանել զՀարսն քո մոգ
եկեղեցի. և խրոխտացեալն խոսրով զետեղէ
տնկեաց զնոյն ի կուռս իւր իբրև զմի յանարդ
ջոջոց։ Յայնմ վայրի մերկացաւ երուսաղէմ 'ի
փառաց իւրոց, և ըմբռնեցաւ յողբումն և յաշ-
խարումն յոյժ. յոգւոց ելանէր, և առ փրկ-
բարդ պաղատեր. իցէ՞ արդեաք զի գտից և տե-
սից միւսանգամ զգեղդ քոյ և զվայելչութիւդ
ընդհանուր եկեղեցւոյ, զՀամայնից խնդութիւդ

և զփառաւորիչդ նորոյս սիմոն. զմխիթարուեդ պարծելոյ յանուն քո, և զցնծութիւդ յուսացելոյ 'ի քեզ 'ի յոյսդ ճամի ։

Որ զ սքանչելեացս. ահա որ յափշտակեացն և դերեաց, նա ինքն թագ կապեալ, և ընդ հերակլի մեծի դաշնաւորեալ՝ դարձոյց մեծաշուք պատուոյ զփափաքելին և զցանկալին (յամի ՇՀն 627. յամսեանն սեպտեմբերի)։ Յոտանձնեալ ապա կայսեր վերի եմ եմոյծ զնա այսօր 'ի քաղաքն սէ. և վերառեալ զնոյն հոգևոր պետի պատրիարգի քաղաքին՝ օրհնեաց նոսա զժողովուրդ քո, և վերացոյց զնոյն 'ի խորանն նոր ։

Զնծացաս յայնժամ սէ սիոն, և բերկրեցան սէ եկեղեցիք ողոգոմեան խնդուլէ. մերկացաս երուսաղէմ զՀանդերձ սգոյ իւրոյ. գոչեցին և մանկունք նորոյ առաքաստի ուրախութէ. հաճեսցար ՇՀր էրկիր քո, և դարձուցեր զգերութէն յաղթանակողն գրօշակիս փրկութէ.

սաղ. ՃԲ. 1 ։

Ընդ սոսին ահա և մեք աղաղակեմք խնդուլէ. և՝ օրհնեմք զքեզ միաձայն գոհութէ. այո՛ ՇՀր գոհանամք, և փառս մատուցանեմք ամենիշխան ՇՀրութեդ. որ յուսաբեկ լքելոցս ցուցեր մարդասիրապէս զայսպիսի գութ խնամոյդ։ Քանի դառն էր մեզ եթէ յեմանեալ մնայաք յայսպիսի ՇՀորհայ. քանի արդեօք նախատինք էր մեզ 'ի բանալ հեթանոսաց զբերանս իւրեանց 'ի վէր մեր, և ասել, ո՞ւր է զոր պաշտէիքն. քանի՞ քստմնելի էր մեզ, եթէ ուր տարա գրեցին՝ 'ի կատականս կարգեին, կի՞ 'ի հուր արկեալ իբրև զփայտ այրեին. և կի՞ յանվայել

վայրս վարեալ՝ յիրս անձաս 'ի կիր առնուին։
Ի յիշել զայսոսիկ քստմնիմք և կծկիմք. այլ
որչափ սրտամաշ հալիմք ը նդ առ 'ի մէնք բարձումն, նոյնչափ և առաւել քան զչափ զարդիս
ցնծամք և բերկրիմք ը նորին հրաշապանծ վե-
բամիաբանումն։

Ա՛ԵԾ Էդև արդարև անսկնուանելի գիւտ կէնս
սատու խաչիս զառաջինն. մեծ եղև և հրաշա-
փայլ երևումն նորին յեղեմ. մեծ եղև և հայաս-
տանեայց՝ յայտնութիւն նոր 'ի լեառն վարագայ։
Ա.յլ այս վերադարձումն նորուն սահմանաժ-
ամն սիրացաւ հաւատացելոցս 'ի քեզ համբրէն։
Ա՛ՀՒ կրկին և կրկին երկիրպագանելովաւետա-
ւոր դարձի նորա, փառաւորեմք զնորդ փառաց
զդարձուցիչդ նորին. և զնոյն իբրև զգերադոյն
պարգև առ 'ի քէն ընկալեալ՝ յայսմ հետէ բարձեալ յուս տարփանաց սրտից մերոց, նոպինն
հետապնդիմք զկնի քո։

Ա՛ՐԴ գու ՝որ մեր յա՛ քո, գու ինքն սովաւ
կազդուրեցո զտկարութիս մեր. սովաւ արիացո
զկար զօրութիւն մերոյ ընդդէմ բանսարկուին.
սովաւ վանեա՝ 'ի մէնք զկամառակորդն մեր չար.
սովաւ ուղղեա զգնացս ոտից մերոց յամբծուն
վարուց. սովաւ առաջնորդեա մեզ 'ի շաւիղս
արդարութիւն. սովաւ յաջողեա զուղղորութիւն
մեր յերկինս. սովաւ ժամանեցո զմեզ առ քեզ
յօրհնել զքեզ յաւիտեան։

Ը.՝ ապրմանէ աբէյ նշանիս։

Ը՛. ՈՐ թէ քանի՛ մեծ է հաւատացելոցս՝ 'ի
կենցաղումն կրել զձև ևեթ քառաթևիդ 'ի

կերպարանել զտիպ նորուն 'ի վերջ ամի՝ զորս յանկերպարանս ունիմք. 'ի նոնագրել նոմաւ զերեսս, և յօրհնել նոմաւ զգործս մեր. 'ի յաղթել նոմաւ աներևոյթ թշնամւոյն, և 'ի մերժել նոմաւ 'ի բաց զնմա երկիւղ չարի. 'ի հրաշացուցանել նոմաւ զապաքինութիւն ցաւոց և զբժշկութիւն հիւանդութեց. 'ի զինել նոմաւ յամ վտանգս, և յապահովել յելս և 'ի մուտս։

Աստ է մեզ և 'ի բերան առնուլ զանուն նոր և կարդալ առ նա. և 'ի բարբառ բերկրալի գոչել և ասել. Տէր խաչ օգնեա՛ մեզ. Տէր խաչ օրհնեա՛ զմեզ. Տէր խաչ փրկեա՛ զմեզ. Տէր խաչ ապրեցո՛ զմեզ. Տէր խաչ պահեա՛ զմեզ, Տէր խաչ պաշտպանեա՛ զմեզ։ Լեր մեզ աշտարակ հզօր յերեսաց ոսոխաց մերոց, և ապաւէն կենաց և փրկութիւն. լեր մեզ ապաստան աներկեան ազատութիւն և աներկիւղ անդորրութիւն։ Լեր մեզ գաւազան խորտակիչ դիւութիւնք, գաւազան ջաղխիչ օձին դարանակալութեան, գաւազան պատառիչ ջուրց ախտաւոր կրից, գաւազան բարի հովանաւորութիւն և ցուպ հոգւոց մխիթարութեան։

Աստ է մեզ և նկարագրել 'ի մեզ զստուերս նշանիս, որ 'ի վերուստ և 'ի նեղուեալս կերպարանի. քանզի խաչ գիտեմք հաւատացելոցս զտառապանս աստի կենաց, 'ի յանձն առնուլ մեր զայնս վասն սիրոյ փրկիչդ մերոյ։ Ննհաւատ եղելոց անձկութիւն անուանի՝ զորս կրեն, իսկ առ մեզ խաչ վերաձայնի. նոյ անպտուղ և անվարձ, մեզ պտղալից և վարձահատոյց. նոցա գուցէ ՀԱՍԱՍԱԿԱՐ, իսկ մեզ բաղմաք արդիւնարար։

Ամին վա բերկրալից փարիմբ զվշտաբ իզպ զնա-
չիւբ. և պարծիմբ 'ի նոսին իբր յայնս՝ զրաս դու
կրեցեր 'ի խաչափայտն ածդ բոլորից. որով և
խաչակից լեալ խաչելեալդ վասն մեր՝ ընդունք
զպակասուն չարչարանաց քոց 'ի մեզ. և աղա-
զակեմք ը առաքելոյն. աւասիկ մեզ աշխարհ՝ 'ի
խաչ ելեալ է, և մեք աշխարհի. գաղ. Զ. 14։
Զախակողմանն են վիշաք առ անհաւատս. մեզ
հաւատացելոցս աջակողմեանն քարոզի։ Նրա-
նելի եղև աւազակն՝ որ յաջմէ քումմէ խաչե-
ցաւ, ոչ զի 'ի նմին տանջեցաւ, այլ զի անդրա-
տին զսատՀեր խաչի քո յինքն ընկալաւ։ Տաղ-
նապեցաւ և ձախակողմեանն. և սակայն ըստ
ոՀերի խաչիդ անմասն գտեալ՝ ընդունայնա-
ցաւ. մին եմուտ ընդ խաչելեալդ 'ի դրախտն
երկնային, և միւսն մատնեցաւ 'ի դժոխս ան-
դնդային։ Նրկոքին ևս 'ի խաչի և ՈՀդ 'ի միջի.
մին առեալ զտպաւորութիւն կերպարանաց խա-
չիդ՝ ՀՇմարիտ խաչակից քեզ համարեցաւ.
միւսն անընդունակ նմին լեալ՝ խոտան գտաւ և
կորեաւ։

Դ. Նթէ արդարև այդպէս է զօրութիւն ազգե-
ցութիւն տարացուցիս, քանի՞ ևս եթէ զդոյն
բարձից յանձն իմ։ Նարձից այսմ զկեցուցիչդ
իմ նշան՝ վա սիրոյ քո ով բարի յիս. և նա բարձ-
ցէ զիս. տարայց զնա ախորժ տենչանօք, և նա
տարցի զիս յօժար խնամովք։

Նթէ պարծիմ 'ի կենացդ փայտ տարրանիւթ,
պարծեցայց և 'ի բառնալ զնոյն 'ի վիշտս և 'ի
նեղութիւնս. և գոչեցից ը առաքելոյն զառաւե-
լութիւն հոգւոյս պարծանաց ասելով. * պար-

ծիմք եւ՝ի նեղութիւն մեր ‖ հռովմ. Ե. 3. ոչ զի նեղութիւնք են, այլ զի կենդանագրութիւնք են խաչի քո, և տիպ խաչակից քեզ գոլոյ։ Լկարեցից զայն՝ի վերայ սեմոյ սրտի իմոյ. և նոր վիճն նշանաւորեալ ապրեցայց յանդրանկածախ սատակմանէ՝ի մահացուցիչ հարուածոյ մեղայ. Ելից. ԺԲ. 29. և զօրաւորեալ նովաւ մեկնեցայց յեգիպտական ծառայութենէ ախտից։ Լաւ զնա ինքն ունելով ինձ առաջնորդ արիական ուղղութենէ իբր սիւն ամպոյ, և իբր սիւն լուսոյ՝ի յանդորրու տուընջեան և յանանդորրու գիշերոյ՝ ընթացայց զընթացս կենաց բարեաց. և գնալով յառաքինութենէ յառաքինութի՝ ժամանեցից յիմանալի երկիրդ աւետեաց։ Լաւ յերեւիլ նորուն փառաց՝ի յերանութիւն աւուր համառօտի, աչօք մարմնոյ եւ տեսեալ զնոցն՝ առաւելապատիկ սխրացայց յուրախութենէ. և մշտին ջենաւորապէս յանդիման ունելով զնա՝ ցնծացայց՝ի նա, և օրհնեցից զթագաւորդ փառաց յաւիտեան։

Ա

Երկրորդ կիւրակէ զկնի խաչին։

Բարեկենդան վարագայ խաչի։

Երեքշաբթի։

Ա. Բաղցր էր ինձ 'ի սէր քո միայն վայելելով 'ի նոյն ցնծալ առաջի քո ամ յաւիտենական. առ որ հրաւիրիմ և 'ի հոգերդողէ, եթէ * Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր ॥. սաղ. ՀԴ. 9։ Ամէն յայսմ բերկրական վայելմանէ հերձին և քեցին զիս անօրէնութիւնք իմ, մնեցին և ընկեցին զիս 'ի պակուցումն պատժոց սպառնացելոց 'ի վերուստ և 'ի ներքուստ, յաջմէ և յահեկէ։

Ասասիկ ակն 'ի վեր առեալ 'ի սրտմտութիւն բարկութեան քո՝ սարսափիմ և դողամ. քանզի գիտեմ՝ զի * ահ մեծ է անկանել 'ի ձեռս այ կենդանւոյ ॥ Էբր. Ժ. 31։ Հայեցեալ և 'ի հրեշտակաց զբոս հզօրս՝ սոսկամ, և 'ի խստութեէ նոցն ընդարմանամ։ Դիմեալ և 'ի սէգ քոց արժանաւորդումարութեան՝ 'ի սաստից նոցն սասանիմ։ Հնազանդեալ և զդժոխայնոց խրոխտումն և զկատաղութեան՝ թաշնիմ և նուաղիմ։ 'Ի պատգամն երկնաւոր հնչմանց ունկն մատուցեալ՝ լքանիմ, և 'ի քարոզութեան ամենայն բանից մերձեալ՝ ցամաքիմ. 'ի վարս առաքինեաց դիտեալ վարանիմ, և 'ի դնայս արանց ընարելոց աչս ար-

ձակեալ՝ զահի հարկանիմ և յիմարիմ։ Եւ կամ
աւասիկ համակ ընկէցիս ինչս անլոյս և անյոյս։
Զի՞ է քեզ անձն իմ, ընդէ՞ր տագնապիս. հիմ
պակնուս և թագնուս. զի՞ է եղև քեզ. մի՞ արդեօք կերար՝ ի մահահամբոյր պտղոյ անտի, և
յայդ վիճակեցար վայր։ Լսաբեցայ, այո՛ խաբեցայ. մերձեցայ՝ ի ժանտաբերբ ծառն անիծեց.
կերայ՝ ի բերոյ նոր, և՝ ի հաստչիդ աչաց ընկեցայ. կերայ և կորեայ. կերայ և յերանաւէտ
դրախտէ վտարեցայ, և դատապարտեցայ, կերայ և յաւիտենական տանջանաց պարտաւորեցայ։ Եւ զիարդ ո՛չ պակեայց և ո՛չ սարսեցայց.
ի՞նչ աներկիւղ մնացիս, և անահ ինքեցիս։
Լ. Այս երկիւղ է ահա՝ որ խիայթէ և խեղդէ
զհոգի իմ, և մաշէլով մաշէ զկիանս իմ։ Եւ
եթէ ո՛չ մանաւորեսցես առ իս՝ ի պարգևաց
հոգւոյդ մանն որդիական երկիւղի, այս իմ
սարսամ՝ ՝ի դժոխս ինձ կարասցէսք. ապա եթէ
հաճեսցիս շնորհել ինձ՝ ի ձրիս քոյ սէրտ, փա-
րատեսցի յինէն դառնութիւն միգի յուսահատեցուցիչ պայթուցմանս. և լցցի հոգի իմ հոգ-
ւով երկիւղի քո սրբոյ։

Որով և քաջալերս առեալ՝ ո՛չ ևս երկեայց՝ ի
պատժողական չարեաց և՝ ի պատուհասից խրատաց, այլ՝ ի պատճառաց նոցին՝ ՝ի մեղաց ասեմ
և յանօրէնութեց։ Ո՛չ երկեայց՝ ի զրկելոյ՝ ի
փառաց և՝ ի ժառանգութենէ բարեաց, այլ՝ ի
զրկողականաց նոցին՝ յապիրատութենէ ասեմ և
՝ի յանիրաւս բերմանց։ Երկեայց այո՛ ո՛չ՝ ի սատ-
տից, այլ յանսասատ բորբոքեաց նոցին, ՝ի յախ-
տից ասեմ և՝ ի ժանտից։ Երկեայց ևս ո՛չ՝ ի
հ

դատապարտութեան երկբայութիւն, այլ 'ի դա-
տախազ լինիս առ 'ի նոյն յարուցելոյ։

Ը. Այս երկիւղ միայն է լինիս ըղձալի և հա-
ճոյական, զի երկիւղ է որդիական. այս եր-
կիւղ նպաստ իւր ունի զերկիւղն ծառայական.
մեծ է առաջինն, այլ երկրորդն՝ նմին օգնա-
կան. վասն զի յօժար գոլով բնութեան 'ի խնամն
չարի 'ի մանկութիւն. ՅՆՆ. Ը. 21. թէպէտ և ա-
ռաջնումն 'ի նանրութեաց նահանջի, բայց երկ-
րորդումն զսպի։ Այն կատարելոց է սեպհա-
կան, և սա հասարակաց պահապան, այն է ձիր
պանծալի, և սա պարգև փափաքելի. համար-
ձակիմ ասել, թէ առանց սորա՝ նա յանմի ոչ
պահպանի։

Այս է այն՝ որում և մարգարէն ըղձանայր, և
առ 'ի քէն անձկանօք խնդրէր յասել անդ իւ-
րում. * բևեռեա՛ Ը երկիւղ քո զմարմին իմ՝
զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ ||. սաղ.
ՃԺԸ. 120։ Թէ նա 'ի սոյն փափաքէր, որ 'ի
սէր քո հրավառեալն էր, և զառաւելն ևս
խնդրէր՝ զյոյժն հայցելով, քանիսպատիկ ա-
նարգս և տկարս, դիւրաթառամ տունկս և
ինքնակործան շինուածս։ Այլ ես զնոյն և զսոյն
միանգամայն գրաւականել ախորժեմ. և զնոյն
զայն՝ սովին ձողաքարձ հաստիլ ճանաչեմ։ Թէ
'ի սոսին ամրանայցեմ, լիապատրաստ ըղ-
գուշանամ յորոց և ելցէ 'ի մեղաց՝ 'ի փոքունց և
'ի մեծաց։ Թէ սոքիմքք զարդարիցիմ, յառա-
քինութիւն հեշտընթաց ճեմեմ։ Թէ զսոսա
լինիս ոստիկան ունիցիմ, յաղթող ախտից գտա-
նիմ։ Թէ զսոքօք փարիցիմ, 'ի նեռից բան-

սարկուին պատասպարեալ պաշտպանիմ. սաղ. Գ. 6։
Լ.Հա արդարև երկիւղ ՝ն. ահա որ առաջնորդ-
գէ ինձ յիմ բարիս, և պահէ յիմ չարէ։ Լ.Հա
զէն անխոտակելի, և խորտակիչ բռնութեան
սխտի։ Լ.Հա սուսեր հատիչ մարդկին կրից, և
տնկագործ մշակ բիւրազգի ջանից։ Լ.Հա ա-
պաւէն՝ յորում անխոնջ գտանի փրկականու-
թեան, և վեմ հաստատութեան, յորում տեսանի
անսերկևան կենդանուն։ Լ.Հա կաղգուրիչ ըն-
տիր վարուց, և տածիչ բարեբաղութեց արժա-
նի վարձուց։

Լ։ պակասիլ այսր շնորհի՝ ՝ն ճաստեղծ մարդն
կործանի, և այր ըստ սրտին ՝ն՝ յերկիր տապալ-
ի. հզօրն ՝ի յաղթօղս յաղօրիս տուն՝ այսի, և
գանձարանն իմաստութեան յերկրպագութեն
ուսոյնուն խոնարհի։ Լ.Լ յանիծագելի մնալ
այսր սրտ քումդ երկիւղն՝ բարեյաջողութիւն
բարձրութեն կենաց բարգաւաճի. և վայելչուն
հոգէպարար բարեաց և սրբակրօն կարգաց աբ-
գաստաւորի։ Լ՝ն՝ն ՝ն սորայս տնտեսութեն առ
տկարացեալս ՝ի բնութեն, քան այլոց առաքի-
նութեանց առաւելութիւն առ կատարեալս ՝ի
զօրութեան։

Լրանի էր ինձ և բիւր երանի՝ յերկիւղ քո ծը-
նանիլ և՝ի նմին մնանիլ. զերկիւղ քո ընդգրբ-
կել և զնոյն ժառանգել. յերկիւղն քում կեալ
և՝ի նմին մեռանիլ. երկիւղիւ քով սպառազի-
նիլ և նովին ընդ այսս մաքառիլ։ Զերկիւղ
քումմէ ընդ ընտիրս բերկրիլ և նովին առ՝ի
լաւն ուղղաւորիլ. զերկիւղիւ քով գալ և մնալ և
առ նմին բնականալ. ընդ երկիւղ քո հեղուսիլ

և'ի նոյն յայն շինել և պարծիլ։

Ճ. Ով սխրալիդ պարգև հոգւոյ, եցէ՞ թէ ցօղէսցիս և յիս և լեսցիս'ի հոգիս. առատասցիս և զօրասցիս. արմատասցիս և տարրասցիս։ Եցէ՞ թէ զեղեալ զինև՝ զապերատան կրեսցս համարձակութիւն զսպեալ նուճաձեսցես, և զանդէպ խլրտմունս շնչաւոր մարդոյս զինջուցեալ հանդարտեսցես, և զյանդուգն վստահութիւն յօժարութիւն զդայութեցս նահանջեալ ընկերկեսցես։ Եցէ՞ թէ յորդեալ համայն զգայութիւնս'ի զգաստութիւն պարուրեսցես զանձն իմ, և'ի զգուշութիւն ամրափակեսցես զկեանս իմ. յապահովի կացուսցես զպահպանութիւն հոգւոյս, և'ի յանդորրութիւն յուսոյ շուրջ պարսպեսցես զնամ զօրութիւն շինուածոյս։

Ով կենդանարար մխիթարիչ՝ զոր հոգի, մի՛ անմանն թողուր զաղքատացեալս՝ 'ի պարգևաց այսի ընորհացդ մեծի։ Մի՛ զրկեր զնուճացեալս յաղդուճութիւն այսր ցանկալի ցօղոյ առ'ի քէն սփռելոյ ընդ ծագս երկրի։ Մի՛ 'ի բաց մերժեր զտաժանեալս իբր զանարժան՝ 'ի յարգանաց այսր երջանկաժառանգ բարեմասնութիւն։ Լու մի՛ ընդ վայր վարանեցուցաներ զվարատեալս'ի գիւտ այսր գանձու ամենալի փարթամութիւն։ Լուր ինձ ո՞ր, տուր ինձ. լուր յոր աղերսեմ. տուր զոր թախանձեմ։ Խորժիս'ի լսել, կամեաց և ընձեռել։ Սոփին այսու՝ զոր'ի քէն խնդրեմ՝ մի՛ ցանկամ զիս հաճեցուցանել, այլ տարփամ՝ զհաճոյս քո երկիւղիւ՝ քո՝ անթերի կատարել։ Յայս երկիւղ քո՝ զոր պարտանդեալ՝ յաւէտ տարփամ սիրել քան սոսկալ։ Յայս

Երկիւղ քո յարկեալ՝ 'ի մեծ վայելչութիւն քումմդ
պատկառիմ և իբր 'ի բոցոյ հրոյ հալիմ. և յակ-
նարկելս իմ զինև՝ 'ի յարակործան շինուածոյս
կասկածիմ և ակնկորիմ։

Յայս քո վերնայինդ երկիւղ որդիական յափշ-
տակեալ՝ զոր ասել չհամարձակիմ՝ կնքել վըս-
տահիմ։ Յաւ արդարև յիրաւի զիարդ համար-
ձակեցայց ասել՝ թէ՝ 'ի սանդարամետականաց
ինչ ոչ սարսափիմ, և 'ի հրեշտակաց իսկ ես ոչ
սարսիմ. և սակայն գրել վատահիմ, և ոչ նա-
հանջիմ. գրեմ այս, և զոր գրեմն այս է։

Յինէն սարսափիմ և յինէն սարսիմ. յինէն
վտանգիմ, և յինէն կիզանիմ։ Յաս եմ որ կոր-
ծանիմ. ես եմ որ սուզանիմ։ Յաս անիրաւիմ.
ես ինքնին կորնչիմ։ 'Ի չարն հակիլ՝ օգնականն
չկարօտիմ. 'ի բարին միտել՝ յօգնականութիւն
նպաստիւդ բողոքել ստիպիմ։ Զասիկ հրեշ-
ին նկարիմ. ձայնիւ յակոբայ խօսիմ. ձեռամբ
Եսաւայ մատչիմ։ Յրկիւղիւ սիրոյ ընտեր-
նամ, և տագնապաւ խղճի վայրենանամ։

Յայեա՛ ՝ի՛ր, նայեա՛ առիս, և առ զիս առ քեզ։
Զ՝ո աղաչեմ. և սևեռեալ զիս յերկիւղ քո
ՀԷ, ընկալ զՀոգիս 'ի գոգ սիրոյ քո. և ուղ-
ղեալ զՀամ, պահեա՛ 'ի նոյն զկեանս իմ։

ԿԸ.

Երրորդ կիւրակէ զկնի խաչին։

Պարգեւ խաչ։

Աղերս նվաքագրութիւն պատմութիւն նորա։

Ա. Զիր գերագոյն պարգեւաց շնորհեցար այսօր հայաստանեայց աշխարհիս ով երկրպագելիդ նշան ՝ի Նահանջելի և անկարծելի գիւտ ընձեռեցար այսօր ազգիս վերանգելոյ յարեանց հեղեղմանն։ Օ՝էն զօրաւոր և սուսեր ահաւոր յայտնեցար այսօր նոր՝ ձեռոցս՝ ի խստութիւն յոխորտացելոց՝ ի վերս։ Դրօշակ յաղթութիւն բարձրացար այսօր՝ ի վարագայ լեառն՝ ի մխիթարութիւն լքեալոցս սրբոյ։

Ով տիրատուրդ բաժին նշխարելոյ մասին՝ ի փայտէն կենաց, որ՝ ի կանխելոց ժամանակաց յաւուրց անտի առաքելոց՝ պահմամբ ամենապահ ձեռին յոի ամիսոփեցար՝ ի լանջապանակ մեծուհւոյն հովիսիմեայ։ և առ՝ ի նմանէ գրաւեալ՝ ի ձեռս սրբց երիցանց՝ իբր՝ ի պահեստի թագուցեալ գանձեցար առ վայրօք վարագայ։ Օ՝ր վայելչական քեզ տեղի ագանելոյ ընտրեալ՝ հանձեցար բնակիլ՝ ի նմա։ Այս մաղթողս կանաղաթիւք ձգնողին մեծի վերաթուոյց լեալ լուսափայլ թեւօք՝ ամբարձար այսօր՝ ի գագաթն մեծապանծ լերին։

Այս ծաղեցար մեզ այսօր։ և լուսով լցեր

զՀայաստան աշխարհ. ցնծացան երկինք 'ի վերուստ, և լուսապայծառ յօրինուածովք յերկոտասան կամարակապս հրաշագուցին զպայլուսնդ գեր 'ի վերոյ բարձրեալ երկինն. ոչ յաներևոյթս ինչ նորակերտեալ, այլ ամենեցուն բոցատեսիլ յանդիման ճանաչեալ. ոչ առ տեղեաւ ևեթ ճառագայթեալ, այլ յանդորր ընդարձակութիւն արձակ համարձակ բացափայլեալ. ոչ միօրեայ դիտողութիւն սքանչելի երևեալ, այլ կրկին եօթամիք աւուրքք հրաշալիսն արփիացեալ։

Ցնծացան հաւատացեալք 'ի ձայն գոհութիւն, և սփռեցին զուսերս ընդ գաւառն ամենայն։ Քանչացան որք լուանն, և խուռն ընթացեալ ժողովեցան 'ի տեսութիւն և 'ի զննութիւն յայտնութիւն կենարար ոգի խաչին, որում և երկրպագեալ փառս մատուցին փրկչին բոլորեցունց։ Լու առ յիշատակ նորաբանչ յայտնութիւնս կարգեցին զայն 'ի թիւս տարեկան տօնից. և զՀորհս այցելութիւն ոն հուչակ հարեալ՝ բերկրեցուցին զերկրպագուս կենդանարար խաչիդ սրբութիւն։

Ը. Պոլին յիշատակաւ և մեք բերկրեալ, և խնդութիւն լիացեալ՝ գովեմք և փառաւորեմք զքեզ ոգի փրկիչ մեր, որ ոչ թողեր 'ի բաց զբացաթողեալս 'ի բարեաց։ Ոչ ակայակայք և մեռեալք ոտնակոխ առնել փութային ըզմեզ. և թշնամիք մեր 'ի հող մահու իջուցանել ջանային զանձինս մեր։ Որդիք և ծառնօթք մեր այպանակատակ ծիծաղեին զմեզ. և սիրելիք մեր երբ ատելիք մատնեին և մաշեին

զմեզ։ Փուչք մեզաց հեղձուցանել յոխորտալին, և նեռք բանսարկուին նկուն կացուցանել կամէին զզօրութիւն մեր։ Այլ եղաք մեք նշաւակ ոչ միայն արտաքնոց, այլև ներքնոց և ընտանեաց։ Ոչ ուստեք այցելուն փրկութիւն, և ոչ ուրեք ապաւինուն հանգստեան։ Ոչ բարեկարգութիւն նշմարանք, և ոչ բարեպաշտութիւն հայթայթանք. բարձեալ էր յոյս մեր, և բացեալ դուռն դառն կորստեան։

Յայսպիսի հոլովմունս աւուրց վշտագին տառապանաց մերոց փոխանակ մերժելոյ զմեզ խսպառ՝ գթասիրաբար նայեցար 'ի մեզ. փոխանակ յաձախելոյ 'ի պատուհաս՝ հաշտուեր երեսս ցուցեր մեզ. փոխանակ 'ի յետին կորուստ մատնելոյ և լքանելոյ՝ պատսպարան երևեցուցեր մեզ յերկնից և յերկրէ։

Օ որ և անաղօտ փայլեցուցեր այսօր յայտնութիւն աշխարհակեցոյց նշանի քո 'ի լեառն վարագայ՝ քո անբաւ մարդասիրութիւն. զի թէ չէիր խնայեալ 'ի մեզ ողորմութիւն, ոչ և սա ներգործիր զայսպիսիս առ 'ի գարձ մեր. և թէ չէիր շարժեալ 'ի գորովալից սիրոյ հայրական խնամոյ՝ ոչ և սա զարթուցանիր զմեզ 'ի զգաստութիւն ի տեսիլ հիացուցիչ հանդիսին։

Դ. Ով մեծի շնորհիս ամենագութ բարերարութիւնդ. որով տարածեցեր զամենահաստ աջ քո յօրհնել և 'ի սրբել զդնեալս խաչիւդ փրկանաք, և 'ի յորդորել զամն՝ խաչակից հանդիսանալ խաչեցելոյդ վասն մեր. և 'ի զօրացուցանել զխաչագեցեալդ 'ի կրօնս ճշմարտութեան և յարիութիւն զօրութեան 'ի խաչ հանելոյ զմարմնոյն կա-

ընաք և ցանկութիւն. յախոյեանն կանդնել զորդիս որդւոյ քոյ Տրդ առաքելոյ և զնոցուն զկնի ընթացելոց հովուաց և հովուապետաց, ընդ պարարտութիւն նշուլիցս ուղղափառ հաւատոյ՝ համատիւռ ծագելոյ յընդհանուր Տէր եկեղեցի, նախաչու կարապետութիւն խաչակցելոյն ի քեզ՝ մեծի քումդ փոխանորդի. և փայլելոցն զհետ նորուն յաջորդութիւն ըստ քումդ հրամանի. և առ՝ի նոցունց վերապատուելոյ հօրս մերոյ գրիգորի լուսաւորչի. որոյ պանծալի հովուութենն խնամովք արժանացաք աւուրս այցելութիւն լուսաթռիչ նշանիդ եկաւորութիւն։

Ով ամենագէղ տեսլեանս, որում փարատեցեր զմթագին մեզ սրտից մերոց. զոխրագին տաւտամտութիւն ոգեհեղձոյց կասկածանաց, և ըզդառնահամբոյր նենգուն չարախտաւատ մտաց։ Լանզի արդարև՝ ի պաշարիլ մեր յաղգի աղգի վշտագին արկածս յերեսաց ամենավարան վտանգից, անփարատելի լուսով փարեցար զմեզ։ Այս ահա նշանեցաւ առ մեզ լոյս յերեսաց քոց, և ետուր ուրախութի սրտից մերոց. սաղ. Դ. 7։ Այս արդ աղաչեմք զքեզ և պաղատիմք առ քեզ ով ամենաբարի յիս, մի՛ և՛ս՝ի բացեայ առներ՝ի մէնջ զբարեմասն օրհնութիւդ տածողուն. և մի՛ զմեզ ապիրատուն մերոյ ամիտոփեր զանամիտոփելի աչքդ. և մի՛ յաղագս խստութեանն սրտից մերոց ցուցաներ մեզ զնստութիւն, այլ նովին առ ջովդ, և Տէր խաչիւդ օրհնեա՛ զմեզ. և մեք օրհնեսցուք զքեզ յամի և յամ ժամ։

ԿԲ.

Ղորբորդ կիւրակէ զկնի խաչի։

Հ. Գոռոշոյ էջերնելոյ 'ի մեղս. Ե. Լսուեցելոյ 'ի նոյն։

Ա. Ատանեալ 'ի ժանիս մեղայ՝ չարաչար իմն գիշատեցայ. և 'ի տագնապել իմում 'ի խղճէ՝ աղաղակեցի առ ազատարարդ հայր-նից, և զերծայ. և վայելեալ 'ի սփոփանս մար-դասիրուն քո կազդուրեցայ։ Բայց յանզգոյշ մնալ իմում՝ վերստին 'ի նոյն յոռիշտակեցայ, և չարատանջ հարայ։ Նդ որ նայեցեալ բարե-բարիդ՝ զթացար յիս. և 'ի ձեռն հոգեկեցոյց խորհրդոյ ապաշխարուն նորոգեցեր զիս։ Լսկ ես վատս արանց՝ դիւրանսայ զգայուն-ցս լինելով, 'ի հեռանալ յինէն մեղայ՝ զհետ նոցուն ընթացայ. և անձնամատն 'ի ձիրանս նոցին ըմբռնեցայ և տրորեցայ։ Ցեսեալ զիս անոխ-կալ ոնդ՝ ոչ անտես արարեր, այլ քաղցրաձայ-նեալ առ իս՝ 'ի բժշկուն հրաւիրեցեր. և դար-ման տարեալ՝ վերստին հաստատեցեր զիս։ Ամենեմ՝ այլ ևս շարունակել զկրկնուն աւա-զութիւն չարեացս. քանզի ապաշնորհ գտեալ այդչափ զթասիրուն դ՝ միանգամ ցնորեցայ. և կամաւ գրաւեցայ յսրոգայթ ապականուն. և 'ի նմին մնդեալ կապեցայ, խստացայ և չը-բացայ։ Հայեցար առ իս աչօք ողորմուն, և ոչ զգաստացայ. ձայնեցեր առ իս բարբառով բե-բանոյ քո, և ոչ արթնացայ. ձեռն կարկառե-

ցեր յիս, և ոչ շարժեցայ։ Հրաւիրեցեր զիս բանիւք քարոզաց և օրինակաւք ապաշխարողաց, և ոչ հոգացայ։ Ի.ԱԼ 'ի յամախել այցելութեանքո՝ ոգի առեալ հնորհաւք հոգւոյդ ՝ՍՐՅ՝ անդրէն վերաստեղծայ։

Բայց քանզի 'ի սովորութի չար պարաւանդեալ կայի՝ կրկին և կրկին թշուառացայ։ Ամէն իրի և զօրութիւն հնորհայ քոց այսուհետև սակաւ ազդեմ յիս. ոչ զի ոչ զօրեմ, այլ զի հոգիս ընդեմ զինքն զինեմ։ Լաւ եղէ ես իբրև պղծվատիկ մեսալ 'ի ջուր, յոր ոչ ներգործեմ գործի։

Ի.ԱԼ 'ի ժամանել առիս միւսանգամ անբաւ ողորմութիւնքդ՝ դարձայ և լուացայ։ և դարձեալ լուանիմ. և ըստ խոզից տարազու վերբաւին ընդ տիղմ թաւալիմ։ դարձեալ ջերանիմ, և անդրէն սարսռիմ։ Ո ղջանամ ընդ չարիս, և պժգանամ ընդ բարիս. թափեմ զեռնիս, և առ նմին բեռնաւորիմ. արտաքս մտարեմ, և 'ի ներքս ժողովեմ. և զոր ժայթքեմ՝ զնոյն կլանեմ. նմանատիպ օրինակեցելոց գաղանին՝ որ անդրէն դառնայ 'ի փսխած իւր։

Ի.ԱԼ ողբալիս ես վերստին 'ի քոյոց զգաստացեալ ձրիցդ հնորհայ, դարձեալ յապաշխարուն փութամ. բայց ողբան 'ի նոյն յամախեմ, այնքան անարժան զիս թողուն գտանեմ. զի մեղք որչափ թողեալ լինին, այնչափ անարժան թողուն գտանին, և որչափ դիւրին կրկին՝ այնչափ դժուարին թողանին։ Լաւ հնորհք հոգւոյդ ՝ՍՐՅ՝ ամէն սակի որքան հեռանան՝ այնքան յամրաց գոյնս դառնան։ Լաւ սովին այսու որչափ պարտաւորուիք իմ դիզանան, այնչափ խստութիւնք

նոցին ծանրանան և մեծանան, և քան զգլխոյս
ամբարձումն վերանան և բարձրանան։ Այլ 'ի
խոստովանիլ իմում՝ այսպէսակ ապերախտութիւն
իմ հակամարտ արձանացեալ բարեբարութիւն
փրկչիդ՝ անընտել անընդունակ կացուցանէն
զիս շնորհացդ ընդունելութիւն. և հանեն քարշեն
զհոգի իմ 'ի մատակարարութիւն տուչութիւն
պարգևացդ ողորմութիւն։

Զ. Այս ահա այս է բանն. զի հանապազ 'ի խոստովանութիւն մատչիմ, և ինչ ոչ օգտիմ. նոյն եմ, և 'ի նմին ոչ մնամ, այլ յառաւելն փութամ. գնալով գնամ և վատթարանամ։ Խարսափիմ աստանօր և դողամ. գուցէ անարժանութիւն 'ի կենաձիրդ մերձենամ լոյս, որով և նսեմանամ. գուցէ անպատրաստ վստահանամ, որով և անարդանամ. գուցէ անխիտր հաղորդիմ, և ընդ մատնչին դատիմ, և դատապարտութիւն պարտաւոր կնքիմ։ Յուսահատութիւն են բանքս. և ես զի՞ գործեցից։

Օ՛ի՞ եղև քեզ անձն իմ, զի այսպէս յիմարեցար, և 'ի յուսոյ տկարացար. այսքան ընդարմացար յեղծումն, և անզերծ ողբերեցար 'ի զեղծումն. այսքան անբանացար, և ինքնին անասնացար։ Աւրի անձն իմ, և մի ընկղմիր 'ի յատակատակս յուսահատութիւն. աւրի անձն իմ, աւրի և կարդա առ՝ որ՝ ած քո. աւրի անձն իմ, աւրի և յուսա առ յոյսն կենդանի. նա է փրկիչ երեսաց իմոց, և նա կեցուսցէ զիս։

Այլ ի՞ՔԱՅՑ և ոչ 'ի յուսոյ հատայց. այլ յոտս կենարարիդ իմոյ անկեալ աղաչեցից, և զերեսս քո խնդրեցից. յողորմութի՛ քո ապաւինեցայց,

և Ի գթասիրութիւնս քո ապաստանեցայց. Ի հարուածս վիրացդ հայեցայց, և զխաչիդ քով սրտիւ փաթեցայց. յանքննին տեսչութիւն քո պատսպարեցայց, և յանձառելի սէր քո յա-
րեցայց։

Ընդ այս յարաձգին իմ փափաքմունք. և ընդ այս հառաչեն հոգւոյս թորթորմունք։ Լաւ սա կայն վարուցս ապականութիւն յետս ընկրկէ. և ընտելուն չարաչար հրահանգուէց ընդ հակառակն մղէ։ Սորին աղագաւ առ որ ցանկամ՝ Ի նոյն անկարանամ, և յորմէ խորշիմ՝ Ի նոյն գլորիմ. որում կարօտիմ՝ յայն ոչ հասանեմ, և յորմէ տագնապիմ՝ Ի նոյն պարուրիմ։ Ի յառնել իմում անդրէն անկանիմ. Ի կանգնելս իմ դարձեալ կործանիմ. և Ի կենդանանալս կրկնամեռ կորնչիմ։ Ընդ այս ահա անապատ մթին ուղևորին գնացք իմ. ընդ այս ուղի պղտոր հեղեղին խորհուրդք իմ. և ընդ այս ծով փրփրաւոր նաւարկեալ ընթանան կեանք
իմ։

Զ. Իցէ՞ թէ ժամանեցից Ի նաւահանգիստ ազատութեան, և իջևանեցայց յօթեւանս անդորրութեան. Իցէ՞ թէ տատանմունք իմ հանդարտեսցին, և ցնորմունք իմ խելաբերեսցին. Իցէ՞ թէ անսաստ յարձակմունք ախտիցս ընկճեսցին, և վայրենի բռնութիւնք սովորութեանս նոճաձեսցին։ Լաւ ես ինքն մերկացեալ Ի մոլութենէ և Ի մեղկութենէ՝ յանարատութեան կացից, և յանմեղութեան կեցից. յուրախութեան հոգւոյ ձեմեցից, և Ի խաղաղութեան սրտի մնացից։

Մի՛ և ոչ հանջեցայց Ի յառաջադրութեանէ իմմէ.

և մի կործանեցայց 'ի կամայս հաստատութէ ։
Մի հաւան գտայց հրապուրանաց հին մոլ-
դոյն · և մի անսացից նենդաւոր խորհրդոց թիւ-
նարբոյց այսոցն ։

Ա.յլ արդ դու անոխակալ փրկիչ իմ, և ամե-
նողորմ թագաւոր իմ, օգնեա յուսալեկելոյս ·
օգնեա աղաչեմ· քանզի ես անձամբն չեմ բաւա-
կան՝ ոչ հաստատուն մնալոյ, և ոչ անկործան
գնալոյ, ոչ զհաճոյս քո առնելոյ, և ոչ զանհա-
ճոյսն մերժելոյ · ոչ առ բարին մերձենալոյ, և
ոչ 'ի չարէն խոտորելոյ ։

Իսկ 'ի զօրանալս իմ 'ի քէն՝ կարող եմ յամի՝
յոր առանց քո անկարանամ։ Զ օրութիւն քո 'ի
տկարութիւն կատարի ըստ քումդ վկայելոյ բանից ·
Բ · Կոր · ԺԲ · 9 · և ողորմութիւն քո 'ի կարօտեալս
փառաւորի ։ Ա.զի՞ կատարեա՛ յիս 'ի տկարս ըզ-
զօրութիւն քո · և փառաւորեա՛ յիս 'ի կարօտս զո-
ղորմութիւն քո · զի բարձրասցի և սքանչեսցի մե-
ծութիւն փառաց քոց յաւիտեան ։

ԿԳ·

Հինգերորդ կիւրակէ զկնի խաչի ։

Զ գործոցն 'ի Թովմանս ։

Ա՜ւաղ աւաղելի անձինս, և թիւրս աւաղ·
զի որ 'ի ծանուցեալս անօրինեցայ՝ 'ի մա-
նուանս պաշարեցայ · 'ի նոսին զգուշանալով իսկ
վարակեցայ, 'ի սոսին անզգոյշ կալով շուրջ դա-
բանեցայ ։ Ի համակիլ իմ 'ի սոսին՝ թակաղ-

թեցի զկս 'ի նոսին։ Եղի զկս յորոգայթս փա-
քունց, և 'ի գուբս մեծամեծաց գլորեցայ։
Օրս հեշտեաւ կարելի յաղթել, դիւրաւ 'ի
նոցունց յաղթեցայ. և վստահ մերձենալով 'ի
սոսին՝ ըմբռնեցայ 'ի նոսին։ Ցեսի մոդէս մի
մտեալ 'ի բիւրաւոր բազմութիւն մրջմանց փա-
քունց. ըմբռնեցաւ 'ի նոցունց, և հուսկ յետոյ
սատակեցաւ։ Օ խարդ ապա և ես համարձակե-
ցայ մուտ առնուլ 'ի բազմութի մրջնատեսիլ նե-
րելի յանցանաց. միթե չեմ՞ն և չիցեն բաւա-
կան 'ի մահ հոգւոյ կարապետել։
Փոքունք էին, բայց յոգունք. նուճաղունք էին,
այլ բազումք. ես 'ի փոքրկութի նոցին հայեցայ,
և 'ի յոլովութէ նոցա պարտեցայ. զնուճաղութի
նոցին արհամարհելով՝ 'ի բազմութէ նոցա պար-
տասեցայ։ Թոյլ եռաւ նոցա իբր տկարաց. այլ
'ի զօրանալ նոցա ես տկարացայ։
Օձն սոքա մահացուցիչ ասելով՝ յիս ժողովե-
ցի. և 'ի գումարիլ նոցա 'ի վէր իմ՝ զանձն իմ
'ի մահ գրաւեցի. քանզի արդարև սրչափ ինչ
գործեն մահուչափ մեղք իւրեանց մեծութիւն,
նոյնչափ պատրաստին գործել ներելիք իւրեանց
բազմութիւք. մինչև մահացուցանել զանմահ
հոգիս։
Յընտանեանալ իմում 'ի յաձախուն ներելեաց՝
մատեայ և յընտանութիւն մահացուցաց. և 'ի
մատչիլս իմ յիմարեցայ, զի ոչ 'ի միտ առի՝ թէ
զիարդ կարիցեմ տոկալ նոցին՝ որ տկարանամ
տանիլ սոցին։ Ա՛չ ապաքէն որ չկարէ բառնալ
զքաշ մի բեռին, ոչ զօրէ զբիւրաչափն տանիլ
ծանրաքաշ լերին։ Այլ քանզի ես 'ի թեթեւս

անզգաստ սովորեցայ և անհոգ գտայ, ըստ նո-
ցին և 'ի ծանունս բերայ և շղթայեցայ։ Այլ զի
ծանունք յուժգին տպաւորին՝ դժուարին բժշկին. և որք 'ի նոսին սովորին՝ նոցին դերի
գրին, և 'ի նոցունց խստիւ վարին։

Այլ ինձ դերելոյս, թէ զիարդ իբր 'ի խելաց
անկեալ՝ յայսպիսի վանդաւորուն ոլորեցայ,
և 'ի սոյնպիսի ճշմարտարութիւն կարկամեցայ։
Ինչին վարկայ զսոսա՝ ներելիս գրելով. բայց
յոչնչաբեայ նոցին գոլոյ վտանգեցայ. և սովին
այսու ահա 'ի չարեաց նուաճեցայ, և 'ի բարեաց
նահանջեցայ. 'ի թշնամւոյս յաւարի հարայ, և
'ի հաստատիդ աչաց անկայ։

Փոքունք եին սոքին. բայց մտեալ 'ի հոգիս՝ բա-
ցին անցս լայնս լլնդունելութիւն հրապոյ ընտաց
չարին։ Ցեսեալ զիս թշնամւոյն ամրափակեալ
հնորհիւ քով, ոչ իշխելով 'ի ներքս համարձա-
կիլ, 'ի ննջել խնամ 'ի քուն անհոգութիւ եմոյծ
ընդ փոքր ձեղքուած հոգւոյս զփաքն 'ի մեղս.
և նա 'ի ներքս անկեալ՝ եբաց զդրունս առ մե-
ծամեծս։ Այլ թէ չեր փոքրուն մտեալ 'ի տուն՝
փակեալ մնայր դուռն, և ոչ կարեր գողն դիւ-
բամուտ լինել, և յաւարի առնուլ զիս։ Այս-
պիսի անցս անցեալ՝ յապականութիւն դարձայ,
մեղ յոզբ և 'ի սուգ պաշարեցայ։

Այլ ինձ և կրկին վայ. զի փոքունք հասին յիս,
և այրեալ տոչորեցին զհոգիս, զիարդ ոչ 'ի միտ
առի թէ փոքր մի հուր զմրպիսի անտառս հրդե-
հէ, և զբաղաքս ողջոյն յանձին դատի։ Փո-
քունք հարան յիս, և 'ի հող մնհու եղուցին
զիս. հարուած ասղան նուազ իմն է. բայց մեր-

ձեալ'ի սիրտ՝ սպանանէ. զի՞նչ ասպա'ի յաձա-
խեէն։ Փոքունք կալան զիս, և ընկրկեցին ըզ-
կեանս իմ յընթացեալ առաքինութեանէ. նաւակալ
ձուկն եբկնեիս փոքրոգի իմն է, բայց զառա-
գաստալիր նաւս կասեցուցանէ։
Փոքունք՝ միջոց յիս գտեալ, առ փոքր փոքր
վտանգեցին, և'ի խորս սուզին. ջուր ծովու
տակաւ մուտ գտեալ ընդ նաւու ծակ ընկլու-
զանէ զնա։ Փոքունք փոքումքք հեղան յիս, և
յորդեցան յանիրաւութիս. կաթիլք ջուրց'ի
հոսիլն անընդհատ՝ գետս գնացուցանեն, և լիճս
գոյացուցանեն. * որ արհամարհէ զփոքունս՝
փոքր փոքր սուզի յանդունդս ॥։
Ը. Լասիկ ես ինքն'ի կարիս փափկունս յաձա-
խելով՝'ի պնդագոյնս պարուրեցայ։ Լու ընդ
հակառակին՝'ի փոքունց բարեաց յետս մնալով՝
'ի մեծամեծաց զրկեցայ. զնոսին զներելիսն՝
չմնասեն ասելով հրաւիրեցի. զսոսին զփարե-
լիսն չօգտեն ինչ ասելով՝ մերժեցի. բայց խա-
բեցայ. զի ոչ՝'ի նոսին յարելով վատթարացայ,
սոյնպէս'ի նոցունց մեկնելով ուսայնացայ։
Փոքունք են սոքին, բայց առ բարձրագոյնս վե-
լացուցանեն. հակ կշռորդի չէ ինչ մեծ, բայց
զահագին ծանրութիւն'ի վերս ամբառնայ։ Փո-
քունք են սոքին, բայց յաձէլն բարգաւաձեն
յերկնային քաղաքականութիս. հատ ընկուզի
փոքր իմն է, 'ի բուսանիլն ծառանայ, և բարձ-
րաբերձ շինուածոց պիտոյանայ. նաւանայ և ա-
ռագաստանայ։ Փոքունք են սոքին, բայց գան-
ձըս պանծալիս'ի հոգիս ամբարեն. բիւր այլայ
փոքրիկ իմն է բայց զհոյակապ աշտարակս յինքն
ի՛ն

ամիտիսէ։ Փոքունք են սոքին, բայց առ զարմանալիս ուղղեն զՀոգին. զի՝ փոքր իմն է, բայց զծանրաբեռնեալ նաւս ուղղիլ կարասցէ։ Փոքունք են սոքին, բայց 'ի նուազելին՝ նուազի և բոլորութիւն առաքինական կենաց. 'ի հոսիլ արեան կենդանւոյ տակաւ՝ նուազի մարմնին, և բառնի կեանքն։

Լու ահա ես յանի յայսոսիկ զարտուղի ընթացայ. և յիմարութիւն պատրեալ ցնորեցայ, և թշուառացայ։ 'Ի խոնարհագոյնսն կրթիլ ոչ զիջայ, վնկ և 'ի վերնագոյնսն ոչ բարձրացայ։ Օ ազազունսն յանպէտս վարկայ, վնկ և 'ի պարարունսն ոչ ատոքացայ։ Օ ձագունս զեղեցիկս ոչ տածի, վնկ և զչքնաղպէզ հասունսն ոչ տեսի։

Դարձեալ վերստին զիմագրական յանդիմանութիւն. զի զախտից սերմանս 'ի հոգիս ցանեցի, և զգարշատիպ տունկս աղէտից բուսուցի։ Օ ազուշեսունս ապականիչս այգեոյս ոչ կալայ. առիւծուց և արջուց օրջ պատրաստեցայ։ Օ մանկունս քաղցրացուց ոչ հարի զքարի. 'ի հնկայից նոցին վարեցայ գերի։ Օ մանունս յանցանաց 'ի բաց հանել ոչ կամեցայ. զթանձրահեղոյս բևեռս սևեռել հաճեցայ։ 'Ի դատարկաթոր բանից ոչ նահանջեցայ. 'ի թիւնալից և յեղեռնական իմացս բանից ինքնադատ պարտաւորեցայ. Տաք. ԺԷ. 37։

Ը. Իսկ արդ 'ի յակնարկել վերնոյ յայսպիսի ընթացս իմ՝ յինչ արդեօք մնաբերիցին. ամենեքեան մի բարբառ լեալ աղաղակեսցեն. խելագարեալ է դա, արդարև խելագարեալ է։

Ի՛նչ կրկին վայ կրկնակի խելագարելոյս. յորոմ տոռուն արդեաք պարտ իցէ պարաւանդել զիս, կամ յորոմ շղթայս ուժգին կապել. յորոմ կոձեղս ընդել, և յորում վայրի զսպել։

Ասայ իմ յայսպիսի հասեալ վիճակ՝ ոչ 'ի տռանց կաշկանդիմ, և ոչ շղթայիւք պարանիմ. զի ես նոյն եմ եթէ 'ի պարանս և եթէ 'ի վրանս։ Ի՛նդարձ այսոքիւք ես ոչ խելաբերիմ. այլ հայեցեալ յամենարուեստ զօրուն ամենաձարտար բժշկիդ, և 'ի նոյն լեալ ապաստան՝ ակնունիմ թէ դու ինքն հնարաւորեսցես խելացնոր ցնդմանս զապաքինութիւն. ոչ արդարոց դարմանք զօրեն յայսպիսի կատաղիս, և ոչ կապանք բռնաւորաց ուղղել կարեն զայսպիսիս։ Դու ասա՛ իմ, դու տար դարման այսմ քոյդ ստեղծուածոյ. քանզի հնարաւոր հզօր ես. ոչ միայն կարես, այլև կամիս. կարես, քանզի ամենակարող ես. և կամիս, քանզի ամենողորմ ես և ամենաբարի։ Ա՛յլ հնարիցս կարօտիս, և ոչ 'ի կատարելդ վաստակիս։

Այլ ապա աղաչեմ, ցոյց յիս՝ որում ես կարօտիմ. ազատեա՛ զիս՝ յորս խստիւ վաստակիմ. և մի՛ ունայնացուցաներ զանկանելութիւն յուսոյ իմոյ ոչ յոյսդ նամի յս։ Որով կազդուրեալ և զօրաւորեալ 'ի հոգիս՝ արիացայց 'ի վանել զիսքառնս չարեաց, և բուռն հարկանել 'ի փոքրկունս բարեաց. զնոսին անարգել և զսոսին ընդրկել. և առ մեծամեծ առաքինութիւնս չու առնելով 'ի զօրութիւն 'ի զօրուն, յանմի ըստ հաճոյս քո վերանալ. և շնորհիւ ողորմութիւն քո առ քեզ ժամանել և զքեզ օրհնել ընդ հոր քում ամ-

նակալի և ընդ հոգեւոյդ քում Աշմարտի ընդ ամ յաւիտեանս։

ԿԴ.

Ի ելեերոդ կիւրակէ զկնի խաչի։

Ելեղեղամուրեն։

ՅԱ. Ուրախութեամբ աւետիս հնչէ յականջս իմ, և զարթուցանէ զոգիս։ Յորդիսի էս տխրութեամբ տրտրեի, և յորքան հոգս վարանեալ մաշեի, թէ որպէս հնար լցէ ինձ թողութիւն այսքանեացս գտանել կուտակութեց մեղայ և կատաղի անօրէնութեց։ կայցէ արդեօք յոյս ազատուել 'ի պարտուց այսչափ յանցաւորութեց։ Ի մեծայն մեղայ ներողութի սփոփ յողորմութեամբ քումմէ ամ հայր գթութեց։ իսկ իմումն գտանել ներողութեամբ հնարս՝ ոչ ստ ուստեք աւետարանեսցի։

'Ի պատգամն օրինաց քոց 'ի խնդիր խոնարհեալով՝ 'ի նոսին անշուշտ գտանեմ։ որով և սփոփ քաջալերիմ։ Ոտի առ 'ի նպաստ 'ի սոյն զապաշխարութեն խորհուրդ։ այլ այս գուցէ երկբայելի լցէ՝ յանվաւերն լինելոյ։ Ոտի և զողորմութեն տուրս, յասել անդ մարգարէին, * ողորմութիւն քո ողորմութիւն քաւեսցիր ‖։ այլ այս ծանր է ինձ։ Ոտի և զառաւելուն Աստուծոյ, և զյանձնառուն պահեցողութեց, և այլոց խստամբ բերութեց։ այլ այս դժուարին է տկարացելոյս։ Ոտի և զհանապազորդութեն աղօթից և մաղ-

թանաց. այլ այս զոր ամ ոչ յայսոցն հեղգացեալքն։ Զոտի և զգուշութեան զանազան առաքինութեաց. այլ այս երկար ինն է։ Զոտի և զուխտագնացութեանն զաշխատանս. այլ այս հակակիր ինն է։ Լաւ որ առաւելն է քան զամենայն՝ զոտի զշնորհս քո ամ իմ. այլ այս առ 'ի քէն է. յինէն ինչ քեզ նուիրեալ խնդրեմ, առ 'ի քաւուն մեղացս հայթհայթելոյ։

Ա. Յս ամ զոր նշանակեցի՝ յօդմունքն են մարգասիրութեդ, մնուցիչք և վերածիչք հոգւոց 'ի վիճակ առաքինական կենաց և 'ի սրբութիւն վարուց. քան զոր չիք ինչ պատուական։ Լաւ սակայն էս այժմ ոչ յայս վիճակիս յօժարիմ, և ոչ յայն հասանել նկրտիմ. զհետ եմ միայն ըզ-հաւասարին շահելոյ թողութեան դարման։

Յառաջոյ իմմէ ահա հնչէ փող այսր գիւտի յերկրպագելն բերանոյ բարերարիդ. և զինչ իմ խրախուսէ ձայնդ սիրալի, 'ի գոչել քում առ մեզ. Թողէք և թողցի ձեզ։ Ոչ երանաբարեաւ աւետեացս. զի՞նչ գիւրին է, ասել՝ թողեալ լիցի, թէ ասել՝ արի և շրջեաց։

Ա. Մենիշխան ինքնակալ ՅՈՐԴ յայսպիսի խնամարկեալ մարդասիրութեն, 'ի սոյն յայս պայմանուխտի կապեցեր զդաշինդ ազգումն, առ 'ի մեղացս թողութեն։ Ուրեմն ինն է ինձ այս, և դաշն ամենահեշտ առ 'ի լուսն բուսանդակելոյ. և պարծանք թագաւորիդ թագաւորաց խնկելն. զոր և աներկեայ ակն ունիմ և դաւանիմ, թէ անանահանջելի պահեսցես։ Օ՛ն թէ ոչ կամեիր պահել և կատարել, հիմ կամեցար պայմանադրել։ Կամեցար այն ՀՀմարտուն, և կատա-

բեռ արդարութեան. զի յայս սահման անդառնալի անօրինեցեր զքան։ Ամին իրի և իմ վասա հայեալ յայս ուխտ տնեալի, 'ի թողուլս իմ այլոց՝ անտարակոյս ապահովիմ և ինձ թողուն 'ի քէն գտանելոյ։

Ը. Զի ինչ օգուտ եթէ կացցէ յաղօթս և մատուցցիս քեզ պատարագս, և չթողցիս զյանցանս եղբօր իմոյ։ Հրաման քո է։ * Եթէ մատուցանիցես պատարագ 'ի վերս սեղանոյ, և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի ինչ խնդիր զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում. և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո ॥. Մատ. Է. 23։ Հաշտիմ և ես որ. բայց զի՞նչ շահ. զի ոչ հաշտեցուցանեմ ընդդիս զեղբայրն իմ. զի՞ կայ իմ և նորա ասելով։ Զի ինչ օգուտ, եթէ բաշխեցցէ զինչս իմ աղքատաց, և ոչս ունիցիմ 'ի սրտի առ ընկերս. ապաքէն դու զթողուլն խնդրես, ասելով. * Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր. ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա. և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ॥. Մատ. Է. 14։ Թողում և ես. բայց զի՞նչ շնորհ. զի զմիշատակ նոցին ունիմ յիս ինքն 'ի ներքնումն։

Զի ինչ օգուտ եթէ տայ զանձն իմ 'ի Ճգանս, և 'ի սրտի պահիցեմ զեղբօրն իմոյ զյանցանս. քանզի չգտանեմ այսու՝ որում ցանկամ զթողուլն. ըստ որում և ետուր մեզ պատուէր յաստեղդ. * Թողուցուք՝ եթէ ունիցիք ինչ զումեքէ, զի և հայրն ձեր՝ որ յերկինս է՝ թողցէ ձեզ

զյանցանս ձեր. զի եթէ դուք ոչ թողուցուք,
և ոչ Հայրն ձեր՝ որ յերկինս է՝ թողցէ ձեզ
զյանցանս ձեր ։ Մարկ. գ. 25. Երեմիա. եւ.
բայց որ նպաստ. զի ոչ ապերդանեմ զվերս՝ զոր
ընկալայ յերդաւորէ իմմէ, այլ տածեմ. տամ նոր
զողջոյն, սակայն ոչ կենցաղիմ ի նմա, և ոչ
դնամ յողջոյն նոր. և ոչ իսկ կամիմ օր մի կեալ
ընդ նմա։

Զի ինչ օգուտ՝ եթէ գտից զամբարիս, և չթո-
ղից զերդաւորն չարիս. որով և դատիմ անկանել
յերեսացդ ամ, և գտանիմ պարտաւոր 'ի ձեռս
դահճաց մատնելոյ. ոգի արար արդարակորով
ամրն իւրում ծառայի. զոր և յօրինակ առեալ
'ի վկայութիւն եդիր, թէ * նոյնպէս և Հայր իմ՝
որ յերկինս է, արասցէ ձեզ՝ եթէ ոչ թողու-
ցուք իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտից ձե-
րոց զյանցանս նոցա ։ Մատ. ժբ. 35. Շնորհեմ
և ես եղբօր իմում, բայց որ իրաւունք. զի ոչ
թողում 'ի սրտէ. վարիմ ի նմա իբր ակամայ.
չունիմ ոչ ի նա, բայց սիրտ իմ ոչ տանի նմա։
Լ. յսոքիկ ոչ են գիւտ հնարից թողուն գտա-
նելոյ, այլ արդար իրաւամբք ամենայնի քոյին
դաշանց 'ի դատապարտուն մատնելոյ։ Օ՞ինչ
քան զայս գիւրին մարթ էր ինձ գտանել հը-
նարս. գտի, և զյարգ պատուականուն նորին
այնպիսի յիմարուն չարաչար 'ի կիր արկի։ Լ.
եթէ յայսպիսի հեշտինսն այսպէս յամառ և
յիմար երևեցայ, 'ի դժուարինսն զիարդ պան-
ծացայց։ Լ. պա թէ շնորհիւ ողորմութեան քո թո-
ղից ամի յամ սրտէ ամ ձշմարտուն, համարձա-
կեցայց յայնժամ քաղցր նուագել զտիրաւանդ

զաղօթսդ ասելով. * Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ||. Մաթ. Զ. 12։ Լուսաւորչին այսու անխտիրանելի դաշնամբ վստահ եղիցի 'ի դատաստան քո. և 'ի դատել քում զիս, 'ի յուսոյ ոչ անկայց։

Գ. Արկնչիմ և զարհուրեալ գոլամ 'ի յանդիմանել քո զիս յահաւորդ քում ատենի, թէ զիարդ յանդգնեցար գործել զայսքան չարիս. ոչ գիտեիր՝ թէ ընդդէմ իմ է՝ զոր առնես. ոչ հաւատայիր՝ թէ ունիս զմ այսր ամի համարս տալ. ոչ ճանաչէիր՝ թէ յածիլգ յատեան՝ հանդերձեալ էիր դատապարտիլ. և որպէս իշխեցեր հակառակ կանգնիլ դատաստանաց իմոց։

Զունիմ ինչ ասել առ այս. զի իրաւամբք պարտաւորիմ։ Լուսակայն եթէ թողեալ ինչ իմ յամ սրտէ զամ մեղս եղբօր իմոյ՝ կարող եմ մաղթելով պաղատիլ և ասել. լուր ինձ դատաւոր արդար, և անսա բանից իմոց. գիտեմ զի անիրաւեցայ առ քեզ, և ճանաչեմ զմեղս իմ, որոյ յանցեալ ընդդէմ հրամանաց քոց. և սակայն այժմ 'ի դատիլս իմ՝ յիրաւունս ուխտի քո ապաւինեալ՝ աղաչեմ. ոչ ապաքէն դաշն եդեր ընդիս, թէ մի՛ դատիք զի մի՛ դատիցիք. թողէք և թողցի ձեզ։ Լսկ արդ ես ոչ դատեցի զոք. և եթէ դատեցի՝ թողի նմա զոր ընդդէմ իմ մեղաւ. ազէ թող և դու ինձ պարտաւորելոյս ըստ պայմանի դաշինդ հաստատելոյ։ Լինթէ մարդիկ պահելով պահէն զդաշն՝ զոր եդին, միթէ հաստիչդ մարդկան ոչ հանձեսցիս 'ի սոյն հանդիսաւորիլ։ Լինթէ հրամայեցեր մեզ թողուլ՝ զի և դու թողուցուս, 'ի կատարել քո

զայս՝ միթէ ոչ՝ քարոզեսցիս յաղթօղ՝ի դատել։ Լութէ պատուէր Աստուծ սահմանաւորացս և չարամտացս եօթանասնեկի եօթն թողուլ եղբօրն, չիցէ՞ փառք՝ անսահմանելի ողորմուն թիւն։

Ոչ թէ քանի՞ երանի՞ էր վանագեցելոյս՝ հաւատարիմ՝ի սմին գտանիլ և անենգ. քանի՞ ուրախութիւն լինէր՝ի սրտի իմում. թէ ունիմ անշուշտ թողուն պատահիլ. քանի՞ փառք էր հոգւոյս՝ ի սոյն հաստատելով՝ի նմանութիւն անոխակալութեն հօր քո վերանալ, և՝ի բերանոյ քումդ վկայիլ, թէ՝ի լինել ձեր առ այլս գթած՝ հօր իմոյ գտանիք համագութեաց. * եղեր՛ուք գթած, ոգի և հայրն ձեր գթած է ॥. ղուկ. Շ. 36։ Այլոյ արդ զի՞նչ օգուտ՝ի թողլոյ այլում զյանցանս, եթէ ես՝ի նոսին զառածանիցիմ. որ շահ յանոխակալ լինելոյ առ այլս՝ եթէ՝ի կարգաց բարելաւութեն գատարկ երևիցիմ. որ չնորհք իցէ՝ի գթասիրելոյ յայլս, եթէ ես յանձին ինչս անգութ բերիցիմ՝ յախտս թաւալելով։

Այս սակայն յամենագութ ներողամտութի՞ բաբեսիրդ ապաստան լեալ, ներելով և իմ՝ մեղաց իմոյ ընկերի, զուն գործեմ այսուհետև յո՛ և իցէ մեղաց ամ՝ ջանիւք յետս ընկրկիլ, և առաքինական կենաց անդուլ պարապիլ։ Այս եթէ վրիպեցիմ ևս, յայս կայ իմ առաջի՝ թողութի՞ մեղաց եղբօրս՝ թողութիւն առ՝ի քէն գտանելոյ, և՝ի պարգևս քո վայելելոյ։ Այս թէպետ՝ի սոյն բաղմաք տկարանամ, այլ չնորհիւ՛ քով զօրանամ և արիանամ։ ( )գնեա՛ ինձ

յո՛ փրկիչ իմ՝ օգնեա՛, և օրհնեա՛ զկեանս իմ՝, և կարգեա՛ զիս ընդ արժանաւոր ծառայս քո՝ ընտրեալս հանդիսանալ՝ ի ներողամիտն լինել. և ներողութիւն քում զուարթութեան հանդիպիլ. և յամի զՀաճոյս քո կատարելով՝ ի քեզ փառաւորիլ, և զքեզ փառաւորել յամ՝ ժամ, և յամ յաւիտեանս։

ԿԵ

Լաւութեանդ Աստուածոյ զկնի խաչին։

Խաչ գիպ։

ՁԱ. Դիւտ անսահման իմաստութեան, երկրը-պագելի սուրբ նշան. որով հնարաւորեալ սահմանաւորեայ ամենաբարերար հաճութիւն կամայ որդւոյն՝ քեզ փրկել զմեզ զմանեալս՝ ի ձեռս սատանայի, և զերծուցանել զըմբռնեալս յանօրէնութիւն. կեցուցանել զգերեալս յախտից, և ազատեցուցանել զտատանեալս յալիս մեղայ։

՝Ի կորուստ վաճառեալ էաք, և քեզ գնեցաք. ՝ի գերութիւն գրաւեալ էաք, և քեզ ազատեցաք. մահու մատնեալ էաք, և քեզ կենդանացաք. յապականութի՛ սուզեալ էաք, և քեզ՝ ի նորոգութի՛ վերածաք։ ՝Ի կաւ և՝ ի տիղմ խրեալ էաք, և քեզ՝ ի բացանտի հանաք. ՝ի ցանցս բանսարկուին որսացեալ էաք, և քեզ խզեցաք. ՝ի դատապարտութի՛ յաւիտենական պարտաւորեալ էաք, և քեզ հատուցեալ անձնապուրծ զերծաք։

Ալ՝ որոյ և 'ի քեզ պանծալով՝ զքեզ փարիմք. զքեզ 'ի մեզ կրելով՝ ընդ քեզ բևեռիմք. ըզքեզ 'ի մեզ կնքելով՝ քև իբր արքայական նշան նու զօրաւորիմք։ Դու ազատարար մեր. դու փրկարար մեր. դու կենարար մեր. դու քաւարար մեր։ Դու միայն սեղան հաշտեցուցիչ. դու տապան ապրեցուցիչ. դու խարիսխ ամրացուցիչ. դու գաւազան կենդանացուցիչ։ Քև բացար մեզ Ճանապարհ փրկուե. քև ցուցար մեզ արգահատութիւն հաշտուե. քև տուար մեզ լիութիւն օրհնուե. քև շնորհեցար մեզ ցնծութիւն երանութեան։

Ը. Բարկուե թագաւորին յաւիտենից սպասնայեալ կայր ընդդէմ թշուառացելոցս, և քև զիջեալ և հանդարտեալ խաղաղացար։ Բանզի տեսեալ զքեզ հոր երկնաւորի թաթաւեալ յարեան որդւոյ իւրոյ, և նշմարեալ 'ի քեզ զտարածումն ձեռաց իւրոյ միածնի, նահանջեալ զկայ էառ 'ի սրտմտութէ բարկուե իւրոյ։ Հայեցար 'ի վերՔ մեր որդի բան հոր, և գտեալ զմեզ մինչու պարտաւոր և որդի կորստեան՝ խոր հուրդ բարի խորհեցար՝ քև և 'ի ձեռն քո անպարտ կացուցանել զմեզ, ոչ մեծութիւն ցուցանելով և ոչ իշխանութիւՔ վարելով, այլ զտկաբուն մեր զգենլով, և զխոնարհութիւՔ փարելով. անարգաբար մերովս 'ի վերՔ քո բևեռելով, և կամաւորապես 'ի քառաթևիդ մեռանելով։

Հոգւոյն սրբոյ նկատեալ զքեզ յենարան փառակցի իւրոյ, և աթոռ թագաւորութեան նորին՝ ոչ փայտ լոկ կոչեաց զքեզ բերանով իմաստնոյն, այլ փայտ կենաց և փայտ մեծի փա-

ռաց. փայտ անմահութեան և փայտ փրկութեան. փայտ օրհնութեան և փայտ զօրութեան։ Փայտ երկրապագելի երկնաւորաց և երկրաւորաց. և փայտ հրաշալի և պաշտելի, ծանելի և խնկելի։ Փայտ խմնարհեցուցիչ բարձրայելոց և բարձրացուցիչ խմնարհելոց. դիւաց հալածիչ, և չարին վանիչ. երկիւղալեաց փարատիչ և զգայուն պատասպարիչ. ախտաւորութեաց ապաքինիչ, և խոթութեաց ողջացուցիչ. դիւթութեաց խորտակիչ, և հմայութեաց կործանիչ։

Ը. Յայսպիսի և յայսքան յոգնապանծ շքեղութեամբ նշմարելով սադայելի զձև ետի կերպարանաց ինքնաբուն նշանիդ 'ի փայտս փայտս ՀԱՄ եկեղեցիս հաւատացելոց անձառացեալ և փառաւորեալ, ամենապարեալ թագոյց և անհետացոյց զիսկականդ փայտ, զի մի ևս նոցին նա՝ որով ինքն հարաւ և կորեաւ՝ կրկնամեռ մնահատուցցէ զինքն։

Ա. Յլոր ամի տիրէ և զգժնեալ չարութեան խարդախողին խորտակէ՝ յարոյց 'ի մտից արևու զգշխոյ մեծ, զգշխոյ ամենասեր, զԹագուհին հեղինէ, և խաղացոյց յելս արևու. Եհան 'ի խաչավայրն գողգոթա. և սաստիւք հրամանաց եւս գտանել հրեից 'ի ձեռն երանելւոյն յուդայի՝ զգանձդ անթաքուելի՝ բուրմամբ անուշահոտութեան. յոր 'ի հպիլ պատանեալն մեռելոյ դու ինքն կենդանարարդ փայտ՝ կենդանացուցեր զնա առ 'ի նշան ՀՇմարտութեան. որով և զգօրութիւն քո հրաշացուցեր։ Լաւ ահա յայնմ 'ի՛ետ դու ինքն յանհամար մասունս նշխարեալ ընդ ամ ծագս երկրի՝ երկրպագեալ փառաւորիս հաստատուիր

վկայուն ընդհանուր ՝ոգ եկեղեցւոյ յամ հաւա-
տացեալս։

Ընդ որս և ես երկիրպագանեմ քեզ և փառա-
ւորեմ զքեզ. ՝ի քեզ պարծիմ և քեզ սպառա-
զինիմ. ընդ թեւօքդ ամենամամ, և քոյով տե-
սուն արիանամ։ Այ՝ քոյով օգնուն նահատա-
կիմ ընդեմ բռնաւորին բնութեան մերոյ, և ընդ-
դեմ աշխարհային գայթակղուն։ Ընդեմ մարմ
նազգած շարժութեց, և ընդդեմ ազգի ազգի
մոլութեց և մոլորուն։

Օգնեա՛ ինձ աղաչեմ, օգնեա՛ ինձ ով փայտ
փրկուն և նշան բարութեան. օրհնեա՛ զիս ցողով
արեան որդւոյն այ՝ ի քեզ ցողելոյ, և զօրացո
զիս ՝ի համբերութի այլայլատարազ նեղութեց.
արիացո՛ զիս ՝ի վշտակրութի բիւրազգի արկածից,
և ամրափակեա՛ զանձն իմ ՝ի բազմադիմի վը-
տանգից։

Լեր ինձ ցուպ և գաւազան մխիթարութեան յամ
անցս թշուառութեան կենցաղոյս. լեր առաջնորդ
յանցաւոր ՝ի կեանս իմ, և ձեռնտու ՝ի գնացս
ընթացից իմոց. զի անվթար և անսայթաք ճա-
նապարհորդեցէ՝ մեր երկեան ժամանեցից ՝ի փրկ-
ութի իմ յաւիտենական, մինչև տեսից զքեզ
՝ի գաստեան ՝ոն ՝ի վերջնումն ՝ի մասունս
մանունս, այլ յամբողջ լրութեան։ Այ՝ ՝ի քեզ
ցնծալով օրհնեցից զպատարագեալն և զերկրը-
պագեալն ՝ի քեզ, զօրհնեալն և զարբեբանեալն
յաւիտեան։

Կ.Օ.

Ութերորդ կիւրակէ զկնի խաչին։

Մաղուռնեան գաղտնեաց և գայթակղութեանց։

ՇԱ. Եվ գաղտնեաց իմոց սուրբ արար զիս Տէր, և յօտարին պահեա զծառայ քո. սաղ. ԺԵ. 13։ Զաղթեալ գանձեալ կան յիս անբաւ չարեաց պարակք. յորն հայեցայց և զորն քննեցից։ Օ յաստեան անկարանամ թուել. զգաղտնիսն զիարդ կարացից 'ի համար արկանել։ Եվ զնոսնելս իմ զայսոսիս՝ սոսկամ, միանգամայն և սփոփամ. և սակայն ոչինչ զգուշանամ և ոչ հեռանամ. նա յառաւելն ջանամ և յաճախել փութամ. ամին իրի օր յօրէ թշուառանամ և անարգանամ, և 'ի գթոյ փրկչիդ իմոյ օտարանամ և վայրենանամ։ Լթէ զորս տեսանեմ յիս և զգամ, 'ի նոսին այսպէս վատթարանամ. զի՞նչ ասցա՝ յորս ոչ նշմարեմ և անհոգանամ. այլև մեծարեմ և չարաչար տածեմ. սերմանեմ և խնամեմ, դարմանեմ և աճեցուցանեմ։ Օ յայտնեացս ամբաստանեմ, և վերստին գիրկս արկանեմ. զգաղտնեաց իմոց ոչինչ գըրեմ, և 'ի ծոց իմ զայնս գուսմարեմ։ Լյս իմ արարք ոչ միայն 'ի մեղս զկեանս իմ շղթայեն, այլև յամենի անհնարին զանձն իմ պարուրեն։ Լչ քանզի գթացեալ յիս ամենաբարի փրկչիդ՝ երկոցունց եւս ազատուէ հնարս ցուցեր առիս, յառաջինն ապաստան լեալ՝ խոստովան եղէց

Հշմարտուբ զոմ զյայտնիս իմ, և ողորմութիւն
քում պատահեալ՝ գոսից առ 'ի քէն թողութիւն
ամենայնի ։ Յերկրորդին ապա մնտաւորելէլս՝
մատչիմ աղաչել զմարդասիրութիւնդ . և պա-
ղատելով գոչեմ . 'ի գաղտնեաց իմոց 'ոբ արա
զիս 'որ . զի մի 'ի մնալ նոց 'ի ներքս զանխուլ 'ի
յոգունց՝ կորուսից զՀոգի իմ 'ի տարապար-
տուց ։

Ք. Այլ որ մաշէն զիս՝ այլ իմն գաղտնուն է
մեղաց՝ ոչ յիս , այլ յօտարս . զի զորս միանգամ
գայթակղեցուցի և պատճառ եղէ մի զանչէլոյ
նոց , յանցաւորուն նոց թէպէտ և յիս գաղտնի
է , այլ որ 'ի նմա՝ յայտնի , և յինէն օտար ։ 'Ի
նմա տիրապէս մեղաց տպաւորութիւն . յիս նոցին
ծանր պարտաւորութիւն ։ Ոչքա յանդգնեցան
մեղանչել . և ես պարտաւորեցայ զպատիժն
տուժել ։ 'Ի նմա թերևս յանպէտս յանցեալ , և
քեզ իրաւամբք պարտապան ցուցեալ . 'ի նմա իբր
յանդգէպս անիրաւեցեալ , և առ քեզ անպատաս-
խանի երևեցեալ . առիթ եղէ կորստեան նոց , և
ես դատապարտուն 'ի ներքոյ անկեալ ։

Վայ յիմարուն ես , զիաՀդ յայլոցն գործել զա-
Հնիս , ես մատնեցայց 'ի պատիժս . 'ի բերկրիլ
այլոց 'ի փափկուն՝ ես վշտնոց տաժանեցայց 'ի
դառնութիւն . 'ի ծափս Հարկանել այլոց 'ի մեզս ,
ես տագնապեցայց 'ի դաժան գեղս ։ Վայ և
կրկին վայ , զի կորուսի և կորեալ . վայ աշխարհ-
Հի 'ի գայթակղուեց , յիրաւի վայ՝ զի գայթակ-
ղութիւն կորնչի ։ ԼաՀեկ կորուսեալոյն վայ եղէ ,
միթէ չեղէ՞ և կորուսչին . * վայ մարդոյն այն-
միկ՝ յոյր ձեռն կորնչի՝ որ կորնչին ‖ . Մաթ . ԺԸ .

7։ Այ է ուրեմն և ինձ եղկելոյս, յոյր ձեռն
ելցես քաղցաց գայթակղութիւն. առաւելապէս
վայ, զի ոչ միայն ամբարշտաց եղէ գայթակղե-
ցուցիչ, այլև փոքրկանց՝ յանմեղսն եղելոց՝ ի
նոյն եղէ գլորիչ. որով յաւելայ՝ ի տուժանս
անօրէնութիւն, և գրաւեցայ կապիլ ը երկան
իշոյ, և անկանիլ՝ ի խորս անդնդոց։

Յայս պատուհաս կնքեցայ՝ զո իմ յայլս անի-
րաւելոյ, յինչ ապա զո նոյ առ յինէն յանօրէ-
նութեան առաւելելոյ. քանզի այն տուգանք անձինս
փոքր իմն կշռի քան զտուգանս գայթակղութիւն
փոքրկանց. ըստ որում և ամենաբարի բերան
քո վկայեաց յասելդ. լաւ էր այնպիսւոյն ծո-
վահեղձոյց ընկղմիլ քան թէ գայթակղեցու-
ցանել զմի՝ ի փոքրկանց. Մտ. ԺԸ. 6։

Զէր ինձ շատ գայթակղեցուցանել ձեռին ի-
մոյ զիս, և աչացս զհոգիս, զիաղդ ապա հա-
մարձակեցայ յայլոց ևս յանդգնիլ գայթակ-
ղութիւն գլորմանս։ Լաթէ ակն իմ միայն գայ-
թակղեցուցանէր զիս, պարտաւորէի հատանել
յինէն, և հանել՝ ի բաց. զի լաւ էր ինձ միակա-
նի մտանել՝ ի կեանս քան երկուս ունել այս,
և անկանիլ՝ ի գեհենն հրոյն. Մտ. Ե. 46. զի՞նչ
ապա որ նովին ակամբ և զիս և զայլս գայթակ-
ղեցուցի, նովին ձեռաք զիս և զայլս՝ ի գժոխս
մղեցի. նովին ոտիւք ինձ և այլոց՝ ի կորուստ
կարապետեցի։

Զէր ինձ բաւական իմոցս մեղաց ծանրու-
թիւն. հիմ և զայլոցն՝ ի նոցին բարդեցի կոյտս.
որով և զիմն կրկին ասատկացուցի։ Նկարա-
նամ զիմոցս յանցանաց զիւրն գտանել. և որ-

պէս մարթացայց զայլոցն ևս համարս դուս-
բել։ Լաւագոյն են և բազմաձիձակ գայթակ-
ղեալքն յինէն. են՝ զորս ոչ ճանաչեմ, և են՝
զորս ոչինչ յիշեմ. զի՞նչ ունիցիմ պատասխա-
նել 'ի պահանջիլս իմ զՀամար նոցին։
'Ի բողոքել նոցա զինէն յատենի քում՝ յոր ահ
և յոր դողումն հանդերձեալ իցէ ինձ պաշա-
րիլ, և թէր զանձն իմ անբասիր կացուցանել,
և կամ զոր ջատագովութեան առաջի դնել
փաստ։
'Ի յառնել նՁ 'ի վէր իմ 'ի դատաստանի, և 'ի
կրձտել զսպառնալիս երեսաց իմ հանդէպ՝
ոչ թագեայց։ 'Ի գոչել միոյն առ իս. ոչ ա-
նագորոյն դու, ես անգիտակ էի այսպիսի չարի,
և դու հիմ 'ի նոյն արկեր զիս. որով ոչ միայն
զիս, այլև զայլս գայթակղեցուցեր յիս, և
բազմապատիկ բամբասանաց եղեր լուսկիչ. և
սովին այսու աղտեղեցեր զբերանս նՁ և զլսե-
լիս։ Հերիք էին իմ յանցանք, և դու ևՁ յայլս
ևս կործանեցեր զիս։
Յաղաղակել և միւսոյն առ անաչառ դատաւորդ,
դա կորոյս զիս՝ զոր դու արեամբ քով գնեցեր.
դա ուսոյց ինձ առ ոսն հարկանել զՀրամանս
քո, զոր արդարութիւն և իրաւամբք աւանդեցեր
ինձ. դա ոչ եթող զիս թողուլ զմեզ այլոց
առ 'ի թողուն գտանելոյ 'ի քէն. ապա և դու
մի թողուցուս դմա. դա անողորմ գոլով առ
ընկերս իւր՝ զիս ևս յանողորմ բարս էած, ոչ
խնայել 'ի նՁ և ոչ գթալ, ոչ օգնել նոցա և
ոչ բարի ինչ ցուցանել. ոչ անսալ մեծի, և ոչ
տանիլ փոքու։ Լաս 'ի հայհոյանաց զդուշանայի,
զի՞

և 'ի բամբասանաց հրաժարէի. դա ընտելացոյց զիս 'ի հայհոյանս, և դրդռեաց 'ի բամբասանս. որովք չարաչար յանցեաւ առ իս, և մեղայց զիս. ապա ընդ իս դատապարտեսցի և ընդ իս տանջեսցի. ընդ իս կորիցէ, և ընդ իս թշուառասցի յաւիտեան։

Լսակ արդ զորոց 'ի սոցուանց կարացից ես փակել զբերանս. եթէ այժմէն կամիցիմ հնարս հնարել, զորս դոցից 'ի նոցանէ՝ յողոքել, և կամ զոր պատասխանի ամբաստանուէս մեծի պատրաստել, նա զի յելոյզից մեղք գաղտնի էն յինէն և օտար. և զիարդ մարթացայց 'ի վերս առնուլ զնոսա 'ի գայթակղութեանս իմոց, կամ դէթ ներումն աղերսել, և դարման դառնուէս նուիթել։

Լյ ահա բացան առաջի իմ դրունք յուսահատութեան. և առ ո՞ եղէց ապաստան։ Լայց արդ առ քեզ աղաղակեմ ո՞ւ իմ և ո՞ր, միայն բարերար և բազմագութ. եթէ դու խնայեսցես յիս, և ներեսցես այսքանեացս իմոց գայթակղութեանց, ակն ունիմ թէ զգնեալ գերիդ յաղտութենէ արձակեսցես, և յայսչափ ամբաստանութեանց արդարացուսցես. նա յահեղ դատաստանաց քոց ապրեցուսցես, և 'ի փրկուն յաւիտենական ժամանեցուսցես։

Լյ քանզի ես ոչ կարեմ զգայթակղեալսն յինէն վերականգնել, դու կանգնեա զնա ամենակարող բակկաւ քով. դու մատո՛ նոյ զօգնականութեան ձեռին քո. դու զգաստացո՛ զնոսա ամենապատիկ շնորհօք քո։ Լյ արժանացո՛ զնոսա արքայութեան քում. ուր 'ի միասին միաբարբառ

գովութիւն փառս վերառաքեսցուք քեզ ընդ Հաւր յաւիտեան։

ԿԼ.

Ինն երորդ կիւրակէ զկնի խաչի։

Յիշատակ մահու։

Ո՜. Ոչ մահ՝ զիանդ դառն է յիշատակ քո առ իս առ պարտաւորեալս յանցանօք. սիրաց. խԲ. 1։ Ներկրական է հրաւէր քո առ արդարս. այլ տիրական հնչի յականջս ամ-պարշտաց անուն քո։ Պատուական է առաջի քո ՇԾ իմ մահ սիրց քոց. սաղ. ՃԺԷ. 15. այլ չար է մահ մեղաւորի, և ծանր յոյժ կասկած նո-րուն. սաղ. ԼԳ. 22։

Իսկ ինձ ընդ ինքն դառն իցէ յիշատակումն մահու, զի զոչ գուշակել անկարանամ թէ երբ գայցէ և ուր. զանդրդ և յորում վիճակիս։ Երբն անդիտելի է ամենեւին. զի սրբան ստոյգ է գալուստ մահու, այնքան անստոյգ է ժամ գալստեան նորա։ Այսմ և գու ինքն զկայեցեր ասելով. ոչ գիտէք յորում պահու գայցէ. մաթ. ԻԴ. 44. գուցէ այսօր, գուցէ և 'ի սոյն նուիագ. գուցէ վաղիւ, և կամ յայլում անկարծելի աւուր. գու-ցէ 'ի ժամու, գուցէ և 'ի տարաժամու։

Իսկ թէ ուր, ո՛ կարիցէ ցուցանել. գուցէ 'ի տան, գուցէ և արտաքոյ, գուցէ 'ի ծովու, գուցէ և 'ի ցամաքի. գուցէ 'ի մահճի, գուցէ և 'ի ճանապարհի. գուցէ 'ի ծանօթ վայրի, գու-

ցէ և յանցայտ տեղիս։

Բայլ թէ զիարդ, ո՞չ ոք է՝ որ յայտ արասցէ. գուցէ հիւանդութիւն, գուցէ և յանկարծակի. գուցէ ընկղմամբ, գուցէ և սրով. գուցէ հարուածով, գուցէ և կաթուածով, գուցէ ի քուն, գուցէ և ի տագնապի։

Բայց թէ յորմամ վիճակի. չկարեմ հասու լինել. և այս է, որոյ յիշատակն դառնացուցանէ զիս. մեռանիմ այն, բայց թէ իբր բարեպաշտ արդեօք, թէ իբր ամպարիշտ. արդեօք իբր բարեկամ ոյ, թէ իբր թշնամի. արդեօք ի՛ խնամիս, թէ ի՛ մեզ. արդեօք իբր արժանաւոր աղբայրութիւն, թէ իբր պարտաւոր դատապարտուն։

Այս տարակոյս սաստկացուցանէ յիս զերկիւղ մահու. սա է՝ որ տագնապէ և խեղդէ զսիրտ մտաց իմոց, այս է որ հալէ և մաշէ զոգիս. սոյն սա է՝ որ ցրուէ և ցնդէ զուրախութիւն սրտիս։

Հա մի միայն պատճառն, որով այսչափ երկրնչիմ՝ ի մահուանէ. ի յիշելն պակչիմ, ի զննելն թաղչիմ. վա՜ որոյ և բնաւին մեռանիլ չկամիմ։ Այլ սակայն յանկարդ վարս իմ ամենարկելով, կենցաղիլ ևս սատ տեսանիմ. ըստ որում վկայեաց երջանիկն ոյն՝ թէ. * մեռանիլ երկնչիմ. ապրիլ ամաչեմ ||։

Բայց ինձ ընդէր իցէ տարակուսիլ. կեանք իմ՝ աղդարար փոդ են ինձ՝ փրկուն և կորստեան։ Տեսի ծառ մի բարձրացեալ՝ ի պարտիզի, զոր հանդերձեալ էր պարտիզպանին հատանելոյ. ասացաւ. Երդարց ցիս թէ՝ ի հատանիլ ծառոյս յոր կողմն անկանիցի. ես ընդ արևելս վարիցայ, և նա ըստ արևմուտս հատարեցաւ, իբրև հատաւ՝

ընդ հարաւ կործանեցաւ. քանզի է այն էր հա-
կեալ։

Զ.հա և իմոյս մահու վիճակումն. զի յոր կողմն
հակեալ իցէ իմ, 'ի հատանել զիս պարտիզպա-
նիդ սղոցաւ մահու՝ յայն կողմն ունիմ անկա-
նիլ. եթէ միտեալ իցէ կեանս իմ յարքայութիւն
կոյս՝ յայն անկանիմ անտարակոյս. իսկ եթէ
'ի կողմն դժոխոց՝ կործանիմ 'ի խորս անդնդոց։

Զ.յլ ես յայս վարան կասկածի զքեզ միայն
ունիմ ինձ տպաւէն 'ի կեանս և 'ի մահու, կեն-
դանարար տէր, և աղբիւր կենդանութիւն յս։

Զ.ղաչեմ և աղերսեմ, տուր ինձ կեալ անարատ
և մեռանիլ անդաստապարտ. տուր ինձ կեալ
ըստ կամս քո, և մեռանիլ 'ի փառս քո. տուր
ինձ կեալ առաքինութեամբ սրբութիւն, և մեռանիլ
վկայութեամբ ճշմարտութիւն։ Կեցից կենդանութիւն
հոգւոյ, և մեռայց առանց մեռանելոյ. 'ի կեալս
իմ կատարեցից զարդարութիւն օրինաց քոց, և 'ի
մեռանիլս իմ հասից յերանութիւն փառաց քոց։
Կեցից ամբծութիւն վարուց, և մեռայց լիութիւն
վարձուց։ Զ'ի ես յարեցայց յանցաւորս, զի մի
և ես ընդ նոսին անցից. մի մեծամտեցայց յու-
նայնութիւն աղցաւորացս. զի մի և ես է նոսին
ունայնացայց. մի զակատեցայց զՏէտ հեշտու-
թեաց, զի մի տուգանեցայց 'ի յենանում ժամու
իբր ծառայ ապականուն։

Բ.այց արդ թէ և չկայր այս երկիւղ 'ի միջի՝
զի՞նչ շահ ընձեռէր ինձ 'ի պահու անդ վայել-
չութեան անցաւորացս. զի՞ օգուտ ընծայէր ինձ
նանրութեան հիւթանիւթիցս, միթէ կարէր օգ-
նել յայնժամ մեծութեան աշխարհի, կամ նպաստ

ինչ մատուցանել Հպարտութեն մնոտի. միթե
միթեթարէր զնս բերկրութեն զգալն, կամ սիռ-
փեր զնս զբօսանք մնեղն և մնլի։
Ի հասանել իմում ի դրունս մահու՝ զինչ
երևեսցին սոքա յաչս իմ. յրմբռնել զնս տապ-
նապեցուցիչ վերջին խօթեան, զիարդ տաղտ-
կալի համարեսցին սոքա հոգւոյս. յողջունել
զնս գալստեան՝ իմում պահնորդի յողջոյն յե-
տին, քանի մերժելի թուեսցին սոքա առաջի
իմ. ի համբուրել զնս դառնութեան անդառնալի
վայրկենի՝ երազ իմն ծխոյ նշմարեսցի այս ամ։
Օ ինչ յայնժամ ունեցիմ եղկելս վկայել.
աշխատ եղէ ի կեանս իմ համայն, և ահա եղի
ընդունայն, արշաւի ինչ վաստակեցայ, և ինչ
ոչ շահեցայ. քանի քանի փշտաց տարայ, և ան-
բեր սաղարթացայ. զտիւ և զգիշեր վա շահու
տառապեցայ, և անշահ երևեցայ։ Փառաք փայ-
լիլ ցանկացայ, և ահա ի փառաց զրկիմ. փաբ-
թամութիւնք պանծալ կամեցայ, և ահա փաբ-
թամութիւնք թողուն զնս. ի փափկուն զուարա-
ճանալ տարփացայ, և ահա ի փափկուեց հրա-
ժարիմ։
Ուրեմն խաբելով խաբեցայ և յիմարեցայ. ո-
բով և յուղղութեն շաւղայ զարտուղեցայ, և
յիմաստութեն ճանապարհէ թիւրեցայ. յարդա-
բութեն գնացիչ վրիպեցայ, և յառաքինական
կենաց վայրենացայ. ի բարեպարիշտ խորհրդոց
օտարացայ, և ի զգաստութէ վարուց մոլորեցայ։
Լաւ ահա առաջի կայ ինձ անդ անանցանելի,
և չու եղից բնաւին անդիտելի։
Ճ. Ի վարանել ի սոյն հոգւոյս՝ պաշարեսցէ

զմարմին իմ անզգայուն սգալի. և կալցի խորդ
իմն խորդալ անձռուն. յերանեալ ապա ինչոյս
մնացելոյ՝ մի՛ և մնասցէ հոգիս՝ի մարմնի։ Զոտոցեալ
ելցի զմարմինս զայս՝ ի որում միաւորեալ եկաց
յաւուրս՝ ի քուն և յարթիւն։ Յորմէ ոչ կամէր
անջատիլ՝ հրաժարեսցի իսպառ. և զոր սիրէրն
յիւր ոտ՝ իբր ատելի մեկնեսցի՝ ի նմանէ։ Որ
կամէր հանապազ զհաձոյս նոր առնել՝ ոչ և ա-
խորժեսցի ի նմա մնալ. և որ զգուշանայրն զնո-
վաւ, անարգեսցէ զնա, և մի՛ և ս դարձցի՝ ի նա,
մինչև ցօր յարութեան հասարակաց։

Հայեցարուք այժմ ո՛վ որդիք մարդկան՝ ի տե-
սիլ մարմնոյս մահացելոյ, յորպիսի կայս կայ-
ցէ. ամենևին անշարժ և անզգայ, անկենդան
և անպիտան. ծառ գօսացեալ, և կոճղ ծան-
բացեալ. յոր կողմն և թաւալես՝ տապալեալ
մնայ. զիարդ և տարածես՝ խլրտուն ինչ ոչ նըշ-
մարես։ Եթէ հարկանես՝ չիմանայ. եթէ այ-
բես՝ չլսէայ. եթէ հատանիցես զչիլս նոր՝ ոչ
բողոքէ. եթէ յօշոտես զանդամս նորա՝ ոչինչ
ձայնէ։

Մերձեցիր և բաց զաչս նոր. տեսանես զբիբան,
այլ ինքն ոչ տեսանէ. դոչեա՝ ի լսելիս նորա,
ականջք գոյ և ոչ լսէ. շրջեա զշրթունս, նըշ-
մարես զատամունս և զլեզու, այլ ոչինչ խօսի.
մատո՛ խունկ՝ ի հոտոտելիս նորա, ունչս ունի և
ոչ հոտոտայ. համբուրեա՛ զերեսս նորա, ամե-
նևին անբարբառ կայ. նախատեա՛ զնա, և գո-
վեսս զդեղեցկուն նորա, բնաւին անպատասխա-
նի գտանիս զնա։

Տեսիլ զիմանցն բարձեալ, գեղ երեսացն եղ-

ծեալ, և վայելչութիւն հասակին աղաւաղեալ։ Օ՜ի եղև քեզ մարմին դու. զի՞նչ պատահեաց քեզ. զի՞ կաս ընդարմացեալ և պապանձեալ. եթէ զգաս ինչ՝ խօսեաց զի լուիցուք. այլ նա սալացեալ կայ։

Օ՜ի՞նչ ապա յետ աւուրց՝ 'ի նեխիլն անդ, 'ի սորիլ հիւթոց և 'ի թորիլ թանձրութեց. 'ի տրորիլ անդամոց, և 'ի գարշանալ մասանց ամենայնի։ Տեսիլ սոսկալի, մինչև չհանդուրժել տոկալ՝ ոչ ծնողաց և ոչ զաւակաց, այլ վաղվաղել հանել 'ի տանէ, և փութալ տանիլ 'ի գերեզման, և ընդ հողով թափել և ծածկել. ուր ունի որդնահարիլ և փտիլ իսպառ։ Օ՜ որ եթէ ոք կամիցի քանալ և նշմարել, տաբատափիցն 'ի տարատիլն կերպարանաց նոր յանկերպարան իմն այլափոխելոյ։

Ա՜հա այս է մարմինն այն՝ զոր պարարեմք. ահա գազանն այն՝ զոր սնուցանեմք. ահա պաքսան այն, զոր յօրինեմք. ահա խոզանն այն՝ զոր պաշտեմք. ահա գարշելին բագինն այն՝ զոր ճաճանչացուցանեմք, և ոչ ամաչեմք։ Եթէ գոյր բարբառ 'ի բերան դիացելոյն, լուտանօք և նաբխատանօք կոծելր զմեզ։ Ո՞վ մարմնա դու՝ ասել լով. ոչ տեսանէք զիս՝ յորպիսի համակեալ կամ հանդամանս. և զիարդ զայսպիսի խիստ թեցելոյ փութայք զկամս կատարել, և զայսպիսի զզուանաց զհաճոյս առնել. այսպիսի նեխուած իբր գերի տրկօրէն ծառայել, և զհետ ապականութեան սորուն յօժարակամ ընթանալ։ Արիթե չիցէ՞ և ձեզ 'ի վիճակ այսպիսի վիճակիլ, և զ այսպիսի անցս անցանել։

Օ այսպիսիս լսելով իմ և աչօք իսկ տեսանելով՝ զգամ միայն, և ոչ բնաւ պիտգամ. սրգամ և ոչ զգաստանամ. մոռանամ և ընդարմանամ. զի ոչ 'ի միտ ածեմ զոր նշմարեմ, այլ միայն տեսանեմ. հանգոյն առն, որ նայեցեալ ընդ հայելի՝ տեսանիցէ զկերպարանս իւր. և 'ի դադարիլն 'ի նայելոյ՝ մոռանայցէ զտիպ տեսեալ կի իւրոյ. քանզի ոչ երկնեաց և ոչ ծնաւ զայն. այլ ետես միայն՝ ոչ յայսմ որ կայ, այլ յայնմ որ երևի։

Լ.սաղ եղկելի մնձինս՝ զի զայսոսիկ գրելով ինչ ոչ մոռաբերեմ. բայց եկեսցէ ժամ ոչ եթէ մոռաբերելոյ կամ գրելոյ, այլ կրելոյ. այն դաւլով գայցէ, և անշուշտ հասցէ։ Լ.'զի մինչև ի՞նչ իմ զփորձ առեալ զայսր՝ զգաստացայց. և 'ի բաց թօթափեալ մինէն զքուն թանձրութեն խորհրդոցս՝ զօրացայց և պատրաստեցայց։

Լ.այց քանզի չեմ առ այս ինքնին բաւական՝ առ ամենաբաւական ողորմ եղեց ապաստան. առ որ գոչելով պաղատիմ. պարգևեա ինձ բարերար յանխիզգելի լուութիւն գանձուցդ մանն բարի, կեալ ինձ այսուհետև յանմեղութեն և յանարատութիւն ըստ հաճոյս ամենասրբ կամաց քոց, և մնալ անմոլար 'ի պահպանութիւն օրինացդ արդարութեն, և աներկեան ժամանել 'ի կետ ելից կենցաղոյս, և անմահական կենդանութեն հասանել յանվախճան երանութիւնս։

ԿԲ.

ԸՆԴԱՅՈՒՄՆ ԱԲՅ ԿՈՍԻՆ։

ՇԵ. Ի հոգս և յաղէտս տարակուսի վարա-
նեաք որդիքս Թօթափելոց, և յահի
մեծի կայաք յերեսաց բարկութեանն ամենակա-
լի. և չունեաք զոք հաշտարար, և սաստակացե-
ալ սրտմտութեանն նորին խաղաղարար։ Յանէնա-
ելինս տուՀայիլ մեր՝ իբր 'ի բացուստ նկատեալ
զտաք զամենամաքուր կոյսդ, զամենագեղ օ-
րիորդդ, զամենասայծառ չքնաղութիւնդ, զամե-
նանոր իսկութիւդ։ Ընդ որ խնդամտեալ մեծա-
պէս՝ առեալ ընծայեցաք զքեզ ամենանոր եր-
որդութեանն յերեքամեայ հասակի, 'ի տաճարն
փառաց սրբութեանն նորուն 'ի ձեռն յովսիմայ և
աննայի ծնողաց քոց ընտրելոց. որով մարթա-
ցաք զիջուցանել զյաւուրսն բարկութեանն նորին։
Ապաքէն 'ի յարձակիլ միեղջերուի 'ի վերուզև-
ոլոց բազմութեանն, 'ի հանդիպոյ կացուցանել
նոցա յաչս նորա զկոյս անարատ՝ հանդարտե-
ցուցանեն զնա 'ի տապոյ և 'ի թափոյ նորին։
Ուստ սմին օրինակութեանն և մեր տեսեալ զյարձա-
կիլ սրտմտութեանն՝ յանդիման կացուցեալ զսրբ-
բափայլ կոյսդ։ Ընդ որ հայեցեալ նոցա, և զմայ-
լեալ ընդ գեղազարդ վայելչութիւդ՝ հանդար-
տեցաւ, և հաձեցաւ քեզ հաշտիլ ընդ ազգի
մարդկան. և քեզ վերածել զնա 'ի փրկութիւն. և
'ի ձեռն քո կատարել զսքանչելահրաշ մարդե-

զուԹԵՆ խորհուրդ։

Որչափ տհաձեալ և պժգայեալ էր ՝ի ԸԷ եւայ, այնչափ և առաւել քան զչափ բերկրեցաւ ՝ի քեզ. և բացալքեալ գնա՝ զքեզ ընկալաւ։ Լ-ասիկ յանկանիլ ասԹինեայ յայց արքային մեծի իբրև ընծայեցաւ առաջի նՐ էսԹեր տիկին՝ հաձեալ յոյժ ընդ նա, և եդեալ զգաւազան իւր ՝ի վՐ նորա՝ կացոյց զնա Թագուհի, և նորա միջնորդութՐ ազատեցոյց զազգն յահոբայ։ Հանգուցատիպ սմին ՝ի մերժիլ եւայի և ծնընդոց նՐ՝ այն ինչ ընծայութեամբ յանդիմանն եղեր կոյդ որ ամենամեծ արքային՝ յանչափս հաձել ընդ քեզ՝ զծոցածին ծնունդ իւր՝ իբր գաւազան եդ յամենամաքուր արգանդ որ քո. և կացոյց զքեզ արքայուհի երկնաւորաց և երկրաւորաց. և ՝ի ձեռն քոյին միջնորդութեՐ ազատեաց զծնունդս եւայի ՝ի դատապարտութենէ անիծիցն։

ՈՐՀ սխալն ընծայուեաս. ՝ի նուիրիլ քո այսօր ՝ի տաձար տՐն ինքնաթեամբ ԸՐ աստիճանսն իբրև զաղաւնի, և բերկրալոյց մատեաւ ՝ի սեզանն։ Հիացան ընդ այս քահանայիցն դասք. հիացան և հրեշտակք յերկինս. հիացաւ և նա ինքն տաձարն. զի ետես յինքեան կենդանի տաձար կենդանաւոյն այ ՝ի հասակի եռամեայ տղայութեՐ և յամենապատիկ հնօրհաց լիուՐ։ Յուխտեալ ծնողաց քոց յուերձ նուիրանացանՐ ձինդ՝ սպասեր նա ինքն տաձարն, թէ երբ առ ինքն աւաբերցի և յինքեան ընծայեսցի տՐն. իբրև ետես ՝ի լրումն տարիանաց իւրոց՝ խայտաց ընդ ծնողաց քոց։ Լորքա խնդայինՐ՝ զի ետուն

զքեզ. սա ինդայց՝ զի էառ զքեզ. նոքա իբրև պատարագ մատուցին զքեզ, սա իբր զողջակէզ սիրոյ ընկալաւ զքեզ. և առեալ պարագրեաց յինքեան՝ որ հանդերձեալ էիր պարագրել 'ի քեզ զպարագրիչն ոմի։

Լսակ արդ յընծայել քո զքեզ քուժդ հաստչին՝ զի՞նչ արդեօք էտ քեզ՝ որ արարն զքեզ։ Նա գինն ոչ՝ զլիուն շնորհայ. որդին զբուխանդակուն կատարելուն։ Հայրն երկնաւոր զնա ինքն զորդի իւր։ Զուրաւականեցեր զնմ, և յանմի սքանչելի փայլեցար։

ՃԸ. Կացեր մնացեր 'ի տան ոն՝ այ իբրև աղաչխին մեծվայելչուն նոսա. իբր գուստր լցեալ հանձարով. և իբր հարսն ամենագեղ և ամենևին անարատ. ընդ որ զմնայլեալ արարչին ձայնեաց առ քեզ. * ամենևին գեղեցիկ ես մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ ॥ Երգ. Ճ. 7։ Մնար և յանձանձեցար 'ի տան անդ քերովբէից գերագոյն՝ աւուրքք երկնայնովք. յոր Հայեցեալ մարգարէին գոչեաց. տեսանեմ 'ի տաճարի ոն 'ի կարգս կուսանաց զնա կոյսն սԹոռ ոյ յայսպիսի աւուրս, որ յերկինս ՀԵՄՆն. * սԹոռ ՆՇ որպէս զաւուրս երկնից ॥ սաղ. ՃԸ. 30։ Ոչ աւուրք երկրի՝ զի ունին խաւար և մուԹն, ազջամուղջ և գիշեր. միայն աւուրք երկնից են՝ յորս չկք ստուերք և խաւար, այլ միշտ ցերեկ պայծառ. այսպիսի եղեն աւուրք քո 'ի տան ոն՝ ով՝ զբ կոյս. առանց գիշերոյ մեղայ, և առանց մռուախսոյ ներելի յանցանաց. առանց ամպոյ ախտից. և առանց ստուերի արտաքին բծից։ Այսպիսի աւուրս լուսակենցաղ վարելով քո՝

անձնիւր առաքինութիւնք փայլէին 'ի քեզ Աբրև
անմոլար աստեղք հաստատութեան երկնից · առ
որովք առաքինութիւնք այլոց ոչց երևէին իբրև
աստեղք մոլորականք ։ Զ. սոսա հաստանէ աս-
ՀԷստական դիտակն · իսկ առ աստեղս հաս-
տատուն առաքինութեանց քոց ոչ կարէ ժամանել
ջան մարդկային մտաց ։

'Ի սոյնաքաւտակ աստեղատիտ առաքինութիւնս
զարդարեալ և պաճուճեալ պՀնէիր 'ի տանջ-
ի ՝ն · ուր և նա ինքն ամենատփիւռ աստղն ա-
նեղական՝ մինչև ծագեալ էր 'ի քէն՝ համայն
պատեալ ունէր զքեզ · և դու ինքն միանգա-
մայն արկեալ ունէիր զնա զքեզ · յայտ · ԺԷ · 1 ։
Յայլ ՝ոչս ծագէր միայն և ՝ոչ պատեր · զայ և
և ինքեանք ծագելոց էն յաւուրն յետնում
յարքայութիւն երկնից իբրև զարեգակն · Մատ ·
ԺԳ · 43 ։ Իսկ դու յերկրի գոլով՝ զնմ աւուրս
քո բնաւին արփիացար 'ի Ճառագայթս լուսա-
փեթիթ առաքինութեց · և երևեցար արեգակն
պայծառ Հանդէպ արեգականն արդարուն ։
Իսկ զոր 'ի ներքս 'ի Հոգի քո գրաւեալ ունէիր՝
ո՛ կարասցէ Ճառել · լոյս էիր 'ի ներքս , և լոյս
յայտնեցար արտաքսյլեալ անթաքդմանելի ։
Ամին իբրի զնմ առաքինութեց քոց՝ որք նկարէին
'ի քեզ՝ ՝ոչ թէ մարդկութեան բարբառիլ · իսկ
զներքին կատարելութիւն քումմէ լուել և ասել
բաց 'ի լռութիւն քումմէ ։ Երգ · Շ · 6 ։ Զանազի
նմ փառք կատարելութեց քոց 'ի ներքս էին ՝ով
դուստր երկնաւոր արքայի · իսկ որք երևէին՝
փայլմունք էին նոցին 'ի վերջաւորս ոսկեՀուռս
զարդարեալ և պաճուճեալ · սաղ · Խգ · 15 ։

Լ՝ռաքինական վարուցդ հայթհայթանք՝ զորս
երևեցուցանեիր 'ի տան ՆՆ, հանգոյն անձուկ
պատուհանից ձևացեալ էին. քանզի 'ի մարմնի
եիր. իսկ զոր 'ի ներքս զեղայր արեգակն արդա-
րուե՝ գերահրաշ ծաւալէին՝ անտես և անյայտ
'ի մինչ։ Զարմք աբանելահրաշ ինն յարդարեաց
զքեզ Թագաւորն փառաց. և այնչափ գեղեց-
կացոյց զքեզ, մինչև տարփալ 'ի գեղ քո ըստ
նախասկայելոյ մարգարէին, թէ * ցանկացաւ
Թագաւոր գեղոյ քո ॥. սաղ. խգ. 12։
Հարսնախօսիլ հանդերձեալ եիր հոգւոյն սքան-
չելի զարդարեալ եղեր ՈՒՄ շնորհօք և առաքի-
նութիւնք. ոմն օրէն է օրիորդայ 'ի հարսնախօ-
սիլն պատնիլ։ Լու զի պարանոց 'ոլ կարգեցար
ընդ Թագաւորն երկնաւոր և ընդ եկեղեցի,
զՈՒՄ կատարելուն առաքինական զարդուց էգ
'ի քեզ հոգին 'ոլ իբր 'ի պարանոց. որով և ըս-
քանչելի ցուցար հրեշտակաց և մարդկան։
Լու զի տաճարաւորիլ պատրաստեալ եիր ան-
սահման էին՝ ոսկեձոյլ առաքինութիւնք սիրացար։
Տաճար ՈՒ ասացան սքեզ ՈՒՄ 'ի կարգի շնորհաց,
և քաղաքք ՈՒ անուանեցան ըստ կարգի առա-
քինութեց. դու միայն տաճար յՈՒմի անՆՆա,
և առանձին քաղաք յՈՒմի անհամեմատ. զոր 'ի
խնդրել մեր՝ մարգարէք մատամբ ցուցին զքեզ
ձայնելով առ մեզ. * ահաւասիկ քաղաքդ ՈՒ ॥.
սաղ. ղգ. 2. ահա արդարև * եՆՈՒմ շինեալ որպէս
քաղաք ॥. սաղ. ճիբ. 3. յինքն ունելով զՈՒմ
փառազարդուն ՆՆծային, ըստ գրեցելուն թէ
* ունէր քաղաքն զփառս ՈՒ ॥. յայտ. իբ. 18. լի՛
ամենապանծ լուսով նորին. ոմն և վկայեալ է՝

թէ * փառք ՅՍ լուսաւորիչին գնա։ յայտ. ԻԲ. 23։
Զև քաղաքիդ կիսլոս, յայտ. ԻԲ. 16. սքանչելի
երևեցաւ՝ ըստ ՅՍմի և յՅՍմի կատարիչ. յորում
ջուրքդ նեռքին և արտաքին կատարելութեց յոր-
դահոս սփռեալ ոռոգանիին։ Ներքին առաքի-
նութիք քո իբրև զգնայս գետոց ուրախ առ-
նիին զքաղաքդ ՅՍ. սաղ. ԽԵ. 4։ Լաւ արտաքին
առաքինութեցդ վտակք շուրջ զքև պատիին.
որոց ՅՍմի սկիզբն էր նոր հոգի իբրև զծով. և
հոսմունք ընորհաց նոր պարիսպ. Դաւաս. Գ. 8։

Լսկ պահապանն ամենազօր։

Ա. յսքանեաւք կատարելութիք փայլեալ ամենա-
պանծալի կուսիդ՝ սկզբնատիպար եղեր ՅՍմ ա-
ռաքինեաց և ՅՍմ սէց, և նախաշաւիղ ցուցար
ՅՍմ կարգաց բարեբաստութեն։

Բ. ՅՅՍմի յայտնսիկ մի քան զմի գերագոյն
նկարեցան որ 'ի քեզ երջանկամասն առաքինու-
թիք. այլ որ ինձ սքանչելին երևի՝ հաւատք քո
պանծագոյն ի՝ մի փայլեցաւ քան զՀօրն հաւա-
տոց. նա հաւատաց, և հոմարեցաւ նմա յար-
դարութեն. ԾՆՆ. ԺԵ. 6. դու 'ի վեր եղեր քան
զՀաւատս, և հաւատով յարիշտակեցեր 'ի ծո-
ցոյ Հօր զորդին միածին։ Լա հաւատաց՝ քանզի
ՅՍմ ինչ առ յՅՍ հնարաւոր է. դու հաւատա-
ցեր՝ որ 'ի վեր եր քան զՀնարս. մինչ զի զոր
սիրով ունեիր ընդ քեզ՝ հաւատով յղացար 'ի
քեզ։ Ընդ որ հիացեալ ամենայն եղիսաբեթի՝
ոչ զգերապանծութեն անձինդ էառ յերանու-
թեն, այլ զհաւատացդ բարձրութեն, ասելով.
երանի քեզ՝ ոչ զի վնծ ունիս յորովայնի, այլ
զի հաւատացեր թէ վնծ ունիս յարգան-

գի. Գրէ. Ա. 45։

Ի՛պաքէն * հաւատալ արժան է այնմ որ մերձենոյ առ Ամ։ Եբր. Ժ. 6։ Իսկ արդ դու ոչ եթէ սոսկ մերձեցար, այլ բովանդակապէս 'ի քեզ ընկալար. վասն զի 'ի հաւատդ քան զամ հիանալի ցուցար. և մայր հաւատոյ վերասահմանեցար։ Զայ մայր եղև անհաւատութեան. և նոքին կորոյս զինքն և զորդիս իւր. դու հաւատով կեցուցեր՝ զորս նա կորոյս. որով և հաւատք քո հիմն եղև փրկութեան մեր ամենեցուն. իսկ առանց հաւատոյ քո անհնարին լիներ մեզ հաճոյ լինել Աստուծոյ, և 'ի փրկութիւն ժամանել։

Ի՛. յս հաւատք քո էր լոյսն այն՝ զոր ստեղծ 'ի քեզ Ամ 'ի սկզբան՝ առ 'ի զարդարելոյ զքեզ այլովք առաւելութիւնք. որով հասեր յանհասանելիս. և քոյին հաւատով խօսեցեալ եղեր հոգւոյն սրբոյ. ովս. Բ. 20. և բարձրացար քան զամ բարձրութիւն ստեղծական էիցս։ Ի՛. յս հաւատք քո սփռեալ կայր 'ի վերայ խոնարհութեան քո, յորում զարմանալի ցուցար. մինչ զի 'ի հայիլ հաստչին քում 'ի քեզ՝ տեսեալ զհաւատ քո 'ի ծայրագոյն խոնարհուն՝ սքանչացաւ. և նշմարեալ զհաւատ քո առկայացեալ յոչնչի (այ 'ի խոնարհուն,) հաւատով քո ընկալաւ զքեզ յինքն, և խոնարհութիւն քով ընկալեալ եղև 'ի քէն։ Զի յիրաւի խոնարհութիւն քո այս՝ խոնարհեցոյց զնա առ քեզ։

Հայեցաւ որ յամառաքինուիս քո, և բերկրեցաւ. իսկ 'ի խոնարհուն քո հայելով թափեցաւ 'ի քեզ, և եղև իբրև զքեզ որդի մարդոյ։ Զայս

վկայեաց և կուսական բերան քո յասելդ. * զի հայեցաւ 'ի խոնարհութեան աղախնոյ իւրոյ։ Ղուկ. Ա. 48։ Արդ իրացն պահանջեր ասել, թէ հայեցաւ 'ի կուսութեան աղախնոյ իւրոյ. վասն զի բանն էր 'ի վերն կուսութեանն 'ի յղանալն, յորում դու միայն գտաւր գերագոյն. և սակայն ոչ յորում գերագոյն ցուցաւր, այլ յորում հաճոյ երևեցար՝ 'ի նոյն պանծացաւր։

Սովին այսու խոնարհութիւնն ոչ 'ի քեզ և ի քեզ բարձրացաւր, և յանհաս իմն մեծութեան թռեալ, այլև զմեզ բարձրացուցեր 'ի ճշմարտութեան հաւատոյ, և թռուցեր 'ի վարս անմարմնոց։ Լաւայ վերիսկեալ 'ի խոնարհութենէ կամեցաւ բարձրանալ և ածանալ. այլ անարգեցաւ, և մինչու պարտաւորեցաւ։ Լսկ դու ոչ ամենախոնարհ կոյս, յաղախնութեան խոնարհելով՝ վերացուցեր զքեզ յածամայրութենէ. և զմեզ վերածեր յածային որդեգրութիւն։

Լաւ արդ մայր ՝ի օրհնեա՛ զմեզ քոյին օրհնութիւնն և ամրացո՛ զմեզ 'ի շնորհս քո։ Օգնեա՛ տկարութեանս մերում՝ զգաստանալ, և խոնարհութիւնն ընծայել զանձինս մեր 'ի ծառայութեան որդւոյ քո. և անանել 'ի տաճարին նոր 'ի ՝ի եկեղեցւոջ ՝ամաւաքինութիւնք. և միջնորդութիւնն ամենահաճոյ ընծայեցելոյդ 'ի տաճար փառացն ՝այ՝ ընծայիլ և մեզ 'ի տաճար արքայութեանն երկնից, և տեսանելոյ 'ի տաճարի անդ զփառս քո՝ փառաւորել զքեզ, և քեզ օրհնել զմիածին որդիդ քո ՝ի հօր և ՝ի հոգւոյն սՀՅ յաւիտեան։

ԼԻՆԵԼՈՅԻՆ ՂԼԱՓԷԷՐ ՊՕՆԷՅ. Գ. 103։

ԿԼԹ.

Յիսնակաց բարեկենդան։

Դատապարտեան հոգւոյ յելս՝ի մարմնոյ։

Ա՛ռ տարակուսանս պաշարեալ երկիւղիւ մեծաւ տագնապիմ և դողամ. աշա բեկիմ և սոսկամ։ Յելանել հոգւոյս յապա կանելի մարմնոյս զիարդ յանդիման լինելոց ի՜ց եմ իմ աշաւոր դատաւորիդ։ Յածիլս իմ յա տեան երկրաւոր իշխանի՝ երկնչիմ և սասա նիմ. զի՞նչ ապա յածիլս իմ յանծային քո դա տաստան։

Հնար է պատրել զմարդ՝ թէ՛ և թագաւոր ոք իցէ, պատճառս՝ի մէջ բերելով, և փաստս անա նահանջելիս առաջի առնելով. զմեծութիւն յանցանացն փոքրկացուցանելով, և զպարտա ւորութիւն անձին յայլոց վերայ արկանելով. պա տասխանիս զօրաւորս յաձախելով, և զանձն անլաստիր առնելով. կաշառս կուտելով, և զա դաչանս մատուցանելով. սուտ վկայս կացուցա նելով, և զկեղծեալ վկայականս ցուցանելով. միջնորդս արժանապատիւս երևեցուցանելով, և զմեծամեծս խոստանալով, և զայլ բիւրազգի հնարս հնարելով։

Այ՛ի թէ մարթ ի՞նչ իցէ պատրել և զարարիչդ երկնի և երկրի, զամենահայեաց ակնդ, զհա մայնահաստիչ դատացուցիչդ, և զքննողդ սրտից և երիկամանց ցորշումն ընչից, յօդից և ուղղոյ։

Լինել զանգործս իմ տեսին աչք քո, ուր ծանկել մարթացայց զգործեալսն յանդիման քո, կամ թեթեւ երեւեցուցանել զծանուցսն, կամ նեբելի ողորմութեան առդնել զանեարելիսն. զայտնիսն սքօղել և զդաղտնիսն պարուրել, և զանձն անստգտանելի յուցանել։

Լինել կարելի ևս հնարել զայս ամ՝ չէր հնար իւիք վերծանել, զի յարիցեն Ադեմ իմ վկայք չարեաց՝ բազմութիւնք դիւաց՝ աղաղակ բառնալով. մի լսեր բանից դորա դատաւոր արդար, զի ստութիւն է՝ի սրտի. մի անսար դմա, զի խաբեայ է. մի ունկն մատուցաներ ջատագովուեց դորա, զի նենգաւոր է։ Մեզ անսաց դայմի, և զկամս մեր արար. յոր ինչ հրապուրեցաք զդա՝ յօժար ընթացաւ (ցդա իսկ հարցէք.) առաջի եդաք դմա զկամս մեր հակառակ կամաց քոց, և դա մեզ հնազանդեցաւ. զխորհուրդս չարս սերմանեցաք՝ի սիրտ դորա, և դա ջանիւք անոյց և աճեցոյց. մեզ ծառայել հաճեցաւ, և մեզ բարեկամացաւ. մեր եղև, և մեր է։

Յարիցեն և վկայք ճշմարտութիւն, դասք հրեշտակաց, և սատակայուսցեն զամբաստանութիւնս, ընդ նոսին յարիցէ և իմս հրեշտակ պահապան, և՝ի հանդիպոյ վկայեսցէ. անսեարելի է դա. քանիցս ապդ արարի դմա՝ թէ չար է զոր գործես, և դա անփոյթ եղև. սպառնացայ դմա՝ թէ համարս ունիս տալ, և դա չեղև ունկրնդիր. ողբեցի զդա՝ չանսալ զդայութեց և թեղադրութիւն դիւաց, և դա ունչս արար ինձ. վայ և ամենեին չէ արժանի ողորմութիւն։ Լինել սոքա ինչ ոչ վկայեսցեն. վկայ է խիղճ մտաց ի-

մոց, վկայ հաւատարիմ. եթէ սոքա ջատագով
ևս կանգնեսցին, խիղճ մտաց իմոց դատախա-
զէ զինէն անշուշտ. եթէ սոքա յողորմութիւն
քո ապաստան արասցեն զիս, խիղճ մտաց ի-
մոց անողորմելի դատի զիս առաջի երեսաց
քոց։

Բ. Ի խոկալ իմումս զայս ամ՝ նուճաղի սիրտ
իմ, թէ զի՞նչ յայնմ պահու ունիցիմ առնել,
և որպիսի դիմաք կալ յատենին յայնմիկ. ուր
ոչ եթէ դոքա, այլ դու ինքն դատաւոր բազմիս
աններելի. դու ինքն դատախազես անողոքե-
լի. դու ինքն վկայես անսատելի. և դու ինքն
վճիռ հատանես անդառնալի։ Ոչ ակն առնուս
երեսաց, և ոչ նահանջիս 'ի դիմաց. ոչ ունկն
դնես աղաչանաց, և ոչ լսես արժանաւորաց.
ոչ յանդիմանիս յումեքէ, և ոչ կրես երկիւղ
յիմեքէ. ոչ տկարանաս 'ի հզօրէ, և ոչ կասկա-
ծիս 'ի հակառակողէ. ոչ ընկրկիս 'ի թշնամեաց,
և ոչ յաղթիս 'ի բռնութենէ։

Եթէ փոքու իմն քաղցրութիւն ի իս յայնժամ
տնօրինել հաճէիր, զոյն ինչ 'ի խորհիլ իմումս
միսիթարութիւն լինէր ինձ. բայց անդ ոչ քաղց-
րութիւն փայլէ կերպարանաց, և ոչ ներողութիւն
նշմարի յանցանաց։ Որքան մեծ ես և բարձր,
այնքան ահաւոր ցուցցես զքեզ յայնմ վայրի։
Սակ արդ ո՛ կարէ կալ առաջի քո, զի և ես կա-
ցացից կալ. սաղ. ճԺԸ. 3։ Այս ատեան ուղղի
վ՚ հոգւոյ իմոյ. քանզի յերանելնդ՚ի մարմնոյ՝
՚ի նմին վայրկենի յանդիման լինիցի քումդ ա-
տենի. ուր ցուցցես ինձ զամ՝ զորս զարծեալ ի-
ցէ իմ ի ձեռն քո, եթէ՛ հոգւոյ և եթէ մարմ-

նով. և՝ի գտանելդ զնս պարտաւոր՝ մերժեսցես յերեսաց քոց՝ ասելով. ոչ գիտեմ և ոչ ճանաչեմ զքեզ։ Ով դառնագին քամահանաց։ Օ իմդ ոչ գիտես որ, և որպէս ոչ ճանաչես. ոչ դու զոյացուցեր զնս. ոչ անուն քո կոչեցեալ է՝ի վրայ իմ։ Մինն ասեմ քեզ, ոչ ճանաչեմ. երթ՝ի բաց գնա յինէն. և մի տեսցես զերեսս իմ յաւիտեան։ Քանի՞ քանի բարիս ցուցի քեզ, և դու փոխանակ այնր ոմի հատուցեր ինձ չարիս, դարձուցեր թիկունս առ իս, և յարեցար՝ի ծառայութի՛ թշնամեաց իմոց. ապա մի՞ ես յինէն, այլ որոց ծառայեցեր, ընկալ՝ի նոցա նէ զվարձս քո։

Գ. Ահա սարսափումն սաստիկ և սասանումն սոսկալի. ահա ահաբեկութի՛ հոգւոյ, և տագնապ անհնարին բոցոյ. և զի՞ գործեցից՝ ոչ գիտեմ։ Ո՞ւ քեզ միայն է յոյս իմ յա փրկիչ իմ. առ քեզ աղաղակեմ, օգնեա՛ ինձ, մինչև մինչև իցես ընդ իս՝ի դատաստան։ Ողորմեա՛ ինձ մինչև կեսուն կեսուն մարմնի։ Այլ ինձ հընարս՝ անսագիւտ գտանելոյ՝ի քում առենի։ Որ ինչ յայնմ պահու դատապարտելի զնս ցուցանիցէ, այժմէն քաւեա զամ։ Ընդեա զնոսա՝ի դպրութի՛ քումմէ. և բարձ զյիշատակ նոցա յերեսաց քոց։ Այլ՝ի՞ չեղեա յա թէ որչափ աշխատեցար վասն փրկելոյ զնս. որքանեւոք խնամովք փայփայեցեր զնս մինչև ցայսօր, և որպիսի գրթով մնուցեր զկեանս իմ, յոր պարգևաց քոց չափ զարդարեցեր զնս, և զնարդ յամի՛ի բարին առաջնորդեցեր ինձ։

Բ՛աբէ. Երբ այս ամ՝ի դերև եղեալ յայնմ ա-

տէնի։ Իսկ ես յոր պատկառանս և յոր սարսափ ունիցիմ պարանիլ, և յոր վարանումն վարանիլ՝ 'ի տեսանելն անդ զխայտաղ դիւաց ընդ դառնութիւն իմ. և զիարդ հանդերձեալ իցէ իմ սդալ 'ի նշմարիլ իմում զտխրիլ հրեշտակաց 'ի վէր իմ. և յաւէտ 'ի հայելս իմ յերեսս իմոյ հրեշտակի, յողբալ նոր, թէ էր 'ի զուր եղև ամենայն ջանք նորա 'ի խնամել զիս և 'ի պահպանել։

Օ՜ի՞նչ ասացից և զո՞րց եղելոց յերկինս, զկիշատակ նոցա տօնախմբեցի. զբարեխօսութիւն նոցա խնդրեցի. զվարս նոցա քարոզեցի. զերանութիւն նոցա հռչակեցի. այլ օգնութիւն ինչ առ իս յայնմ ժամու 'ի նոցանէ ո՛չ գտցի և ո՛չ տեսցի։

Եւ միթէ մարթ ի՞նչ իցէ ինձ տրտնջել զնոցանէ, ուր ես ինձէն կորուսի զանձն իմ. ես ինձէն անիրաւեցայ յիս. ես ինձէն հարի զքաջի զկեանս իմ։ Որքա յորդոր 'ի բարին ինձ եղեն. և ես բոլոր 'ի չարն բերայ. վնոյ և 'ի նպաստից նոցին զրիպեցայ. և այժմ որովհետև դիմեցիս առ նոս, և ապաստան եղէց 'ի գութ նոցա։ Այլ դարձեալ վերստին առ քեզ կոչկոչին ահա աչք իմ, յո՜. քո եմ ես ո՞ծ իմ, այո՛ քո եմ. զի 'ի քէն եմ, և քև. քոյին չարչարանօք գնեալ, և մահուամբ քով կենդանացեալ. քոյին խաչելութիւնդ ազատացեալ, և յարութիւնդ քով նորոգեալ։ Ա՜ի մուանար աղաչեմ զորս ընդ իմ կրեցեր. յիշեա՛ և ողորմեա՛. սրբեա՛ և անդրէն նորակերտեա՛. պատառեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և անպարտ կացո՛ զիս։ Եւ 'ի ժամուն՝ յոբուամ յանդիման լինիցիմ քեզ՝ մի՛ յան-

դիմաներ զիս. և մի յերեսս իմ հարկաներ՝ զորս յանդիման երեսաց քոց անօրինեցայ. այլ աչօք քաղցրութեամբ յիս ակնարկելով՝ աջով ո զորմութեամբ քո օրհնեա զիս։ Մի լուսայց 'ի քէն ասել, ծառայ չար և անիրաւ. այլ ծառայ բարի և հաւատարիմ, ե՛կ առ իս, և սուր յինէն զվարձս յաւիտենական բարեաց. և ցնծա՛ յաւիտեան։

Ի

Ընկերորդ կիւրակէ յիսնակաց։

Յարութեան Դռեալոց։

ԻՆ. Ընկարանամ 'ի միտ առնուլ, թէ այս իմ հոգազանգուճած մարմին՝ թաղեալ 'ի գերեզմանի, և ապականեալ 'ի բայի՝ զիարդ յառնելոց իցէ։ Այլ այս ճշմարտութիւն հաստատոյ է, որով հաւատամք, և հանապազ 'ի հանդանակս մեր հրատարակեմք զսոյն, յոր թէ յարութիւն մեռելոց հանդերձեալ է լինել։ Այնթէ մեք չհաւատայաք, միթէ անհաւատութիւն մեր կարէր խափանել զայս ճշմարտութիւն. Եթէ մեք անկարելի դատիցիմք, միթէ չէ՞ կարող ամենաբաւական ձեռն քո զսոյն ներգործել. զի թէ կարողացար զայսսրիսի մարմին բազմարուեստ՝ յերկրի գոյաւորել, և զհոգիս առ 'ի նոյն յոյնչէ ստեղծանել, զիարդ անկարանայիր զառ 'ի հող դարձեալ մարմինսն ներգործել։ Ոչ անբանսն իսկ՝ յորս ոչ գոյ հոգի անմահական, կարող ես 'ի մեռելութէ 'ի կեանս վերածել,

զնարդ ապա ոչ զբանաւոր կենդանիս, որոց անմահ է հոգի։

Զբնակ 'ի սոյն հատուր մեզ զորդունս աղկաղկս՝ որք Թաղեալ'ի մաշիս անշարժ և անկերպարան՝ յառնեն յայլ ինն կերպարան։ Որ յորդնն գալ հազիւ շարժեին, Թռիչս առեալ ճախրեն. անԹև ինն սողեին, Թեւաւորին և Թռանին ուր և կամին. ոգեղ ինն երևեին, գեղապաճոյճ զարդարին, և չքնաղ պարեն. զոր եԹէ աչօք ոչ տեսանիք, ոչ հաւատայք։ Իսկ արդ՝ եԹէ 'ի յանարգ որդունս զայսպիսի ձիրս երևեցուցանես, 'ի մարդս՝ զոր 'ի պատկեր քո չքնաղացուցեր՝ զսոյնպիսի խնամս ցուցանել ոչ կամիցիս։ Լաւ զի՞նչ պարծանք էր՝ այսպիսի շքեղ յօրինել զմարդն, և լքեալ Թողուլ զնա 'ի հող ապականութիւն. և զի՞նչ իրաւունք էր՝ զհոգին յերկանութիւն կամ 'ի Թշնամանուն փոխադրել ՝ գործոց իւրոց, իսկ զմարմինն՝ որ յամի գործակից եղև նմա մինչև 'ի մահ, յաւիտեան լքանել, ոչ վարձք բարի վաստակոցն, և ոչ պատիժ ինչ չար երկանցն։

Հոգի կապեալ 'ի մարմնի՝ առանց մարմնոյ անկար է գործել՝ ոչ զչար և ոչ զբարի. սոյնպէս և մարմինն առանց հոգւոյ. Իբր ապա նա առցի, և սա Թողցի. Մաթ. Է՚. 40։ Լուցի՛ այո՛ և սա, և կացցէ ընդ նմա յաւիտեան ըստ անգանալի բանիցդ պատգամաւորութեան. յովհ. Է. 21–29։

Այլ քանզի հոգին է՝ որ տայ գործել, և 'ի նա սեպհականի անձնաւորուն գոյութիւն, և ինքն կայ յանմահութիւն գոլոյ, 'ի մեկնելն 'ի մարմնոյ՝

յանմահութիւն իւրում մնայ. եկեսցէ օր՝ յորում ազգեսցուք փողոց հրամանաց քոց ազգեսցէ և 'ի մարմին, և միաւորեսցէ զնմա զհոգին. և յարուսցէ ողջոյն մարդ. եթէ բարի՝ 'ի յարութիւն կենաց. եթէ չար՝ 'ի յարութիւն դատաստանաց.

յովհ. ե. 29։

Զ. Զ Լինչ յայնմ վայրի հնարեսցի արդեօք իւրաքանչիւր հոգի։ Զիշ պատահմանս մեծի. եթէ յերանութիւն իցէ մասին, սլասցի զուարթ, հասցէ առ մարմին իւր, և տնսցէ նմա՝ զոր պահել ունէր՝ զերանին. երանի՞ քեզ մարմին իմ, զի եհաս ժամ փառաւորութիւն քո. երանի քեզ՝ զի որ ընդ իս վատատակեցար յարդիւնս առաքինութեաց և 'ի ներդործութիւս ապաշխարութեաց՝ ահա ընդ իս այժմ հանգիցես 'ի յաւիտեան. երանի՞ քեզ՝ զի որ յայնչափ անարդանս տոչայտեցար, և յայնքան խոնարհութիւս Աստուծոյ, յանձնառ փառս ունիս այժմ բարձրանալ. երանի՞ քեզ, զի որ փտեալ և 'ի հող եկիր դարձեալ, և իբր յոչնչի օթեւանայեալ, ժամ է արդ անպատում զարդուք զարդարելոյ, և անվախճան խնդութեամբ բերկրելոյ։ Զ բարբառիլ զայսպիսիս երջանիկ հոգւոյ առ մարմին իւր, և 'ի միաւորիլ ընդ նմա, և 'ի նորակերտիլ մարդ կատարեալ՝ 'ի չափ հասակի՝ զգեցցի ապականացուն զանապականութիւն, և մահկանացուն զանմահութիւն. Ա. Կոր. ԺԵ. 53։

Զակ եթէ 'ի դատապարտութիւն իցէ հոգին, մեղեալ կատաղութեամբ ժամանեսցէ 'ի մարմին իւր, նեղվելով զնա և զգործս նոր. վայ քեզ թշուառական մարմին, զի ահա եհաս ժամ ընդ իս

տանջելոյ 'ի յաւիտեան, վայ քեզ անօրէն մարմին, որ ոչ խնայեցեր ոչ 'ի քեզ, և ոչ յիս. և ահա անյոյս զրկեալս յամ բարւոյ. վայ քեզ ողորմելի, վայ քեզ, որ չարաչար հրապուրանօք արկեր զիս և զքեզ 'ի մեղս. և ահա ունիս ընդ իս անկանիլ 'ի դժոխս և 'ի վայն յաւիտենական։ Օ այսպիսիս հանդերձեալ է զդայռել դատապարտեալ հոգի. և միաւորելով ընդ անիծակուռ մարմնոյ իւրոյ՝ յարիցէ մարդ ամենաթշուառ, համայն ահռելի, և խաւարին սոսկալի. քնաւին գարշանկար և ամենևին ապիկար. բոլորովին ժանտահոտ և ամենայն իրօք զզուելի և դանելի։

'Ի գումարիլ ասպա արդարոց 'ի խումբս պայծառայեալս, և 'ի ժողովիլ մեղաւորաց 'ի ձեռն դիւաց յերեսն մթագնեալս, եղկելիս ես յոր երամ արդեօք գտանիցիմ, և որպիսի ինչ էր ելիցիմ։ Աւաբէ, քանի՞ երանի էր ինձ յայն ժամ ել արդարոն պարաւորիլ և 'ի մէջ նոցա դասաւորիլ. և քանի՞ վայ է ինձ՝ ընդ մեղաւորսն խառնիլ և ընդ նոսա չարախռնիլ։

Օ ի՞նչ ասացից, կամ զի՞ր խօսեցայց. խիղճ մտաց իմոց ոչ վստահացուցանէ զիս առ վերինսն վերասլանալ, այլ ել խաւարեալսն վայրենանալ. գործք իմ ոչ թողացուցանեն զիս՝ ընդ առաջինսն միանալ, այլ ընդ դատապարտելիսն խառնանալ. անօրէնութիք իմ ընկրկեն և քեցեն զիս յերջանկայելոցն, և մղեն 'ի չարաբաղձակ ջոկ չուառայելոցն։

Այ զի՞նչ յայնմ վայրի առնել ինձ հնար լցէ. եթէ այժմ ուր ժամ է հնարս գտանելոյ, ես

յանհոգս տատանիմ, որպէս մարթ իցէ ինձ յայնժամ զելից բուռն հարկանելոյ։ Լիթէ զոր 'ի ձեռին ունիմ՝ ինչ ոչ համարիմ, զի՞նչ յորժամ ոչ ժամ իցէ համարելոյ և հնարելոյ, այլ պահ յեզը յեռին հասանելոյ։ Լիթէ այժմ մինչ կենդանիս եմ՝ ի մեռեալս մեռելոտիմ, զիա՞րդ կարացից՝ 'ի յառնել իմում մեռեալ 'ի մեղս, ընդ կենդանացելոցն ակն ունիլ փառաւորելոյ. ուր վերջին ժամ է յուսահատելոյ։

Ի. Այլ արդ արի անձն իմ, արի. այժմ կարեաս քեզ դարմանս նարել, և զքեզ ապրեցուցանել. այժմ կարեաս պատրաստել զքեզ և բարեհարթել ընդ արդարս. այժմ կարեաս արժանի առնել զքեզ՝ 'ի գումարս լուսազգեցիցն մուտ գտանել, և ընդ նոսա յաստահովի զքեզ զահոմել։

Ի. Յո՞ որ ոճ իմ, այժմ կարեմ, բայց ոչ ինչ, այլ միայն քիչ. ինչ որքան ջանամ, այնքան յեռս ինամ և անարգանամ. յարիանալս իմ անդրէն տկարանամ. 'ի քաջալերիլս իմ՝ առ նրմին լքանիմ. 'ի մատուցանել ձեռն՝ 'ի բարին՝ 'ի չարն բերիմ. 'ի սկսանիլս իմ յարժանաւոր գործս՝ յանարժանն ապանիմ. 'ի յառաջադրելս իմ յուժգին՝ 'ի գործադիր լինելոյ նահանջիմ վատթարագին։

Դու օգնեա՛ ինձ ոճ իմ, և առաջնորդեա՛ ինձ. մի՛ լքաներ՝ զոր դու ստեղծեր. մի՛ ընդ վայր հարկաներ՝ զոր դու փրկեցեր. մի՛ կորուսաներ՝ զոր դու կեցուցեր։ Լիթէ ձեռն քո օգնեսցէ ինձ՝ ձեռն իմ զօրասցի 'ի գործել զարին. և

թէ այցելութիւն քո հասցէ յիս՝ արիասցի անձն իմ՝ ի լաւն դիմել. եթէ հնարաւորութիւն քո սքանչասցի յիս, արժանացայց ընդ ծառայս քո վերաթեւել. եթէ ինքդ քո ժամանեսցէ առ իս՝ ժամանեցից և ես ընդ ընտրելոց քոց վերամբառնալ։ Զրա ինձ ոչ իմ, արա ինձ զինոյ հրս զայս, զի մի ունայնասցի վաղ իմ փրկութիւն քո։ Զինչափ աշխատեցար՝ զի յարուցես զիս ի կենաս. և այժմ չիցէ՞ արժան քումդ մարդասիրութիւն առանց աշխատելոյ նորոգել զիս, և ի նորոգութիւն պահելով՝ վերջնումն հասուցանել նորոգութեան, և զյոգնատաժան զծառայ քո անպիտան՝ արժանի առնել լսելոյ զձայն փոզոյ երանական յարութիւն։ Զթէ այսմ պաատահեցայց բարեմանութիւն, ոչ թէ քանիպատակ ուրախութի լինիցի ինձ, և սրպիսի ցնծութիւն լիցի տաժանեցելոյս գոհանալ զքեզն։ Զթէ տեսից զիս ի լուսագումար գունդս յարուցելոց ի կենաս, որոշ օրհնութիւն ունիցիմ օրհնել զքեզ։

Զպա եթէ գտից զիս յերամակս յարուցելոց ի մահ, ոչ դառնութիւն յուսահատութիւն շրջապատեսցէ զիս։ Զի թողուր զիս ոչ մեկնիլ ի քէն ասասէն, և այսպիսի վիճակիլ թշուառութեան դէն։ Զյլ արդ սպասեմ ահա ողորմութեան քում, և բաղձեմ զգուշն բարեբար մարդասիրութիւն քո։ Զսա արդ ցանձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ. սաղ. կբ. 3. յիս յուսացար, ժամանեցուցից և ես զքեզ ի ժողովս յուսացելոց յիս։ Փառք քեզ թագաւոր փառաց փառաւորեալ յաւիտեան. օրհնեալ գովեալ և բարեբանեալ յան-

ԻԸ.

Երրորդ կիւրակէ յինանկաց։

Պապասպան հասարակաց։

Ա. Յայտնեսցի փառք Թագաւորութիւն քո Թագաւոր Թագաւորաց յաւուրն յետնումն, 'ի հասանել սահմանեալ ժամանակի և 'ի լցանել գուշակութեանց նոցին, 'ի նորոգիլ տիեզերաց և 'ի հանդչիլ տարերաց, 'ի դադարիլ շարժման աստեղաց և յայլափոխիլ ամ իրաց։ 'ի ձայնել յանկարծակի վերջնոյն փողոյ հրեշտակաց և 'ի յառնել արդարոց և մեղաւորաց։ * ՈՂ ՀՀ օր ॥. Եղէկ. Լ. 2։

Յաղդել բարբառոյ քումդ գալստեան յարաբածս հմանդամայն, Թէ * գայ (ՀՐ), և գայ նա 'ի դատել զերկիր ॥, սաղ. ղէ. 13։ դողասցի աշխարհս, և հուր առաջի քո ընթասցի. սրբեսցէ զերկրաւորս համօրէն, և հալեալ հարթեսցէ զլերինս. երկինք 'ի վերուստ սասանեսցին, և զօրութիւնք նոցա յայլ ինն փոխեսցին վիճակ։ Լաւ 'ի բանալ անդ երկնային առագաստ, և 'ի վայրաչուել դոյացուցչիդ տիեզերաց՝ անբաւութիւնք վերին զուարթնոց յառաջնութեան Թափեսցին ՀՐ դասուց իւրաքանչիւր կարգաց, և պարաւորեսցին աստիճանաց յաստիճանս։

'Ի ժամանել ապա հաստչիդ և փրկչիդ 'ի լու-

տապանծ և 'ի սքանչելապայլ ամպս անհասուն
ընդ սերովբէս և ՚Ի քերովբէս, և 'ի պատրաս-
տիլ զօրութեաց և պետութեաց 'ի զննին քնոու-
թեան ամենայաղթ թագաւորիդ, սլասցին և վե-
բասցին արդարք ամպովք ՚Ի առաջ քո իբր օդիք
ընդ աջմէ պարելով. և գոչեսցին, օրհնեալ է
գալուստ քո. օրհնեալ որ եկիցդ դատաւոր
արդար. օրհնեալ 'ի բարձունս, բարեբանեալդ
յաւիտեան. յայսքան դարս բերկրեաք 'ի քեզ
հոգւով. և ահա յայսմհետեւ ունիմք ժառան-
գել զքեզ և մարմնով. օրհնեալ և գովեալ
յաւիտեան։

Կուտեսցին յայնժամ և դատապարտեալքն
թանձրադանդաղ և սեաւթոյր մարմնով 'ի վ՚ի
հողոյ յանդիման երեսաց քոց՝ իբր այծիք 'ի
ձախմէ կալով յանհնարին սարսափմունս։ Ա՚Ն
օրհնութի՚ն 'ի շրթունս, և ա՛չ գոհութի՚ն 'ի սիրտս,
այլ եղուկ և վայ յամ մասունս. 'ի դէմս դժո-
խային դժնեութի՚ն, և 'ի ներքս անտանելի անձ-
գութի՚ն. 'ի բերանս հայհոյութի՚ն, և 'ի հոգիս
յուսահատութի՚ն. ոստիկան չար ունելով ամե-
նեցուն զանդարամեռականսն։

'Ի տեսանել սոցա անդ զդատաւորդ արդար՝
զի՞նչ ունիցին ասել, բայց եթէ վա՛յ կարդալով
անձանց զմիմեանս աւաղել. բա՛ռնէ, զիարդ որ
եկն 'ի փրկել զմեզ՝ եհաս ահա 'ի դատապար-
տել. որ մնոյցն զմեզ իբրև հայր, ահա հան-
դերձեալէ կորուստանել. որ յամի երկայնամիտ
եղև յապրեցուցանել, 'ի կարճոյ ունի մատնել
զմեզ 'ի հուրն յաւիտենական։

Ը. Բացցին յայնժամ դպրութիք խղճի մտաց

ամենեցուն. գան. Է. 10. արդարոց՝ 'ի պարծանս և 'ի ցնծութիւն. և մեղաւորաց՝ յանարգութիւն և 'ի տխրութիւն։ Ցեսցեն ամէն զամենեցուն զգործս և զարարս, զյայտնիս և զընդաղտնիս, զարտաքինսն և զներքինս՝ զդիւցեալսն 'ի մանկութենէ մինչև 'ի մահ. ՃԺ. ԷՐՆ.

Գ. 5.

Գործք արդարոց լուսափայլ պայծառասցին. և եթէ մեղանչական արարք ինչ իցեն՝ սրբեալք ապաշխարութիւնէ իբր ոսկեզծուցէ փայլեսցին։ Ընդ որ և այն գործք նոցա՝ զորս մեք յիմարութենէ համարեաք և անարդեաք, աբանելի ցուցցին, և մեծամեծ վարձուց արժանասցին։ Խոնարհութեան և նուաստութեան յետին աղքատի՝ փառաւք պարծեսցի. և պարզամիտ տգիտութեան և առաքինի գութկականութիւն՝ չքնաղ իմն պերճասցի։ Այս նոքին իսկ անշուք արդարք՝ զորս մեք և ոչ յիշատակելոյ արժանի համարեաք՝ գերագոյն լուսաւորափիսասցին։ Այս զորս մեք իբր անասունս վարկանեաք և ծաղր առնեաք՝ հիանալի կենաւք հրեշտակասցին։ Այս զորս մեք մարդ անպիտան գիտեաք, և զկեանս նոցա իբր խաւարին իմն առդնեաք՝ իբրև արեգակն ծագեսցին։

Իսկ մեղաւորաց գործք մթագին և խրթին իմն միգասցին. և եթէ բարի ինչ գործեալ իցէ նոցա՝ չարատիպ և չարանենգ բորբեսցին։ Ընդորս և այն գործք նոցա զորս մեք իմաստութենէ և զօրութենէ վարկանեաք և մեծացուցանեաք, մերժելի գրեսցին և մեծամեծ պատժոց արժանի ցուցցին։ Այ՝ եծութենէ և իշխանական պետու-

թիւն ամբարտաւանից անարգանաց արհամարհեսցին, և ինքնասպանծ գիտութիւնք արտաքնոց խաւարաւ ծածկեսցին. և շքեղ բռնակալութիւնք իշխանաւորաց իբր խաւիւ ցնդեսցին և իբր յարդ ցրուեսցին։ Այս նաքին իսկ մեղաւորք՝ զորս մեք փառաց և պատուոյ արժանի գիտեմք՝ 'ի գարշատեսիլ կերպարանս խայտառակեսցին։ Այս զորս մեք գերազանց իմն Ճանաչեմք և գովեմք, ողորմելի կենաց վատթար և վատ խոհերասցին։ Այս զորս մեք քան զամենեսին պիտանագոյն և ամենեցուն նպաստամատոյց գիտեմք, և զկենաս նոցա լուսափայլ իմն տեսանեմք, իբրև զածուխս սևացեալ նշմարեսցին։

Լ.ԻԴ 'Ի հրատարակիլ և 'Ի յայտնի երևիլ Նմի ամենեցուն գործք, և սրբոց խորհուրդք, ՝Ի-պիսի ամենի պաշարեսցէ զմեղաւորս։ Յաշխարհի ոստ 'Ի յայտնիլ անարգ գործոց և մեղաց առաջի միոյ մարկանացուն՝ յանհնարին պատկառանս ընկնուին մարդիկ, զի՞նչ ապա 'Ի գալ 'Ի յայտ Նմ մեղայ, փոքունց և մեծայ, գաղտնեաց և ամենալեայ. ոչ եթէ առաջի միոյ ուրուք, այլ առաջի համարէն որդւոց մարդկան, և առաջի հրեշտակաց համայն, առաջի դիւաց, և առաջի նոցին իսկ դատապարտելոց։ Յամենի մեծ խեղդի մեղաւորն 'Ի խոստովանիլ գաղտ ամենեւին զմի մեղս առաջի միոյ միայնոյ քահանայի՝ քուռմդ փոխանորդի, մինչև երբեւիս 'Ի քրտունս համակիլ. ապա զի՞նչ լինիցի 'Ի յայտնիլ ամենայն մեղաց 'Ի միասին առաջի ամենայն էից։

Յայսպիսի սոսկալի խայտառակութի պարու-

ըեալ մեղաւորաց առ հասարակ՝ յակնարկել անդ յարդարսն և 'ի նշմարել զգործս նոցա, յանբերելի դառնութիւն կոծոյ կոծեսցին, և աւաղելով զանձինս ասասցեն. սոքա են այնոքիկ՝ զորս մեք ծաղր առնէաք. մեք անմիտք զվարս դոցա մնլորութիւն համարէաք. ուրեմն մնլորեցաք 'ի ճանապարհէ ճշմարտութեան. իմաստ. Ե. 3։ Այսպէս և արդարոց տեսեալ զմեղաւորս՝ ցընծասցեն յանձինս իւրեանց, և ասասցեն. սոքա են այնոքիկ՝ որք արհամարհեին զմեզ, և ծաղր առնէին զգործս մեր. ճոխանային և յոխորտային 'ի վերայ մեր. կեղծէին և հարստահարէին զմեզ. բարձրանային և փառաւորէին, պՃնէին և փոփիկանային. և ահա այժմ 'ի յետին անարգութեան տեսանին։

Յակնարկել յայնժամ դատաւորիդ մեծի յարդարսն իբրև յոգիս, և 'ի մեղաւորսն իբրև յայծիս, զգթութիւն գործս արդարոց պանծացուսցես, և զանգթութիւն գործս մեղաւորաց անարգեսցես։ Զոր գթածսն գթութիւն ձայն արձակելով. * եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն ||. զի ցուցիք առիս զողորմութիւն յանձինս կարօտելոց. մատ. Բ. 34։ Զոր յահաբեկիլ անգութ գտելոց՝ դոչեսցես առ նոսա. * երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական ||. զի որովհետև ոչ ցուցիք առիս զողորմութիւն՝ մերժեսջիք խստաս

յողորմութիւն իմմէ։

Զաղաղ ասասանօր սիրտ իմ, և մթագնին խորհուրդք իմ 'ի յիշելն ևեթ զայսոսիկ։ Զսկ արդ ևեթ յիշատակ սյսոցիկ խաւարեցուցանէ զվիտս

իմ, և 'ի տանջանս մահու գրաւէ զոգիս, զի՞նչ պատասխանեսցէ ինձ՝ եթէ խսկապէս լիցի ինձ լսել 'ի բերանոյ քումմէ յետին զայս դատակնիռ դատապարտութեան, և գոյիւ անիծանիլ յանծայնն

բարբառոյ քումմէ։

Գ. Զ ակղբաւորիլ Հանդիսի յարչարանաց քոց և յերևելիդ տկար, յասել քումմ քաղցրութիւն ցեկեալն 'ի վերայ քո ցքաղմութիւնն ունելեացն զքեզ՝ * ես եմ ॥. յովհ. ԺԷ. 5. ահաբեկ լեալ յետս յետս ընկրկեցան, և զգետնի զարկան։ Օ զի՞նչ լինիցի ապա մեզ աւրորաց 'ի ձայնել քո առ նա՝ ոչ եթէ հեզուութիւն, այլ բարկութիւն. ոչ իբր դատելի տկար, այլ իբր ամենազօր դատաւոր՝ ես եմ. ես եմ այն՝ զոր արհամարհեցիք. ես եմ զոր մերոջ ձերովք 'ի խաչ հանիք. ես եմ յոր ոչ ցուցիք զողորմութիւն. երթայք և մինեցարուք յինեն. ոչ գիտեմ զձեզ մշակքդ անիրաւութեան. երթայք և մի՛ ես երևեսջիք առաջի իմ. երթայք և մի՛ ունիցիք մասն օրհնութեան արդարոց։

Ո՞ւր երթիցեն սոքա հոր. ոչ սոքա են՝ որոց վա՛ արարեր և յօրինեսցեր զտիեզերս և զամ՛ բարութիւնս երկրի։ Ո՞չ սոքա են՝ որոց վա՛ ետուր զանձն քո 'ի փրկանս։ Ո՞չ սոքա են՝ որոց պատրաստեցեր զիաւս արքայութեան։ Լ՛ւ այժմ 'ի մերժելդ զսոսա յերեսաց քոց՝ ո՞ւր մակաղեսցին, և զի՞ գործեսցեն։ Լ՛ւ որ պատրաստեցին զանձինս 'ի նոցն ընթացին. և ընդ որ հաձեցան՝ զնոյն ժառանգեսցեն։ զոր և անդառնալի սահմանեալ վերնոյ դատաւորիդ ասելով։ * Լ՛ւ երթիցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս, և

արդարքն 'ի կեանսն յաւիտենականս ։ Մատ.
ԻԵ. 46։

Լսեկ ես եղկելիս և շնչաւորեալս զոր ձայն արդեօք ունելիցիմ լսել. իցէ թէ զօրհնութիւնդ լուայց զաւրաւոր. իցէ թէ ուրախ արասցես զծառայ քո 'ի լուր հրաւիրման քաղցրութեանդ։ Լ. Այժմէն լսեցո՛ ինձ աղաչեմ, և այժմ օրհնեա՛ զիս. զի լուեալ և զվերջին օրհնութիւնդ՝ հասիցս ընդ արդարսն յօրհնութիւն յաւիտենական. և օրհնեսցիս զքեզ ընդ նմա յաւիտեանս։

ՀԲ

Յիշատակ ոբ, կոսին՝ առանց արարոյ սկզբնական դեղայ։

Ա. Յառաջ քան զհիմունս հաստատել նու հաստատական գուսմարութեանց, և նախ քան զլերինս գոյանորել հրեշտակական քահանայապետութեանց՝ հայեցեալ 'ի քեզ հաստչին համանմանից, ոչ ամենօրհնեալ եղ կոյս մարիամ, հաճեցար ընտրել զքեզ, և քեւ նորոգել զաշխարհ, որ կործանեալ կայր, և հեծեր իբր է փլատակաւ յանցանացն ադամայ։

Լ. Ա. ահա եհաս այսօր ժամ յընտրութեանդ սահմանն ժամանելոյ, և երկնային աւետեաց յարգանդ ամենայն յղանալոյ։ Լ. Երկու ահա այսօր հինն նորոյ աշխարհի յղութիւն քով ոչ փառաւորել կոյս։ Լ. Երևեցաւ այսօր 'ի քեզ ծագումն սկզբնաւորութիւն խորհրդոյ հաստատութիւն ա-

մենակար Հարտարապետն։ Լուրկինք և երկիր
տեսեալ զքեզ այսօր յորովայն անոսպի՝ զայլ
ինն հիացուցին հիացան. զի զքոյդ նշմարեալ
ինքնին սերունդ 'ի նախաստեղծից անտի յան-
ցուցելոց և պարտաւորելոց, ոչ տեսին 'ի քեզ՝
ոչ զնշմարանս յանցաւորութեան և ոչ զսկիզբն
պարտաւորութեան։

Տեսին զքեզ նախահարց դասք և մարգարէից
երամք, և ապշեցան. զի ինքեանք 'ի յանցման
նախնոյն յղացան. իսկ զքեզ անկցորդ այնմ
գտեալ սքանչացան։ Տեսին զքեզ սանդարա-
մետականք, և զահի հարան. զի զնմ որդիս
մարդկան 'ի յղութեան նոցին ընդ իշխանութեան
իւրեանց գերեին. իսկ քումդ հաստատեալոյ
ինքիք իշխել անկարացան։ Պարսեցաւ բեալսար,
և յիմարեցաւ. զի չեգիտ 'ի քեզ տեսնելին տե-
ղի առ ինքն ձգելոյ։ Սոսկացաւ մահ. զի որ
դատակնիք ուներ 'ի ձեռին՝ զնմ որդիս մարդ-
կան յինքն գրաւելոյ, չետես զքեզ ընդ նովին
անկեալ պայմանաւ. որոյ վասն ողբաց յանձն իւր։
Ընդ նմին լուծաւ և ապականութեան. զի ծա-
նեաւ՝ թէ չէ կարող ձեռն հասուցանել 'ի քեզ,
և յափշտակել։

Ի զարմանալ և 'ի սոսկալ սոցա՝ երկնային
զուարթունք ցնծային և պարեին. զի զայլ ինն
յղութեն նոր 'ի վէր երկրի տեսանէին. յղութեն
ամբիծ, յղութեն նոր, յղութեն ազատ յնմ պար-
տաւորուեց. և տեղեաց յայսր հասանել լաբ-
ման սուրտուն։ Ոչ հիանալի տնօրէնութեան.
յանիծանիլ ադամայ՝ անիծաւ և յղութեն որդ-
ւոց նոր առ հասարակ ընդ նմա. մինչև ամենե-

ղուն յղանալ մեղաք նոր և յանէծս նորին. սաղ. ծ. 6։ Զոր միայն ամենասուրբ կոյսդ անպարտ գըտար մեղայ նոր և անմասն անիծիլ նորին։ Զոր կարի յիրաւունս։ Զի թէ մայրն անիծիլ եւայ առանց մեղայ և առանց անիծիլ գոյացաւ 'ի դրախտի, քանի՞ ևս երանեալդ և բարեբանեալդ. որ եղեր ամենեցուն արմատ օրհնութեան և սկիզբն աղատութեան մեղայ։

Զթէ պատկեր քո եւայ կերպարանեալ եղև սկզբնական արդարութիւն, քանի՞ ևս կենդանիդ տիպար՝ յայնր հնորհն ամենիծ վիճակի։ Զթէ օրինակ քո եւայ անդատապարտ բուսաւ յադամայ, քանի՞ ևս դու ինքն իսկութեամբ վերաբուսեալ յարմատոյ անտի։ Զթէ աղախին քո եւայ 'ի հնորհս ստեղծաւ, քանի՞ ևս տիրուհիդ և թագուհիդ։

Զնծայեցար յաշխարհ առ 'ի փոխադրելոյ ըզարտմութիւնն եւայի յուրախութի, և զմերկութիւնն ադամայ 'ի փառս. ապա և յղութիւն քո 'ի նոյն սխրոյաւ յուրախութիւն և 'ի փառս ամենիծ սրբութիւն։ Զորոյս ադամ զսկզբնական արդարութիւն. և ոչ ոք ժառանգադիւտ այնր գտաւ. դու միայն 'ի նմին յղանալով գտեր զնոյն. որով և եղեր երկիր օրհնեալ յօրհնութիւն բարձրելոյն և հաստատեալ աջով անեղին, զի մի՛ սասանեսցի յաւիտեան. յորմէ եւ նորն ադամ։ Զի թէ հնոյն ադամայ արժան եղև ելանել յերկրէ որ դեռ չէր անիծեալ, քանի՞ ևս արժան էր նորոյս աղամայ ելանել 'ի քէն իբր յերկրէ անմասն անիծիլ ներգոյացելոյ։

Զ. Արդարև յորմէ ստեղնեցար՝ արմատն թիւ-

նայզայ դեղնեցաւ. և որք միանգամ անտի սե-
բեցան՝ թիւնաւորեալ սաղարթացան. զոր մի-
այն յայնմ արմատոյ չքնաղափթիթ տունկ շա-
ռաւիղեցար։ Լ,ու 'ի գժնեայ ծառոյն անիծելոյ
վայելչագեղ ծաղիկ ամփարձար։ Լ,ու յայգւոյն
քանչելոյ յամ պտղոյ՝ Ձիւ օրհնուն երևեցար։
Լ,ոյն և 'ի դառն ջրոյ անտի ամպ քաղցրացող
ծիւանացար։ Լ,ու իբր գետ ականակիտ անցեալ
ընդ ծով կենցաղոյս՝ անբաժ նորուն պղտորու-
թիւն՝ հասեր եղեր 'ի սահման գերաբուն սրբ-
բութեան։

Պատկառեցաւ 'ի քէն և գոլացաւ յանցաւորու-
թիւն նախնոյն. վայ և 'ի մնանել քո իբրև տա-
պանակ կտակարանաց ընդ գետ աշխարհիս՝ ոչ
վստահացաւ դիմել առ քեզ, այլ յետս յետս
ընկրկեցաւ. յեսու. Է. 16։ Լ,ու որ իբր ջրհե-
դեղ կորոյս զորդիս մարդկան՝ ոչ իշխեաց ինչ
'ի տապանդ կենդանի, այլ տեսեալ զքեզ ա-
զատարէն բարձրացեալ 'ի լեառն Տրՙ զինքն և
զնստուտ. ԾՆՆ. Ը. 4։

Օ որ նմանուիր՝ այլ եղիր առաջի, զբաւեմ
բնաւ։ 'Ի ծառս երկրի զոր միայն գտար մայր.
յորմէ կոր 'ի գլուխ դարձաւ սատանայ, և յա-
մենի եղև։ Յամենեսին 'ի մեզ իբրև 'ի բևեկ-
նի մեաց զբևեռն չար. իսկ 'ի մնաչելն առ քեզ
'ի յղուեդ իբրև առ մայր ծառ՝ յետս կնիծանե-
ցաւ. սիրաչ. ԽԲ. 19։

'Ի յղանալդ իբրև զսօս տնկեցար 'ի գնացս
ջուրց հնորհաց. սիրաչ. ԽԲ. 17. և 'ի յղութիւն
այսի քումմէ իբր յարմատոյ սօսայեայ սարսա-
փեցաւ և փախեաւ օձն առաջին. * նմանեցաւ

մեծութիւն քո արմատեանոյ ॥ Երգ. Է. 7. քանզի
* իբրև արմատեանի բարձրացար 'ի կաթիլս ॥ (ՅԲ).
'ի ոչ յղութիւն քում. սերաց. ԻԲ. 7. յոր չկարա-
ցեալ ելանել ջրին, և յիւրումն չհանդուրժեալ 'ի կայն՝ ժողովեցաւ մերձենալ առ քեզ՝
առ 'ի բուռն հարկանելոյ զգարշապարն սկզբնա-
ւորելոյդ. և 'ի փախչել նոցա զայրագին՝ կոխե-
ցեր զգլուխս նոցին զմեղս առաջին. և ջաղեսե-
ցեր զնա ինքն ըստ ոտիւք քո. Ծնն. Գ. 15։ Կրկ-
ին դժնեայցաւ դազանն մերձենալ 'ի քեզ իբր
'ի լեառն բարձր. և քարկոծ եղև. Եբր. ԺԲ. 20։
Տեսեալ զքեզ ապա աթոռ բարձրելոյն՝ յիմա-
ցեցաւ. և ցնորեալ յանդգնեցաւ՝ առնել իւր
զքեզ աթոռ. քայց յանարատ սրբութիւնքդ մեզ
մի տայցալ կործանեալ էջ յանդունդս. Եսայ.
ԺԴ. 15։

Դ. Ոգի լիատարը երանութիւնդ, սահմանեցար
մայր նորոյս ազգամայ. և 'ի յղանալդ՝ ընծայե-
ցար առանց արատոյ հնոյն ազգամայ։ Սահմա-
նեցար տաճար և բնակարան անբաւին. և հիմ-
նաւորեցար 'ի յղութիւն աննեղգործելի ջրին
բնաւին։ Սահմանեցար դիւեցուցիչ սրբութեան
նոցա. և կերպարանեալ եղեր յարդանդի ամե-
նեւին նոր։

Գ. Մինչեւ դատակնիքեցան պարտաւոր. դու
միայն կնքեցար ազատ 'ի պարտուց։ Հարկա-
տու եղև նամ երկիր անմարմին փարաւոնի
'ի ձեռն սկզբնական մեղայ. այլ ոչ ամենեքեան
նիկդ երկիր մեծի քահանային որ ըստ կարգին
մելքիսեդեկի. Ծնն. ԺԴ. 20։ Ուստի ուր նամքն
ընդ հարկատուութիւն ջրին յղանային, դու

միայն անհարկ և անպարտ յայտնեցար։
Զոր ծով ամենալի, որ յանիծիլ ամ երկրի՝ ազատ մնացեր յանիծից անտի. և ոչ իւիք անկար ի գերուիր. քանզի ծով ազատ է 'ի գերութիւն. նոր է ծով և նա արար զնա. սաղ. ղբ. ։
Զոր միայն Աշխարհիս ցուցար ամենապայծառ սինա լեառն, որոյ 'ի ստորոտն 'ի յղուեալ ասեմ (յորում սկսանի գոյութիւն կենաց) խորտակեցաւ օրէնքն յղանալոյ 'ի մեզ. և սկսաւ օրէնքն շնորհաց։
Զիանծինդ քո որդի՝ որ եղև փրկիչ մեր՝ նախափրկիչ եղև մերդ. զմեզ փրկեաց, զքեզ պահեաց։ Զիրիկ եղև հիանդութեն տիրելոյ 'ի մեզ. այլ անմերձենալի մերումն հաստեաց ընքեզ հիանդուէն։ Պահեաց զքեզ ամենապահ ձեռն որդւոյ քո 'ի թշուառուէ երկանց. զի առանց երկանց ծնար զնա. պահեաց ապա և 'ի պատճառէ այնր թշուառուէ 'ի սկզբնական մեղաց։ Օ՜երծ կայոյց զքեզ ծնեալդ 'ի քէն 'ի կասկածանաց մեղապարտ համարելոյ. ապա քանի՞ ևս 'ի մեղապարտ դոլոյ մեղքն ազատմայ։
Զեծ եղև յոհաննէս 'ի ծնունդս կանանց. ապա քանի՞ ևս մեծ գտար տիրուհիդ 'ի յղուեալս կանանց. անկարօտ լինելով ըստ նմին սրբիլ և մաքրիլ յորովայնի։
Օ՜ որ միանգամ ընտրեաց ամենածոր երրորդութիւն զքո իւր՝ սահման եդ զի՝ ոչ իցէ, և ոչ յիմիք աղտեղեալ. քանի՞ ևս յընտրելն զքեզ իւր։
Զ՜պաքէն յորոյ վերջ կոչիւր անունն՝ այ՝ պարտ էր՝ ոչ լինել. քանի՞ ևս ամենօրհնեալ կուսիդ 'ի յղուելն քում. յոր ոչ եթէ անունն՝ այ և եթէ,

այլ նա ինքն ամ հաճեցաւ բնակել իրապէս և
տիրապէս։

Ի յաւիտենից Ճանաչէր զքեզ որդին սոյ՝ իւր
մայր և բնակարան, տիրուհի երկնի և երկրի,
թագուհի հրեշտակաց և մարդկան. ապա չէր
հնար ի յղանալ քում տեսանել զքեզ յարատ
ինչ յանցանաց և ի տոյժ տուգանաց պարտուու-
թիւնն ադամայ. այլ մայր նա, և բնակարան
մաքուր. սերովբէից վերագոյն, և բնաւից գե-
ղագոյն։

Ի սա սին սակի ի յաւիտենից Ճանաչէր զքեզ
նա՝ հոգին՝ իւր անարատ հարսն. ապա և ի մուտ
քո յայս յաւիտեան՝ անհպելի ետես զքեզ արա-
տոյ։ Լոյն և հայրն երկնաւոր ի յաւիտենից
Ճանաչէր զքեզ իւր դուստր ընտիր. ապա և ի
յղանալդ ծանեաւ զքեզ ոչ ի խորդուն, այլ
յիւրական ընտանուն։

Որովք և յղուն քո՝ ամենամբ հռչակի. և յամ
եկեղեցիս փառատրական օրհնութիւն աբանչելի
քարոզի. և ի քրիստեան աղգաց տիրանուհի
յաղթանակաւ բարձրացեալ ոտնախմբի, և
յերկնային զուարթնոց ի բարձունս բարե-
բանի։

Ընդ որս և ես խնդալից պարաւորեալ՝ ցնծութիւն
օրհնեմ զորհնեալդ ի հօրէ և յորդւոյ և ի
հոգւոյն սրբոյ. և ակնունիմ հնորհիւ քոյին անա-
ղատ յղութեդ անարատ պահել զիս ի մեղայ.
և յելս կիւնաց խնոց՝ զուարթերես հասանել ի
տեսութիւն ամենամբ կուսիդ. և օրհնել քեզ զա-
մենամբ գերբորդութիւն ընդ ամ յաւիտեանս։

Ի ՆԵՐՇԷՐ ՍՂԱՐԻԷՐ ԳՕՆԷՆ. Ա. 7։

ԿԳ.

Ղորբորդ կիւրակէ յիսնակաց։

Ամբոյուրեն։

Ա. Լսբրեալ զի մեծ է և ցանկալի արքայութիւն երկնից, զոր հանդերձեցեր սիրելեաց քոց իբր ժառանգաւորաց։ Մեծ է արդարև աշխարհս՝ զոր ետուր որդւոց մարդկան՝ վարել 'ի սմա, և ժառանգել զբարութիւս սր. սքանչելի են և զրոս պատրաստեցեր 'ի սմա վասն մարդկան. քանի՛ քանի գեղաբոյս անկօք զարդարեցեր. քանի՛ քանի պտղովք լիացուցեր. քանի՛ քանի թեւաւորաց ձոխացուցեր, քանի՛ քանի անասնովք և սողնովք արդասաւորեցեր. և այլովք բիւրաց գի հիանալեաց բարեկարգեալ զսա՝ տեղի սահմանեցեր իբր պալատ անցաւոր կենաց նոցա։ և առաստաղ սմին յօրինեցեր զերկինս շքեղապար աստեղաց։

Լոսկ արդ եթէ ապականացու և մահկանացու կենաց նոցին եթէ՛ սիրելեաց և եթէ ատելեաց զայսպիսի հոյակապ ապարան կանգնեցեր, զորպիսի ունէիր կարելագործել յարքայութենէ երկնից վասն ապական և անմահական կենաց նոցա։ Ով ամենասխրալի պատրաստուածս։ Նձաւելի իմն է 'ի մէնք. որքան բարձր է երկինք յերկրէ, այնքան սքանչելի է որ 'ի նմա վայելչութիւն. որքան առաւել է անապական և անմահական

գոյութիւն՝ քան զապականութիւն և քան զմահկանացու գոլ, այնքան առաւել է գեղ յօրինուածոյ արքայութիւն՝ քան զդիրս կերուածոյ տիեզերացս. որքան փափկալի և փափաքելի է երանութիւն քան զիշուառութիւն. այնքան բերկրալի և զուարճալի է տեղին այն երջանիկ քան զաւորինս զայս հիւղ։

Գ.Այս վայր իբր ստուեր է այնորիկ. այս կեանք իբր պատկեր է այնր կենաց. այսր վայելչութիւն ուրուական իմն է գեղեցկութիւն նորուն։ Յայս վայր բնակութիւն բաղմադիմի նեղութիւք վշտանեն զմեզ, և աղգի աղգի փորձութիւք տագնապեն. բիւրաւոր փանդգք պաշարեն, և զանազան հիւանդութիւք պարուրեն. սովք տապեն և սուգք պատեն. զբօսանք ծովու դողացուցանեն, և ստամանուիք ցամաքի սարսեցուցանեն։ Թշնամիք տառապեցուցանեն, և ատելիք հարստահարեն. բռնաւորք կողոպտեն, և իշխանք կեղեքեն. դեռ խրոխտան, և դիւազգեայք յոխորտան. գազանաց ժանիք պակուցանեն, և թիւնախայթից փոքունց յաձախուիք նեղեն։ Պարմինս բռնանայ, և հոգիս նիհարանայ. կիրք յուզեն և ախտք սուզեն. երկիւղ սառուցանէ և բարկութիւն տոչորէ. նախանձ մաշէ և ագահութիւն խեղդէ. խիղճ մտաց վարանեցուցանէ, և հոգ սրտի ընկլուսանէ. և որ յեսինն է, օրհաս մեր փութայ, և մահ զկեանս բառնայ։

Իսկ 'ի բնակութիւն երկնից արքայութիւն ոչ նեղութիւք վշտանեն, և ոչ փորձութիւք տագնապեն. ոչ վանդգք պաշարեն և ոչ հիւանդու-

թիք պարուրեն. ոչ սուք տապեն և ոչ սուգք պատեն։ Ոչ տաղտապմունք թշնամեաց և ոչ հարստահարութիք ատելեաց. ոչ կողոպտումն բռնաւորաց և ոչ կեղեքումն իշխանաւորաց. ոչ խրոխտանք գիւաց և ոչ յոխորտանք չարաց։ Ոչ բռնութի մարմնոյ և ոչ նիւթարութի հոգւոյ, ոչ բորբոքումն կրից և ոչ քուրումն ախտից։ Ոչ երկիւղ և ոչ բարկութիւն. ոչ նախանձ և ոչ տրտմութի. ոչ ատելութի և ոչ ագահութի. ոչ վարանումն խղճի և ոչ հոգացողութի սրտի. ոչ մահ և ոչ հրաւէր մահու. ոչ կասկած և ոչ կա-

տարած։

Լ.մնպիսի իմն է սահման, յորում ոչ գոյ և ոչ նկարի նշմարանք թշուառութե, մի՛ զի դու ինքն աննիւթապէս երանութի՝ հնուս զնոմ անդորր ընդարձակութի արքայութե. շքեղացուցանես զնոյն փառօք ուծութեդ, և սքանչացուցանես մեծվայելչութի թագաւորութեդ. և զոր միանգամ ժողովես՝ ի նոյն, ժառանգս առնելով զնա բոլոր դակ ինքնութեն էութեդ՝ զոմ պայման պակասականութե հեռացուցանես՝ ի նոցանէ, և զոմ փափկութիս երջանիկն պարարելոյ հեղուս և զեղուս՝ ի նոս։ Լաւ՝ ի լրման քումդ սահմանի սրանծացուցանես զնս յանձառութի երանութե, ոչ յայլատեակ վայելմունս, այլ՝ ի քո. յասելդ, * մնաս յոբանասութե՝ ան քո ‖. Սաղ. ԺԷ. 21. ոչ յօտարի, կամ միայնոյ քո. այլ՝ ան քո. քանզի զոր վայելէ ուծութի քո էութ, տաս և նոյ վայելել ժառանգութի՝ ոչ զայլ այլ զքոյդ. յոր՝ ի վերանալ նոյ արդարև ոչ ուծանան նորա, բայց բովանդակ ուծութիդ քաղցրանան։ Ի՛ ձաշա-

կել իմում մեղը, ոչ փոխարկիմ 'ի մեղը, բայց զնամ քաղցրուն մեղու լիս ամիսիբելով 'ի նոյն զուշարձանամ. սմին այսմ հանգուցանիպ, և առաւել քան զտպաւորութիւն օրինակիդ, 'ի ժառանգել երանելեաց զնածդ ուծց՝ գրաւեն լինքեանս զնամ երանութիւն ուծուեդ, մինչ զի որով զուշարձանայ անսահման բարուն քո, նովին զուշարձանացին և նոքա. որպէս և ուխտիւք իսկ խոստացար յասելդ. * և ես ուխտեմ ձեզ, ոմն և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն, զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութիւնս իմում ॥ • ղուկ. իբ. 29։ Լինիցի քեզ և 'ի սեղանի քում, ասա զոր վայելէ ուծուն քո 'ի սեղանի անդ, վայելեն և նոքա որք բազմին 'ի նմին ընդ քեզ։

Ընդ տացես նոցա ըմպել զուշլոս փափկուն քո. սաղ. լբ. 9. որով և արբեսցին նոքա 'ի պարարտութիւն սեղանոյ անտի՝ ոչ արտաքոյ, այլ 'ի տան քո. ոչ գոյն ինչ և ոչ փոքր, այլ յոյժ և առաւել, և մեծ քան զփոփաքմանս նոցա. մինչ չև ոչ եթէ այնր փափկուն լիցի մտանել 'ի նոս, այլ նոցա լիցի մտանել 'ի նոյն. յոյր սակս յաւելելը թէ մ՚՚՚. արդ փոքուն է մտանել 'ի մեծն, և ոչ թէ մեծին 'ի փոքրն։

Այս երանութիւն է 'ի տեսուն ուծուեդ. քանզի յառնուլ 'ի վերս մտաց երանելեացն 'ի ձեռն լուսոյ փառաց՝ զեմ յանդիման տեսեալ զանպարագիր ուծութիւն քո համայն և միանգամայն՝ նովին միացեալ ը անսահման էութեդ իմանալապէս՝ բովանդակ ժառանգեն զքեզ. և նովին ժառանգեն զնամ զոր ժառանգէ ուծութիւնդ.

յորմէ և կարողութեն զօրութեն կամայ նոցա ուրախասցի և զմայլեսցի հաղորդեալ յայն ուրախութենէ և յայն զմայլոզութենի, որով ուրախանայ և զմայլի ամենաքաջ երրորդութիւդ։

Եւ սովին այսու այնպիսի ինն սիրասցին նոքա, մինչև ասիլ առ նոսա, * թէ ահաւասիկ ||, նման ոչ։ ՅԱ. 6. զի յորժամ յայտնեսցիս դու 'ի նոսա տեսութիւն՝ բոլորովին բնակեսցիս 'ի նոսա իսկութիւն իբրև լոյս 'ի յօդս, և նմանս առնիցես քեզ զնոսա. ըստ որում և վկայեաց սիրելեալն յաւետարանիչս յասելն. * նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ ոգի և էն ||. Ա. ՅՈՎՀ. Գ. 2։ Ոչ փոփոխուիք անձնական գոյաւորուն, և ոչ ընդհատուիք իրիք տեւողուն. այլ անայլայլելի մնայութիւն, և անստուերք յաւիտենականութիւն՝ որ հաղորդեալ լինին հոգւոց նոցա յանփոփոխ յաւիտենականութենէ քումմէ։

Ի. Ա. Այս է ահա արքայութիւն երկնից ըստ հասու լինելոյ մեր՝ իսկուն. այս է յաւիտենական երանութիւն. այս է անվախճան փառաց ժառանգութիւն։ Ա. Այս է՝ զոր պատրաստեցեր սիրելեաց քոց՝ զոր ակն ոչ լիմիք ետես, և ունկն ոչ նման ինչ սմին ոչ լուաւ. և միտք մարդոյ ոչ կարաց խորհիլ թէ կայցէ արդեօք այսպիսի ինչ։ Ա. Այս է՝ որում ակնունիմք հասանել հաւատացեալքս 'ի քեզ. այս է՝ յոր ծարաւի բերիմք պասքեալքս. այս է՝ յոր փափաքմամբ հառաչեմք տառապեալքս. ծարաւի է անձն իմ առ քեզ ահա հզօր և կենդանի. երբ եկից և երևեցայց երեսացդ ոչ. սաղ. խբ. 3. և յաղեցայց յերևիլ փառաց ահաւասիկ քո. սաղ. ԺԷ. 15։

Յայս երանուն էակն յաւէտ ի երանուն պատուական ըստ բաղումս գլխոց. մանաւանդ 'ի տեսանելն զանձառուն փառաց մարմնոյ փրկչիդ յոր պարագրեալ ունի զամ փառս ամ մարմնաւորաց միանդամայն։ Յարեսցի 'ի սոյն և բերկրուն տեսուն օգոստատիրուհւոյն մեծի, այ կենարարիդ մերոյ ծնողն, և զփառս մեծուն քո իրաւամբք մայրուն ժառանգողն։ Յաւելցի ևս և այլ ինն պատճառն զուարճուն 'ի տեսանել երանելեաց զաբանչելի դասակարգսն քահանայապետուց երկնային զուարթնոց, և զգեղապանծ գոյացուածս նոցին վայելչուն, և զհամարոյ նշ զանթուելի բազմուն, մի քան զմի գեղագոյն։ Յանկեսցի և այլ ինն ուրախուն նոքս՝ տեսուք միմեանց և խօսակից լինելով ի երեսաց. ևս և տեսուք այնչափ աղգայնոց և ծանօթից, նաև տեսուք անոյոյս փրկելոց և մերտուք ևեթ 'ի աղայուն մեռելոց։ Դարձեալ և այլ ինն ծագեսցի 'ի նմա զուարթուն 'ի տեսանել և 'ի ճանաչել զամ էակաց զանուն և զյատկուն։ Օ էզցի և այլ ինն անկարծելի ուրախուն, 'ի տեսանել նոցա զդատապարտեալս և զդևս ի նմա զշղթայեալսն 'ի դժոխս. առ որս ակնարկելով՝ մեծացուսցեն զգոհութիւն առ ամ՝ որ ապրեցոյց զնոքեանս, և ոչ ենթող դասել ի նմա։

Ի. Այս ամ հոգւոյ է երանուն. ի որում յաղեսցի և մարմնոյ երջանիկ վիճակ՝ 'ի յաստեղն անդ անապական, ուր ամ փառք հոգւոյն զեղցի 'ի մարմին անդր։ Օ! զորօրինակ ճրագ եղեալ յոստակեղէն ամանն զերդս զամ լոյս իւր յանօթեն, և լուսաւոր գործէ զնա ամ մասամբ. սոյնպէս

և հոգի փառաւորեալ 'ի միանալն ընդ մարմնոյ յարուցեալոյ՝ զերկնէն զիարաւ իւր 'ի նա, փառաւոր կացուցանել զնա բոլորովին։ և զգայուն ամի տայ փափկանալ իւրաքանչիւր ըստ իւրում մարդաւորութեանն յամ՝ փափկութիւն։ տեսանելեաց՝ փափկութիւն ամենափոքր ինչն զամ զոչ արձակիա ամենակատար։ լսելեաց՝ փափկութիւն առաւել քան զառաւել լիութիւն բերկրապատար։ հոտոտելեաց՝ փափկութիւն զմայլեցուցիչ դեր քան զկոպար։ ճաշակելեաց՝ փափկութիւն ամենաքաղ և ամենատար։ ոչ իբր զգալապէս ճաշակելով, այլ զզօրութիւն համոյ՝ ամ ցանկալի ճաշակաց յինքն գրաւելով։

Այնպէս և շօշափելեաց՝ փափկութիւն, որ առ շընչաւորս մեծ համարի քան զամ բերկրութիւն, զայս բագրեսցէ զամ հեշտութիւն։ մինչ զի որչափ հեշտութիւն լեալ իցէ 'ի սկզբանէ հետէ 'ի մարմինս մշտնջենաւոր, և որչափ կայցէ և որչափ լինելոց իցէ, եթէ ընդ այսմ հեշտութիւնս կշռեսցի անարգ իմն գրեսցի, ոչ հատ միոյ արդի ընդ ծանրակշիռ մեծապանդուխտ ոսկւոյ։ և այս բերկրութիւն մնասցէ յաւիտեան առանց ձանձրանալոյ և առանց դադարելոյ։

Եթէ 'ի միում բոպեական հեշտութիւն մոլին մարդիկ և մնառանն զամ, զի՞նչ ապա լինիցի երանելեաց 'ի զմայլիլ նոցա 'ի յաւիտենական լիապատար հեշտութիւն յանապական մարմնի։ եթէ այնչափ մեծ վարկանին մոլիք զիոքրոգի զայս հեշտութիւն անցաւոր և վտանգաւոր, որչափ մեծ իցէ վարկանելի մշտնջենաւորն այն հեշտութիւն։ Այլ արդ եթէ ճշմարիտ իցէ՝ ոչ և է, թէ գոյ յարութիւն մարմնոյ և երանութիւն արքայութեան, սակաւ

Է այս ամիրը կաթիլ մի 'ի դուլէ՝ զորս ասեմք։
Ա՝էք առանց զգալոյ և առանց տեսանելոյ խօ-
սիմք և գրեմք. իսկ զլիուեմի ամի բովանդակ 'ի
Հանդերձելումն անդ ժառանգեմք. ժառան-
գեմք արդարև բովանդակ, բայց մի քան զմի ա-
ռաւել՝ ասասիանն քան զասասիանն ըստ առաւե-
լուն արժանաւորուն իւրաքանչիւրոց։
Յայսմ ասասիանաւորուն՝ նա որ առաւելագոյն
ժառանգէ՝ ոչ բարձրամտի, և որ նուազագոյն՝ ոչ նա-
խանձի. զի ամենեքեան զնոյն ունկիսիմք բոլոր,
և 'ի նոյն վայելեսցուք բովանդակ։ Ա՝սպարէն 'ի
զգենուլ տասանց եղբարց զմիատեսակ դիսպակ
ոսկեհուռն՝ որ փոքրն իցէ 'ինն, զմիքրն զգե-
նուլ՝ ոչ նախանձի ի մեծն մի զմեծն ագահելոյ
նոր. զի գիտէ թէ ինքեան այս է վայել, և նմա-
նոյն. շատ է՝ զի ամենեքեան զնոյն ունին զգե-
ցեալ։ Այնպէս և յարքայութիւն փառաց թագա-
ւորիդ՝ ամենեքեան զնոյն փառս զգենուլով և 'ի
նոյն երանութիւն բերկրելով՝ յանձառ խնդութիւն
զմայլեալ մնան յաւիտեան, բոլորեքին զբոլորե-
ցուցաց երջանկութիւն յինքեանս տպաւորելով, և
յայնս յաւիտակելով։
Այլ՝ արդեօք, իցէ՝ թէ և յուսարեկ մաշեցելոյս
գէթ փոքրուն լինէր մասնաւորիլ այնմ երանութեն.
իցէ՝ թէ արժանացուցցես և զանարժանս ոճ-
իմ, փրկիչ իմ, և ոչ, գոնէ փշրանաց հաղորդ
դատանիլ ժառանգութեն ոչոց քոց բարեմասնութեն։
Այլ՝ թէ առ որ հառաչեմն՝ հասցց, և յոր տար-
փամն՝ գտից. և 'ի նոյն վայելեալ՝ փառաւորե-
ցից զքեզ յաւիտեանս յաւիտենից. զալէլուիայս
վերառաքելով քեզ յաւիտեան։

ԺԴ.

Հինգերորդ կիւրակէ յիսնակաց։

Դ.ԺՈՒՈՒ։

ԱՌ. Դ.ԺՈՒՈՒՈՑ յիշատակ 'ի խորութեն թափանցեալ սրտիս թափէ զոգի իմ։ Ցեսա նեմ անդունդ անյատակ 'ի սանդարամետս և 'ի նմին փակեալ բազմութեն անթուելեաց։ Հուր անլոյս, բորբոքումն դժնդակ, կիզումն անսպառ. խաւար ամենաբորբ, հոտ ամենագարշ։ Ցանջանք ամենավարանք. անձկութեն համայնապակ, խատուն խիստ և անանջատ. կուտուկութեն անկարգ և վշտաթակարթ. պաշարումն այսականաց չարաց և դժնեղութիւն անմարմին դահճաց. պնդումն ձեռաց և շղթայումն կապանաց։

Ա.յս տեղն ո՞չ էր պատրաստեալ վասն որդւոց մարդկան. քանզի ամենաբարի բնութեն հաստչիզ՝ ո՞չ 'ի սոյն արարչագործեցեր զմարդն. մի՞ զի բարի էս, և մարդկան բարի առնել ախորժես, և ո՞չ եթէ 'ի չարն մատնել։ Ա.յս բանտ ժանտ յիրաւի ո՞չ մի՞ ծառայից քոց յարկեցար, այլ մի՞ թշնամեացդ։ Ա.յս տուն մի՞ դիւաց էր, և տանջանարան նոցա, և ո՞չ մի՞ առ 'ի քէն յերկինս հրաւիրելոց։ Ա.այլ քանզի որդիք մարդկան անսացող դիւաց էղեն, և նոցին ծառայել կամեցան, նա զի 'ի քէն հեռանալով յերկնային փառաց հրաժարեցան, սորին սակս 'ի սոյն մատ

նիլ պարտաւորեցան, և 'ի սմին տանջիլ հարկեցան։ Լաւ զի զյաւիտենականութիւն երանութիւնքին, և զանվախճանն թշուառութիւն յանձն առին, յաղագս այսորիկ յայս անձուկ մուտ մատնեցան. 'ի սմին կապեցան, և 'ի սոյն յաւիտեան շղթայեցան։

Օ ահի հարեալ եմ, մի արդեօք և ես 'ի սոյն յայս գահավիժիցիմ վայր. մի արդեօք ընթացք կենաց իմոց 'ի սոյն ժամանեսցէ տարագրուն. մի արդեօք բազմութիւնք յանցանաց իմոց 'ի սոյն թօթափեսցեն զիս ապականութիւն։ Պատեալ պաշարեալ է զիս աղէտ տարակուսի. զի հայեցուլ յարդիւնս գործոց իմոց՝ սրչափ հեռի գտանեմ զիս 'ի ժառանգութիւն արքայութեանն, այնչափ մօտաւոր տեսանեմ առաջի իմ զվիճակաւորումն գեհենին. զի՞ գործեցից։

Գիտեմ ես՝ զի ոչ առ 'ի սոյն ստեղծեալ զիս, այլ վասն յաւիտենական ամենանգորդ երանութեան. յայս իսկ 'ի պարտաւորիլս իմ անդարձ կորստեան՝ զանձն քո դնել կամեցար, և զիս անտուստ փրկել հաճեցար։ Իսկ ես կամովին 'ի նոյն կորացայ, և անձամբ անձին 'ի նոյն գրաւիլ ախորժեցայ. ես ինքնին զնոյն ընտրել առնոքեցայ. և իմովս ջարութիւն 'ի նոյն մատնիլ յօժարեցայ։

Բայց արդ դու բարերար հոր զգթասիրութեն քո մի մոռանար. ոչ զգթացար և ազատեցեր զիս, ազատեա կրկին և ապրեցո՛ վերստին։ Կարօղ ես կեցուցանել. մի կորուսաներ։ Լաւեկ անտես զիմովս արացես հոգւոյս փրկութիւն, * զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ ինքանիցեմ

ես յապաղանուն ॥ . սաղ . իբ . 10 : Օ՜ի՞նչ ունի-
ցիմ առնել Թշնամառակաւն յիջանելս իմ անդր .
և զի՞նչ կարիցեմ խորհիլ կամ ասել . միթէ բա-
ւեմ իմ՞իք ինչ անբաւիր առնել : Գոյ փրկել
հնարեցար , և ես դատապարտիլ փութացայ .
չիք քո մեղ յայսմ . ես արարի , ես խոտացայ ,
ես ժանտացայ , ես չարացայ , ես յիմարեցայ .
այո՛ յիմարեցայ և յիմար խորհրդով 'ի վիճակ
դատապարտուն կործանիլ պատրաստեցայ :
Որդի աքբայուն կնքեցայ , և ահա որդի անդնդոց
գրեցայ . վիճակաւոր երկնային փառաց կարգե-
ցայ , և ահա ժառանգ անչէջ հրոյ դատակնքե-
ցայ . քաղաքացի վերնային յարկի կացուցայ , և
ահա 'ի ստորնայինս սանդարամետ սուզայ . կեն-
ցաղակից հրեշտակաց սահմանեցայ , և ահա
նեռքնայնոցն դիւաց ընկեր և գերի պարաւան-
դեցայ , և 'ի հրալից խրախճան նոցին բազմիլ
պնդեցայ :
Լսակ արդ զի՞նչ ունիցին առնել ընդ իս այսոքիկ
ժանտաժուտ ընկերք չարեաց : Սոսկամ յիշա-
տակել . ահաբեկեսցեն և սարսափեցուսցեն .
պայթուսցեն և խեղդեսցեն . տանջեսցեն և
հարստահարեսցեն . և յոր միանգամ ձեռնհաս
իցեն առ 'ի չարն՝ չարաչար զնոցն հատուսցեն
յանձն իմ , և ամ տարազու չարեաց չարչարես-
ցեն զիս : Լու ես սասանեալ սարսեալ 'ի միջի
ահաւոր դազանացելոցն գոչել անդամ չկարե-
ցեմ : Լու ո՛ գոչես եղկելի՛դ դու , ասիցեն ցիս ,
ո՛ օգնեսցէ քեզ Թշնամառակաւն դու , և ո՛ ապրե-
ցուսցէ զքեզ 'ի ձեռաց մերոց . որսացաք զքեզ ,
և բաժին գտար մեզ . և ահա իբրև զմեր որս

տրորել և ծամել ունիմք զքեզ յաւիտեան Յաւելեալ'ի սոյն և զերդիծանուն կսկծագին՝ նախատեսցեն և կատակեսցեն, և վայ տալով անձինս ասասցեն. վայ քեզ յիմար, ո՞ւր էիր, և ո՞ւր ես այժմ. ո՞չ դու այն էիր՝ որ'ի պալատս Ճեմիր, 'ի փափուկ անկողնի ննջէիր, ընդ մեծամեծս Ճախրէիր, յաղքատաց զզուէիր, և 'ի մնոտիս բերկրէիր. երբեմն և 'ի վերս մեր խրոխտայիր. և զի՞ եղև քեզ, զի այժմ յայսպիսի տանջանս տոչորիս, և 'ի մեր ձեռս մատնեալ ընդ ձեռամբ մերով վարանիս, և տագնապիս։ Ո՞չ դու այն ես՝ որ քրիստոնէական անուամբ պարծէիր, և քահանայական շքով պատուէիր, և 'ի ձեռն գրականուն մեծարանս ընդունէիր. և յարգասիս ՀՈՒԾատուր պարգևաց Հոխացեալ գովէիր և հռչակէիր. և զնարդ 'ի յեռեին հասեր յանարգուն։ Հռչակիս և այժմ 'ի վերս երկրի. բայց զի՞նչ օգուտ անձինդ. գովիս և այժմ յաշխարհի եղելոց. * գովիս արդարև ուր ո՞չ ես, և տանջիս՝ ուր ես ‖։

Ա. յսոքիկ'ի դիւաց են կսկծագին յանդիմանութիւնք, զի՞նչ ասպա յաղգայնոց և 'ի ծանօթից. զի՞նչ և յայնոցիկ՝ որոց պատՃառ եղէ դատապարտութեան։ Յարիցէ մին կատաղութիւն 'ի վերս. ո՞վ չար դու ասելով, եթէ չէիր գայթակղեցուցեալ զկս՝ ես անշուշտ կասանէի փրկութեան, և ընդդէմ եղեր ինձ առիթ դատապարտութեան. ո՞չ էր քեզ շատ կորուստ քո. էր և զկս կորուսեր։ Ա՞իս այլ ոմն սաստկութիւն դատապետեսցէ ասելով. ո՞վ անօրէն դու, ես զուղղն ընթանայի շաւիղ, և դու ընդդէմ չար օրինակաւդ մնալոբե-

ցուցեր զիս, և քեզ նմանեցուցանելով ԸՆ քեզ ածեր այսր։ Ա՚ԼԼ միւս ոմն մոլեգին ինն գոչեսցէ. ոմ անագորոյն դու, ես յանմեղութենէ վարեմ. և դու հիմ մեղանչական ընկերակցութիւն առ մեզ միտեցուցեր զիս, և ՅԱՅԱՅԱՅ հաներ, և յայս գուբ ապականութենէ գրաւեցեր զիս և զքեզ։ Ա՚ԻՒՍ այլ ոմն ևս սատեսցէ ասելով. դու քահանայ իմ էիր, և զիս 'ի բարին յորդորել պարտաւորէիր. և ԷՐ անփոյթ առնելով զինև՝ կորուսեր զիս և զքեզ։

Ը. Սոսկամ և դողամ յածելս իմ զայսոսիկ զմտաւ. և այս՝ նոսա քան զյառնել մարմնոյս. իսկ 'ի մտանելս իմ և մարմնով 'ի դժոխս՝ զինչ արդեօք լինիցի ինձ. ընկղմեցայց 'ի հուրն անշէջ. կապեցայց և պրկեցայց ընդ ՅԱՄ դատապարտեալս, զմիմեանսք շեղջակուտելով, և իբրև յանձուկ անօթ 'ի միասին զետեղելով, յիրերաց ՁՄՂԵԼՈՎ և սեղմելով, և ամենևին անշարժ մնալով։ Հուր խաւարին յոսկերս և յաղիս իմ թափանցեսցէ. և զգայարանք իմ ՅԱՄ անմիխիթար և անդադար տագնապեսցին։

Ա՚ՀՔ իմ սոսկալիս նշմարեսցին 'ի չարատեսիլ սանդարամետական երևութից. ականջք իմ հայհոյութիւն և անիծանօք լցցին. ունչք իմ 'ի ժահահոտութենէ զարբացցին. լեզու իմ 'ի ծարաւոյ պապակեսցի. որովայն իմ 'ի խեթ ցաւոց տրորեսցի. սիրտ իմ 'ի տոչորմանէ արեան մրուրեսցի. երիկամունք իմ խորովեալ խառվեսցին. ոսկերք իմ ՁԱՐՁԱՏԵՍՑԻՆ. և առհարկ ՅԱՄ մնասունք մարմնոյս 'ի տանջանս տոգորեսցին. և անձն իմ բոլորովին սուզեալ 'ի դառնութենէ

Խստութեան յուսահատեցի։

Մ՚ինչ՚ի կենցաղումս վարեի՝ բազում իրաց անհաւան գտանեի, ոչ հաճեի ոչ ընդ այս և ոչ ընդ այն. ոչ ախորժեի ընդ այս կերակուր, և կամ ընդ այն ըմպելի. ոչ կամեի ագանիլ զայս վերարկու, և զայն զանկապան. ոչ յօժարեի կենցաղավարիլ ընդ փոքու կիմ ՇԷ առն անարգ երևելոյ. յամի ըստ հաճոյս իմ գնալ կամեի, և ընդ դոյզն վիշտ նեղեի։ Լսկ այժմ ՝ամ ինչ հակառակ յօժարութեանս տեսանի։ Որ է թէ և զայն գտանեի՝ ընդ որ ոչ հաւանեի։

Այս տանջանս և ներքին զգայութիւնք իմ դարձցին ինձ՚ի դահիճ։ Հիշողութիւն իմ յանդիմանս արասցէ զամ՚էարիս զորս գործեալ է իմ՝ ցուցցէ և զբարիս յորոց հրաժարեցայ. յայտնեսցէ և զորս կարեի՝ և ոչ կատարեցի. և սովին այսու հոգի իմ պայթիլ ստիպեսցի։ Դրևակայութիւն իմ զսարսափելիս նկարեսցէ, և զահաւորաց յածեսցի։

Լսկ խիղճ մտաց իմոց իբր որդն անմեռ և անքուն կրծելով կրծեսցէ զիս, և յանդիմանելով ասասցէ. ընդդէմ արարեր. ընդդէմ գործեցեր. ընդդէմ կամակորեցեր. քանի՛ քանի՛ առիթք ընծայեցան քեզ՝ բարիս գործելոյ, և դու զանց արարեր. քարոզս լուար, իմնցար, և ոչ արթնացար. օրինակ ընտիր տեսեր, հայեցար և ոչ զգաստացար. զգործս բարեպաշտիս ծաղր արարեր, և զկենսնոցս կեղծաւորութիւն գրեցեր. որով փոխանակ մեղս քաղելոյ ըստ մեղսի՝ թոյնս ժողովեցեր ըստ սարդի։ Յամի ազգ ա՚ռարի քեզ, զոր գործեսցէ՝ չար է. մի հայիր՚ի

զա, մի՞ մերձենար 'ի նա, և դու զընդդէմն կա-
տարել փուԹացար։ Լ. Այս խայԹ խղՃի նեբազ-
դեալ յԾամ վայրկենի, ընդ նմին և այլ դումա-
բուԹիւք վշտագին խստուեց զեղեալ կուսեալ
'ի վերայ իմ բոլոր, խեղդեսցեն զնս յԾամ կող-
մանց։

Գ. Եւ սակայն այսոքիկ տանջանք ԹեԹև իմն
ԹուՃեսցին առ տանջանօք մերժելոյ իմ առ 'ի
քէն ՃԾ իմ. ոՃ սարսափելի անձկուԹիւն. զիարդ
եղև ինձ այս՝ զի զրկեցայ յերեսաց քոց. զիարդ
'ի բաց վտարեցայ 'ի սիրոյ քումմէ. զիարդ խա-
ւարեցայ 'ի լուսոյդ. զիարդ օտարացայ յերբա-
նութիւն ՃԾուեղ. զիարդ Թշնամի ստացայ զա-
մենաբարի բարեկամէ։ Լ. Ահա բարձաւ յինէն
յոյս աղաղակելոյ առ քեզ և կարդալոյ զամե-
նացանկալն անուն քո. զի լքայ 'ի քէն, և դա-
տապարտեցայ։ Դատապարտեցայ այո՛, բայց
ո՛չ զԾամանակ ինչ, և ո՛չ յաւիտեան մի. այլ
յաւիտեանս յաւիտենից. յոքքան դու ինքն ՃԾ
իցես, յայնքան և ես մերժեալ դատայց առ 'ի
քէն։ ՈՃ դառնութիւնս, ոՃ սոսկալի յուսահա-
տութիւնս. ոՃ ամենավարան անհնարաւոր կորս-
տեանս։ Զանիցս սիրոյ քո յարեցայ 'ի քեզ, և
տարփանօք գոլեալ, ՃԾ իմ ես դու, և ես յու-
սամ 'ի քեզ. ՃԾ իմ և ՃԾ ինչ. և ահա ո՛չ ես
կարեմ ո՛չ 'ի սէր քո յարիլ, և ո՛չ սիրոյ քո 'ի
քեզ բերկրիլ. ո՛չ 'ի բարութիւն քո յուսալ, և ո՛չ
Ը խնամով քոյ անդորրանալ. այլ անյոյս կալ
և մնալ յաւիտեան։

Զ. տառապիլ իմ 'ի սոսկն՝ տեսից 'ի հեռաստա-
նէ զԾառայս քո փառաք բարձրացեալ յերկինս.

իսկ ես ընկղմեալ յանդունդս դժոխոց, յորմէ հուր նախանձու ոչ տուչորեցայց. նոքա հասեալ առ անսահման բարիսդ, իսկ ես մատնեալ յանհուն չարիս. ի նոսա չերևի բնաւին ստուերք տրտմութեան. իսկ յիս ամենևին չգտանի մանր ինչ ուրախութեան և հանգստեան. նոքա ամ մասամբ յերանութեան, իսկ ես բոլորովին 'ի թշուառութեան. նոքա յաւիտեան ընդ ժառանգել զքեզ. իսկ ես յաւիտեան տարագրեալ 'ի քէն։ Յայնմ յաւիտենականութեան ոչ ես ցուցցես առիս զողորմութիւն, և ոչ իսկ հնարս հնարեսցես՝ յաւ պաշխարութիւն վերածելոյ զիս. զի փակեցաւ դուռն հնարից. և ոչ ես ունկն մատուսցես միջնորդութեան այլոց և նոցին աղաչանաց. նա զի ոչ միջնորդ երևի վասն իմ 'ի միջի, և ոչ յումեքէ աղերս ընծայի։ Յամենեցունց մերժելի, և 'ի բոլորեցունց արհամարհելի ըստ ամի։ Ա. հա անսահմանելի սահման յետին թշուառութեան։ Ա. յս է ահա փոխարէնն հեշտութեան. այս է հատուցումն քինու և վրէժխնդրութեանց. այս է պատուհաս բամբասանաց և հայհոյանաց։

Ա. յլ արդ եթէ յայնժամ անակնուսելի ելցէ դիւտ կորուսելոյս, չդտանիցի այժմ 'ի դան ձարանի ամենարուբեստ ձարտարապետիդ յոմ հնարաւորութիւն ակնկալուն յուսոյ՝ քև ազատելոյ։ Կարօղ ես ամի ոմ բարի յս, և կամիս՝ կարօղ ցուցանել զքեզ. ցոյց և ինձ աղաչեմ, ողորմեա, և կրկին ողորմեա։ Եթէ յիս ոչ կամիցիս խնայել, խնայեա 'ի վաստակդ՝ զորս վաստակեցար վասն իմ. խնայեա և 'ի խնամդ՝ զորս ցուցեր ցարդ 'ի վերայ իմ. և քոյոմդ այդա-

խնայութիւն աղաւեաւ զնս 'ի դատապարտութիւն
ասսի. և ես օրհնեցից զքեզ յաւիտեան. արա՛
զնս քեզ երախտասարտ, և ես փառաւորեցից
զքաւերարդ իմ։

Բ. Սասիկ և այժմիկն իսկ գոհանամ զքէն յո՛ և
շնորհակալ եմ, զի տակաւին չև է քո դատա-
պարտեալ զնս. զեռ կեամ 'ի մարմնի, և չեմ
'ի գժոխս։ Յամ է արդ, ողորմեա՛ և ապրեցո՛
զնս, փրկեա՛ և կեցո՛։ Յայժմոյս յայսպիսի հոգս
տո՛ւայտեալ, 'ի մեռանելս իմ եթէ ողորմութիւն
քումմ պատահելով զերծ տեսցից զնս 'ի դատա-
պարտութիւն, ով թէ որոշ ցնծուք և օրհնուք
ունիցիմ գոհանալ զմարդասիրութիւն քումմէ.
եթէ այսմ արժանացայց շնորհի՝ առաւել քան
զնս ո՛չ ոք գտցի շնորհակալու յարքայութեան
քումմ. զի յուսահատուն գերիս՝ ազատ 'ի յու-
սահատուն երևեցայ. որով և հասեալ իմ առ
քեզ առ մի միայն անձկալիդ՝ ո՛չ դադարեցայց
յօրհնելոյ զքեզ ընդ ամ յաւիտեանս։

ՀԵ

Վ՝ եցերորդ կիւրակէ յիսնակաց։

Յաւիպենականութիւն դանջանաց 'ի գ՝ծոխս։

ա. Եթէ յաւիտենական չէր տեւողութիւն տան-
ջանացն գ՝ծոխոց, չգոյր ինչ. զի ո՛չ
ևս էր. վայ և 'ի չէութիւնն համարիւր։ Յանր է
և անհնարին ծանր բաժանիլս իմ յամենաբարի
հաստէդ. բայց յաւիտեան բաժանեալ մնալ

'ի քէն՝ այնչափ ծանր է և մեծ, զոր ոչ մարդկան կարողութիւն կարէ կշռել, և ոչ խորհուրդ մտայ մարթի իւիք սահմանել։ Յամենասաստիկ ցաւ է մերժիլ յերեսաց քոց, բայց մերժիլ յաւիտեան՝ այնչափ սաստիկ է՝ որչափ անհաս է քաղցրութիւն բարութեան քո։ Եթէ կայր յոյս վերջանալոյ տանջանացն՝ այս յոյս թեթևացուցանէր զդառնութիւն կոտանացն, և սփոփանս մատուցանէր տապալոցն. որպիսի է այն յոյս՝ զոր ունին հոգիք ննջեցելոց 'ի քէն։ Բայց իսկութիւն յաւիտենականութեան անվերջանալի գոլով, անվերջ և անսխալման կացուցանէ զտանջողութիւն 'ի դժոխս։

Նագորդն խնդութիւն դիւաց՝ զոր ունին 'ի վերդատապարտելոյ՝ ոչ այն է՝ զի ունին զնա դատապարտեալ, այլ այս է՝ զի յաւիտեան է դատապարտութիւն նոցա. և որքան կեան դեռ յինքեանս՝ ունին զնա դերեալ առ իւրեանս։ Տանջեն որչափ ապրէ կար զորուն նոցա. բայց յաւիտենականութիւն տանջանացն առաւել տանջէ զնա զդատապարտեալս. 'ի սոյն մոլեալ և նոքցին դիւաց՝ չարաչար փռնգայեն 'ի վերնոյ։

Լեռամս լիներ դատապարտելոյ՝ եթէ ոք զդայուցաներ նոցա, և հարցաբանելով իմն ասէր. վա՛ զատուն ձերոյ հարկ է ձեզ բիւրապատիկ առաւելութիւն չարչարիլ 'ի դիւաց, արդ զի՞նչ խորհիք, զմրն կամիք. սասարիկ ևս տանջիլ 'ի նոցունց, և 'ի փախման հասանել, եթէ սակաւ տանջիլ, և յաւիտեան ոչ ազատիլ։ Զդաղակ բառնային նոքա. սաստկացին տանջանք մեր, միայն թէ վերջացին տանջողք 'ի տանջելոյ։

Բայլ ինն աւետիս լիներ նոցա՝ եթէ հրեշտակ ոք երևեալ առ նա ասեր. որչափ են տանջանք ձեր՝ յանհնարինս և հանդերձեալ են սատանայանալ, և տպա վերջանալ։ Երանի տային անձանց, զի տեսանէին զկատարածն։ Զոր ինն աւետիս ընծայիւր նոյ՝ եթէ ոք քարոզեր առ նա, թէ յետ աւարտման այնքան ամաց՝ որքան են աստեղք երկնից և թիւք ամ էակաց՝ յաւարտ հասցէ թշուառուն ձեր, մեծ էր առ նոսա այս ձայն. քանզի այն ամ՝ ամք սպառէին, և ինքեանք սպառէին։

Եթէ հրեշտակ ոն քաջալերս տայր նոցա, թէ հրաման է ոյ զի լցցի աւազակ աշխարհ յերկրէ մինչև յերկինս. և 'ի հազար ամի միանգամ ելս ինքն էկեալ բարձից անտի զմի ևեթ հատ աւազոյ. և յաւարտիլ այնր կուտակութեանն յաւարտ հասցէ տեսողուն դատապարտութեանն։

'Ի լսել նոցա զայս՝ սգային յիրաւի, զի երկաբեր յոյժ յոյժ այն տեսողութիւն, և երևեալ իբր անկարելի սպառումն այնր աւազակուտի։ Աչս սակայն երջանիկ կարդային զանձինս, և փառս տային ոյ, գոհանային և զհրեշտակն. և մխիթարեին յինքեանս, զի գոյր հնար կատարածի։ Բայց սակայն ընդունայն էր այս սփոփումն նոցա. զի այն կուտակութեանն աւազոյ յայնքան ամս անթուելիս՝ մի զհետ միոյ բարձելոյ՝ ըստ պառիւր. իսկ յաւիտենականութեան տանջանաց նոցա ոչինչ նուազէր։ Եթէ կրկին անգամ, և հազար անգամ, և բիւրիցս բիւր անգամ, լիանայր այն կուտակումն, նոյն ևս սպառէր, և յաւիտենականութիւնն կայր և մնայր յինքեան

անսպառելի. և զայն անքաւ գումարուի առա-
զոյ կրանէր և ծախէր. և ինքն միշտ նոյն և եր-
բէք ոչ պակասէր։ Այս հանգամանք յաւիտե-
նականութիւն է՝ որ յուսահատեցուցանէ զգա-
տապարտեալս էական յուսահատութիւն։
Իսկ ես զի՞նչ արարիցս լալոյ արժանիս՝ ի մատ-
նիլս իմ յայսպիսի ահեղ ժանիս. ո՞վ սար-
սափելի վիճակ. ո՞վ ամենախոր անդունդ. ո՞վ
անանցանելի սահման. ո՞վ անիմանալի ակա-
տան. ո՞վ ամենաչար և տաժանախեղդ յուսա-
հատութիւն անեղը և անկատարած։ Ողբամ ըզ-
ժամն զայն՝ յորում ես ծնայ. ծնայ ի լայս՝ ի
միում ժամու. ծնայ տաժանմամբ յաւուրս
բազումս. աՀեղի տառապանաց յամս յոլովս. կե-
ցի աշխատանաց ի երկար ժամանակս։ Այլ ահա
մեկնեցան և բարձան յինէն ժամք և ժամա-
նակք. և կալաւ զիս յաւիտենականութիւն սոսկա-
լի։ Զի՞նչ արժան յեսս այնքան տառապելոյ իմ
՝ի վերայ երկրի՝ յերանելս իմ անտի հանգիստ
առնուլ սակաւ մի. և զի՞ եղև՝ զի այսպէս՝ ի
յաւիտենական տուՀայտանս շղթայեցայ. ուր
ոչ նշմարի յոյս՝ հանգիստ գտանելոյ, այլ յու-
սահատութիւն յաւիտենից տանջելոյ,
և ոչ երբէք՝ ի տանջանաց դադարելոյ։ Ողով
և իմ այն տանջանք թէև թեթև իցէ՝ յան-
հունս սաստկանալ ունի։
Այլթէ երկարաձգեսցի նեղութիւն՝ ի հոգիս, կամ
ցաւ՝ ի մարմնի, որչափ տեւէ, այնչափ վշտագնէ
և առաւելու զտառապանսն. զի՞նչ ասցա՝ եթէ
տեւեսցէ հազար ամ։ Ողջ աղետիցս. քանի՞ ա-
սցա՝ ի տեւելն յաւիտեան։ Այլ զի՞նչ է զոր

ասեմ զնեղութիւնս։ եթէ և զբօսանք երկարեսցին, և եթէ նուազեցուցիչք ժամն ձիգս տաբաձեսցին, փոխանակ սփոփելոյ՝ տաղտապեցուցանեն և յիմարեցուցանեն։ զի՞նչ ապա գործեսցեն հարստահարութիւնք և սարսափելի տանջողութիւնք 'ի տեսչէն յաւիտեան և յաւիտեան։

Ը. Որ լեռին յիմարուհես, որ այսպէս գժամանակ լիս՝ Ը յաւիտենական աղերսիւ փակեցի. և զյաւիտենականութիւն ընդ անցաւորիս տուգանեցի։ Ընդհաւատալն ինն կարծեի. այժմ հաւատացի. այժմ փորձեցի. այժմ գիտացի։ Այլ զի՞նչ հնարք 'ի հաւատալոյս. վասն այնմ հաւատոյ՝ զոր տեսուին յանդիմանել։ Օ՞ինչ օգուտ 'ի փորձելոյս. վայ փորձոյն՝ որ ոչ կրկնի։ Օ՞ինչ շահ 'ի գիտելոյս. աւաղ գիտութիւնն՝ որ 'ի սագատանս սահմանի 'ի յաւիտեան։

Հաւատա անձն իմ. մի խնդրեր փորձել՝ զոր ոչն հաճիս կրել. մի կամիր իմանալ՝ զոր ոչն կամիս հաւատալ. զի՞նչ ունիս վկայել և ասել 'ի փորձելդ և յիմանալդ, բայց եթէ աւաղ կարդալ անձին, և վայ տալ յաւիտեան։ Այս սակայն զարմանք է՝ զի 'ի խորհիլդ այժմ զանլուսաւորելի կեաս յաւիտենականութիւն՝ յահէ անտի մեծութիւն նորին սարսափիս, և փոխանակ օգուտ անտի քաղելոյ՝ յայլ ինն խորհուրդ խաւարիս. և յանդգնիս ասել. զիարդ վտ ժամանակաւոր մեղայ յաւիտենական տացի պատիժ։ Օ՞ինչ ասես ով դու. ոչ ապաքէն վայրկենական է մահ. բայց 'ի հասանելն 'ի մարդ՝ յաւիտեան մեռեալ թողու զնա։ Դու մի հայիր

յայդ, այլ ընդդէմ որոյ մեղաւ՝ յայն հայելով կշռեսայ զմեծութիւն չարութեան մեղայն. անհունն պարտաւորութիւն է 'ի մեղս, զի է ընդդէմ անհնոյ. և զի պատիժն ըստ պարտուց յանցանացն չափի, է թէ անհունն է չարութիւն յանցանացն, ապա յանհունս չափի և պատիժ նորուն. և զի չէ կարելի ստեղծական էակի կրել զանհուն պատիժ ըստ սատակութեան, հարկ լինի կրել զնոյն ըստ տեւողութեան՝ որ յանհունս ձգիցի. այն է յաւիտենական տանջանաց։

Եթէ արդարեւ տեւողութիւն պատուհասիցն չէր անվախճան, ոչ պահանջէր զանթաւութիւն հատուցման. վասն զի ոչ մարդանայիր որդիդ այդ 'ի հատուցանել։ Եթէ ոչ կարես հասու լինել այսմ ոչ մարդ, մնա 'ի գէթ սեմանել, ուր տեսցես զորդին այդ՝ զի յարեան քրիստոնս տագնապի՝ առ ազատելոյ զքեզ 'ի պատժոյ անտի. եթէ արդարեւ չէր անսահման պատիժն՝ զի՞ կայր անսահման եին զարիւն քրիստոսի՝ մի՞ զերծ կացուցանելոյ զքեզ անտի։ Եւ 'ի լեառն գողգոթա, հայեաց 'ի խաչ ելեալն. ահա է, և սակս կորզելոյ զքեզ 'ի թշուառութենէ անտի՝ բեւեռեալ կայ մարմնով 'ի փայտի. և զի՞նչ հարկ էր մերանիլ այդ մի՞ այսր, եթէ այն թշուառութիւն չէր անհուն 'ի տեւողութենէ։ Եթէ այսմ ոչ հաւատաս անձն իմ, գայ ծանկ, զի հաւատասցես, բայց անագան. տեսցես և սոսկասցես, ոչ զարմանասցիս, այլ կոծեսցիս յաւիտեան։

Զ. Այլ ես այժմէն աներկայ հաւատալով՝ խոնարհագին գիմեմ յուսով առ փրկիչդ իմ. և զտիւբ գթութեան քո փարելով, ողորմութիւն հայ-

ցեմ. եթէ այժմ ողորմեսցիս՝ ելցէ յապականութենէ կենաց իմ. եթէ ասասցէն ներեսցես՝ թռուցայց 'ի յաւիտեան ժանեաց յաւիտենականութեան. եթէ մինչև իցէ իմ հասեալ յօրհասս մահու՝ կեցուսցես զիս, մնացից յապահովի 'ի բռնակալ ձիրանաց անտի, և գոհացայց զքեզ յաւիտեան։

Արիթէ կամիս՝ որ է մնալ իմ մերժեալ յաւիտեան 'ի փառաւորելոյ զքեզ. միթէ ախորժիս է դատապարտիլ անձինս և է թշնամանալ իմ է քեզ յաւիտեան. միթէ բերկրիս է հայհոյիլ անուանս քո ինև 'ի սանդարամետականաց յաւիտեան։ Ոչ՝ որ, այլ հաճիս՝ որ, ախորժիս՝ որ, կամիս յաւիտեան կեցուցանել զիս, և յանանց կենաս հանդուցանել, և յանվերջանալի երանութիւն փառաւորել։ Լոգ է որ ոչ հաճիս, դարձն յոր հաճիս։

Լո հաղարաւորս և առ բիւրաւորս ցուցեր զայսպիսի գութ մարդասիրութիւդ, առ մեղապարտս և առ չարաբարոյս, առ առաղակս և առ մարդասպանս, առ անագորոյնս և առ անողորմս, առ պոռնիկս և առ բիւրապգի անօրինս։ Օ՜ինչ լինիցի եթէ և առ իս ցուցցես։ զի՞նչ իցէ՝ որ է զեմ դարձցի քեզ՝ եթէ թափեսցես զիս յեղջերկ այսր միեղջերուի։

Լ զատեա զիս աղաչեմ, քանզի կարող ես. ապրեցո՛ զիս, քանզի կամեցող ողորմութիւն ես. զերծո՛ զիս, քանզի յամի հնարաւոր ես։ Կամեաց միայն, և բաւական է. լուր միայն, և այն մեծ է ինձ։ Իսկ եթէ չկամիցիս կեցուցանել՝ սպառնասցի 'ի վէ՛ր իմ զոյժն յաւիտենական. և եթէ

ոչ նայեսցիս՝ որոտասցիս, որոտասցէ ընդդէմ
իմ կայծակն յաւիտենականութիւն. և եթէ ոչ
լուիցես, յափշտակեսցէ և կլանիցէ զիս նոյն
ինքն յաւիտենականութիւն. յորմէ ոչ ոք ելցէ՝
որ կարիցէ ապրեցուցանել զիս։

Օ՛ի եթէ ամենակարող ազատեցուցիչդ ոչ կա-
միցիս հնարս մատուցանել ազատուիս, ո՛ր զ-
ութիւն ստեղծական հնարէսցի ազատել. և ե-
թէ ամենաբարի բնութիւնդ չնայեսցիս առ իս,
ո՛ր այցելութիւն արարածոց ինայեսցէ յիս. և ե-
թէ ամենաքաղցր գթութիւնդ ոչ լուիցես, ո՛ր
աղիք մարդկան անսայցէ ինձ։

Լ՛ռ արդ՝ աքանչայո՛ որ առ իս զհնարս ողորմ-
ութեանդ. և զերծուցեալ զիս յորոգայթէ աստի
յաւիտենական դատապարտութեանէ՝ արժանացո՛
զիս յաւիտենական երանութեան. յորում՝ ոչ
գոյ՝ ոչ կասկած կորստեան, այլ վայելումն
հանգստեան. ոչ տատանումն տարակուսի աւար-
տելոյ այնր ուրախութեան, այլ անկասկածելի
զմայլումն անպատում խաղաղութեան. անփոփ-
խելի կենդանութի, և աննախազելի բերկրութի.
անանցանելի անդորրութի և ամ բարեփառութ-
պարառութի՝ անբաժանելի մէնջ ընաւորութեան։
Լ՛նթէ այնմ հնարիւ փրկչիդ արժանացայց, և
եթէ 'ի նոյն գթասիրութ կեցուցչիդ ժամանե-
ցեալ, անդադարելի օրհնութ փառաւորեցից ըզ-
քեզ ընդ այնոսիկ որք հասեալ են 'ի նոյն, և
օրհնեն զքեզ յաւիտեան։

ՅԱՆԿ

Ալբինագրաց, որ 'ի գիրսդ։

Յորդորք. 3։
Ի-ՀԵՐՅԻ աղօթից Տէրունական աղօթից. 7։
Ա. Ծնունդ Քն. 7։
Բ. Կաշանդ. Պնօրէնութեանն Քն. 14։
Գ. Կիւրակէ զկնի Ծննդեան Քն.
Հոգեւորական Ծնունդ. 20։
Դ. Յայտնութեան Քն. 24։
Ե. Կիւրակէ յետ առաջի յայտնութեանն.
Ի խորհուրդ Դրախտին յԱր. 31։
Զ. Առաջին կիւրակէ զկնի յայտնութեանն.
Հաւատք. 35։
Է. Երկրորդ կիւրակէ զկնի յայտնութեանն.
Յոյս. 39։
Ը. Երրորդ կիւրակէ զկնի յայտնութեանն.
Սէր. 44։
Թ. Չորրորդ կիւրակէ զկնի յայտնութեանն.
Դուրսն ըստ հաւատոց. 49։
Ժ. Տեառն ընդ առաջ. 54։
ԺԱ. Առաջաւորաց Բարեկենդան.
Յարփ պահոց. 61։
ԺԲ. Երկրորդ կիւրակէ առաջաւորաց.
Յարփ աղօթից. 66։
ԺԳ. Երրորդ կիւրակէ առաջաւորաց.
Խարեվեճակ Բարեկարգութեան անչէն. 71։
ԺԴ. Լուսն Բարեկենդան.
Ապաշխարութեանն նախապատրաստական. 76։

ԺԷ. Երիրորդ հիւրաքէն աղուհացէն.
Ընկուզն նախասահեղծին. 81։
ԺԸ. Երրորդ հիւրաքէն աղուհացէն.
Ընտանէին. 87։
ԺԹ. Չորրորդ հիւրաքէն աղուհացէն.
Տնանէին. 93։
Ի. Հինգերորդ հիւրաքէն աղուհացէն.
Գարարարին. 99։
ԻԱ. Վեցերորդ հիւրաքէն աղուհացէն.
Գալարեան. 104։
ԻԲ. Օրաշխարդ. 109։
ԻԳ. Լոփ հինգշաբթի. 112։
ԻԴ. Լոփ ուրբաթ. 118։
ԻԵ. Լոփ շաբաթ. 125։
ԻԶ. Օրէնք.
Առաջին նոճափ. 128։
Երկրորդ նոճափ. 130։
Երրորդ նոճափ. 131։
Չորրորդ նոճափ. 133։
ԻԷ. Պեռելոց. 135։
ԻԸ. Լեռուն հուսին. 142։
ԻԹ. Լոր հիւրաքէն. 150։
Ի. Կանաչ հիւրաքէն. Ընշարկամարան.
Յեղեղեցեալ ջուրաւան աղանց. 154։
ԻԱ. Կարմիր հիւրաքէն.
Յարգասիս բարեաց. 158։
Առնին այլերնակ ատուրս Հայնակցուն. 161։
ԻԲ. Հինգերորդ հիւրաքէն յինանց.
Երեսան խաչ. 164։
Ի երարարեցն դիմաց. 165։
ԻԳ. Վեցերորդ հիւրաքէն յինանց.

Մեխենարանի սրտի։ 167։
ԼԲ։ Համբարձումն որ։ 173։
ԼԳ։ Երիցորդ Ծաղկապարտ։ 177։
ԼԴ։ Հոգեգալուստ։ 181։
ԼԵ։ Առաջին հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Ի պարեալ անձնաւոր երրորդութիւն։ 186։
ԼԶ։ Երիցորդ հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Տօն նիկիդեցւոյ՝ կարգեալ ի լուսաւորչէ յելս ի վիրապէն։ 190։
ԼԷ։ Հիւլատակ գոհութեան անձնաւոր հաղորդութեան։ 195։
Արիւն ասա պարմանս։ 198։
ԼԸ։ Երրորդ հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Լուսինն։ 201։
ԼԹ։ Չորրորդ հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Աղբարութիւն։ 204։
Խ։ Հինգերորդ հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Աղիւն։ 207։
ԽԱ։ Վեցերորդ հիւրանէ ոչնի հոգեգալստեան։
Բարեկենդան վարդավառ։
Բարեխառնութիւն։ 210։
ԽԲ։ Տօն պապանակին։ 213։
ԽԳ։ Վարդավառ։
Աչալեր դրուն։ 217։
ԽԴ։ Առաջին հիւրանէ ոչնի վարդավառ։
Լուսնարձուն։ 221։
ԽԵ։ Երիցորդ հիւրանէ ոչնի վարդավառ։
Հեղուն։ 228։
ԽԶ։ Երրորդ հիւրանէ ոչնի վարդավառ։
Կուսուն, որ է պատ ուղղաւորութիւն։ 235։
ԽԷ։ Չորրորդ հիւրանէ ոչնի վարդավառ։
Համբերուն։ 240։

Խ. Հինգերորդ հերետիկն զինի վերադարձուն.
Խարիզենոսն ՃԺԱԺԱՆ.
Խարիսիոսն ՃԺԱՅԻՆ. 247։
ԽԲ. Հոդակաւ։ 252։
Ծ. Վերափոխումն ՃԺԱԺԱՆ. 256։
ԺԱ. Առաջին հերետիկն զինի վերափոխման.
Պաշտպանումն ԱԲՅ ԳՈՒՍԻՆ. 263։
ԺԲ. Երկրորդ հերետիկն զինի վերափոխման.
Գամանէլոսն ՀԱՅ. 275։
ԺԳ. Երրորդ հերետիկն զինի վերափոխման.
Համայնումն կամաց մերոց ընդ կամայն աստուծոյ. 280։
ԺԴ. Այլոց ելոն գուսին. 286։
ԺԵ. Օնոնոսն ԱԲ ՃԺԱԺԱՆ. 292։
ԺԶ. Անուն գուսին մարիամու. 300։
ԺԷ. Խարիզենոսն խալի.
Խաղաղումն գոգոյ. 304։
ԺԸ. Գաւազարիս պաճարին. 310։
ԺԹ. Խալիերայ. 313։
Բ. ազգմանէ ԱԲՅ ՆՇԱՆԻՆ. 315։
Կ. Երկրորդ հերետիկն զինի խալին.
Խարիզենոսն վարագայ խալի.
Երիսեղեն. 319։
Կա. Երրորդ հերետիկն զինի խալին.
Վարագայ խալ. 325։
ԿԲ. Չորրորդ հերետիկն զինի խալի.
Օգուստոսն էրինելոյ 'ի մեղս, և ելսովրելոյ 'ի նոյն. 329։
ԿԳ. Հինգերորդ հերետիկն զինի խալի.
Օգուստոսն 'ի գոտուսն. 333։
ԿԴ. Վեցերորդ հերետիկն զինի խալի.

Յանկ գլխոց։ 421
Լեբրոդամուրէ։ 339։
ԿԷ. Լ՝ՕՄՆԵՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ԶԻՆԻ ԽՍԱԼԷ.
Խաչգիւտ։ 345։
ԿԶ. ՈՒՆԵՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ԶԻՆԻ ԽՍԱԼԷ.
Մուղուէ գաղանեաց և գայլեանէղուէ։ 349։
ԿԷ. ԼՍՆԵՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ԶԻՆԻ ԽՍԱԼԷ.
Հինգապակ մահու։ 354։
ԿԸ. ՊՆԾԱՅՈՒՆ ԱԲՅ ԿՈՒՍԷՆ։ 361։
ԿԹ. ՀՅԻՍՆԱԿԱՑ ԲԱՐԵՆԷՆԴԱՆ.
Պատարագն հոգւոյ յելս 'է մարմնոյ։ 369։
Ի. ԼՐԷՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ՅԻՍՆԱԿԱՑ.
Յարուէ մեռելոց։ 374։
ԻԱ. ԼՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ՅԻՍՆԱԿԱՑ.
Պատարագն հաւատքեաց։ 380։
ԻԲ. ՅՂՈՒԷ ԱՔՅ ԿՈՒՍԷՆ ԱՌՆՈՅ ԱՐԱՊՈՅ ԱՆՔԸ ՆԱԿԱՆ ՄԵՂԱՅ։ 396։
ԻԳ. ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ՅԻՍՆԱԿԱՑ.
Ընբայուրէ։ 393։
ԻԴ. ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ՅԻՍՆԱԿԱՑ.
Պծոխ։ 401։
ԻԵ. Վ ԵՑԵՐՐՈՐԴ ԿԻՐԱՔԷ ՅԻՍՆԱԿԱՑ.
Յաւելեանականուէ պանջանաց 'է դծոխս։ 409։

ՑԱՆԿ

Աղօթից

Աւագաջիւոյ երրորդ։

Աղօթից յարգ. 66։
Ամլակերպութեան ճան. 217։
Ամբեղութեան կուսին. 286։
Անառակին. 87։
Անկումն նախասահմանեալին. 81։
Անուն կուսին մարիամու. 300։
Անվարհամարան կիւրակէ. 154։
Արարութեան նախասահմանեալին. 76։
Ամբարտաւան բարեաց. 158։
Արդարութեան. 204։
Արիութեան. 207։
Ամբոյութեան. 393։
Աւագ հինգշաբաթի. 112։
Աւագ շաբաթ. 125։
Աւագ ուրբաթ. 118։
Աւետումն կուսին. 142։

Բարեխառնութեան. 210։
Բարեվիճակ բարեկարգութեան անձին. 71։
Բարեբարութեան ճծայնին. 247։

Գալստեան ճան. 104։
Գայթակղութեանց թողութեան. 349։
Գործք լաւ հաւատոց. 49։

Դատաստան հասարակաց. 380։
Դատաստան հոգւոյ. 369։
Դատաւորին. 99։
Դժոխք. 401։

Յիշեցեալս քսագաւան ազանց. 154։
Եկեղեցւոյ ոսն 'ի լուսաւորչէ. 190։

Երևման խաչ։ 164։
Երկիւղ ան։ 319։
Երկրորդ ծաղկազարդ։ 177։
Երրորդուն։ 186։

Օ սաեկ։ 128։
Զգուշութեն չկրկնելոյ 'ի մեղս։ 329։
Զգուշութեն 'ի փոքրունս։ 333։

Ի ծայուն մեյ կուսին։ 361։

Մոլութեն գաղանեաց։ 349։

Ս ազազութեն հոգւոյ։ 304։
Խաչգիւտ։ 345։
Խաչ վարագայ։ 325։
Խաչվերաց։ 313։
Խոհեմութեն։ 201։
Խոնարհութեն։ 221։
'Ի Խորհուրդ մկրտութեն յամ։ 31։

Ծ աղկազարդ։ 109։
Ծաղկազարդ երկրորդ։ 177։
Ծնունդ աբ ամանեն։ 292։
Ծնունդ ան։ 7։

Կանաչ կիւրակէ։ 154։
Կարմիր կիւրակէ։ 158։
Կուսուն։ 235։
Չ Կրկնել մեղս։ 329։

Աբ Հաղորդուն։ 195։
Համառնջնուն կամաց մերոց։ 280։
Համբարձումն ան։ 173։
Համբերուն։ 240։
Հաւատք։ 35։
Հեզուն։ 228։
Հոգեգալուստ։ 181։
Հոգևորական ծնունդ։ 20։

Մահու յիշատակ. 354։
Մարիամու կուսին անուն. 300։
Մեռելոց. 135։
Մխիթարուն սրտի. 167։

Հայանութիւն ան. 24։
Յարդ աղօթից. 66։
Յարդ պահոց. 61։
Յարուն մեռելոց. 374։
Յաւիտենականութիւն տանջանաց. 409։
Յիշատակ մահու. 354։
Յղուն ոչ կուսին. 386։
Յոյս. 39։

Լաւակատիք տարարին. 310։
Ներողամտուն. 339։
Լմնակցուն քան. 275։
Նոր կիւրակէ. 150։

Շողակաթ. 252։

Ողջախոհութիւն. 235։

Պաշտպանութիւն ոչ կուսին. 263։
Ի Պատիւ ամենայն երրորդուն. 186։

Սէր. 44։

Պարագայ խաչ. 325։
Պարգևաւ. 217։
Պէրտիսուն ածածին. 256։

Տանջանաց յաւիտենականուն. 409։
Տարտանակին. 213։
Տեառն Քառաջ. 54։
Տնտեսին. 93։
Տնօրէնուն ան. 14։

Ի Փոքունս զգուշուն. 333։

ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.

Գիրքը ենթարկվեալ է ախտահանման
5/VI-42թ.